

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

2 (26)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2022

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միսնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

*Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)
Ավետիսյան Յու. Ս.
Գասպարյան Ս. Բ.
Դեդեյան Ժ. (Ֆրանսիա)
Եղիազարյան Ա. Ս.
Ջաքարյան Ս. Ա.
Հարությունյան Ս.
Հայրունի Ա. Ն.
Ղարիբյան Ա. Ա.*

*Մանուկյան Ս. Ա.
Մելքոնյան Ռ. Հ.
Մինասյան Է. Գ.
Մխիթարյան Վ. Գ.
Պետրոսյան Վ. Ս.
Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)
Սահակյան Լ. Ս.
Սայադով Ս. Մ. (Ռուսաստան)*

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

*Avetisyan L. (Deputy editor-in-
chief)
Avetisyan Y.
Dedeyan G. (France)
Gasparyan S.
Gharibyan A.
Harutyunian S.
Hayruni A.
Manukyan S.
Melkonyan R.*

*Minasyan E.
Mkhitaryan V.
Petrosyan V.
Poghosyan V. (Executive
Secretary)
Sahakyan L.
Sayadov S. (Russia)
Yeghiazaryan A.
Zakaryan S.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԳԱՄՊԱՐՅԱՆ

ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒՐՋ

***Բանալի բառեր** – Էրեբունի-Երևան, Երևան, Երևանի նահանգ, Հերոդոտոս, Եկեղեցիներ, հայկական մշակույթ, քրիստոնեական ժառանգություն, աղբյուրական կեղծարարություններ*

Հազարամյակների պատմություն ունեցող Էրեբունի-Երևանը, որը ստեղծվել է մ. թ. ա. 782 թվականին, հայտնվել է աղբյուրական կեղծարարության առանցքում: Գաղտնիք չէ, որ Հայաստանի հարևան Աղբյուրանը ստեղծման առաջին իսկ օրից (1918 թ. մայիսի 28) յուրացրել և շարունակում է յուրացնել ոչ միայն իրանական (պարսկական)¹, այլև հայկական բնակավայրերը՝ դրանք աշխարհին ներկայացնելով իբրև «պատմական աղբյուրական» տարածք: Ցավոք, մի շարք հայկական բնակավայրերի թվում աղբյուրական կեղծարարության թիրախում է հայտնվել պատմական Հայաստանի մաս կազմած, բնիկ հայկական և այժմ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը:

Մ. թ. ա. V դարի հույն ականավոր պատմագիր Հերոդոտոսի (մ. թ. ա. 484-425)՝ աշխարհին, ինչպես նաև Հայաստանին և հայերին առնչվող իր ժամանակաշրջանի տեղեկությունները եղել և մնում են հավաստի սկզբնաղբյուրներ: Նա կարևոր տեղեկություններ է հաղորդում պարսից արքունիքին հայերի վճարած հարկերի մասին²: Ըստ նրա՝ Հայաստանը ներառված էր 13-րդ և 18-րդ սատրապությունների կազմում³, որոնցում էր ընդգրկված նաև Երևանի ներկայիս տարածքը: Չափազանց կարևոր է Կիլիկիային և Հայաստանին առնչվող Հերոդոտոսի այն վկայությունը, ըստ որի՝ սահմանը հա-

¹ 2022 թ. Հայաստան այցելած աղբյուրանցի պատգամավորները սոցիալական ցանցում հրապարակած Կապույտ մզկիթի ֆոնին արված լուսանկարին կից գրել էին, թե իբր կառույցն աղբյուրական է, որին հետևել են թե՛ Իրանի դեսպանության եռալեզու պատասխանը և թե՛ մզկիթի հոգևորականների արձագանքը // <https://www.youtube.com/watch?v=qMwZSSMhwSs&t=4s> /09.03.2022/:

² **Herodotus**, The Histories, Translated by George Rawlinson, Roman Roads Media, Moscow, 2013, p. 219, 338-340. // <https://files.romanroadsstatic.com/materials/herodotus.pdf>, **Olmstead A. T.**, History of the Persian Empire, the University of Chicago Press, Chicago and London, Copyrighting 1948, by the University of Chicago, p. 291, 275 // https://oi.uchicago.edu/sites/oi.uchicago.edu/files/uploads/shared/docs/history_persian_empire.pdf.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 219:

մարվում էր Եփրատ գետը¹, և որտեղ, բնականաբար, չէին կարող լինել ո՛չ Թուրքիան և ո՛չ էլ առավել ևս Ադրբեջանը² [տե՛ս նկար 1]:

Կեղծարարությունների ակունքներն ու պատճառներն ավելի խորքային են: Պատճառներից առաջինը կապված է դեպի Երևան թուրքական մի շարք արշավանքների հետ, որոնց արդյունքում քաղաքը ենթարկվել է ավերածությունների և հայաթափվել: Հաջորդը սերտորեն կապված է պարսից շահ Աբաս Ա-ի 1603-1604 թթ. Երևան կատարած արշավանքի հետ, որի արդյունքում բռնի տեղահանվել է շուրջ 300.000 հայ և փոխվել տարածաշրջանի, հատկապես քաղաքի ժողովրդագրական պատկերը (որոշ սկզբնաղբյուրներում հիշատակվում է 500.000-600.000 հայ³): Սակայն նույնիսկ 1604 թ. բռնագաղթից հետո Արևելյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում բնակչության մեծ մասը դարձյալ կազմում էին հայերը: XVII դարի 50-ական թվականներին Երևան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեն գրում է, որ «չպետք է զարմանալ, եթե քաղաքների և գյուղերի մեջ մի մահմեդականի դիմաց հիսուն հայ է գտնվում»⁴: Երևանի բնակչության ամենաբարձր տոկոսը կազմում էին հայերը, այնուհետև՝ թաթարները, օսմանյան թուրքերն ու պարսիկները⁵:

Տարիներ ի վեր գտնվելով պարսկական և ժամանակ առ ժամանակ թուրքական տիրապետության ներքո՝ Երևանում բազմաթիվ շենք-շինություններ կրում էին արևելյան՝ ավելի կոնկրետ իրանական ճարտարապետության տարրեր, ինչը հետագայում ադրբեջանական կեղծարար քարոզչության հիմնաքարերից մեկը դարձավ⁶:

Թուրք-պարսկական պատերազմների արդյունքում Երևանը բազմիցս ենթարկվել է պաշարման, ավերածությունների և անցել ձեռքից ձեռք⁷: Արշավանքների ընթացքում Երևանը վերածվել է ավերակների, նրա բնակչության մեծ մասը ոչնչացվել է կամ հարկադրված թողել իր հայրենի քաղաքը և դիմել փախուստի: Հայ, վրացի և թուրք պատմագիրների ու հիշատակա-

¹ Herodotus, նշվ. աշխ., էջ 80, 339, 340, Olmstead A. T., նշվ. աշխ., էջ 39, 117, 300:

² Տե՛ս Olmstead A. T., նշվ. աշխ., էջ 33:

³ Տե՛ս Դանիելյան Լ. Գ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978, էջ 103-106:

⁴ Հղումն ըստ՝ Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 272:

⁵ Նույն տեղում:

⁶ <https://az.sputniknews.ru/20180416/azerbaijan-istorija-erevan-erebuni-414904329.html>
/09.03.2022/ shorturl.at/tlMY7 /09.03.2022/

⁷ Տե՛ս Փափազյան Հ. Դ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում // ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1960, թիվ 37-38, էջ 22, Լեո, նշվ. աշխ., էջ 173, Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 300, Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 61, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 427, «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 33:

գիրների երկերում տրված են այդ պատերազմների ընթացքում հայերի և հարևան ժողովուրդների կրած տառապանքները՝ կոտորածներն ու գերեվարությունը, սովն ու մահասփյուռ հիվանդությունները¹:

Քաղաքը ենթարկվել է ավերածությունների, ինչպես օրինակ 1514 թ. սուլթան Սելիմի, 1534 թ. Սուլեյմանի, 1635 թ. Մուրադ IV-ի և 1724 թ. Ահմեդի կողմից²: Ավերածություններից հետո իշխող կողմը կատարում էր շինարարական աշխատանքներ: Երևանը զգալի տուժել է նաև երկրաշարժերից, օրինակ՝ 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժից հետո քաղաքը վերածվել է ավերակների³, Գետառ գետի վարարումները ևս իրենց ավերիչ հետքն են թողել քաղաքի վրա:

1555 թ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքվում է առաջին հաշտության պայմանագիրը, որով Հայաստանը բաժանվում է այդ երկու պետությունների միջև: Սահմանը, ըստ այդ պայմանագրի, անցնում էր Հայկական պար լեռնաշղթայով: Դրանով Երևանի խանությունը և նշված լեռնաշղթայից հյուսիս գտնվող մյուս բոլոր տարածաշրջանները անցնում էին Պարսկաստանի տիրապետության տակ:

Երևանի՝ իբրև «հնագույն աղբրեջանական պատմամշակութային կենտրոնի», իբրև անկախությունից հետո նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերված աղբրեջանական նորաստեղծ առասպելը այժմ ևս դրվել է քարոզչական շրջանառության մեջ⁴: Աղբրեջանական կեղծարարությունը չի սահմանափակվում միայն հայկական մի շարք բնակավայրերին առնչվող առասպելների ստեղծմամբ և տարածմամբ: Հայերին համարելով վերաբնակներ, որոնք իբրև զավթել են աղբրեջանական խանության տարածքները, նշվում է, թե նրանք հաստատվել են Հյուսիսային Աղբրեջանի տարածքում 1804-1813 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո և հատկապես 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ կետով⁵: Նմանատիպ «փաստերի» հիշատակումը ինքնին վկայում է Աղբրեջանի քարոզչամեթոդային կողմից ոչ միայն հայոց այլև պարսից պատմության կեղծարարության մասին:

Հայ էթնիկ բնակչության մեծամասնության մասին հավաստի վկայություններ են առկա հատկապես ցարական Ռուսաստանի սկզբնաղբյուրներում: 1827 թ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Երևանի գրավման տեսարանը նկարագրելիս գեներալ Պասկևիչն ասել է. «*Տասնութ*

¹ Տե՛ս **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 598, «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, կազմեց Ա. Խ. Մաքրաստյան, Երևան, 1964, էջ 154-155, 271, **Հակոբյան Վ.**, նշվ. աշխ., էջ 355, **Լեռ**, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 188-193, **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 300-301:

² Տե՛ս **Акопян Т. X.**, Очерк истории Еревана, Ереван, 1977, с. 83.

³ Տե՛ս նույն տեղում, **Շահազիզ Ե.**, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 86:

⁴ Տե՛ս **Мехтиев Р.**, Нагорный Карабах: история прочитанная по источникам, Москва, 2014, с. 18:

⁵ Տե՛ս նույն տեղում:

հազար բնակիչներ, որոնց մեծ մասը հայեր էին, բռնությամբ քշված բերդը, խնդրեցին Գասսանին հանձնվել...»¹։ Ռուսների կողմից Երևանի բերդի գրավման իրադարձությունների ականատես և ժամանակակից, Երևանի սեմինարիայի ուսուցիչ Կ. Շուլցինը ևս փաստում է, որ Երևան քաղաքի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին²։

Քարոզչական առասպելների գոյությունն այնքան ակնհայտ է և առանց փաստական հենքի, որ հավանաբար աշխարհում միայն աղբյուրների համար է գոյություն ունեցել աղբյուրների Սեֆյան՝ Արևելքի ամենախոշոր պետություններից մեկը³։

Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունների մասին արժեքավոր է հետազոտող Մերուժան Կարապետյանի հոդվածը, որում մասնավորապես անդրադարձ է կատարվում Ժ.-Բ. Տավերնիեի, գերմանացի ճանապարհորդ Գասպար Շիլինգերի, հոլանդացի վաճառական Ստրեյսի, ճիզվիտական միաբանության անդամ Մոնիեի և այլոց վկայություններին, որոնցում բացահայտորեն նկատվում է, որ XVII դարում և XVIII դարակզբին Երևանի բնակչության մեծամասնությունը հայեր էին⁴։

Այսպիսով, թուրք-պարսկական երկարատև պատերազմները և մեծ չափերի հասնող գերեվարությունները, խաների ու փաշաների միջև մղվող երկարատև պայքարն ու կռիվները, վրաց Հերակլ թագավորի (1744-1798) արշավանքները, պարբերաբար կրկնվող հիվանդությունները, երկրում տիրող փակ բնատնտեսությունն արգելակում էին Երևանի զարգացումը։ Անկայուն քաղաքական վիճակի և բնական չնչին աճի հետևանքով XVI-XVIII դարերում Երևանի բնակչության թվի ավելացումը կամ նվազումը հիմնականում կապված էր բնակչության մեխանիկական ներհոսքի և արտահոսքի հետ։

Երևանի հայկական մշակութային ժառանգության մեջ, բացի բազմաթիվ ճարտարապետական կոթողներից, կարևոր տեղ են զբաղեցնում և հայ քաղաքակրթության մասին աներկբա վկայում հայկական եկեղեցիները։ Սուրբ Աստվածածինը (Կաթողիկե) [տե՛ս նկար 2, 3] հին մատուռ-եկեղեցիներից է, հին կառույցի պատերին եղած արձանագրություններից վաղագույնը թվագրված է 1264 թվականով⁵։ Նույն եկեղեցու արևմտյան ճակատին կան 1229 թ., 1284 թ., ինչպես նաև XVI դարում, իսկ հյուսիսային պատին՝ 1609 թ.

¹ **Потто В.**, Кавказская война, т. 3, Персидская война (1826-1828 гг.), 1993, глава XXX, ПОКОРЕНИЕ ЭРИВАНИ // <https://statehistory.ru/books/Kavkazskaya-voyna--Tom-3--Persidskaya-voyna-1826-1828-gg/30>.

² Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск 4, отдел 2, 1884 г., ВЗЯТИЕ ЭРИВАНИ. (По рассказам старожилов) с. 34-35 // <https://cloud.mail.ru/public/8QTa/2vQrGTFvZ>.

³ Տե՛ս **Джафарли Н.**, Азербайджанское государство Сефевидов, СПб., 2009, с. 13, **Шукюров К. К., Багиев Т. Р.**, Карабах: история в контексте конфликта, СПб., 2014, с. 14.

⁴ Տե՛ս **Կարապետյան Մ. Մ.**, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև «ՊԲՀ»), 1986 // <https://arar.sci.am/dlibra/publication/191080/edition/173552?language=en>

⁵ <https://www.yerevan.am/am/holy-mother-of-god-kathoghike-church/> /11. 04. 2022/

թվագրված արձանագրություններ: Աշխարհի եկեղեցու Բաղիլիկը, ըստ կառույցի տեսակի կայուն տիպ է և ամենաուշը VII դարի շինություն է, իսկ ներկայումս պահպանված Սուրբ Աստվածածին մատուռը, որ շարունակում է կրել Կաթողիկե անունը, կառուցվել է X դարում¹:

Երևանի հնագույն եկեղեցիները [տե՛ս նկար 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13] դեռ վաղ միջնադարից փաստում են հայկական քրիստոնեական քաղաքակրթական համալիր ժառանգության մասին:

Ադրբեջանա-թուրքական հայատյաց քաղաքականության մեկ այլ առանձնահատուկ ժամանակաշրջան 1918-1920 թվականներն էին: Առաջին աշխարհամարտի ավարտին՝ 1918 թ., թուրքական զորքերը, չնայած իրենց պարտությանը՝ ընդհանուր ճակատում, շարունակեցին առաջխաղացումը դեպի Արևելք՝ ձգտելով հասնել պանթուրքական ծրագրի իրականացման նպատակներին: 1918 թ. սեպտեմբերին Բաքվի գրավումից հետո իրականացվեց քաղաքի հայ բնակչության՝ ավելի քան 30.000 մարդկանց ոչնչացումը: Երևանի նահանգում հայերի ճնշող մեծամասնության վերաբերյալ տեղեկություններ են առկա նաև «Կովկասյան օրացույցում»- ում²:

Ադրբեջանական կեղծարարության նպատակներից է նաև քողարկել Բաքվի հայկականությունը, քանզի այդ քաղաքում առկա հայ քրիստոնեական ժառանգության մասին են վկայում տեղի Հայ առաքելական եկեղեցիները³.

1. Բաքվի Սուրբ Աստվածածին եկեղեցին հին Բաքվի Իչարի շահար թաղամասում է, 1797 թ. հիմնադրված (այժմ պահպանված է զանգակատան առաջին հարկը) [տե՛ս նկար 14]⁴:

2. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիմնադրվել է 1887 թ. (այժմ օգտագործվում է որպես գրադարան) [տե՛ս նկար 15]⁵:

3. Սուրբ Թադևոս-Բարդուղիմեոս մայր տաճարը 1900 թ. գտնվում էր Դիմիտրովա-Բոնդարնայա-Շամսի Բաղալբեյլի փողոցում [տե՛ս նկար 16]⁶:

4. Սուրբ Հարություն մատուռ – քանդված [տե՛ս նկար 17]⁷:

¹ Մեղրակ Բարխուդարյան –120: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2019, էջ 32 // https://iae.am/sites/default/files/database/S.Barkhudaryan-120_2019.pdf // <https://www.yerevan.am/am/holy-mother-of-god-kathoghike-church/> /11. 04. 2022/

² «Кавказский календарь», 1915 (LX г.), Тифлис, с. 218-219, 250-255.


³ Տե՛ս **Stepanyan G.**, On the History of the Armenian Sanctuaries of Absheron Peninsula / shorturl.at/jzAFH /17.05.2022/.

⁴ shorturl.at/atLS /15. 05. 2022/

⁵ shorturl.at/fBMX9 /15. 05. 2022/

⁶ shorturl.at/doEH1 /15. 05. 2022/


⁷ shorturl.at/hsENQ /15. 05. 2022/



Աշխարհի քարտեզն ըստ Հերոդոտոսի, որտեղ Հայաստանը հիշատակված է Փոքր Ասիայի արևելյան մասում:
(մ. թ. ա. V դար)¹ (նկար 1)



Սուրբ Աստվածածին բազիլիկ եկեղեցին քանդելուց առաջ, 1936 (նկար 2)



Սուրբ Աստվածածին բազիլիկ եկեղեցին քանդման պահին, 1936 (նկար 3)

¹ <https://appreciatinggoldbooks.wordpress.com/tag/thucydides/> // 11. 04. 2022/



*Մբ. Պողոս Պետրոս եկեղեցի VI դար¹
(Երևան, Կենտրոն համայնք, ներկայիս
Մոսկվա կինոթատրոնի տեղում) (նկար 4)*



Ավանի տաճար VI դար² (նկար 5)




*Մբ. Հովհաննես մատուռ, XIV դարի
սկիզբ³ (նկար 6)*



*Մբ. Աստվածածին մատուռ, XIV դարի
սկիզբ⁴ (նկար 7)*



*Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեցի, XVII
դարի վերջ (Քանաքեռի 6-րդ փողոց)⁵
(նկար 8)*



*Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի,
1693 թ. (ք. Երևան, Ղազար Փարպեցի
փողոց)⁶ (նկար 9)*

¹ <https://www.yerevan.am/en/st-peter-and-paul-church/> /15.05.2022/

² <https://www.yerevan.am/en/avan-temple-ruined/> /15.05.2022/

³ <https://www.yerevan.am/en/chapels-of-avan-ruined/> /15.05.2022/


⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=56884> (11) /15.05.2022/

⁵ <https://www.yerevan.am/en/kanaker-st-james-church/> /15.05.2022/

⁶ <https://www.yerevan.am/en/holy-mother-of-god-zoravor-church/> /15.05.2022/



*Սուրբ Գևորգ եկեղեցի, XVII դարի վերջ
(ք. Երևան, Նորագավիթ)¹ (նկար 10)*



*Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի,
1710 թ. (ք. Երևան, Հովհաննես Կոզեռնի
փող. 9)² (նկար 11)*



*Սուրբ Սարգիս եկեղեցի, 1842 թ. (մինչև վերակառուցումը և վերակառուցումից
հետո)³ (նկարներ 12, 13)*



*Սուրբ Աստվածածին եկեղեցի (Բաքու),
1797 թ. (նկար 14)*



*Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի,
(Բաքու) 1887 թ. (նկար 15)*


¹ <https://www.yerevan.am/en/noragavit-st-george-church/> /15.05.2022/

² <https://www.yerevan.am/en/st-john-the-baptist-church/> /15.05.2022/

³ <https://www.yerevan.am/en/st-sarkis-vicarial-church/> /15.05.2022/



Սուրբ Թադևոս-Բարդուղիմեոս մայր տաճար (Բաքու), 1900 թ. (նկար 16)



Սուրբ Հարություն մատուռ (Բաքու) (նկար 17)

Ալիկ Դարիբյան, Ռուզաննա Գասպարյան – Ադրբեջանական կեղծարարությունները Երևանի շուրջ

Հազարամյակների հայկական քաղաքակրթական օրրան Էրեբունի-Երևանը այսօր առավել քան հայտնվել է ադրբեջանական կեղծարարության կենտրոնում։ Ադրբեջանի Հանրապետությունը ստեղծման առաջին իսկ օրից վարում է յուրացման քաղաքականություն ոչ միայն իրանական (պարսկական), այլև հայկական բնակավայրերի նկատմամբ։ Պատահական չէ, որ այդ թիրախում է հայտնվել նաև Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը։ Տարիներ ի վեր գտնվելով պարսկական և ժամանակ առ ժամանակ թուրքական տիրապետության ներքո՝ Երևանում բազմաթիվ շենք-շինություններ կրել են արևելյան՝ ավելի շատ իրանական ճարտարապետության տարրեր, ինչն էլ հետագայում ադրբեջանական կեղծարար քարոզչության թիրախներից մեկը դարձավ։

Алик Гарибян, Рузанна Гаспарян – Азербайджанские фальсификации истории Еревана

Ключевые слова – Ереван-Эребуни, Республика Армения, Ереван, армянская цивилизация, армянские населенные пункты, азербайджанские фальсификации, иранская архитектура, турецкое владычество

Ереван-Эребуни, являющийся на протяжении тысячелетий колыбелью армянской цивилизации, оказался в центре азербайджанских фальсификаций. Азербайджанская Республика, начиная с первого дня своего основания, проводит политику присвоения не только иранских (персидских), но и армянских населенных пунктов. Не случайно, что в роли мишени выступила и столица Республики Армения Ереван. Так как Ереван в течение многих лет находился под персидским, а иногда и под турецким владычеством, то много строений в нем содержали элементы восточной, в большей степени иранской архитектуры, что и стало в дальнейшем целью фальсификационной азербайджанской пропаганды.

Alik Gharibyan, Ruzanna Gasparyan – Azerbaijani Falsifications Regarding Yerevan

Key words – *Erebuni-Yerevan, Republic of Armenia, Yerevan, Armenian civilization, Persian rule, Iranian architecture, Azerbaijani falsification, establishment, settlements, capital, Turkish rule*

The cradle of the Armenian civilization of millennia, Erebuni-Yerevan, is now in the center of Azerbaijani falsification more than ever. From the very first day of its establishment, the Republic of Azerbaijan has pursued a policy of taking over not only Iranian (Persian) but also Armenian settlements. It is not accidental that the capital of the Republic of Armenia, Yerevan, has also been targeted by them. Having been under Persian rule, and from time to time under Turkish rule, for many years, many buildings in Yerevan have elements of Eastern, more precisely Iranian architecture, which has become one of the targets of Azeri counterfeit propaganda.

Ներկայացվել է 20.06.2022

Գրախոսվել է 22.06.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Ալիկ Ղարիբյան – ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (algharibyan@yahoo.com)

Ռուզաննա Գասպարյան – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ցեղասպանագիտության ասպիրանտ (ruzanna.gasparyan@ysu.am)

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ
ՆՐԱՆՑ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՅՈՒՆ

Բանալի բառեր – Մովսես Խորենացի, Սեբեոս, Մամիկոնյաններ, Մեծ Հայք, Ճենաստան, Քուշանաց աշխարհ, Սասանյան Պարսկաստան, «Աշխարհացույց», սկզբաղբյուրներ

Թե՛ վաղ միջնադարյան Հայաստանի և թե՛ հայ նախարարական տների պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Մամիկոնյան իշխանական ընտանիքի գործունեությունը, որն ամբողջությամբ շաղկապված է հայ ժողովրդի հերոսական անցյալի հետ: Քրիստոնեություն ընդունելուց հետո՝ մի քանի դար շարունակ, Մամիկոնյան գործիչներն առանցքային դեր էին կատարում հայ ժողովրդի կյանքում: Արշակունյաց թագավորության օրոք գլխավորում էին բոլոր օրհասական ճակատամարտերը, իսկ մարգալանության օրոք՝ դեկավարում հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտար տիրապետության դեմ: Սակայն մեր օրերում, սրբագրելով հայոց պատմությունը, փորձ է արվում նսեմացնել Մամիկոնյան տոհմի դերը Մեծ Հայքի քաղաքական կյանքում: Ինչպես հայ նախարարական շատ տոհմերի, այնպես էլ Մամիկոնյանների գործունեության սկզբնական փուլը սկզբնաղբյուրների սակավության պատճառով ուսումնասիրողների շրջանում տարակարծությունների տեղիք են տալիս:

XIX դարի և հատկապես XX դարասկզբի մի շարք հետազոտողներ ուշադրությունը բևեռեցին Մամիկոնյան տոհմի ծագման և գործունեության սկզբնական ժամանակաշրջանի մի շարք հարցերի լուսաբանման վրա: Մինչ նրանց տեսակետներին անդրադառնալը նշենք, որ ըստ հայ մատենագիրների տեղեկությունների՝ Մամիկոնյանները Մեծ Հայքում հայտնվել են III դարի առաջին կեսերին, երբ Արևելքում արդեն պատմական ասպարեզ էր իջել Սասանյան աշխարհակալությունը¹, և 226 թ. Արտաշիրը պարթևների

¹ Պարսքի տիրակալ Արտաշիրին հաջողվում է հաղթանակ տանել պարթևաց վերջին գահակալ Արտավան Ե-ի նկատմամբ և կործանել պարթևական թագավորությունը: Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 9, «Հին հունական աղբյուրներ», Ա, **Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս** (այսուհետև՝ **Դիոն Կասսիոս**), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 226, **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (այսուհետև՝ **Մովսես Խորենացի**), Երևան, 1991, էջ 205:

մայրաքաղաք Տիգրանում թագադրվել էր արքայից արքա¹:

Ըստ Մովսես Խորենացու տեղեկությունների՝ առաջին Մամիկոնյանները Մեծ Հայքում են եղել 240-ական թվականների սկզբներին՝ մասնավորապես Մասանյան տիրակալ Շապուհ I-ի (241-272) կառավարման սկզբնական շրջանում: Մեջբերենք Պատմահոր հաղորդած տեղեկությունը. «Վախճանեալ Արտաշրի որդոյ Մասանայ՝ թողոյ զթագաւորութիւնն Պարսից որդոյ իւրում Շապիոյ: Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարևելից հիւսիականէն, ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զՃենացն, որ ունին զրոյցս այսպիսիս:

Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն Ճեն-բակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք, Բդդոյի և Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարաք: Եւ չարախօսեալ Բդդոյիսայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ գայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխի իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից: Եւ Արբոկ հրեշտակս առաքէ ինդրել զնա. և ի չլսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ճենաց: Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ:

Արդ՝ թէպէտ և ոչ տայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլ և ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն աղխին իւրով առաքէ զնա իբրև զվտարանդի առ գործակալս իւր որ ի Հայս»²: Ըստ պատմիչի՝ Շապուհ I-ը, չցանկանալով նաև փչացնել հարաբերությունները Ճենաց արքայի հետ, քանի որ վերջինս պահանջում էր իրեն հանձնել փախստականներին, պատվիրաւորություն է առաքում նրա մոտ՝ բացատրելով իր կատարած քայլի շարժառիթը:

Մինչ Մովսես Խորենացու՝ Ճենաց աշխարհից Մամիկոնյանների Հայաստան գաղթի վերաբերյալ հաղորդումը, պատմական որոշ իրադարձություններով պայմանավորված, տեղեկություններ է հաղորդում նաև Փավստոս Բուզանդը: Առաջինը վերաբերում է 371 թ. Ձիրավի հաղթական ճակատամարտին, երբ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը բացատրություն էր ներկայացնում հայոց թագավոր Պապ Արշակունուն (369-374) աղվանից Ուռնայր արքային ազատ արձակելու արտառոց դեպքի մասին: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մուշեղի մասին արքան նշում է. «Զի այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր, և թողեալ նախնեացն դորա զթագաւորութիւնն Ճենաց աշխարհին, եկեալք առ մեզ նախնիքն՝ ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են»³: Հաջորդ դեպքն այն է, երբ

¹ Ст'я Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961, с. 258:

² Մովսես Խորենացի, էջ 221-222: Մամիկոնյանների՝ Հայաստան գաղթի վերաբերյալ տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 317:

³ Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ Փաւստոս Բիւզանդ), Երևան, 1987, էջ 304, 306:

միջֆեոդալական պայքարի հետևանքով լարվում են հարաբերությունները Վարազդատ արքայի (374-378) և սպարապետ Մանվել Մամիկոնյանի միջև, վերջինս, դիմելով թագավորին, ասում է, որ իրենք նրա ծառաները չեն. «Այլ ընկերք ձեր և ի վերոյ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին Ճենաց, և վասն եղբարց իւրեանց գրգռութեանն, զի արին մեծ անկեալ է ի վերայ. վասն այնր եմք գնացեալք. և վասն բարոյ հանգստի գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք»¹: Ի լրումն Մովսէս Խորենացու և Փավստոս Բուզանդի հաղորդումների՝ Ճենաստանից գալու Մամիկոնյան տոհմապետի հանգամանքների մասին հիշենք Սեբեոսի աշխատությանը կից Անանունի հաղորդումները: Նախ նշենք, որ վերջինս ևս նրանց հայրենիքը համարում է Ճենաստանը² (որի տեղադրությանը սկզբնաղբյուրներում վկայված նյութի հիման վրա կփորձենք անրադառնալ ստորև), ապա նշում. «զՄամիկն և զԿոնակն, արս երկուս լեալ քաջս և գլխաւոր եղբարս հարազատս, որդիք Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն Ճենաստանի»³, սակայն, ինչպես կտեսնենք, Սեբեոսի նշած Մամիկոնյանների գաղթի երթուղին տարբերվում է Մովսէս Խորենացու հաղորդումից: Հետագա հեղինակներից X դարի պատմիչ Մովսէս Վայոցձորեցին կրկնում է Փավստոս Բուզանդի հաղորդումները Մամիկոնյանների՝ Մեծ Հայքում հայտնվելու մասին, սակայն, ի տարբերություն վերջինիս հաղորդման, օգտվելով մեզ անհայտ սկզբնաղբյուրից, նշում է. «...որոց անուանք նոցա, անդրանկանն՝ Մամ, և երկրորդին Կոն յորջորջին, և ի նոցունց անուանեցան Մամիկոնք»⁴: XIII դարի պատմիչ Վարդան Վարդապետը, իր «Աշխարհացոյց»-ում անդրադառնալով տարբեր երկրների նկարագրությանը, հիշատակում է նաև Մամիկոնյանների գաղթը Ճենաստանից՝ նշելով, որ տոհմի նախահայրերը երկուսն են՝ «ազգն Մամիկոնէից Բ. եղբարքն Մամակ և Կոնակ փախուցեալք ի թագաւորէն Ճենաքակոյ եւ եկին առ թագաւորն Հայոց Արտաշէս (Տրդատ Բ – Ա. Վ.), եւ նա վասն քաջութեանց նոցա կարգեաց զօրավարս Հայոց գնդին եւ կոչեաց Մամիկոնեանք»⁵: Ի տարբերություն Մովսէս Խորենացու հաղորդման՝ Անանունը նշում է, որ Մամիկոնյանները Ճենաստանից փախուստի ժամանակ ոչ թե ապաստան գտան Սասանյան Արտաշիւր արքայի մոտ, այլ նրանք «գնան առ արքայն Արշակունի, որ նստէր ի Բահլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց»⁶:

¹ Փավստոս Բուզանդ, էջ 366:

² Տե՛ս Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի (այսուհետև՝ Սեբեոս), Երևան, 1979, էջ 56:

³ Նույն տեղում:

⁴ Պատմություն Սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի, «Սուփերք Հայկականք», Զ. Վենետիկ, 1853, էջ 120-121, Մեսրոպայ Երիցու Վայոցձորեցու Պատմություն Սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի // «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 738:

⁵ «Աշխարհացոյց» Վարդանայ Վարդապետի (այսուհետև՝ Վարդանայ Վարդապետ), քննական հրատարակություն Հայկ Պերպլերեանի, Բարիզ, 1960, էջ 53-54:

⁶ Սեբեոս, էջ 57: Քուշանների մեծ մասն ապրում էր Բակտրիայում, որի կենտրոնն էր Բահլ քաղաքը (տե՛ս «Աշխարհացոյց» Մովսէսի Խորենացու յաւելուածովը նախնեաց (այսու-

Կարծում ենք, որ Անանունի հաղորդումն ավելի վստահելի է¹, քանի որ Արշակունիների թշնամի Մասանյան զահակալները, որոնք ձգտում էին տարածաշրջանում վերացնելու Արշակունյաց թագավորությունները, նրանց մոտ չէին ուղարկի Մամիկոնյան գաղթականներին, որոնք կամա թե ականա պետք է ծառայության անցնեին Արշակունիների մոտ՝ ընդդեմ Մասանյանների: Քանի որ Քուշանաց երկրում ևս կառավարում էին Արշակունիները, ուստի, ըստ Մովսես Խորենացու, երբ սկսվեց հայ-պարսկական պատերազմը, հայոց թագավոր Տրդատ Բ-ին (216-256) Բահլից «բերին նմա համբաւ, եթէ «ազգական քո Վեհսաճան, հանդերձ ցեղին իւրով Կարենեան Պահլաւին, ոչ հնազանդեաց Արտաշրի, այլ ի կոչ քո դիմեալ գայ առ քեզ»²: Եվ հավանաբար այս պատերազմի ժամանակ³, որը տևեց տասնմեկ տարի, հայոց արքայի համախոհն էր Քուշանաց թագավոր Վասուդևան⁴: Պայքարը վերջիվերջո ավարտվեց

հետև՝ «Աշխարհացոյց», Վենետիկ, 1881, էջ 41-42): Բահլը հիշտակվում է նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունում (տե՛ս «Աշխարհացոյց» է դարու, ՄՊԲ, 1872, էջ 23): Քաղաքի ավերակները հայտնաբերվել են ներկայիս Աֆղանստանի տարածքում՝ Ամու-Դարյա (Օքսուս) գետի հովտում:

¹ Ն. Ադոնցը ևս հակված է այն տեսակետին, որ Մամիկոնյան եղբայրները Բահլից անցան ոչ թե Պարսկաստան, այլ Արշակունի արքայի մոտ, այնտեղից՝ Հայաստան: Տե՛ս **Адо́нц Н. Г.**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 403:

² **Մովսես Խորենացի**, էջ 209: Հետագայում Շապուհ I-ին հաջողվեց ասպարեզից վերացնել նաև Արշակունի Կարենյան Պահլավի տոհմը, փրկվեց միայն Պերոզամատը՝ «նախնի մեծի ազգի Կամսարականաց» (տե՛ս նույն տեղում, էջ 146, 209-210): Նրանք ևս Մամիկոնյան նախնիների պես փախել են Քուշանաց աշխարհ, իսկ այնտեղից Մեծ Հայք են գաղթել 224 թ. հետո: Տե՛ս **Կոզեան Ս.**, Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», պատմական ուսումնասիրություններ, Վիեննա, 1926, էջ 13-14:

³ Հովհան Մամիկոնյանը ևս, անդրադառնալով հայ-պարսկական հակամարտությանը, նշում է, որ հայոց և պարսից թագավորների միջև միջնորդ եղավ «արքայն ճենաց և ոչ կարաց գրաւել զսիրտ նոցա ի հաշտութիւն» (տե՛ս **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Ա. Աբրահամյանի (այսուհետև՝ **Յովհան Մամիկոնեան**), Երևան, 1941, էջ 67): Նմանատիպ տեղեկություն է հայտնում նաև Ուխտանեսը՝ նշելով, որ հայոց Խոսրով թագավորը վրեժխնդիր եղավ. «Հալածական առնէր զԱրտաշիր զարքայն Պարսից մինչեւ ի սահմանս Ճենաց. զոր բազում անգամ միջնորդեալ՝ ասեն Ճենաց արքային, ո՛չ կարաց առնել հաշտութիւն» (տե՛ս **Ուխտանես եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց // «Մատենագիրք Հայոց», ԺԵ. Ժ. դար, գիրք Բ, Երևան, 2011, էջ 485): Սակայն, ինչպես հայտնի է, երկու հակառակորդների միջև հաշտություն չկայացավ, և ինչպես վերը նշել ենք, պատերազմն ավարտվեց հայ-քուշանական դաշնակցության պարտությամբ, իսկ Ճենաց երկրի սահմաններին հասնելը պատմիչների երևակայության արդյունք է, քանզի այդպիսի հաղթանակի դեպքում կտապալվեր Մասանյան դինաստիան: Իսկ Ճենաց թագավորի միջնորդությունը խիստ կասկածելի է, քանի որ, ինչպես վերը նշել ենք, Մասանյանների նպատակը հարևան երկրներում Արշակունիների բոլոր ճյուղերի վերացումն էր, իսկ այդ ամենին տեղյակ հայոց թագավոր Տրդատ Բ-ն չէր դիմի նման երերուն հաշտության:

⁴ Տե՛ս **Луконин В. Г.**, Завоевания Сасанидов на востоке и проблем кушанской абсолютной хронологии // “Вестник древней истории”, 1969, № 2, с. 28, **Grousset R.**, Histoire de l’Arménie des origines à 1071, Paris, 1973, p. 114: Ավելի վաղ՝ 231-232 թթ. ևս Արտաշիր Մասանյանի դեմ կազմակերպվել էր հայ-քուշանական դաշինք, որը ևս չհասավ իր նպատակին: Տե՛ս **Մանասերյան Ռ.**, Մասանյանների դեմ Հռոմեական կայսրության և Հայաստանի պատերազմին քուշանների

դաշնակիցների անհաջողությամբ¹, և Մամիկոնյանները հայ Արշակունիների դաշնակից Քուշանաց երկրից, որտեղ ժամանակավորապես ապաստան էին գտել, գաղթեցին Մեծ Հայք: Դրա վառ ապացույցն է Սեբեոսի հաղորդումը. «Յայնժամ հրամայէ արքայն Պարթևաց զաւրաց իւրոց տանել գնոսա զգուշութեամբ մեծաւ, կնաւ և որդւովքն իւրեանց և ամենայն աղիսին իւրեանց յերկիրն Հայոց առ ազգական իւր արքայն Արշակունի, որ էր թագաւոր Հայաստան երկրին, ուր և սերեալ բազմացան յոյժ, և եղեն յազգ մեծ ի Մամիկայ և ի Կոնակայ: Յայսմանէ այն է սպարապետ»²: Առաջ անցնելով նշենք, որ Շապուհ I-ին հաջողվեց նախ 245-248 թթ. վերացնել հնդկա-պարթևական թագավորությունը՝ արշավելով Քուշանշահր³, ապա հետագայում նաև տապալել Արշակունիների հնդկա-քուշանական թագավորությունը, ինչի հետևանքով Միջին Ասիայում քուշանական տիրապետությունը դադարեց գոյություն ունենալուց⁴: Այս արշավանքների շնորհիվ պարսկական տիրապետության սահմանները հասան մինչև Հնդկաստանի Պուրուշապուրա (այժմ՝ Փեշավար քաղաքը)⁵, կազմվեց նոր կախյալ թագավորություն, որի մեջ էին Սակաստանը, Տուրեստանը և Հնդկաստանի որոշ տարածաշրջաններ⁶:

Վերադառնալով բուն նյութին՝ նշենք, որ Սեբեոսի երկրորդ հաղորդումը Մամիկոնյան նախահոր վերաբերյալ ևս տարբերվում է մյուս սկզբնաղբյուրների հաղորդումներից: Ըստ Մովսես Խորենացու տեղեկությունների՝ Մամիկոնյանների նախահայրը Մամգուն⁷ է, ապա, ինչպես վերը տեսանք, Անանունի մոտ դրանք երկուսն են՝ Մամիկը և Կոնակը: Հետագա ուսումնասիրողների մեծ մասը հակված է նախապատվությունը տալու Սեբեոսի հաղորդմանը: Սակայն մինչ այդ նշենք, որ ուսումնասիրողներից Հ. Անդրիկ-

մասնակցության հարցի շուրջ (231-232 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII, Երևան, 2011, էջ 22-26:

¹ Հայ-պարսկական պատերազմների, քուշանների ու հայերի դաշնակցության մասին տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 26, 28: Պատերազմական գործողությունների թատերաբեմը հիմնականում եղել են Մեդիան ու նրա հարևան Ադիաբենը: Տե՛ս **Մելքոնյան Հ. Գ.**, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 183:

² **Սեբեոս**, էջ 57:

³ Տե՛ս **Луконин В. Г.**, նշվ., աշխ., էջ 34, 36-37:

⁴ Շապուհ I-ի քուշանական արշավանքների և քուշանական թագավորության հետագա կացության մասին տե՛ս **Дьяконов М. М., Мандельштам А. М.**, Средняя Азия в III-V вв. // Очерки истории СССР. III-IX вв., Москва, 1958, с. 331-336:

⁵ Տե՛ս **Բայրության Վ.**, Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 119:

⁶ Տե՛ս **Луконин В. Г.**, նշվ., աշխ., էջ 37:

⁷ Մ. Թումանյանը նշում է, որ Մամգուն (Մամգուն) ոչ թե անձի անուն է, այլ այդպես կոչվում էր Ճենաց տան նահապետը, քանզի այդ տիտղոսը նշանակում է Մանաց իշխան: Տե՛ս **Թումանյան Մ.**, Մի քանի նկատողութիւն Մամիկոնեանց գաղթականութեան մասին // «Հանդէս ամսօրեայ» (այսուհետև՝ «ՀԱ»), 1911, թիւ 9, էջ 52):

յանն ընդհանրապես չի հավատում Մամգունի գոյությանը՝ համարելով դա առասպել, պատմիչների երևակայության արդյունք, Մամիկոնյանների թագավորական ծագում վերագրելու համար¹: XX դարասկզբին հարցին առաջիններից անդրադարձած Մ. Աբեղյանը նշում է. «Ձույզ անունների իբրև մի անուն ընդունվելը, ինչպես՝ Մամ-Կոն Խորենացու մոտ, հատուկ է ժողովրդական վեպին»²: Նշանավոր հայագետ Ն. Ադոնցը ևս, առավելություն տալով Սեբեոսի հաղորդմանը, տեսակետ է հայտնում, որ Մովսես Խորենացին արհեստականորեն միաձուլել է Մամակ և Կոնակ անունները, միացնելով դարձրել է մեկ անուն՝ Մամգուն³: Մեկ այլ աշխատանքում Ն. Ադոնցը նշում է, որ Մամիկոնյան նախահայր եղբայրների՝ Մամիկ և Կոնակ անունները հանված են **Մամ-ի-կոն** անվան ընդգծված մասերից⁴: Ն. Ադոնցի առաջին տեսակետին է հակված նաև Ա. Մատիկյանը⁵: Ե. Քասունին ևս իրավամբ, ինչպես Ն. Ադոնցը, Մովսես Խորենացուն համարելով հակամամիկոնյան, նշում է, որ նշանավոր տոհմի վերաբերյալ նրա «պատմածները սկզբնական չեն և կողմնակցական ոգիով գունատորուած ու աղաւաղուած են»⁶: Իսկ բանասեր Գ. Աբգարյանը, մի ամբողջ աշխատություն նվիրելով Սեբեոսի երկին, քննարկելով սկզբնաղբյուրների, մասնավորապես Անանունի հաղորդումները Մամիկոնյանների նախահայրերի վերաբերյալ, առաջնությունը տալիս է այդ հաղորդմանը՝ համարելով, որ Մամիկոնյանների մասին այն հայ պատմագրության մեջ անդրանիկ գրանցումն է, սակայն թյուրիմացաբար գտնվել է VII դարում գրված «Սեբեոսի Պատմության» կազմում⁷ և պատկանում է Ագաթանգեղոսի գրչին⁸: Ուստի ելնելով այդ հանգամանքից՝ հարկ է նախապատվությունը տալ երկու տոհմապետի՝ Մամիկ և Կոնակ եղբայրներին, որոնք Մովսես Խորենացին միավորել է որպես մեկ անուն⁹:

¹ Տե՛ս **Անդրիկեան Հ.**, Բիւզանդի Մամիկոնեանները, Վենետիկ, 1904, էջ 13:

² **Աբեղյան Մ.**, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 115, ծան. 1:

³ Տե՛ս **Ադոնց Ն.**, «Հայոց նախնական պատմությունը» Սեբեոսի երկում և դրա աղերսները Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկասիրությունների հետ // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 276:

⁴ Տե՛ս **Ադոնց Ն.**, Բագրատունյան փառքը // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան 2006, էջ 498:

⁵ Տե՛ս **Մատիկյան Ա.**, Անանուն կամ կեղծ – Սեբեոսը, Բ. // «ՀԱ», 1912, թիւ 9, էջ 539:

⁶ **Քասունի Ե.**, Ճենաց աշխարհ. աշխարհագրական – պատմական հետազոտություն մը (Մամիկոնեանց ծագման վերաբերմամբ) // «Հասկ», հայագիտական տարեգիրք, Գ. տարի, Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 98:

⁷ Տե՛ս **Աբգարյան Գ. Վ.**, «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 96: Գ. Աբգարյանը, ծանոթագրելով Սեբեոսի աշխատությունը, ևս մեկ անգամ քննության ենթարկելով «Մամիկոնյան» անվան ստուգաբանությունը, նախապատվությունը տալիս է պատմիչի հաղորդմանը: Տե՛ս **Սեբեոս**, էջ 211, ծան. 76:

⁸ Տե՛ս **Աբգարյան Գ. Վ.**, նշվ. աշխ., էջ 97:

⁹ Ուսումնասիրողները եկել են այն համոզման, որ Մովսես Խորենացին ծանոթ է եղել Ագաթանգեղոսի երկին և այն օգտագործել իր աշխատությունում: Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**,

Իսկ ուսումնասիրողների մի ստվար մաս հակված է այն կարծիքին, որ Մամիկոնյանների նախահայրը մեկն է՝ Մամգուն¹, կամ Մամիկ և Կոնակ անունները ծագում են Մամիկոն(յան) տոհմանունից²:

Ինչ վերաբերում է Մամիկոնյանների նախահայրենիքին, ապա, ինչպես վերը տեսանք, սկզբնաղբյուրների մեծ մասը փաստում է, որ նրանք եկել են Ճենաստանից: Վերջինիս տեղադրությունն արդեն երկու հարյուրամյակ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է, սակայն տեղորոշումը վերջնական տրված չէ: Սկզբնաղբյուրներում նյութի սակավության պատճառով հեռու ենք այն մտքից, որ մեզ լիովին կհաջողվի տալ նշանավոր իշխանական ընտանիքի նախահայրենիքի ստույգ վայրը, սակայն փորձենք հարցին մոտենալ այլ կողմից:

Ճենաստանի տեղադրությանն անդրադառնում է այնպիսի պատմա-աշխարհագրական հուշարձան, ինչպիսին է VII դարում գրված Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ը³: Հեղինակը Ճենքը կամ Ճենաց աշխարհը նկարագրում է իր ամբողջ ընդգրկումով՝ նշելով. «ԼԷ. աշխարհ Ասիոյ Սիւնիկիա է, որ է Ճենք, յեկից կալով Սկիւթիոյ. սահմանի նովաւ ի մտից, իսկ ի հիւսիսոյ եւ յեկից՝ Անծանօթ երկրաւ. եւ ի հարաւոյ՝ Հնդկօք եւ Սիւնեցոց աշխարհօք. եւ է Ճենաստան ընդարձակ դաշտս բնակեալ ազգս քսանեւինն, յորոց մին մարդակերք, առ Անծանօթ երկրաւ: Ունի լեռինս վեց, եւ լինի անդ դարիճենիկ եւ կասիմոն, ի Կասիա լեռնէ, եւ սկիւթիկոն՝ որ է ատրագոյն ինքնեղ, եւ ունի հրեշ եւ մուշկ. եւ շիրամարգ շատ, եւ այլ հաւս պիտանիս, եւ քրքրումս անբաւս, մինչ զի հեծեալ ոք ի սպիտակ գերդակ ձիով, սպիտակ բազէի երթեալ յորս՝ դառնայր դեղնացեալ ամենեւին: Լինի ապրիշում շատ եւ ազնիւ քան զամենայն երկիր. վասն որոյ բնակիչք երկրին արուեստաւորք կերպասագործք ընչաւեւոք, յորոց արքայն Ճենբակուր նստի ի քաղաքին

Պատմագրություն // Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք առաջին (IV դարի սկիզբ – IX դարի կես), Երևան, 2018, էջ 533:

¹ Տե՛ս **Զամչյանց Մ.**, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Ա, Երևան, 1985, էջ 412, 414, **Ինճիճեան Ղ.**, Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ., Վենետիկ, 1835, էջ 14, **Թումանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 526, **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության // **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 93, **Айвазян К. В.**, «История Тарона» и армянская литература IV-VII веков, Ереван, 1976, с. 206-210, **Մաթևոսեան Ռ.**, Մովսէս Խորենացու վկայությունները Մամիկոնեան-Խաղբակեան տոհմի ծագման մասին // «Հայկազեան հայագիտական հանդես» (այսուհետև՝ «ՀՀՀ»), հ. ԺԹ, Պէյրութ, 1999, էջ 94 և այլք:

² Տե՛ս **Քեշիշյան Ա.**, Մամիկոնյանների ծագման ավանդությունը և պատմական իրականությունը // Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու) (այսուհետև՝ «ՀՊՀ»), Երևան, 1997, էջ 14:

³ «Աշխարհացոյց»-ի ստեղծման ժամանակի, ձեռագրերի և հեղինակի մասին մանրամասն տե՛ս **Վարդանյան Ա.**, «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության համառոտ պատմություն // «ՀՊՀ», թիվ 9, Երևան, 2008, էջ 23-36):

Միւռայ՝ որ է ի հարաւային արևելեայ ծայրի աշխարհին»¹: Ապա «Աշխարհացոյց»-ի հեղինակը հաջորդիվ ճենաստանի հարևանությամբ նշում է. «Աշխարհ Ասիոյ Միւնեցուցն է, առ երի ճենաց, սահմանի նովաւ ի հիւսիսոյ, իսկ ի յելից եւ ի հարաւոյ Անծանօթ երկրաւ. իսկ ի մտից՝ Հնդկօք եւ Կանաչուտ ծովովն, մինչեւ յԱնծանօթ երկիր»²: Ուսումնասիրողների մեծամասնության կարծիքով՝ այդ երկիրը Չինաստանն է: Այս հաղորդումը ցույց է տալիս, որ չինական իշխանությունները և ճենաստանը եղել են հարևաններ:

Անանիա Շիրակացու հաղորդումից³ մի քանի դար անց Վարդան Վարդապետը, նկարագրելով արևելյան երկրների աշխարհագրությունը, նշում է. «Իսկ ի կողմանէ Պարսից, սկսեալ յարեւելից, նախ Չինումաչին եւ Խաթա քաղաքն եւ աշխարհն, որ են գին բոլոր աշխարհին, եւ են ուղղափառ հաւատով քրիստոնէայք, եւ ունին թագաւորութիւն եւ քահանայութիւն...: Եւ անտի գայ երկիրն Քուշանաց եւ ապա աշխարհն ճենաց, ուստի էին ազգն Մամիկոնեց Բ եղբարքն...»⁴:

Երկու աշխարհագիրների աղոտ հաղորդումները ցույց են տալիս, որ ճենաստանը Պարսկաստանին հարևան երկիր չէ, ինչպես նշում են Հ. Սվազյանը⁵, Հ. Դավթյանը⁶ և ուրիշներ, այլ նրանց միջև եղել են այլ թագավորություններ՝ կամ իշխանություններ, մասնավորապես Վարդան Արևելցու հաղորդմամբ՝ Քուշանաց աշխարհը, ինչին կանդրադառնանք ստորև:

Բացի աշխարհագիրների հաղորդումներից, ճենաստանի և ճեների մասին տարբեր իրադարձությունների հետ կապված տեղեկություններ կան նաև հետագա հայկական սկզբնաղբյուրներում: Հետաքրքիր նյութեր են պարունակում VIII դարի պատմագիր Ղևոնդի՝ դեպի ճենաստան արաբական արշավանքներին առնչվող տեղեկությունները: Մասնավորապես, մեծ ուշադրություն է գրավում արաբների երթուղին: Վերելքի ուղին բռնած Արաբական

¹ «Աշխարհացոյց», էջ 46: Տե՛ս նաև **Անանուն** (Է. դար), Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր Ա., Յակոբեանի // «ՀԱ», 2013, թիւ 1-12, էջ 184-185: Սյուռա քաղաքը եղել է ճենաստանի մայրաքաղաքը, որտեղ նստել է ճենբակուրը:

² «Աշխարհացոյց», էջ 46:

³ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում ճենաստանի արևմտյան հարևան է հիշատակվում Սկյութիան, այլ ոչ թե Քուշանաց աշխարհը, ապա դա բացատրվում է այն հանգամանքով, որ Քուշանաց թագավորությունները, III-IV դարերի ընթացքում աստիճանաբար թուլանալով, դուրս են եկել քաղաքական ասպարեզից: Քուշանական վերջին պետական միավորումների մնացորդները կործանվեցին V դարի առաջին կեսին: «Քուշան» անվանումին հայկական սկզբնաղբյուրներում վերջին անգամ հանդիպում ենք V դարում (տե՛ս **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 22): Աշխարհագրական այս իրողությունն արձանագրել է Անանիա Շիրակացին՝ իր վերոհիշյալ հաղորդմամբ, որ VII դարում Քուշանց աշխարհը՝ որպես ճենաստանի արևմտյան հարևան, այլևս գոյություն չունի:

⁴ **Վարդանայ Վարդապետ**, էջ 53:

⁵ Տե՛ս **Սվազյան Հ.**, Ճաները և «ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1976, թիվ 4, էջ 208:

⁶ Տե՛ս **Դավթյան Հ.**, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, էջ 102-103:

խալիֆայությունը Վլիթ խալիֆայի օրոք (705-715) արշավանք ձեռնարկեց դեպի Ճենաստան: Արաբ զորավար Մահմեդը, դուրս գալով Դամասկոսից, շարժվելով արևելք, «անցանէր ընդ Ասորեստան, ընդ աշխարհին Պարսից և ընդ Խորասան. և երթեալ հասանէր ի մասն ինչ Ճենաց աշխարհին և բանակէր առ եզր գետոյն հօգորագունի, որ Բօտիսն կոչի»¹: Ըստ պատմիչի՝ արաբ զորավարին Բոտիս գետի ափին, որը հավանաբար Ճենաստանի սահմանագիծն էր, դիմավորում է Ճենաց արքան՝ Ճենբակուրը, 40.000 հեծյալներով²: Բանակցությունները վերջանում են անարդյունք, իսկ բախումն ավարտվում է արաբների ջախջախիչ պարտությամբ³: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թե՛ III և թե՛ VIII դարերում Ճենաստանը ոչ միայն պահպանել էր իր գոյությունը, այլև հզոր պետություն էր, որն ի վիճակի էր դիմագրավել աշխարհակալ Արաբական խալիֆայությանը և հաղթանակ տանել: Ճենաստան պետությունը կարողացավ գոյատևել նաև հետագա դարերում: Նրա մասին վերջին տեղեկությունը հանդիպում ենք Վարդան Վարդապետի աշխատանքում: Իսկ XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի սկզբին ստեղծագործած Ստեփանոս Օրբելյանը, անդրադառնալով իր տոհմային նախարարական տան ծագմանը, նկարագրում է նաև Ճենաստանի սահմանները՝ նշելով, որ այն գտնվում է «յարևելս կոյս, որ անդ է քան գաշխարհն Խալանդրաց՝ սահմանակից Խազրաց և Հոնաց, որ և ձգի երկայնութեամբ մինչև ցեմաւոն լեառն»⁴: Պատմիչի հիշատակած Եմավոն լեռը Բ. Պատկանյանը նշում է Իմաուս անվամբ⁵: Վ. Վալադյանը Եմավոն կամ Իմաուս լեռները նույնացնում է Հիմալայան լեռնաշղթայի հետ⁶, որից արևելք սկսվում է Չինաստանը:

Այսպիսով՝ հայկական սկզբնաղբյուրների գերակշիռ մասը Մամիկոնյան տոհմի նախահայրենիքը համարում է Ճենաստանը⁷, որը բուն Չինաստանը չէ, ինչպես գրաբարից աշխարհաբար թարգմանելիս ներկայացված է «Աշխարհացոյց»-ում⁸՝ աղավաղելով սկզբնաղբյուրի հաղորդումը. այն նրա հարևան պետությունն է, սակայն սկզբնաղբյուրներում ներկայանում է

¹ «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 37: Այդ արշավանքի մասին տե՛ս **Бартольд В. В.**, Сочинения, общие работы по истории средней Азии, т. II, ч. (1), Москва, 1963, с. 118:

² Տե՛ս «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», էջ 38:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Պատմութիւն նահանգին Միսական, արաբեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 370:

⁵ История монголов по армянским источникам, выпуск первый, перевод и объяснения К. Патканова, С.- Петербург, 1873, с. 80, пр. 29.

⁶ **Վալադեան Վ.**, Մամիկոնեանների չինական ծագումը // «Հայրենիք», 1964, թիվ 4, էջ 24:

⁷ Ճեների և Ճենաստանի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները համառոտ, սակայն որևէ նոր տեղեկատվություն չպարունակող նյութ է ներկայացնում Միմեոն Ապարանցին: Տե՛ս Միմեոն վարդապետի Ապարանցոյ, Վիպասանութիւն սակս Պալիաւունեացն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 28-32:

⁸ Տե՛ս **Անանիա Շիրակացի**, Մատենագիտություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 311-312:

տարբեր նկարագրությամբ: Ինչպես վերը տեսանք, Ղևոնդի աշխատանքում Մահմեդը Խորասանն անցնելուց հետո՝ ինչ-որ ժամանակ անց, միայն կարողացավ հասնել Ճենաց աշխարհ: Վարդան պատմիչի հաղորդմամբ՝ Քուշանաց երկրից հետո է սկսվում Ճենաստանը, իսկ ըստ Ստ. Օրբելյանի՝ նրանց նախահայրենիքը գտնվում էր Խալանդրաց աշխարհից այն կողմ՝ խազարների և հոների հարևանությամբ: Եվ դա է պատճառը, որ հայ և օտարագրի ուսումնասիրողները երկու և ավելի հարյուրամյակ շարունակ փորձում են նախանշել այդ պետության սահմանները՝ որոշ դեպքերում անտեսելով պատմիչների հաղորդումները, իրարամերժ տեսակետներ հայտնելով և փորձելով Մամիկոնյաններին տալ տեղական՝ բուն հայկական, կովկասյան, ճանական և այլ ծագումնաբանություն:

Առաջինը հարցին անդրադարձած Մ. Չամչյանը, անվերապահորեն ընդունելով Մովսես Խորենացու հաղորդումը Մամիկոնյանների տոհմի ծագման մասին¹, ինչպես նաև անդրադառնալով Օրբելյաններին, առանձնացնում է Ճենաց աշխարհը Ճենաստանից: Առաջինը նա տեղադրում է «առ սահմանօք հոնաց եւ հեփթաղաց. յորոց հատուած եկին ուռպելեանք»², իսկ երկրորդը՝ «ի ներքին կողմն արևելից ասիո՝ ը մէջ սկիւթացոց եւ չինեացոց»³:

Ուսումնասիրողների մի խումբ Մամիկոնյաններին վերագրում է չինական ծագում: Ֆրանսիացի հայագետ Ժ. Սեն-Մարտենը, ի թիվս այլ հայ նախարարական տների ծագումնաբանության, հանգամանորեն ուսումնասիրության ենթարկելով նաև Մամիկոնյանների ծագման խնդիրը, նշում է, որ բոլոր հայ մատենագիրները հիշատակում են նրանց չինական ծագում ունենալու հանգամանքը⁴, դրանով իսկ շրջանցելով նաև Ճենաստանի՝ իբրև առանձին պետության տեղադրության հարցը: Ճենաստանի գոյությունը որպես առանձին պետություն չի ընդունում նաև Մ. Թումանյանը՝ նշելով, որ այդ առնչությամբ հարկ է ըմբռնել չինական այն նահանգը, որտեղ իշխել է Ճեն հզոր տունը, իսկ Մամիկոնյանները եղել են Ճեն հարստության շառավիղը⁵: Ճենաստանը Չինաստանի հետ է նույնացնում նաև Ստ. Մալխասյանցը⁶, հղում կատարելով հայկական սկզբնաղբյուրներին: Սակայն ինչպես վերը տեսանք, թե՛ Փավստոս Բուզանդը, թե՛ Մովսես Խորենացին և թե՛ Սեբեոսը որևէ ակնարկ չունեն, որ Ճենաստանը բուն Չինաստանն է:

XIX դ. երկրորդ կեսին Բ. Պատկանյանը, ի թիվս հայագիտության մեջ

¹ **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 412, 414-415: Մխիթարյան միաբանության անդամ Ղ. Ինձիճյանը, հպանցիկ անդրադառնալով հարցին, որևէ կարծիք չի հայտնում Ճենաստանի վերաբերյալ՝ կրկնելով Մովսես Խորենացուն: Տե՛ս **Ինձիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 141:

² **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, ցանկեր, էջ 164:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս **Saint-Martin J.**, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris, 1819, p. 26:

⁵ Տե՛ս **Թումանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 517, 528:

⁶ Տե՛ս **Փաւստոս Բիւզանդ**, էջ 443, ծան. 205:

եղած մի շարք վիճելի հարցերի, անդրադառնալով վերոհիշյալ խնդիրներին, նշում է, որ Հայաստան գաղթած ճեներն իսկական չինացիները չեն, և նրանք Մեծ Հայք են գաղթել Ամու-Դարյայի ափերից՝ փոխելով նախկինում արտահայտած իր տեսակետը, որ ճեները նույն չինացիներն են²:

Ն. Ադոնցը, քննելով հայ նախարարական տների վարչաքաղաքական կացությունը, անդրադառնալով Մամիկոնյաններին, նախ նշում է, որ «Ճենաց աշխարհ» անվան տակ պետք է հասկանալ Պարսկաստանից արևելք՝ Բալխից այն կողմ ընկած երկրներից մեկը, մասնավորապես Չինաստանը³, սակայն Մամիկոնյան նախահայրերի փախուստն այնտեղից հավանական չի համարում և նրանց սերված է համարում Տայքի հարևանությամբ ապրող ճաններից⁴: Հ. Մուրադյանը ճանների վերաբերյալ Ն. Ադոնցի տեսակետը կրկնել է տասնամյակներ անց. հղելով Մովսես Խորենացու «ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին» մեջբերումը՝ նա կարծում է, որ պատմահայրը նկատի ունի Մեծ Հայքի հյուսիսը. «Ճենաց երկիրը ու ճենացիներին հարկավոր է որոնել ոչ թե Միջին Ասիայում կամ Չինաստանում, այլ պատմական Հայաստանի հյուսիսում»⁵:

Հավանաբար Ն. Ադոնցի ազդեցության ներքո, բայց ի տարբերություն նրա տեսակետի, Լեոն, հպանցիկ անդրադառնալով Մամիկոնյաններին, ճաներին տեղադրում է բուն Տայքում՝ նշելով. «Մամիկոնյան նախարարների հոչակավոր տոհմը առաջ է եկել Տայք նահանգի ճաններից, որոնք հաբեթական մի ցեղ էին»⁶, բնականաբար Մամիկոնյանների նախահայրենիքը համարելով Տայքը՝ զանց առնելով պատմիչների հաղորդումները նրանց գաղթի վերաբերյալ⁷:

Բ. Կյուլենսերյանը ևս նմանատիպ տեսակետ է հայտնում՝ Մամիկոնյաններին վերագրելով ճանական ծագում, իսկ ճենաց աշխարհը նույնացնելով ճանիքի⁸, Լազիկայի հետ⁹: Իսկ նշանավոր լեզվաբան Գր. Ղափանցյանը

¹ Տե՛ս **Патканов К.**, О месте занимаемом армянским языком в кругу индоевропейских // «Известия Кавказского отдела Императорского русского географического общества», т. VI, Тифлис, 1879-1881, с. 47:

² Տե՛ս «История Халифов вардапета Гевонда писателя VIII века», пер. К. Патканяна, СПб., 1862, с. 142, пр. 105, Армянская География VII века по р. X. (приписывавшаяся Моисею Хоренскому), текст и перевод и присовокуплением карт и объяснительных примечаний издал К. П. Патканов, СПб., 1877, с. 82, пр. 207:

³ Տե՛ս **Адонц Н.**, նշվ. աշխ., էջ 403:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 403-404:

⁵ **Մուրադյան Հ.**, Վարդանանց ապստամբությունը, Երևան, 1989, էջ 219:

⁶ **Լեոն**, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1966, էջ 361:

⁷ Անդրադառնալով Լեոնի այս տեսակետին՝ Խ. Վեմյանը ևս այն համարում է տարակուսելի և նշում, որ Մովսես Խորենացու՝ Մամիկոնյանների գաղթի վերաբերյալ տեղեկությունը հարկ է հավաստի համարել: Տե՛ս **Վեմյան Խ.**, Մամիկոնյանների նախահայրենիքը // «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, թիվ 3, էջ 204:

⁸ Տե՛ս **Կյուլենսերյան Հ.**, Եղիշէ, Քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 291:

⁹ Լազիկայի տարածքը համապատասխանում է հետագա Գուրիային և գտնվում է Սև ծովի հարավարևելյան ափին: Տե՛ս **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ

հարցի վերաբերյալ շեշտում է. «Խորենացու «Ճենի» տակ պետք է հասկանալ ոչ թե չինացու, այլ «Ճան» լազ ժողովրդին»¹:

Մամիկոնյանների գործունեությանն անրադարձաձ կովկասագետ Կ. Թումանովը մերժում է Ճենաստանի իբրև առանձին պետության գոյության հարցը՝ համարելով այն Չինաստան, ապա նշում, որ Մամիկոնյաններն ունեին ճանական ծագում, և նրանց նախահայրենիքը համարում է Լազիկան²: Ավելի վաղ արտահայտված մեկ այլ տեսակետով նա Մամիկոնյաններին համարում է Տայքի հնագույն տերերը՝ վերագրելով նրանց վրացական ծագում, իսկ տոհմի հիմնադիր նշում Տիգրան Բ-ի (մ. թ. ա. 95-55) զորավար Մանկայոսին³՝ առանց հաշվի առնելու սկզբնաղբյուրների հաղորդումները նրանց՝ Ճենաստանից գաղթելու վերաբերյալ III դարի առաջին կեսին: Նշենք, որ Կ. Թումանովից դեռևս տասնամյակներ առաջ գերմանացի հայագետ Յ. Մարկվարտը ևս Մամիկոնյանների նախահայր է կարգում Տիգրանակերտի կայագործի հրամանատարին⁴: Հետագայում այդ տեսակետին հպանցիկ, առանց որևէ պնդման, հարևանցիորեն անդրադարձել են Ն. Ադոնցը⁵ և Գ. Խալաթյանը⁶: Իսկ Մ. Թումանյանը, հղելով վերջիններիս, եթե Մանկայոսին անվերապահորեն չի համարում Մամիկոնյան, ապա մ. թ. ա. I դարի կեսերին Ասորիք արշաված Օսակեսին⁷ և մ. թ. I դարի 60-ական թվականներին հռոմեացիների հետ բանակցած զորավար Վասակին⁸ համարում է այդ տոհմի ներկայացուցիչներ⁹: Լեոն և Հ. Մանանդյանը ևս ենթադրեցին, որ Մամիկոնյանները Տիգրան Բ-ի օրոք արդեն նշանավոր դիրքի հասած են եղել՝ շնորհիվ Մանկայոսի¹⁰: Այս փաստարկը, որը չի ամրապնդվում որևէ սկզբնաղբյուրով, ունի միայն անվան նմանություն Մամիկոնյան իշխանների հետ և մնում է որպես ենթադրություն, թվում էր, թե հետագայում կմերժվի: Սակայն այն ունեցավ հետևորդներ և որպես իրական փաստ ներկայացվեց

VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 54 և կից քարտեզը, Բ 4, **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 554:

¹ **Ղափանցյան Գր.**, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 46:

² Տե՛ս **Toumanoff C.**, The Mamikonids and the Liparitids, Armeniaca, Venice, 1969, p. 132-133:

³ Տե՛ս **Toumanoff C.**, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 209:

⁴ Տե՛ս **Marquart J.**, Eransahr nach der Geographie des Ps. Moses Xorenaçi, Berlin, 1901, S. 177:

⁵ Տե՛ս **Адонц Н.**, նշվ. աշխ., էջ 411, 415:

⁶ Տե՛ս **Халатъянц Г.**, Очерк истории Армении, Москва, 1910, с. 183:

⁷ Տե՛ս **Դիոն Կասսիոս**, էջ 165, 240, ծան. 145:

⁸ Տե՛ս **Поблий Корнелий Тацит**, Анналы, Малые произведения, История, Москва, 2003, с. 371, «Օտար աղբյուրները հայերի մասին», թիվ 3, «Լատինական աղբյուրներ», Կ. Տակիտուս, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոսնիկյան, Երևան, 1941, էջ 113:

⁹ Տե՛ս **Թումանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 521:

¹⁰ Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 304, **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության // **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 499, ծան. 2:

հայտնի պատմաբան Գ. Սարգսյանի կողմից: Վերջինս նշեց, որ Մանկայտսին Մամիկոնյան համարելը միանգամայն համոզիչ է¹: Հետագայում Ա. Քեշիշյանը, տարանջատելով Մամիկոնյանների ծագման և Ճենաստանի տեղորոշման հարցերը, անդրադառնալով հունա-հռոմեական հեղինակների մոտ հիշատակվող Մանկայտսին և զույգ Վասակներին, ևս հակված է ենթադրելու, որ Մամիկոնյաններն ավելի հնագույն տոհմ են, և նրանց գաղթին առնչվող ավանդությունն իրականությանը չի համապատասխանում², հետևաբար նրանց համարում է տեղական՝ հայկական ծագում ունեցող տոհմ³: Ռ. Մաթևոսյանը, ավելի հեռուն գնալով, նշեց, որ Մանկայտսը ոչ թե Մամիկոնյանների տոհմի հիմնադիրն է, այլ ներկայացուցիչը, և Մամիկոնյաններն ավելի հին տոհմ են, քան Մանկայտսի ապրած ժամանակահատվածը⁴:

Հայագիտության մեջ Մամիկոնյանների ծագման վերաբերյալ մեկ այլ ուղղություն հանդես եկավ նախորդ դարասկզբին: Ուսումնասիրողներից Մ. Անանիկյանը⁵, Հ. Անդրիկյանը⁶, Կ. Տեր-Սահակյանը⁷, Հ. Աստուրյանը⁸, Վ. Վալադյանը⁹, Հ. Սվազյանը¹⁰ և ուրիշներ, մերժելով նրանց գալուստը Ճենաստանից, համարում են, որ Մամիկոնյանները Մեծ Հայք են գաղթել Պարթևական (պարսկական) թագավորությունից և ունեն իրանական ծագում՝ սերված լինելով պարթև Արշակունիներից կամ Անակ Պարթևի ժառանգներից: Իսկ Հ. Արմենն ինչպես Մամիկոնյաններին վերաբերող մի շարք հարցերում, այնպես էլ նրանց ծագման խնդրում, առանց որևէ քննական մոտեցման, նրանց կնքեց որպես սկյութացի՝ նշելով, որ նրանք «Կասպից ծովու հարաւ-արեւելեան երկրամասի մէջ ապրող Սկիւթացի ցեղ մը, որ Պարթեւ Արշակունիներու անկումէն վերջ... ապաստանեցաւ հայ Արշակունի թագաւորի մօտ»¹¹: Ավելի թափանցելով իր հակամամիկոնյան մոլուցքում՝ նա նրանց վերագրեց

¹ Տե՛ս **Սարգսյան Գ.**, Հայաստանի պետական կարգը հելլենիստական դարաշրջանում // Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ «ՀժՊ»), հ. I, Երևան, 1977, էջ 681:

² Տե՛ս **Քեշիշյան Ա.**, նշվ. աշխ., էջ 10-11:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 20, *նույնի՝* Մամիկոնեանների ծագումը Խաղբակեանների առնչող տեսակետի վերլուծություն // «ՀՀՀ», հ. ԻԲ, Պէյրուք, 2002, էջ 86, 99-101:

⁴ Տե՛ս **Մաթևոսեան Ռ.**, նշվ. աշխ., էջ 101:

⁵ Տե՛ս **Անանիկեան Մ.**, Ս. Գիրքը եւ Մամիկոնեանները // «Բանասեր», հ. 2, Պարիս, 1904, էջ 241-242:

⁶ Տե՛ս **Անդրիկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 11, 17:

⁷ Տե՛ս **Տեր Սահակեան Կ.**, Վաղարշ Ե. Պարթևաց թագաւորը նախահայր Մամիկոնեանց // «Բազմավէպ», 1906, թիւ 9, էջ 390, 393, 396:

⁸ Տե՛ս **Աստուրեան Հ.**, Քաղաքական վերաբերություններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ 190 էն ն. Ք. մինչև 428 յ. Ք., Վենետիկ, 1912, էջ 192-193:

⁹ Տե՛ս **Վալադեան Վ.**, նշվ. աշխ., էջ 33-34:

¹⁰ Տե՛ս **Սվազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 211-212:

¹¹ **Արմեն Հ.**, Մամիկոնեանները Արշակունեաց օրով // «Պատմական քննարկումներ», Պէյրուք, 1968, էջ 130:

թաթարական ծագում¹, ինչը հակագիտական եզրահանգում է²:

Մամիկոնյանների ծագման վերաբերյալ անհեթեթ տեսակետ է նրանց նախահայրենիքը Կովկասում՝ Դերբենդի շրջակայքում, փնտրելը: Դրան հիմք է ծառայել VII դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանի հաղորդումն Անակ Պարթևի որդու՝ Սուրենի վերաբերյալ, որն իբր թե հոր սպանությունից հետո անցավ Ճենաց աշխարհի և ինչ-որ ժամանակ անց այնտեղ թագավորեց³: Հովհան Մամիկոնյանի այս հաղորդումը, որը նույնիսկ հեռավոր կապ չունի Մամիկոնյանների, առավել ևս նրանց ծագման հետ⁴, կրկնել է Վարդան Վարդապետը⁵: Պատմիչների այս հաղորդումները հիմք են հանդիսացել, որ ուսումնասիրողներից նախ Դ. Ալիշանն իր աշխատության ծանոթագրությունում նշի. «Ճենքս ոչ են Չինք, այլ տոհմ կովկասեան ի սահմանս Դարբանտայ»⁶: Իսկ Գր. Խալաթյանն արձանագրում է, որ այդպիսի ազգի՝ Ճենների գոյությունը Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մեջ պետք է փնտրել⁷: Այս հիմնագուրկ տեսակետը որևէ աղերս չունի սկզբնաղբյուրների հաղորդումների հետ, և ինչպես նկատել է Հ. Դավթյանը, «Ճեները (միգրացե ուրիշ ինքնանվանումով) Կովկասից հեռու գտնվող հայրենիք ունեցող արևելյան ժողովուրդ էին»⁸: Եվ դեռևս անվան նմանությունը հիմք չէ Ասիայի խորքերից Ճեներին արհեստականորեն բերելու և Դերբենդի շրջակայքում տեղադրելու համար և դրա հիման վրա կառուցելու Մամիկոնյանների ծագման վերը նշված վարկածը:

Հայ և օտարազգի մի շարք ուսումնասիրողներ, շոշափելով Մամիկոնյանների նախահայրենիքի խնդիրը, համարում են, որ նրանք Մեծ Հայք են գաղթել Բակտրիայից⁹: Նշենք, որ վերջինս քուշանների հայրենիքն է, որտեղից նրանք ժամանակի ընթացքում տարածվեցին Միջին Ասիայի հյուսիսային նահանգներում¹⁰: Մամիկոնյանների և Կամսարականների՝ Բակտ-

¹ Տե՛ս **Արմեն Հ.**, նշվ. աշխ., էջ 136:

² Հ. Արմենի՝ Մամիկոնյանների ծագման տեսակետի քննադատությունը տե՛ս **Սուրադյան Հ.**, նշվ. աշխ., էջ 218-226;

³ Տե՛ս **Յովհան Մամիկոնեան**, էջ 70:

⁴ Վ. Վարդանյանը Հովհան Մամիկոնյանի այս հաղորդումը ոչ միայն անհավանական է համարում, այլև կասկած է հայտնում Գրիգոր Լուսավորչի եղբայր Սուրենի գոյության մասին ընդհանրապես: Տե՛ս **Մամիկոնյան Հ.**, Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Վարդան Վարդանյանի, Երևան, 1989, էջ 151, ծան. 25:

⁵ Տե՛ս Հավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862, էջ 47:

⁶ Տե՛ս նույն տեղում, ծան. 2:

⁷ **Խալաթեանց Գր.**, Ջենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրություն, Վիեննա, 1893, էջ 39:

⁸ **Դավթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 55:

⁹ Բակտրիան ներառում է ժամանակակից Տաջիկստանի մեծ մասը, Ուզբեկստանի հարավային և Աֆղանստանի հյուսիսային շրջանները: Տե՛ս История народов Узбекистана, т. 1, Ташкент, 1950, с. 44, Большая советская энциклопедия, т. 2, Москва, 1970, с. 550:

¹⁰ Տե՛ս **Ртвеладзе Э. В.**, Кушанское царство: династии, государство, народ, язык, письменность, религии, Ташкент, 2019, с. 67:

րիայից Մեծ Հայք գաղթի վերաբերյալ առաջիններից մեկը նշել է Գ. Ասլանը, սակայն նա, զանց առնելով սկզբնաղբյուրների հաղորդումները, այն թվագրում է նախքան պարթևական արքայատոհմի կործանումը¹: Արևելագետ Ժ. Լորանը², Ս. Կոզյանը³ և Խ. Վեմյանը⁴ տոհմի նախահայրենիքը նույնպես համարում են Բակտրիան: Սակայն հեղինակների մի խումբ գաղթը իրավացիորեն տեսնում է ոչ թե նախքան Արշակունիների անկումը, այլ Սասանյանների առաջին տասնամյակներին⁵: Անվանի պատմաբան Հ. Մանանդյանը, նախապատվությունը տալով Սեբեոսի հաղորդմանը, ընդգծում է, որ Մամիկոնյանների նախնիները՝ «Մամիկն ու Կոնակը, գաղթել են Հայաստան Ճենաստանից, այսինքն՝ Անդրկասպյան երկրի արևելյան շրջաններից»⁶: Ե. Քասունին նշում է, որ Ճենաց աշխարհը Չինաստանը չէր, այլ նրան հարակից երկիր Կենտրոնական Ասիայում, և բուն Ճենաստանը ընդգրկում է Քաշկարի և Խոզանդի շրջանները, Քաշմիրը և Աֆղանստանի որոշ մարզեր⁷: Խ. Վեմյանը նույնպես Ճենաստանը Չինաստան չի համարում, այլ նշում է, որ Մամիկոնյանների մեկնավայրը Միջին Ասիայում է (Բակտրիայում)⁸: Վ. Վարդանյանը, հպանցիկ անդրադառնալով հարցին, Ճենաստանը համարում է առանձին պետություն՝ շեշտելով, որ այն գտնվում էր «պատմական Թուրքաստան և Կաշմիր մարզերն ընդգրկող երկրամաս Քուշանաց թագավորության կազմում»⁹:

Հ. Սվազյանը, որը նույնպես Ճենաստանը համարում է առանձին պետություն, այն տեղադրում է անմիջապես Խորասանից հետո՝ Պարսկաստանի արևելյան սահմաններից ոչ շատ հեռու հոսող Ամու-Դարյա գետի

¹ Տե՛ս **Aslan K.**, *Études historiques sur le peuple arménien*, Paris, 1909, p. 139: Գ. Աբգարյանը Մամիկոնյանների՝ Ճենաստանից Մեծ Հայքում հաստատվելը տեսնում է ոչ թե III դարի կեսին, այլ ավելի վաղ՝ առաջին Արշակունի հայ թագավորների ժամանակ (**Աբգարյան Գ. Վ.**, նշվ. աշխ., էջ 90) և նշում, որ Տրդատ Գ-ի ժամանակ արդեն սպարապետության պաշտոնն էին վարում (տե՛ս նույն տեղում, էջ 87): Սակայն հեղինակը չի մանրամասնում, թե առաջին Արշակունիներ ասելով կոնկրետ որ ժամանակաշրջանը նկատի ունի, երբ Մեծ Հայքում I դարում հաստատվեց Արշակունիների գահատոհմը, թե՛ երբ գահը դարձավ ժառանգական:

² Նշենք, որ Ժ. Լորանի աշխատանքը հրատարակվել է 1919 թ., սակայն օգտվել ենք հետագա վերահրատարակությունից: Տե՛ս **Laurent J.**, *L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886*, Lisbonne, 1980 p. 101, 116, rem. 109:

³ Տե՛ս **Կոզեան Ս.**, նշվ. աշխ., էջ 13-14:

⁴ Տե՛ս **Վեմյան Խ.**, նշվ. աշխ., էջ 204:

⁵ Տե՛ս **Կոզեան Ս.**, նշվ. աշխ., էջ 13-14, **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 93, 94, **Երեմյան Ս. Տ.**, Հայ-քուշանական պայքարը Սասանյանների դեմ // «ՀԺՊ», հ. II, Երևան, 1984, էջ 30, ծան. 41:

⁶ **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 93:

⁷ Տե՛ս **Քասունի Ե.**, նշվ. աշխ., էջ 81, 95, 97:

⁸ Տե՛ս **Վեմյան Խ.**, նշվ. աշխ., էջ 204:

⁹ **Թովմա Արծրունի** և **Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Մ. Վարդանյանի, Երևան, 1985, էջ 523, ծան. 207:

ափերին¹, և նշում. «Ճենաց երկիրը տարածված է եղել Ամու-Դարյայի և Սիր-Դարյայի միջև տեղավորված տարածության այն մասում, որը հետագայում արաբներից նվաճվելուց հետո, նրանց կողմից կոչվեց Մավերաննահր՝ Սարմարղանդ կենտրոնով»²: Մամիկոնյան իշխանական տոհմի մի շարք առանցքային հարցերի անդրադարձած Հ. Դավթյանը, քննության ենթարկելով նաև խնդրո առարկա հարցը, նշում է, որ Ճենաց աշխարհը գտնվում է Ասիա մայրցամաքի խորքում. «Մամիկոնյանները Ճենքից կամ Ճենաստանից էին, որը բուն Չինաստանը չէր, այլ նրան հարակից երկիր էր»³:

Այսպիսով՝ հեղինակների գերակշիռ մասը, հենվելով աշխարհագրիչների ու պատմիչների տեղեկությունների վրա, կարծում է, որ Մամիկոնյանները եկել են Ճենաստանից, և ինչպես Ճիշտ նկատել է Ե. Քասունին, այն ունեցել է փոփոխական սահմաններ⁴: Նույնը կարելի է ասել նաև Քուշանաց աշխարհի վերաբերյալ, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, հայկական սկզբնաղբյուրների մեծ մասը տարբեր դարերում տարբեր կերպ է նկարագրում Ճենաստանը և նրա հարևաններին: Հարկ է նշել, որ հստակ է միայն այն, որ ըստ «Աշխարհացոյցի»-ի՝ Ճենաստանը հարավից սահմանակցում էր Հնդկաստանին, սահմանի արևմտյան մասով՝ Քուշանաց երկրին, ապա նոր միայն դրանից արևմուտք Պարսկաստանն էր⁵, քանի որ Անանունը ընդգծում է, որ Մամիկոնյանները Ճենաստանից հետո ապաստան գտան Քուշանաց երկրում՝ Բահլ Շահաստանում: Իսկ ինչպես գիտենք Ղևոնդի հաղորդումից, Մահմեդը, Պարսկաստանը և վերջինիս նահանգ Խորասանն անցնելով, ոչ թե անմիջապես հասավ Ճենաստան, ինչպես նշում է Հ. Սվազյանը⁶, փորձելով Ճենաց աշխարհը դարձնել Պարսկաստանին անմիջապես հարևան երկիր, այլ ըստ պատմիչի՝ Խորասանից հետո «երթեալ հասանէր ի մասն ինչ Ճենաց աշխարհին»⁷, անցնելով Քուշանաց երկրով: Մեկ անգամ ևս նշենք, որ Վարդան Վարդապետը ևս քուշանների երկրից հետո է նախանշում Ճենաստանը՝ որպես նրան անմիջական հարևան երկիր: Սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկությունները համադրելով՝ կարելի է նշել, որ Ճենաստանն արևմուտքից անմիջական սահմանակից էր Քուշանաց երկրին և նրա կենտրոն Բակտրիային,

¹ Տե՛ս **Սվազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 208:

² Նույն տեղում, էջ 209:

³ **Դավթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 55, 56, 309, *նույնի*՝ Ուլքե՞ր են և որտեղի՞ց են եկել առաջին Մամիկոնյանները // «ՊԲՀ», 2015, թիվ 3, էջ 149:

⁴ Տե՛ս **Քասունի Ե.**, նշվ. աշխ., էջ 95:

⁵ Պարսկաստանի և Քուշանաց երկրի հարևանությունն արտացոլված է նաև տարբեր ժամանակների քարտեզներում: Տե՛ս Карта по Птоломею (տե՛ս «Աշխարհացոյց»-ի հավելվածում), Европа и Азия в IV в. (տե՛ս Очерки истории СССР), Les Églises du royaume de Perse (տե՛ս <https://roland-expert.tivejournal.com/491239.htm>.), Северо-западная граница Кушанского государства (տե՛ս **Ртвеладзе Э. В.**, նշվ. աշխ., էջ 69):

⁶ Տե՛ս **Սվազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 208:

⁷ «Պատմություն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», էջ 37:

հարավից՝ Հնդկաստանին՝ ընդգրկելով ներկայիս Քաշմիրի հյուսիսային որոշ շրջաններ, հյուսիսից, ըստ պտղոմեոսյան նկարագրության, պետք է սահմանակից լիներ Սակաստանին, որից հյուսիս տարածվում էր սկյութական աշխարհը, իսկ արևելքից սահմանակցում էր Չինական կայսրությանը՝ գուցե խնդրո առարկա ժամանակահատվածում մաս կազմելով չինական աշխարհին, քանի որ Չինաստանի սահմանները չպետք է դիտարկել ներկայիս չափանիշներով, քանզի այն տարբեր դարերում փոփոխական է եղել:

Այսպիսով՝ Մամիկոնյանները 240-ական թվականների առաջին կեսին, ներքին խժոժությունների պատճառով թողնելով իրենց նախահայրենիքը՝ Ճենաստանը, ապաստան գտան Մեծ Հայքում՝ Տրդատ Բ-ի մոտ, որն աշխարհաքաղաքական բարդ պայմաններում պայքարում էր Սասանյան ծավալապաշտական քաղաքականության դեմ: Մամիկոնյաններն իրենց քաջության և շրջահայացության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում դասվեցին ավագ նախարարների շարքին և երկար դարեր գլխավորեցին հայ ժողովրդի օրհասական պայքարը:

Արգիշտի Վարդանյան – Մամիկոնյանների ծագման խնդիրը պատմագիտության մեջ և նրանց նախահայրենիքի տեղորոշման հարցը

Թե՛ Արշակունյաց թագավորության և թե՛ մարզպանության շրջանում հայ նախարարական տների պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Մամիկոնյան իշխանական ընտանիքի գործունեությունը: 240-ական թվականների կեսերին ներքին խռովությունների արդյունքում և աշխարհաքաղաքական բարդ պայմանների հետևանքով նրանք լքեցին իրենց հայրենիքը՝ Ճենաստանը: Վերջինիս տեղորոշումը շուրջ երկու հարյուրամյակ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է, որոնք հայտնել են տարբեր տեսակետներ այդ հարցում: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Մամիկոնյանների նախահայրենիքը հարավից սահմանակցում էր Հնդկաստանին, արևմուտքից՝ Քուշնաց աշխարհին, հյուսիսից՝ Սակաստանին, իսկ արևելքից՝ Չինական կայսրությանը: Դուրս գալով իրենց հայրենիքից՝ Մամիկոնյանները նախ ապաստան գտան Բահլում՝ Վասուդևա Արշակունու մոտ: Վերջինիս ջանքերի շնորհիվ ազատվելով պատժից՝ նրանք հանգրվանեցին Մեծ Հայքում՝ Տրդատ Բ-ի մոտ, որն այդ ժամանակ անհավասար պայքար էր մղում Սասանյան աշխարհակալության դեմ՝ փորձելով պաշտպանել երկրի գոյությունը և անկախությունը: Հետագա տասնամյակներում Մամիկոնյանները ոչ միայն դասվեցին առաջնակարգ նախարարների շարքում, այլև գլխավորեցին այնպիսի առանցքային գործակալություն, ինչպիսին էր հայոց բանակի սպարապետությունը:

Արցիշտի Վարդանյան – Проблема происхождения рода Мамиконянов в историографии и вопрос о локализации их прародины

Ключевые слова – Мамиконяны, Мамгун, Мамик и Конак, Великая Армения, Ченастан, Мовсес Хоренаци, Ананун, Трдат II, Кушанское царство, Китай, Ашхарацуйц (География), первоисточники

Как в годы правления династии Аршакуни, так и в период марзпанства в истории армянских нахарарских домов особое место занимает деятельность княжеского дома Мамиконянов. В середине 240-х годов в результате внутренних раздоров и сложной геополитической ситуации они покинули свою родину (Ченов), вопрос локализации которой на протяжении двух столетий оставался в центре внимания исследователей, высказывавших разные точки зрения. Исследования свидетельствуют о том, что прародина Мамиконянов на юге граничила с Индией, на западе – с Кушанским царством, на севере – с Систаном, а на востоке – с Китайской империей. Покинув родину, Мамиконяны сперва нашли пристанище в Балхе – у Васудева Аршакуни. Благодаря усилиям последнего избежав наказания, они обосновались в Великой Армении, у Трдата II, который боролся с господством Сасанидов, пытаясь сохранить независимость страны. В последующие десятилетия Мамиконяны не только снискали славу лучших нахараров, но и возглавили такое ключевое звено, каким являлось спарпетство армянской армии.

Argishti Vardanyan – The Issue of Mamikonyans' Origin in Historiography and the Question of their Homeland's Location

Key words – Mamikonyans, Mamgun, Mamik and Konak, Greater Armenia, Chenastan, Movses Khorenatsi, Ananun, Trdat II, Kushan Empire, China, Ashkharatsuyts (Geography), primary sources

Both during the reign of the Arshakuni dynasty and Marzpanate period, the activities of the Mamikonyan princely family played a special role in the history of the Armenian Nakharar houses. In the mid-240s, as a result of internal strife and a difficult geopolitical situation, they left their homeland - Chenastan, the issue of localization of which for two centuries remained in the focus of attention of researchers who have expressed different points of view. Studies show that the ancestral home of the Mamikonyans bordered India in the south, the Kushan Empire in the west, Sistan in the north, and the Chinese Empire in the east. Having left their homeland, the Mamikonyans first found refuge in Bahl, where Vasudev Arshakuni gave them shelter. Owing to the efforts of the latter, having escaped punishment, they settled in Greater Armenia, where Trdat II reigned, who fought against the rule of the Sassanids, trying to preserve the independence of the country. In subsequent decades, the Mamikonyans not only gained fame as the best nakharars, but also headed the key position in the Armenian army - the position of Sparapet (supreme commander).

Ներկայացվել է 03.05.2022

Գրախոսվել է 31.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Արգիշտի Վարդանյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (geghamavan@schools.am)

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐԲԱՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ
(VIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

Բանալի բառեր – Միոն Ա Բավոնեցի, Եսայի Ա Եղիպատրուշեցի, Սողոմոն Ա Գառնեցի, Հովսեփ Բ Փարպեցի, Ղևոնդ պատմիչ, Հայոց կաթողիկոս, Պարտավի եկեղեցաժողով, արաբական խալիֆայություն, եկեղեցական կալվածք, հարկային քաղաքականություն, եկեղեցական ունեցվածքի կողոպուտ

Արաբների կրոնական քաղաքականության ընդհանուր բնութագիրը

Արբալայան խալիֆայության օրոք արմատապես փոխվում է իրավիճակը ենթակա քրիստոնեական երկրներում: Կրոնական, սոցիալական, իրավական բռնություններով ուղեկցվող հարկային քաղաքականությունն ու զավթումները անտանելի վիճակ էին ստեղծում հայ ժողովրդի համար: Սոցիալական թշվառության հասցնող կեղեքումները տարածվում էին ժողովրդի բոլոր խավերի վրա՝ թե՛ նախարարի ու շինականի, թե՛ հոգևորականի ու զինվորականի: Արաբների թիրախում Հայաստանի ներքին ինքնավարությունը մարմնավորող հասարակական երկու կարևոր ինստիտուտներն էին նախարարական համակարգը և եկեղեցին: Նրանք հասկանում էին, որ այդ երկու հաստատությունների քայքայումը և թուլացումը զգալիորեն կոյուրացնեն իրենց կառավարումը: Բռնագրավում էին հայ նախարարների և եկեղեցու տիրույթներն ու կալվածները, սահմանափակում նրանց իրավունքները: Այս ամենի հետևանքով խարխվում էր հոգևոր-ավատական կառույցի տնտեսական հիմքը՝ եկեղեցական հողատիրությունը: Հոգևորականությունը դառնում էր հարկատու, ենթարկվում կրոնական բռնությունների և հավատափոխության: Խալիֆայությունը սահմանափակումներ էր կիրառում եկեղեցական արարողությունների համար: Արգելվում էին քաղաքների միջով խաչերով և սրբապատկերներով եկեղեցական թափոռների անցումները, եկեղեցիներում կոչնականեր հնչեցնելը, ճանապարհների վրա և այլ վայրերում խաչեր կանգնեցնելը¹: Արգելվում էին նոր եկեղեցիների կառուցումն ու հների վերանորոգումը: Արբալայանները երբեմն նաև քանդում էին նոր եկեղեցիները²:

Սակայն լինում էին նաև «շեղումներ» խալիֆայության կանոնադրած

¹ Տե՛ս Գիրգր Բ., Права христиан на востоке по мусульманским законам, СПб., 1865, с. 68:

² Տե՛ս Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, Արու Յուսուֆ, ներած. և բնագրերից թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 111, 116: Օմայյան խալիֆները վարում էին կրոնական հանդուրժողականության քաղաքականություն, քրիստոնյաները հետապնդումների չէին ենթարկվում: Քրիստոնեական նվաճված երկրներին տրված էր կրոնական ինքնավարություն: Ճիշտ է, արգելված էր նոր եկեղեցիների կառուցումը, սակայն նաև չէր կարելի քանդել քրիստոնեական հները (տե՛ս Գիրգր Բ., նշվ. աշխ., էջ 65, 70):

ուղղությունից, երբեմն թույլ էին տալիս նոր եկեղեցի կառուցել: Դա պայմանավորված էր օրվա տիրակալի բնավորությամբ և արժեքային համակարգով¹: Մուսուլմանական որոշ իրավագետներ այն կարծիքին էին, որ արաբ տիրակալները չպետք է միջամտեն քրիստոնյաների կրոնական ծիսակատարություններին ու սովորույթներին, եթե դրանք վնաս չեն բերում մուսուլմանական համայնքին: Եթե խաչը կամ սրբապատկերը եկեղեցում կամ նրա կալվածքներում էին գետեղվում, ապա իշխանությունները չէին միջամտում²:

Խալիֆայությունը ոչ միշտ էր վարում բռնի իսլամացման քաղաքականություն, բայց ի վերջո խալիֆները շահագրգռված էին, որ պետության բոլոր նահանգներում լինի մեկ միասնական կրոն³: Այս մարտահրավերին Հայոց եկեղեցին փորձում էր դիմակայել հոգևորականության կարգավիճակն ու իրավունքները սահմանող պայմանագրերի կնքումով⁴: Այսպիսի պայմանագրի օրինակ է Սահակ Չորոփորեցի (677-703) կաթողիկոսի՝ Խառան ճանապարհորդելուց հետո Հայոց եկեղեցուն արաբների տված հրովարտակ-պայմանագիրը⁵: Արաբ խալիֆայից եկեղեցու իրավունքները և քրիստոնեության դավանումը երաշխավորող հրովարտակ է ստանում նաև Հովհան Օձնեցին՝ (717-728)⁶: Հոգևորականները տեսականորեն ազատված էին ջիզիայից՝ գլխահարկից, բայց շատ հաճախ ստիպված էին ընծաներ մատուցել արաբ կառավարիչներին: Վանականները ազատ էին գլխահարկից, քանի որ համարվում էին ընչազուրկներ, սակայն, ինչպես գրում է VIII դարի արաբ կրոնական իրավագետ Աբու Յուսուֆը, եթե պարզվում էր, որ ունեն որևէ հա-

¹ Տե՛ս **Tritton A. S.**, *The Caliphs and their Non-Muslim Subjects*, London, 1970, p. 38-39: Արաբական օրենսդրության դրույթները միշտ չէ, որ գործադրվում էին ճշտությամբ և խստությամբ, շատ բան կախված էր տիրող միապետից: Եթե նրանք կրոնամոլ և խստասիրտ էին, զիմմիները (հովանավորյալները) իրենց վրա զգում էին այս բոլոր արգելքների և ստորագումների ամբողջ ծանրությունը (տե՛ս **Լեռ**, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 279):

² Տե՛ս Արաբական աղբյուրներ, էջ 115:

³ Տե՛ս **Тер-Гевондян А. Н.**, *Армения и арабский халифат*, Ереван, 1977, с. 225-226:

⁴ Պայմանագիրը կամ ապահովության գիրը մուսուլման իշխողները կարող էին տալ թե՛ խալիֆայությանը հպատակ ոչ մուսուլմաններին, թե՛ այլ պետության հպատակին, որն ապաստանում էր խալիֆայությունում: Նման պայմանագիրը պետք է ընդունելի լիներ բոլոր մուսուլմանների համար: Պայմանագիր ունեցող քրիստոնյաներն ապաստամբության դեպքում կորցնում էին ամեն ինչ (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայ ժողովրդի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության ներքո // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1975, թիվ 4, էջ 75-76): Արաբ գորավար Հաբիբ իբն Մասլաման պայմանագիր է կնքում Դվինի բնակիչների հետ, որով երաշխավորում է նրանց ունեցվածքը, եկեղեցիները, տաճարները այնքան ժամանակ, քանի դեռ նրանք հավատարմորեն կվճարեն գլխահարկը (ջիզիա) ու հողահարկը (խարաջ) (տե՛ս Արաբական աղբյուրներ, էջ 271):

⁵ Տե՛ս Պատմաբանություն Դետոնդեայ մեծի վարդապետի հայոց // Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 753-754:

⁶ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 68: Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ այս հրովարտակում հավանաբար ձևակերպված են եղել նաև եկեղեցու հողատիրական իրավունքները (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 80):

սույթ, նրանցից գլխահարկ էր գանձվում¹: Այսպիսի վերապահումները պատեհ սողանքներ էին արաբ հարկահանների համար՝ մտնելու հայկական հարուստ վանքերը և կողոպտելու՝ պատճառաբանելով, թե վանականներն ի վիճակի են գլխահարկ վճարելու: Նման օրինակներ են Բագավանի Սուրբ Գրիգոր², Վասպուրականի Վարագա վանքերում տեղի ունեցած դեպքերը³:

Հայ ժողովրդի հարստահարությունը, ինչպես նկարագրում է Ղևոնդ պատմագիրը, աննախադեպ բնույթ ընդունեց Աբբայան խալիֆ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրի օրոք (754-775): Ոչ միայն մեծապես ավելացրին հարկերը, այլև պահանջում էին նախկին երեք տարվա չվճարածը: Աբու-Ջաֆար ալ-Մանսուրը հարկ էր պահանջում մինչև իսկ հանգուցյալներից, ուստի և քահանաներին հրամայել էր ներկայացնել մահացածների և նրանց ընտանիքների ցուցակները: Չվճարող շինականների պարանոցին կապարե կնիք էին դրոշմում⁴: Հասարակ մարդկանց խոշտանգում էին փոկահարությամբ, գելարաններով և կախադաններով, իսկ ոմանց «մերկացեալ ի զգեստուցն՝ արկանէին ի մէջ լճից յաւուրս դառնաշունչ ձմերայնոյ եւ կարգէին ի վերայ պահապանս», որպեսզի թույլ չտային նրանց ջրից դուրս գալ⁵: Չարչարանքների և ծաղրի էին ենթարկվում նաև հայ հոգևորականները. «Եւ եւս առ այսոքիւք արհամարհութիւնք հայրապետաց, այպանութիւնք եպիսկոպոսաց, զան եւ խոշտանգանք քահանայից, իշխանաց եւ նախարարաց քարշանք եւ քայքայութիւնք. որում ոչ կարացեալ հանդուրժել զաւրագլուխք աշխարհիս՝ հեծէին եւ հառաչէին յանհանդուժելի տագնապէն»⁶: Այս ամենը Հայաստանում կատարվում էր Եզիդ իբն Ուսայդ ոստիկանի ձեռքով (759-769): Անհանդուրժելի հարկապահանջության և կամայականությունների դեմ Հայոց իշխան Սահակ Բագրատունին և կաթողիկոս Տրդատ Ա Ռթմեցին (741-764) քանիցս բողոք են ներկայացնում նրան, սակայն նա անպատասխան է թողնում նրանց գանգատները: Ի վերջո հարստահարությունների վերաբերյալ նրանց բողոքը հասնում է խալիֆին, որը նրան ետ է կանչում և փոխարենը նշանակում նոր ոստիկան՝ «զԲաքար որդի Մսլիմայ» (769-771) անունով⁷: Սակայն դրությունը մնում է անփոփոխ:

¹ Տե՛ս Արաբական աղբյուրներ, էջ 101: Քրիստոնյա վանականները, անկախ հասությոնե-րից, Մուհամմեդի խոսքով ազատված են եղել գլխահարկից (տե՛ս **Գըրաօ Բ.**, նշվ. աշխ., էջ 29):

² Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն հայոց // Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 424:

³ Տե՛ս **Թովմա Արծրունի** եւ **Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց // Նույն տեղում, էջ 228, 226:

⁴ Սկզբնական շրջանում սովորաբար տուրք վճարողների վզին կապարե կնիք էր դրվում (խատամա ֆի բիքար): Ավելի ուշ ներմուծվում է ստացականի ձևը (տե՛ս **Նալբանդյան Հ.**, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1954, թիվ 12, էջ 80, ծանոթ. 1):

⁵ Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 829:

⁶ Նույն տեղում:

⁷ Տե՛ս **Մարկուարտ Թ.**, Վրական Բագրատունեաց ծագումը // «ՀԱ», 1912, թիվ 12, էջ 713:

Միոն Բավոնեցու աթոռակալությունը

767 թ. վախճանվում է երեք տարի աթոռակալած կաթողիկոս Տրդատ Դասնավորցին (764-767), և նոր կաթողիկոս է ընտրվում Աղձնիքի եպիսկոպոս Միոն Բավոնեցին: Նրա այդ պաշտոնում նշանակվելը մեզ հասած միակ դեպքն է, երբ արաբները միջամտում են Հայոց կաթողիկոսի ընտրությանը, քանզի արաբ ոստիկանները հազվադեպ էին միջամտում նման ընտրությանը: Պատճառն այն է, որ Հայաստանում մեծ հեղինակություն էր վայելում Հայոց իշխանը, որը վճռական ձայն ուներ կաթողիկոսի ընտրության հարցում: Նա միջնորդ էր խալիֆայական իշխանությունների և հայ ժողովրդի միջև, ուստի ոստիկանի դերն այս դեպքում որոշակիորեն սահմանափակվում էր¹: Միոն Ա. Բավոնեցին սերում էր Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի Բավոնք գյուղից, որի անունը հանդիպում է նաև Բավոնիք, Բզնույք և Բիսովնք գրությամբ²: Երիտասարդ տարիներին նա դաստիարակվում և ուսանում է հայրապետանոցում, ցուցաբերում «բնաւոր առաքինութիւնս»³: Նրա մասին Մ. Չամչանը գրում է. «Տղայ գոլով հասակաւ, օրինակ բարի եղև ծերոց. և վարժեալ յամենայն առաքինութիւնս և յուսումն աստուածային գրոց՝ եղև այր կատարեալ»⁴: Հայոց կաթողիկոս Տրդատ Ռթմեցու (741-764) օրոք Միոն Բավոնեցին ձեռնադրվում է Աղձնիքի եպիսկոպոս: Եպիսկոպոսական պաշտոնավարության ժամանակ Միմ լեռան ցամաքած աղբյուրին վերստին հորդահոս ջուր պարգևելու հրաշագործությունը մեծ հռչակ է բերում նրան, ուստի ճանաչված էր որպես «այր սուրբ եւ սքանչելի»⁵:

Միոն Բավոնեցու աթոռակալությունը համընկնում է Արմինիայի ոստիկան Սուլեյմանի պաշտոնավարությանը (759-770), որը մինչ այդ հարավային գորքերի հրամանատարն էր⁶: Սուլեյմանը անձամբ ճանաչում էր Աղձնյաց

¹ Արաբական խալիֆայության մեջ կային մի քանի ազգային կրոնական համայնքներ՝ ասորի Նեստորականների, ասորի Հակոբիկների, հունաղավան Մեթոնների, Մարոնիների, հայկական և դպտի եկեղեցիները: Այս եկեղեցիների պետերը եկեղեցական ժողովի կողմից ընտրվելուց հետո պետք է հաստատվեին նաև խալիֆայական հրովարտակով: Հաճախ խալիֆաներն անձամբ միջամտում էին և արգելում որևէ պատրիարքի ընտրություն (տե՛ս Tritton A. S., նշվ. աշխ., էջ 78-88, **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 79-80): Հայոց կաթողիկոսին արաբները անվանում էին «ջաթլիկ», «ջաթիկ» (տե՛ս **Մովսես Կաղանկատուացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 296):

² Կիրակոս Գանձակեցին Միոն Բավոնեցու ծննդավայր նշում է Բագավանը, որը, կարծում ենք, թյուրիմացություն է, որովհետև այն նույնիսկ Արագածոտնում չի գտնվում (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 71):

³ **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 422:

⁴ **Չամչան Մ.**, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 410:

⁵ Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 75:

⁶ Տե՛ս **Ֆասմէր Ռ.**, Հայաստանի ոստիկաններու ժամանակագրութիւնն առաջին Աբբասեանց օրով // «ՀԱ», 1928, թիվ 3-4, էջ 157: Հ. Նալբանդյանի կարծիքով՝ ոստիկան Սուլեյմանը Եզիդ իբն Ուսայդ աս Սուլամին է (տե՛ս **Նալբանդյան Հ.**, Արաբացի ոստիկանները

եպիսկոպոս Սիոն Բավոնեցուն և պատշաճ վերաբերմունք ունեւ նրա նկատմամբ: Պահպանվել է մի պատմություն այն մասին, թե ինչպես Սասունում՝ Սիմ լեռան ստորոտում գտնվող Բազմաբուխ աղբյուրը ցամաքում է, որը «բազում այգեստանք եւ բուրաստանք տնկոց եւ արտավարք ոռոգանեալ բուծանէին»: Դրա հետևանքով աղբյուրից օգտվող գյուղերի բնակչությունը հայտնվում է ծանր կացության մեջ: Կատարվածը խորապես հուզում է Սուլեյմանին, որը դիմում է Սիոն եպիսկոպոսի օգնությանը: Բնակիչները, հավաքվելով ցամաքած աղբյուրի մոտ, եպիսկոպոսի գլխավորությամբ աղոթում են, իսկ Սիոնի գավազանի հարվածից հետո «յանկարծակի յական թաւթափելն բղխէ աղբիրն՝ վտակեալ յորդաբուղիս ականակիտ պարգուածիւ» և վերստին ոռոգում ցամաքած հողերը: Կատարվածը մեծ տպավորություն է թողնում արաբ հրամանատարի վրա: Վերջինս, տեսնելով Դվինի թափուր հայրապետական աթոռը, «վաղվադակի առաքէ ի խնդիր եպիսկոպոսին Սիոնի, եւ ածեալ կացուցանել զնա հրամայէ յաթոռ հայրապետութեան»¹:

Վայելելով արաբ ոստիկանի հովանավորությունը՝ նորընտիր կաթողիկոսը ձեռնամուխ է լինում երկրում հաստատելու հանդարտություն և եկեղեցական բարձիթողի եղած կանոնները կրկին կյանքի կոչելու: Այդ անելու համար հարկավոր էր եկեղեցական ժողով գումարել, որի անհրաժեշտության առնչությամբ կաթողիկոսն ասում է. «Միաբանական ժողով ամ յամէ մեզ արժան է հասանել, քննել եւ տեսանել զկարգս եկեղեցւոյ, զոր կանոնեցին սուրբ հարքն, թէ որպէս ունիցին առաջնորդք կամ ժողովուրդք եկեղեցւոյ»²: Ժողովը տեղի ունեցավ նրա աթոռակալության սկզբնական ժամանակաշրջանում: Ավելի ուշ հնարավոր չէր, քանի որ կարճատև հանդարտությունը շատ չանցած խախտվեց. Հայաստանը հայտնվեց խռովությունների խառնարանում, երբ անհնար էր եկեղեցական ժողով գումարել: Ուստի Մաղաքիա Օրմանյանը ժողովի հավանական տարեթիվ է համարում 768 թ.³: Այն գումարվեց ոչ թե Դվինում, այլ Պարտավում, որն Աղվանից եկեղեցու՝ Հայոց Արևելից կողմերի կաթողիկոսական աթոռանիստն էր: Պարտավի ընտրությունը թելադրված էր անվտանգության նկատառումներով, քանզի այնտեղ համեմատաբար ապահով էր: Դվինում մեծաքանակ արաբ վերաբնակիչների հաստատումը ոչ միայն քաղաքի ժողովրդագրական պատկերն էր փոխել,

Հայաստանում // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, թիվ 8, էջ 112):

¹ **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 423: Արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ այս փաստը ուղղակի միջամտություն չէ, այլ ավելի շատ առաջարկ է (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 80):

² Կանոնագիրք Հայոց, աշխատասիր. Վ. Հակոբյանի, հ. Բ, Երևան, 1971, էջ 4, **Ղլտճեան Ա.**, Կանոնք Պարտաւի ազգային ժողովի, Վաղարշապատ, 1905, էջ 11:

³ Տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, § 605, պունակ 1027:

այլև իշխող վարչակազմի ազգային և կրոնական պատկանելությունը¹: Այս հանգամանքը խոչընդոտ էր հայ հոգևորականության ազատ գործունեության համար, որի վկայությունը Դավիթ Արամունացու (728-741) օրոք կաթողիկոսական նստավայրի տեղափոխումն էր Դվինից Արամունք:

Պարտավի ժողովի մասնակիցներից անվանապես հիշատակվում են Ոստանի Գևորգ, Սյունյաց Սադովկ և Գողթանի Եսայի եպիսկոպոսները, Սահակ Բագրատունի պատրիկը, Ատրներսեհ Սյունին, Սմբատ Բագրատունին, Մեհրուժան Արծրունին, Վահրամ Խորխորունին, Արտավազդ Աշոցյանը, Վահան Վանանդեցին, Սահակ Գողթնացին, Աղվանից կաթողիկոս Դավիթը, Վարազբուրդակ Վաչագանյանը, Վարդան Սատոնյանը, Տիրիկ Քարոնյանը և ուրիշներ: Ժողովին, ինչպես հավաստում է կաթողիկոսը, որոշ եպիսկոպոսներ մասնակցել չկարողացան, ուստի նամակով դիմեցին Հայոց հայրապետին՝ հայտնելու իրենց խորհուրդները դրա ավարտից հետո. «Կոչեցի զեպիսկոպոսակիցս իմ ի հոգեկան հարկիս այստրիկ, խորհուրդ տնտեսել մեզ սպասաւորաց բանին, զոր ընկալաք յանձին՝ հովուել զժողովուրդ Տեառն, հաստատել զաւանդեալ աւրինադրութիւն սուրբ հարցն, իսկ զթերին լնուլ բարեպաշտութեամբ, ի նոյն կանոն միաբանել: Եւ վասն զի ամենայն ուրեք խափան եւ արգելեալ տեսանեմք զգործ մշակութեան վերատեսուչ դիտողաց եկեղեցոյ ի բռնագոյն գործավար իշխեցողաց, որ ընդ մեզս են եպիսկոպոսացս որոց խափան եղել ի նոցանէ առ մեզ գալ, հաւանական իւրեանց թղթովք գրեցին մեզ ածել յաւարտումն բարի զբարութեալեւ խորհուրդն»²: «Կանոնագիրք Հայոց»-ում Պարտավի ժողովի կանոնները դրված են Վաչագան Բարեպաշտի կանոններից առաջ, որը ժամանակագրորեն ճիշտ չէ, սակայն թերեւս ճիշտ է Մաղաքիա Օրմանյանի այն ենթադրությունը, թե Պարտավում հիշյալ կանոնները թարմացվեցին³:

Պարտավի ժողովն ընդունեց 24 կանոն, որոնք «Կանոնագիրք Հայոց»-ում հայտնի են իբրև «Կանոնք Սիոնի հայոց կաթողիկոսի»⁴: Կանոնները վերաբերում են եկեղեցական կարգ ու կանոնին, եկեղեցականների պարտավորություններին և իրավունքներին: Ժողովրդի մասին չհոգացող և իրենց պարտականություններում ծուլացող եպիսկոպոսները, քորեպիսկոպոսները և քահանաները պետք է կարգալույծ արվեին: Եպիսկոպոսներին արգելվում էր ուրիշ վիճակներից քահանա ձեռնադրել, բռնությամբ եկեղեցական տուգանքներ գանձել, սեղանի և եկեղեցու նվիրատվությունները քահանաներին հանձնել: Նրանք պետք է օրհնեին միայն «ի հայրապետանոցէն» ստացած

¹ Տե՛ս **Ադոնց Ն.**, Բագրատունյաց փառքը // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան 2006, էջ 442-443, **Юзбашян К.**, Армянские государства в эпоху Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 46:

² Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 4-5, **Ղլտճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 11-12:

³ Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 605, պունակ 1028:

⁴ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 3-18, **Ղլտճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 10-25:

մեռոնը: VI կանոնով սահմանվում էր եկեղեցիներում վարդապետներ նշանակել և քարոզչությունը չդադարեցնել, որպեսզի չկարողանան «ճարակող աղանդք հերձուածոցն ի ներքս (եկեղեցի – Վ. Ա.) մտցեն»: VIII կանոնում ակնարկվում է այն մասին, որ երբեմն տգետ քահանաները մկրտության ավագանը անարգում են և ջուրը «լուացման հանեն արտաքս հեղուն ի կոխումն և յապականութիւն»¹: Քահանաները պետք է իրենց պարտականություններն անխափան կատարեն, պատրաստեն պատարագի նշխարքը, բաժակում բավականաչափ գինի լցնեն և այնուհետև այլ գինի չխառնեն: XV կանոնում նշվում էր, որ կրոնավորը չպետք է թողնի իր վանքը և «տեղափոխ լինի ուխտէ յուխտ»: Վանքը կարելի էր թողնել միայն առաջնորդության հանձնարարությամբ՝ քարոզչության նպատակով: Եկեղեցական հաստատություններին կարգադրվում էր վանքերի հասույթներն անխափան պահել և դրանք ծախսել միայն եկեղեցու առաջնորդների, հյուրերի, աղքատների և կարոտյալների վրա: Հասույթները հափշտակողները և յուրացնողները ենթարկվում էին նգովքի: Արգելվում էր հարկերը վճարելու համար «վաճառեցէ զեկեղեցի կամ զսպաս սրբութեան կամ ի կարասւոյ կամ յանդաստանաց եկեղեցւոյ»:

XI կանոնով արգելվում էր ամուսնությունը հեթանոսների հետ, իսկ XIII կանոնով՝ երրորդ ամուսնությունը: Երկրորդ ամուսնության դեպքում պետք է պահվեր ապաշխարության կանոնը: XVI կանոնով արգելվում էր ամուսնությունը ազգականների միջև՝ մինչև չորրորդ սերունդ: XVII կանոնը սահմանում էր ողորմություն այն թափառաշրջիկներին, «որք վիճակաւ են հաստատեալ», իսկ «աւտար վիճակաւորացն չտալ ինչ»: Դրա համար պատվիրվել է կառուցել անկելանոցներ՝ հիվանդներին և անկարողներին մի տեղ հավաքելու և թույլ չտալու, որ նրանք մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվեն: XVIII կանոնով քառասունքից, հոգոցից, ազապեից և այլ արարողություններից ստացված հասույթները պետք է հանձնվեն եկեղեցուն և տանրեցներին, և միայն ավելորդները կարելի էր տալ այլ եկեղեցիների կամ կրոնավորներին ու աղքատներին: XXI կանոնը արգելում էր եկեղեցին փակել առանձին անձանց հանցանքի, հանդիսությունների, զվարճության կամ հարկերի հավաքման պատճառով: Այս կարգադրությունն ուղղված էր թե՛ հոգևորականներին և թե՛ գեղջավազներին: XXII-XXIII կանոնները սահմանում էին մեկ տարվա ապաշխարություն գերության մեջ հեթանոսների հետ պղծվածներից կամ իրենց կամքից անկախ՝ հեթանոսներից պղծված կանանցից:

Վերջին՝ XXIV կանոնով, Հին կտակարանի գրքերից 37-ը ճանաչվում էին

¹ Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 9: Ստ. Մելիք-Բախշյանի կարծիքով՝ Պարտավի եկեղեցաժողովի մի շարք կանոններ (մասնավորապես VI, VIII, XVII, XXIV) ուղղված էին այդ ժամանակ Հայոց եկեղեցու համար մեծ վտանգ ներկայացնող պավիկյանների դեմ (տե՛ս Մելիք-Բախշյան Ս. Տ., Հայաստանը VII-IX դարերում, Երևան, 1968, էջ 252-253):

կանոնական: Հիշվում են Սուվսեսի Հնգամատյանը և բազմաթիվ այլ գրքեր: Պարտավի ցուցակում չեն հիշվում միայն ինը գիրք, որոնք նշանակությամբ երկրորդական են: Հետաքրքիրն այն է, որ դրանք չկան հրեական կամ Եզրի կանոնում, և բողոքականները դրանք սովորաբար դուրս են թողնում կանոնից: Ստացվում էր, որ Հայոց եկեղեցին նույն վերաբերմունքն ուներ հիշյալ ինը գրքերի նկատմամբ: Սա էր պատճառ դարձել, որ լատին քարոզիչները Պարտավի կանոնը լրացրել են և հավելել երկրորդականները, որպեսզի Հայոց և բողոքական եկեղեցու նույնատիպ մոտեցման հարցը վերանա¹:

Երկրի հարաբերական խաղաղությունը Պարտավի ժողովից հետո խախտվում է: Սուլեյմանը ետ է կանչվում², և Արմինիայի ոստիկան է կարգվում Հասան Իբն Կահաթբան (771-775): Երկրի հարստահարության քաղաքականությունն ամբողջ ուժով կրկին կյանքի է կոչվում, ժողովրդին կեղեքում են բոլոր հնարավոր և անհնարին միջոցներով: Բնակչության սպանություններն ու գերեվարությունները զանգվածային բնույթ էին ստանում. «Յաւուրս սորա (Սիոն Բավոնեցու – Վ. Ա.) եղեւ կոտորումն Քաղինոյ եւ Արենոյ եւ գիւղաքաղաքին Թալնայ», որտեղ սպանվեց յոթ հարյուր և գերվեց հազար երկու հարյուր մարդ³: Եվ որպես այս անտանելի վիճակի ուղղակի հետևանք՝ 774 թ. Հայաստանում սկիզբ է առնում մի հուժկու ապստամբություն, որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ղևոնդ պատմիչը: Շարժման գլուխ են կանգնում Մամիկոնյանները, որոնք ազատագրական ապստամբությունների առաջնորդ լինելը կարծես թե համարում էին իրենց տոհմային պարտականությունը⁴: Արաբներին տված ջարդերը և Արտավազդ ու Մուշեղ Մամիկոնյանների առաջին հաղթանակները մեծացնում են շարժման շրջանակները: Իրենց զորքերով նրանց են միանում մյուս նախարարները, ինչպես նաև «բազումք ի ռամիկ ժողովոց եկեալ խառնէին ի գունդն նոցա»⁵: Նրանց հետ չի միաբանում միայն Աշոտ Բագրատունին՝ Եզիդ ոստիկանից պատրիկ նշանակված Սահակ Բագրատունու որդին: 775 թ. գարնանը արաբները Ամր գորավարի գլխավորությամբ Խորասանի ընտիր զորքերից 30.000-անոց բանակ են ուղարկում ապստամբների դեմ: Անտեսելով Աշոտ Բագրատունու զգուշացումը՝ ապստամբները հարձակվում են Արճեշի վրա: Այստեղ դարանակալ Ամրի զորքերը գրոհում և փախուստի են մատնում հեծելազորը, իսկ անգեն և կովի անվարժ ռամիկներին կոտորում: Արճեշի պարտության լուրը բարոյալքում և վիատություն է առաջացնում Կարինը պաշարածների շարքերում: Հայերն ունեին ընդամենը 5000 կովով՝ հետևակ և թեթև զինված, մինչդեռ

¹ Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 607, պունակ 1030:

² Մեզ անհայտ սկզբնաղբյուրից օգտված Մ. Չամչյանը գրում է, որ Սուլեյմանը ոչ թե ետ է կանչվել, այլ մահացել է (տե՛ս **Չամչյան Մ.**, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 413):

³ **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 423:

⁴ Տե՛ս **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 554:

⁵ Պատմաբանություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 832:

Ամբը, որ գալիս էր նրանց դեմ, ուներ 30.000-անոց լավ զինված հեծելազոր: Հայկական փոքրաթիվ զորքը կարող էր հեշտությամբ խույս տալ թշնամու հետ ընդհարվելուց և անցնել Բյուզանդիայի արևելյան սահմաններ, սակայն «լաւ համարեցան ընտրել զմահ անձանց, քան տեսանել զկորուստ աշխարհիս եւ զանպատուութիւն եկեղեցեաց Քրիստոսի... ինքնական յաւժարութեամբ դիմեցին ի վիշտն. եւ ժողովեալ զգունդս իւրեանց իբրեւ արս հինգ հազար գնացին ի քաղաքէն Կարնոյ անցանէին ընդ սահմանսն Բասենոյ՝ ի գաւառն Բագրեւանդ»¹: Ճակատամարտը տեղի է ունենում Բագրեւանդ գավառում՝ Արածանի գետից դեպի հարավ՝ Արձնի գյուղի մոտ, 775 թ. ապրիլի 24-ին: Արաբների թվական գերակշռությունը գերազանցում է ապստամբների անձնուրացությանը: Ղևոնդի տվյալներով՝ ապստամբներից 3000 մարդ զոհվեց, որոնց մեջ էին Սմբատ Բագրատունի սպարապետը, նրա բարձակից և նիզակակից Սահակ Բագրատունին, Մամիկոնյաններից՝ Մուշեղ զորավարը և Սամուելը, նաև Վահան Գնունին և այլ նախարարներ: Բագրեւանդի ճակատամարտը բոլորովին սանձարձակ է դարձնում արաբներին, որոնք ասպատակում են բոլոր ուղղություններով, ավերում եկեղեցիներ, ոչնչացնում խաչեր, տանջում եկեղեցականներին, կոտորում բնակչությանը. «Տագնապ մեծ յարուցանէին ի վերայ բնակչաց երկրին, ուս եղեալ ընդ ամենայն քաւարանս աղաւթից՝ խոկային կործանել եւ շփոթել զսրբութիւն եկեղեցեաց Քրիստոսի. խորտակէին եւ զմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի զոր ապաւեն եւ հովանի ի յելս եւ ի մուտս կանգնեալ ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեանն. եվ հրկիզութեամբ բառնային ի միջոյ: Վարէին ուժգին հեռութեամբ ընդ քահանայս եւ ընդ մոնոզոնս եւ ընդ պաշտանակիցս նոցին, իբրեւ առաջնորդք գոլ նոցին՝ որք վախճանեցան ի պատերազմին: Յափշտակէին եւ ի տեղիս տեղիս զսպասս եկեղեցւոյ. եւ զնշխարս սրբոց Աստուծոյ վարեալ տանէին յաւարի»²:

Ապստամբությունից շատ չանցած, իսկ չի բացառվում, որ անգամ դրա ընթացքում՝ 775 թ., իր մահկանացուն է կնքում Հայոց կաթողիկոս Միոն Ա Բավոնեցին: Նա ապստամբության կողմնակից չէր, և հնարավոր է, որ ապստամբած նախարարներն առանձնապես ակնաչ չէին դրել նրա հորդորներին: Դա է ապացուցում այն փաստը, որ նրա անունը բացարձակապես չի հիշատակվում ապստամբության և կոիվների առնչությամբ: Հավանաբար երկրի ավերումն ու արաբների խժոժությունները գերեզման տարան խոհական միտք ունեցող, սառը մտածող, երկրի բարեկարգությանը ձգտող Հայոց կաթողիկոսին: Նա թաղվում է Դվինի հայրապետանոցի գերեզմանում՝ «ի քնարանի ընդ հարս իւր»:

¹ Պատմաբանություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 837:

² Նույն տեղում, էջ 839:

Եսայի Ա Եղիպատրուշեցու աթոռակալությունը

774-775 թթ. ապստամբության պարտությունից հետո Հայաստանի պատմությունը VIII դարի վերջին քառորդում պարբերական կոտորածների ու գաղթի, ծանր հարկապահանջության և ավազակային կողոպուտների, ինչպես նաև ամեն տեսակ բռնությունների և հալածանքների անընդհատ ժամանակագրություն է: Ահա այսպիսի ժամանակաշրջանում, երբ հայրապետական գահը մնացել էր թափուր, կաթողիկոս է ընտրվում Եսայի Եղիպատրուշեցի եպիսկոպոսը, որի հոգևոր-եկեղեցական գործունեության մասին մատենագրության մեջ տեղեկությունները սուղ են և ցաքուցրիվ: Հայտնի է, որ նրա ծննդավայրը Նիգ գավառի Եղիպատրուշ գյուղն է: Ապագա կաթողիկոսի ծագման և վաղ մանկության մասին Հովհաննես Դրասխանակերտցու աշխատության մեջ պահպանվել է հետևյալ ավանդությունը. Եսայի Եղիպատրուշեցին եղել է որբևայրի կնոջ միևնույն օրդին: Ծծկեր երեխայի հետ գյուղից գյուղ թափառելով՝ մուրացիկ կինը հասնում է Դվին և հանգրվանում կաթողիկոսարանի բակում, որտեղ հավաքվում էին տարաբախտ մուրացիկներ և անհույս տառապյալներ: Իր և երեխայի ապրուստը հոգալու համար կինը չի հեռանում Մայր եկեղեցու բակից, որտեղ «ցրտահար սառուցեալ ի ձմերայնի լինէր եւ տապախարշ արեւակէզ յամարայնի»: Մի առիթով, երբ կաթողիկոսարանի քահանաները կնոջը հորդորում են տեղափոխվել ավելի ապահով ապաստարան, նա մարգարեական պատասխան է տալիս. «Ո՛չ գիտէք, զի սակս կաթողիկոսութեան գորդեակս իմ աստ սնուցանեմ»¹: Մանկահասակ երեխան մեծանում է, ուսանում հայրապետանոցի դպրոցում: Եսայի Եղիպատրուշեցի որբի աշակերտությունը հավանաբար համընկնում է Հովհան Օձնեցի կաթողիկոսի պաշտոնավարության ժամանակաշրջանին: Համադրելով առկա տվյալները՝ կարելի է պնդել, որ Եսայի Եղիպատրուշեցին ծնվել է Սահակ Չորոփորեցի կաթողիկոսի (677-703) գահակալության վերջին տարիներին²: Կաթողիկոսարանի դպրոցում ուսում ստանալուց հետո նա անցնում է հոգևոր ծառայության, գրեթե 30 տարեկանում ձեռնադրվում եպիսկոպոս ու կարգվում Գողթան գավառի հոգևոր առաջնորդ³:

Եսայի Եղիպատրուշեցին մասնակցել է 726 թ. Հովհան Օձնեցու և Հակոբիկ ասորիների Աթանաս պատրիարքի նախաձեռնությամբ Մանազկերտ

¹ **Յովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 424, **Ստեփանոս Տաբանեցի Աստղիկ**, Պատմություն Տիեզերական // Մատենագիրք հայոց, հ. ԺԵ, Ժ դար, Պատմագրություն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010, հանդես Բ, գլ. Դ, էջ 706, **Սամուէլ Անեցի** եւ շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիր. Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 160, Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 75:

² Հր. Աճառյանի կարծիքով՝ Եսայի կաթողիկոսը ծնվել է 696 թ. (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1942, էջ 125):

³ Հայր Ալիշանի կազմած գավազանացանկում 768-773 թվականներին հիշատակվում է Եսայի անունով Գողթան եպիսկոպոսը: Ենթադրում ենք, որ այստեղ խոսքը նույնանուն այլ եպիսկոպոսի մասին է (տե՛ս **Ալիշան Ղ.**, Միսական, Վենետիկ, 1893, էջ 312):

քաղաքում գումարված հայ-ասորական եկեղեցաժողովին, որը մեծ նշանակություն ունեցավ Հայոց եկեղեցու դավանաբանական սկզբունքների հստակեցման առումով¹: Ասողիկի հավաստմամբ այս ժողովը հայոց աշխարհից վերացրեց «քաղկեդոնականացն երկաբնակ խոստովանութիւն»²: Եսայի Եղիպատրուշեցու անունը հիշատակվում է նաև 768 թ. Միոն Ա Բավոնեցու (767-775) նախաձեռնած Պարտավի եկեղեցական ժողովի մասնակիցների ցուցակում, որին ներկա էին եպիսկոպոսներ, երեցներ, ինչպես նաև ազատներ և նախարարներ Սահակ Բագրատունու գլխավորությամբ³: 775 թ. Եսայի Եղիպատրուշեցին մոտ 78-79 տարեկան հասակում ընտրվել է Հայոց կաթողիկոս և «բարի վարուք» պաշտոնավարել տասներեք տարի⁴:

Եսայի կաթողիկոսի հովվապետության ժամանակաշրջանը հարուստ էր պատերազմներով և այլևայլ իրադարձություններով: Ամիրապետ Մահդին (775-785) սկզբում ճնշում է Խորասանի ոստիկան Յուսուֆ իբն Իբրահիմի ապստամբությունը, ապա՝ 778 թ., պատերազմ սկսում Բյուզանդական կայսրության դեմ, որի Լևոն Դ կայսրը (775-780) պայքար էր սկսել կորցված տարածքները վերադարձնելու համար: Բյուզանդական զորքերի հրամանատարն էր Միքայել Լախանոդրակոն, իսկ գործող զորաբանակների հրամանատարները՝ հայազգի Գրիգորի որդի Տաճատ Անձևացին, Արտավազդ Մամիկոնյանը, Մուշեղի որդի Գրիգոր Մամիկոնյանը և Վարազդիթոցը:

Բյուզանդական զորքը հայ զորահրամանատարների առաջնորդությամբ 778 թ. Գերմանիկե (Մարաշ – Վ. Ա.) քաղաքի մոտ ջախջախիչ պարտության է մատնում արաբներին: Խալիֆայական բանակը ամոթապարտ նահանջում է, բայց պատերազմը չի ավարտվում: Տաճատ Անձևացին, որ հաղթական կռիվներ էր վարել բուլղարների դեմ, կայսրությունից ստանում է «պատիւ իշխանութեան ի վերայ Հայաստանի»: Պատերազմը շարունակվում է փոփոխական հաջողությամբ: Արաբները տեղ-տեղ առավելության են հասնում, սակայն Արմինիայի ոստիկան Եզիդ իբն Ուսայդը (775-780), որը նաև զորքերի հրամանատարն էր, Պոնտոսի կողմերում ծանր պարտություններ է կրում: Ըստ երևույթին, երկու կողմերը ծանր կորուստներ էին ունեցել, որովհետև պատերազմական գործողությունները դադարում են: Պատերազմի ավարտից հետո Մահդին Հարուն ալ Ռաշիդին հանձնում է Ատրպատակա-

¹ Տե՛ս Ժամանակագրութիւն տեառն Միխայելի Ասորւոց պատրիարքի, Յերուսաղեմ, 1871, էջ 339-340, **Տէր-Մինասեանց Ե.**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 178-231, **Վարդանյան Վ.**, Հովհան Օձնեցու պայքարը հայոց դավանանքի անաղարտության պահպանման համար // «Էջմիածին», 2007, թիվ Ե, էջ 41-49:

² **Ստեփանոս Տաբալանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 704:

³ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 5, **Ղլտճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 12:

⁴ Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 423-424, **Ստեփանոս Տաբալանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 706, **Մամուէլ Անեցի** եւ շարունակողներ, նշվ. աշխ., էջ 160, Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 75:

նի և Հայաստանի կառավարումը՝ փոխարքայի լիազորություններով¹: Միաժամանակ Հայաստանում նշանակվում էին ոստիկաններ, և Եզդիին հաջորդում է Օսմանը (781-785):

Բյուզանդիայում շուտով մահանում է կայսր Լևոն Դ-ն: Նրան հաջորդում է Կոստանդին Զ Ծիրանածինը, որի մանկահասակության պատճառով երկիրը կառավարում էր մայրը՝ Իրենե կայսրուհին: Վերջինս, լինելով մեծամիտ ու փառամոլ կին, փորձում է վերականգնել կայսրության երբեմնի փառքը: Կորցնելով արևմտյան տիրույթները, որտեղ ֆրանկների արքա Կառլոս Մեծը գրավել էր Իտալիան՝ կայսրուհին ձեռնամուխ է լինում կայսրության սահմանների ընդարձակմանն Արևելքում: Բյուզանդական զորքերի գլխավոր հրամանատարը կրկին Լախանդրակոնն էր, իսկ արաբական բանակին՝ Մահդիի որդի Հարուն ալ Ռաշիդը: Արաբները սկզբում զգալի առաջխաղացում են ունենում, սակայն առանձին զորաբանակների հայ հրամանատարները՝ իրենց ճկուն մարտավարությամբ, արաբներին սովի են մատնում: Տաճատ Անձևացին, որը հայ զորահրամանատարներից առաջինն էր, գաղտնի բանակցությունների մեջ է մտնում Հարունի հետ: Տաճատ Անձևացին Արաբական Հայաստանից էր, որտեղից արաբների բռնությունների հետևանքով 760-ական թթ. փախել էր կայսրություն ու ծառայության անցել հույներին: Բանակցությունների մեջ մտնելով արաբների հետ և երաշխիքներ ապահովելով իր նախկին հեղինակավոր դիրքի համար՝ նա որոշում է վրեժ լուծել փառամոլ կայսրուհուց²: Հայկական գնդով անցնում է արաբների կողմը և նրանց ցույց տալիս Կոստանդնուպոլիս տանող դյուրին ճանապարհները: Մրա հետևանքով արաբները հասնում են Կոստանդնուպոլիս, և կայսրն ու կայսրուհին ստիպված են լինում 782 թ. ծանր պայմաններում հաշտություն կնքել՝ արաբներին վճարելով 70.000 ոսկի ռազմատուգանք³:

Ըստ օտար սկզբնաղբյուրների՝ Տաճատ Անձևացին անգամ իսլամ է ընդունել, սակայն հայկական սկզբնաղբյուրները դա չեն հաստատում, առավել

¹ Փոխարքայի և ոստիկանի պաշտոնները տարբեր են: Փոխարքաները հիմնականում ռազմական առաջնորդներ էին, իսկ վարչական, հատկապես հարկային գործերը վարում էին նահանգների ոստիկանները: Սակայն որոշ դեպքերում փոխարքաները ոստիկաններ չէին նշանակում, և իրենք անձամբ էին կառավարում երկիրը (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական խալիֆայության հյուսիսային փոխարքայությունը // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, Արաբական երկրներ, Գ, Երևան, 1967, էջ 167):

² 780 թ. ամուսնու մահից հետո դառնալով պետության գլուխ՝ Իրենե կայսրուհին հակահայ շարժում սկսեց: Նա աթենացի էր և ձգտում էր ուժեղացնել հույն տարրը՝ ետ մղելով հայերին: Մոլեռանդ կայսրուհին իրենից հեռացրեց հայ նշանավոր մարտական ուժերին, շրջապատեց արքունիքը ապիկար և նենգամիտ ներքինիներով: Նրա առաջին զոհը Տաճատ Անձևացին էր, որը փախավ արաբների մոտ և մեծ ընդունելություն գտավ (տե՛ս **Ադոնց Ն.**, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, էջ 289-290): «Տազար» անունով հայի (որը նույն Տաճատ Անձևացին է) քաջասրտության մասին վկայում են նաև արաբական սկզբնաղբյուրները (տե՛ս **Ֆասմէր Ռ.**, նշվ. աշխ., էջ 160):

³ Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 405:

ևս, որ պատրիկության պաշտոնը զբաղեցնում էին միայն քրիստոնյա հայ իշխանները¹: Չնայած ոստիկան Օսմանը փորձում է դժվարություններ հարուցել՝ պատճառաբանելով, թե հայ նախարարները չեն ուզում նրա իշխանությունը ճանաչել, սակայն Հարուն ալ Ռաշիդը, որ Տաճատ Անձևացուն կատմամբ երախտագիտության զգացում ուներ և նրան անգամ «հայր իւր անուանեաց», ստիպում է Օսմանին իր կարգադրությունը կատարել: Սակայն խարդավանքները չեն դադարում, և Տաճատ Անձևացին 785 թ. սպանվում է խազարների դեմ արշավանքի ժամանակ Բագրատ Բագրատունու և Ներսեհ Կամսարականի հետ:

Եսայի կաթողիկոսի աթոռակալության ժամանակաշրջանի մեծագույն մասը համընկնում է արաբ ամիրապետ Մուհամմեդ Մահդիի գահակալությանը (775-785): Անգութ բռնակալ Ալ Մանսուրին փոխարինած նրա որդու վերաբերյալ Ղևոնդը գրում է. «Սա էր ազնուական քան զհայր իւր եւ լաւագոյն բարութ»: Նա վերանայում է Հայաստանի նկատմամբ հարկային ահաբեկման քաղաքականությունը, մեղմացնում ժողովրդին ուժասպառ անող խստությունները², որոնք կային ոստիկան Հասան իբն Քահթաբայի (771-775) օրոք³: 785 թ. մահանում է ամիրապետ Մահդին և խալիֆ է դառնում նրա ավագ որդի Մուսա ալ Հադին: Ղևոնդ պատմիչը նրան որակում է որպես «այր ժանտ եւ ապարասան եւ այսակիր», որը զվարճության համար նույնիսկ իր մարդկանց էր նետահարում⁴:

Ոստիկանի պաշտոնով Հայաստան է ուղարկվում Խուզայմա իբն Խազիմը (786-787), որը «ըստ անուանն իսկ խազմարար եւ դժոխաձէ» անձնավորություն էր: Նրա առաջին գործերից մեկը Համազասպ, Մահակ և Մեհրութան Արծրունիների ձերբակալությունն էր, որոնք ըստ գործող կարգի՝ Դվինում ներկայանում են նրան: Նոր ոստիկանը ամիրապետի առաջ ամբաստանում է նրանց մեղադրելով Արճեշի պատերազմում մասնակցություն ունենալու մեջ: Երեքամյա ձերբակալությունից հետո Մուսա խալիֆը կարգադրում է նրանց մահապատժի ենթարկել: Նրանք դրանից կարող էին խուսափել, եթե մուսուլմանություն ընդունեին: Մեհրութանը համաձայնվում է, սակայն Համազասպն ու Մահակը բացահայտ մերժում են: Խազիմը նույնիսկ ատյան է հրավիրում և փորձում խոշտանգումներով նրանց ստիպել ընդունելու իսլամը, բայց հաջողության չի հասնում: Նրանց գլխատված մարմին-

¹ Տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., § 617, սյունակ 1044:

² Տե՛ս Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 841:

³ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը // «ՊԲՀ», 1977, թիվ 1, էջ 121, Նալբանդյան Հ., Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 112-113, Ֆասմէր Ռ., նշվ. աշխ., էջ 166: Կահթաբա ոստիկանի օրոք տեղի ունեցավ Արտավազը, ապա Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած համաժողովրդական ապստամբությունը 774-775 թվականներին: Այս մասին ակնարկում են նաև արաբ պատմիչները (տե՛ս Արաբական աղբյուրներ, էջ 281, տե՛ս նույն տեղում, Յակուբի, էջ 367):

⁴ Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 846:

ները փայտերից կախելով՝ այրում են, իսկ մոխիրը ցրիվ տալիս որպես անպատվություն: Ըստ Մ. Օրմանյանի՝ Արծրունյաց իշխանների նահատակությունը տեղի է ունեցել 786 թ. ութօրեքին¹: Եսայի կաթողիկոսի կոնդակով Համագասպն ու Սահակը հռչակվում են Հայոց եկեղեցու տոնելի սրբեր: Մուսա ալ Հադիի գահակալությունը տևում է ընդամենը 14 ամիս:

Եղբոր մահից հետո գահ է բարձրանում Հարուն ալ Ռաշիդը (786-809): Անգամ հեքիաթների հերոս դարձած Հարուն ալ Ռաշիդը, որին արաբ հեղինակները վերագրում են մեծագործություններ և ամեն տեսակի առաքինություններ, Ղևոնդի խոսքերով, ազահ էր ու արծաթասեր²: Խալիֆները ըստ իրենց չար բարքի՝ Հայաստանում նշանակում էին «հրամանատարս ապարասան եւ ժանտաբարոյ անաստուածութեամբ, որք զերկիւիդ Աստուծոյ անգամ և ընդ միտ ոչ ածէին»³: Հարուն ալ Ռաշիդը Ատրպատականի, Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի իշխանությունը հանձնում է իր Ուբայդալլահ (788-791) անունով եղբորը: Խազիմը ետ է կանչվում և ոստիկանի պաշտոնը հանձնվում է Եզիդի որդի Եզիդ իբն Մուզեդին, որին շատ չանցած փոխարինում է Աբդուլ Քեբիրը, նրան՝ «Սուլեյման (788-790 – Վ. Ա.) ոմն քան զամենեսին ժանտ եւ չարագործող»: Սուլեյմանի հարկային «երևակալությունը» սահմաններ չեր ճանաչում, հարկերն այն աստիճան են ավելացվում, որ մարդիկ «ոչ կարէին բառնալ. զի որ ինչ գտանէր ի ձեռին ուրուք հայթայթանք՝ ընդ անձին իւրոյ ոչ լինէր բաւական գնոց»⁴: Սուլեյմանը Հայաստանի հարկահավաքության գործը հանձնարարում է իր փեսային՝ Իբնդուկե անունով մի կրոնավոր իսկ հույնի, որի գործողությունները Դվինում ուղեկցվում էին մարդկային խռչտանգումներով⁵: Եսայի կաթողիկոսի առաջնորդությամբ բազմաթիվ նախարարներ և եպիսկոպոսներ դիմում են ոստիկան Սուլեյմանին՝ խնդրելով թեթևացնել հարկերը: Նա ոչ միայն չի ընդառաջում, այլև կրկնապատկում է դրանք, իսկ գլխահարկի հավաքումը առավելագույն չափի հասցնելու համար հրամայում է «կնիք կապարեայ դնել յամենեցուն պարանոցսն»⁶:

Երբ Եսայի կաթողիկոսը «փոխեցաւ երանելի առ Քրիստոս սուրբ եւ ուղիղ հաւատով», Իբնդուկե հարկահանը որոշեց օգտվել դրանից և տիրանալ Հայոց եկեղեցու ստացվածքներին և սպասքին: Նա գույքագրել տվեց եկեղեցական ամբողջ ունեցվածքը: Այս մասին Ղևոնդ պատմիչը գրում է. «Եւ

¹ Տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., § 618, սյունակ 1047:

² Պատմաբանություն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 849:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ VIII դարի երկրորդ կեսից հայ նախարարները զրկված էին հարկերը հավաքելու իրավունքից, և հայկական գավառներում շրջում էին արաբ հարկահանները, որոնք գործում էին ամեն տեսակ կամայականություններ (տե՛ս Նալբանդյան Հ., Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, էջ 80-81):

⁶ Պատմաբանություն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 850, Ստեփանոս Տաթևակցի Աստղիկ, նշվ. աշխ., էջ 726:

կոչէր առ ինքն զամենայն կղերոսս սպասաւորացն եւ ուժգին սպառնալեալք զարհուրեցուցանէր զնոսա. «Տեսէ՞ք, ասէ, մի ինչ ծածկիցեք յինէն այլ զամենայն յայտ բերջիք: Ապա թէ որ թաքուսցէ ինչ, եւ յետոյ յայտ գայցէ՝ ինքն անձին իւրում պարտաւոր եղիցի»¹: Ահաբեկված հոգևորականները նրան են հանձնում եկեղեցական արարողությունների ժամանակ գործածվող սրբազան առարկաները, ինչպես նաև «ետուն եւ զամենայն ինչ զոր գտանէին ի գանձս ծածկութիւն ցուցին նմա, եւ ոչ ինչ մնաց ի ծածկութեան, զոր ոչ եղին առաջի նորա՝ զսպասս ցանկալիս ոսկւոյ եւ արծաթոյ եւ որ ի քարանց պատուականաց, եւ զհանդերձս թագաւորացն, զոր ի պատիւ սրբոյ եւ փառաւորեալ աստուածընկալ սեղանոյն եւ խորանին Տեառն նուիրեալ էին»²: Իբնդոկեն հաիշտակում է ամենաարժեքավոր իրերը, իսկ մյուս մասը հանձնում եկեղեցու ավանդապահներին³: «Այդ նոր տեսակ բռնութիւնը մտածած են ռատիկանն (Մուլեյմանը (788-790) – Վ. Ա.) ու հարկահանը (Իբնդոկեն – Վ. Ա.), հարկաւ Եսայիի անժառանգ մեռած ըլլալուն հիմնուելով, եւ անժառանգին ստացութիւնը տէրութեան իրաւունք ցուցնելով, իբր այն թէ կաթողիկոսարանը եւ կաթողիկէ եկեղեցին կաթողիկոսին անձնական գույքը ըլլային, եւ իր մահէն ետքը անտէրունջ ստացութիւն նկատուէին»⁴,– եզրակացնում է Մ. Օրմանյանը: Այս ամենը վկայում է այն մասին, որ Օմայանների օրոք Հայոց եկեղեցուն շնորհված ինքնավարությունը էապես նվազել էր:

Հայտնվելով արաբների ստեղծած դժոխային իրականության մեջ՝ հայ ազնվականության մի մասը ռազմիկ դասի հետ գերադասում է հեռանալ Հայաստանից, որի մասին ուշագրավ վկայություն ունի Ղևոնդ պատմիչը: Արաբների հարկային կեղեքումներից ազատվելու համար ավելի քան 12.000 մարդ «մերկք եւ բոկք եւ սովամահք» կանանցով և երեխաներով Շապուհ Ամատունու, նրա որդի Համամի և այլ նախարարների գլխավորությամբ հեռանում են Բյուզանդիայի սահմաններ⁵: Մուլեյմանի ուղարկած զորքերը նրանց հասնում են Կող գավառում⁶ և փախստականների մի մասին ուժով

¹ Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 851: Տե՛ս նաև **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 728, **Մամուլ Անեցի** եւ շարունակողներ, նշվ. աշխ., էջ 161:

² Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 851: Հայր Օրմանյանը ենթադրում է, որ այդ հարստության մեջ եղել են նաև Արշակունյաց ժամանակաշրջանից մնացած գանձեր (տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 620, պունակ 1051):

³ Տե՛ս Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 851, **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 728, **Մամուլ Անեցի** եւ շարունակողներ, նշվ. աշխ., էջ 161:

⁴ **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 620, պունակ 1051:

⁵ Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 850, **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 727:

⁶ Կողը Տայք նահանգի գավառներից է Կուր գետի ակունքների շրջանում (տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բաբսեդյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Գ, Երևան, 1991, էջ 195): Մ. Օրմանյանը կարծում է, որ արաբները փախստականներին կասեցրել են Գուգարքի Կողբափորում՝ այսօրվա Ղազախի տարածքում (տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 619, պունակ 1049):

ետ են դարձնում, իսկ մեկ այլ մասին կոտորում: Սակայն մի նշանակալի մաս կարողանում է Եգերաց աշխարհի վրայով անցնել Պոնտոս: Իշխանները արժանանում են զանազան պատիվների¹: Հենց այս ծանր տարիներին է սկսվում արաբական ցեղերի զանգվածային վերաբնակեցման գործընթացը Հայաստանում, որում զգալի դեր են խաղում Շայբանի և Սուլամի ցեղի արաբ կառավարիչները²:

Եսայի Եղիպատրուշեցուն հաջորդած կաթողիկոսների գահակալությունը

Եսայի Եղիպատրուշեցուց հետո «գՍտեփաննոս ումն ի Դվին քաղաքէ կացուցանէին յառաջնորդութեան»³: Ստույգ հայտնի չէ, թե ով է Ստեփանոս Դվինցին, սակայն ենթադրելի է, որ եղել է վիճակավոր եպիսկոպոսներից մեկը: Մ. Չամչյանը կարծում է, որ Ստեփանոս Ա Դվինցին Կիրակոս Գանձակեցու մոտ հիշատակված Ստեփանոս «դրան երեցն» է⁴: Ղևոնդ պատմիչը հաղորդում է, որ Ստեփանոսը կաթողիկոսական գահ է բարձրանում «բազում կաշառաւք»՝ եկեղեցական ունեցվածքից արաբ հարկահանին վճարելով բազմաթիվ մեծարժեք առարկաներ⁵: Ստեփանոսին հաջողվում է արաբների ձեռքից ազատել եկեղեցապատկան մի շարք գյուղեր իրենց հողատարածություններով և դրանց վրա աշխատող բազմաթիվ գյուղացիներով. «Վատնեաց (Ստեփանոսը – Վ. Ա.) զամենայն ինչս եւ զստացուածս, մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց. եւ ապա կատարած»⁶: Հայրապետական աթոռին կաշառքով տիրանալու Ղևոնդի հիշատակած «փաստը» նույնությամբ կրկնում են հետագա մատենագիրներ Աստղիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին: Այսօրվա հասկացությամբ կաշառքով պաշտոնի հասնելու հանգամանքը սովորում է արաբական տիրապետության դժնդակ շրջանում Հայոց եկեղեցու իրավունքների համար մարտնչող հոգևորականի կերպարը: Սակայն քննելով Ստեփանոսի աթոռակալության պարագաները, մասնավորապես «բազում կաշառաւք» գահին տիրանալու փաստը՝ պարզում ենք, որ

¹ Պատմաբանություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 850:

² Արաբների վերաբնակեցումը Հայաստանում ուներ ռազմավարական նշանակություն: Դրանով ոչ միայն ստեղծվում էր ամուր հենակետ և նվաճված երկրում ապահովվում «հագստություն», այլև ստեղծվում էր ամուր պատվար Բյուզանդիայի և խազարների դեմ պայքարում (տե՛ս **Тер-Гевондян А. Н.**, Армения и арабский халифат, Ереван, 1977, с. 114-115):

³ **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 424:

⁴ Տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 419: Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ 773 թ. Դվինի կաթողիկոսարանում հռչակված էր Ստեփանոս անունով «դրաներեց», որը «բանիբուն ճանաչիր, եհաս ի կատարումն ամենայն իմաստասիրական և գրամարտիկոս արուեստից՝ հանդերձ հոգևորական առաքինութեամբ» (**Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 72):

⁵ Տե՛ս Պատմաբանություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 851, **Ստեփանոս Տարանեցի Աստղիկ**, նշվ. աշխ., էջ 728, **Սամուել Անեցի** եւ շարունակողներ, նշվ. աշխ., էջ 161, **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 75:

⁶ Տե՛ս Պատմաբանություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, էջ 851:

«կաշառք» նշանակել է «որպես թե կշռեալ տուրք, որպես փրկանք»¹: Փաստորեն, հանգուցյալ Եսայի կաթողիկոսից հետո արաբ հարկահանները ոչ միայն թալանել էին Դվինի կաթողիկոսարանի թանկարժեք առարկաները, այլև հարկի դիմաց բռնագավթել եկեղեցապատկան տիրույթները՝ գյուղեր, կավածներ: Նորընտիր կաթողիկոսը հարկադրված է եղել նրանց վճարելու լրացուցիչ «ինչս եւ զստացուածս»՝ ետ բերելու որպես գրավ կաթողիկոսարանից բռնագրավված «գիւղից եւ ծառայից»-ը և փակելու այդ նպատակով արված պարտքերը: Ակներև է դառնում, որ նա Սուլեյմանին և Իբնդուլեյին մեծագումար վճարումներ է արել ոչ թե կաթողիկոս դառնալու, այլ արդեն որպես կաթողիկոս փրկագին է վճարել եկեղեցու եկամուտի հիմնական աղբյուրները վերականգնելու համար:

Ստեփանոսը աթոռակալել է երկու տարի՝ 788-790 թթ.: Ամենայն հավանականությամբ կարճատև աթոռակալությունը պայմանավորված է եղել նրա առաջացած տարիքով:

Ստեփանոսին փոխարինում է Յովաբը՝ «յՈստանէն, ի կուրապաղատին ապարանից»: Ոստանից լինելը հուշում է նրա Դվինցի լինելու մասին: Մ. Օրմանյանի կարծիքով՝ «ի կուրապաղատին ապարանից» չի նշանակում, որ նա ազնվական ծագում է ունեցել, ավելի շուտ դա կարող է վկայել իշխանական կալվածքում ծնված լինելու մասին²: 790-791 թթ. նրա վեցամսյա պաշտոնավարությունը ոչնչով չի նշանավորվել: Հայոց եկեղեցու սաստիկ կեղեքումները և թալանը արաբները շարունակել են նաև Ստեփանոսի և Յովաբի կարճատև պաշտոնավարության ժամանակաշրջանում:

Եկեղեցիների և վանքերի զանգվածային կողոպուտը շարունակվում է՝ ընդունելով ավելի մեծ չափեր: «791 թ. Սպքի ամիրայ,– գրում է Մխիթար Այրիվանեցին,– զվանորայսն հայոց և զամենայն եկեղեցիս կողոպտեաց և ի Բաղտատ յղարկեաց զոսկին և զարծաթն»³: Եկեղեցական հարստություններին այք դրած արաբ պաշտոնյաների ագահության և խարդախության մասին Հովհաննես Դրասխանակերտցին հետևյալ միջադեպն է հիշում. ժամանելով Նախիջևան՝ Եզիտ անունով ոստիկանը իր զորահրամանատարներին ուղարկում է Հայաստանի տարբեր գավառներ «առնուլ հարկս և տուրս»: Այլի անունով իշխանը ուղարկվում է Բագրևանդ: Սա հասնում է Բագավան գյուղ և գիշերելու նպատակով մտնում Սուրբ Գրիգորի վանք: Տեսնելով վանքի «զգեղեցիկ եւ գյաւեստ չքնադատեսս սպասս աստուածակերտ խորանին՝ զոսկեղէնս եւ զարծաթեղէնս եւ զգունակ գունակ երանգս առագաստին սրբութեան եւ զհանդերձանս եւ զարկանելիս»՝ հարկահանը գայթակղվում է

¹ Նոր Բաղդիքը Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1052:

² Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 625, սյունակ 1059: Վարդան Արևելցու երկում նա հիշատակվում է Յոբ անունով: Տե՛ս Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 76:

³ Տե՛ս **Մխիթարայ Այրիվանեցու** Պատմութիւն հայոց, Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 53:

և փորձում խորամանկությամբ հափշտակել սրբությունները: Խարդախամիտ արաբը իր մտահոգումն իրականացնելու համար մշակում է հայ եկեղեցականներին ծուղակը գցելու սցենար: Նա սպանում է իր անարգ ծառաներից մեկին և մեղքը բարդում վանականների վրա: Շինծու դեպքի մասին Ալին զեկուցում է ոստիկանին և նրանից ստանում հրաման «առանց հարց եւ փորձ յատենի կոտորել զսուրբ արսն»: Անօրեն պաշտոնյան սրի է քաշում քառասունից ավելի վանականի և հափշտակում եկեղեցու սուրբ մասունքները: Որոշ ժամանակ անց վերադառնում են այն վանականները, որոնց հաջողվել էր փախուստով խուսափել խոշտանգումից և տեսնում են «ի բազմախողխող երկաթոյն տապաստ անկեալ գդիակունս սրբոցն եւ զեկեղեցին Քրիստոսի խրթնացեալ ի բարեգարդութենէ բեմին»¹: Այս փաստը արաբների հարստահարությունների և հայ հոգևորականների կրած անլուր տառապանքների ցայտուն վկայություններից մեկն է:

791 թ. «ծերացեալ յոյժ» տարիքում կաթողիկոս է ընտրվում Սողոմոնը, որը Մազազ գավառի Գառնի գյուղաքաղաքից էր: Նա մանկությունից ապրել էր կրոնական կյանքով, ուսանել Մաքենյաց մեծահռչակ վանքի դպրոցում: Այստեղ նա աշակերտում է «Հարանց հայր» հորջորջված Սողոմոնին², որի ձեռքի տակ «վարժեալ եւս էր ի փիլիսոփայական արուեստս եւ առաւել եւս հմուտ լեալ փաղատութեան կրթանաց»³: Հասնելով վարդապետական աստիճանի՝ ապագա կաթողիկոսը դասավանդում է նույն դպրոցում: «Հարանց հայր» Սողոմոնի մահից հետո (VIII դարի երկրորդ կես) Սողոմոն Գառնեցին ստանձնում է Մաքենյաց ուխտի և վարդապետարանի առաջնորդությունը: Որոշ ժամանակ անց վանականները ստիպված են լինում հեռանալ իրենց մենաստանից: Երբեմնի համախմբված միաբանությունը երկփեղկվում է⁴: Սողոմոն Գառնեցին «հասարակ բաժնիւ կրանաւորական դասին երթեալ բնակէր ի Զրեսկի⁵, որ ի Շիրակ գաւառի»¹: Զրեսկի սրբավայրում խցաբնակ

¹ **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 425, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 76:

² «Հարանց հայր» Սողոմոնի մասին տե՛ս **Ալեքսանյան Վ.**, Սողոմոն Մաքենացու գործունեության շուրջ (VIII դար) // Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 16, Երևան, 2015, էջ 98-117, **Ղազարոսյան Ա.**, Մաքենացաց ուխտը և Սողոմոն Մաքենացին // «Էջմիածին», 2002, թիվ Դ, էջ 37:

³ **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 425: «Փաղատությունը» սաղմոսերգությունն է:

⁴ Միաբանության երկփեղկման պատճառը ստույգ հայտնի չէ: Հայր Օրմանյանը ենթադրում է, որ պառակտումը եղել է կրոնական կենսակերպի խստությունների շուրջ ծագած տարակարծությունների հետևանքով: Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 626, պլոնակ 1060:

⁵ Զրեսկի վանքը գտնվում է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Զավախք գավառում, Ախալքալաք քաղաքի մոտ, VII-VIII դարերում եղել է հոգևոր կենտրոն (տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, նշվ. աշխ., հ. Բ, Երևան, 1988, էջ 322): Յովհաննէս Դրասխանակերտցին շփոթմամբ Զրեսկը տեղագրում է Շիրակում: Նույնը կրկնում է նաև Ստ. Օրբելյանը: Ըստ ակադեմիկոս Աշ. Մելքոնյանի՝ առնվազն IX դարից առաջ Զրեսկը եղել է Հայ

«ոմն միանձնեայ» Սողոմոնը ապրում է խստակրոն կյանքով՝ իրեն նվիրելով «բազում ճգանց եւ աշխատութեանց»։ Նա շուտով իր ձեռքն է վերցում Ջրեսկի առաջնորդությունը։ Իսկ Յովաբ հայրապետի մահից հետո նրան այդտեղից «չուեալ ածէին յաթոռ հայրապետութեանն»։ Սողոմոն Գառնեցու՝ կաթողիկոսության գնալու պատրաստակամությունը զարմանք է առաջացնում հոգևորականների մոտ։ Ջրեսկի ճգնախցից կաթողիկոսանիստ Դվին ուղեկցող ազնվականներից մեկի հարցին, թե ինչու է համաձայնել խոր ծերության հասակում և վատառողջ վիճակում դառնալ կաթողիկոս, Սողոմոն Գառնեցին պատասխանում է. «Երթամ, զի գեղապաճոյճ նկարողաց սեւել զիս ընդ այլ հայրապետսն տամ յորմ եկեղեցոյն»²։ Սրբակրոն հոգևորականի վարքագիծը կարելի է մեկնաբանել որպես արաբական տիրապետության ամենաձանր ժամանակաշրջանում ժողովրդին և եկեղեցուն ծառայելու վճռականության նշան։ Ծերունագարդ կաթողիկոսը պաշտոնավարում է «ոչ աւելի քան զմի ամ» և 792 թ. կնքում մահկանացուն։ Թողնելով իր «կենդանագրի ի քաւարանի սրբում»՝ թաղվում է Դվինի կաթողիկոսարանին կից գերեզմանոցում, որտեղ ամփոփված էին իր նախորդները³։

792-795 թթ. աթոռակալում է կաթողիկոս Գևորգ Ա Բյուրականցին։ Նրա մասին Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները սահմանափակվում են նրա՝ Արագածոտն գավառից լինելու հիշատակությամբ։ Նրա ծննդավայրի մասին ավելի մանրամասն առաջինը հայտնում է Ասողիկը.

Առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոն (տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 45-46)։

¹ **Յովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 425-426։ Այս կապակցությամբ Ստ. Օրբելյանը գրում է, որ վանականներին Ջրեսկ է առաջնորդել ոչ թե «Հարանց հայրը», այլ նրա նույնանուն աշակերտ Սողոմոն Գառնեցին. նրանց մի մասը «գնացին ընդ իօրն Սաղոմոնի, ոչ առաջնոյն որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին»։ Սյունյաց պատմիչը հայտնում է, որ այդ տեղափոխությունը պայմանավորված է եղել Գեղարքունիքում Բաբանի պատճառած ավերածություններով (տե՛ս **Ստեփաննոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, գլ. ԼԲ, էջ 116)։ Հ. Աճառյանը նկատում է, որ այդ տեղափոխությունը չի կարելի կապել Բաբանի արշավանքի հետ, քանի որ այն տեղի է ունեցել ավելի ուշ՝ 839 թ. (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 568-569)։ Միաբանների երկրորդ խումբը հոգևոր հայրերից մեկի առաջնորդությամբ, որի անունը հայտնի չէ, տեղափոխվում է Արցախ և հաստատվում Ջրաբերդ գավառի Ջրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքում (տե՛ս **Ստեփաննոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԲ, էջ 116)։

² **Յովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 426, Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 76։ Նա ուզում էր ասել, թե միայն իր նկարը պետք է պատկերվի Մայր եկեղեցու պատին։ Դա նաև մեզ տեղեկացնում է, որ այն ժամանակ սովորություն է եղել կաթողիկոսների նկարը սև գույնով նկարել կաթողիկոսարանի եկեղեցու պատի վրա (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 568)։

³ Դրասխանակերտցու վկայությամբ նրա պատկերը նկարվել է եկեղեցու պատին (տե՛ս **Յովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 426)։

«Տէր Գեորգ, յԱրագածոտն է, ի գեղջէ Աշտարակաց»¹: Նրա մականունը՝ «հոյլ որբուկն», առաջին անգամ նշում է Սամվել Անեցին, որը վաղարշապատյան հրատարակության մեջ ձեռագրերից միայն մեկի հիման վրա տպվել է «խուլ որբուկ» ձևով²: Նշանավոր բնագրագետ Նորայր Բյուզանդացին «հոյլ որբուկն» սրբագրել է «խոյլսրբուկ» և հետևյալ բացատրությունն առաջարկել՝ «որ սրբէ կամ բժշկէ զխոյլս»³: Ս. Բաբայանը մականունը կաթողիկոսի երբեմնի «կոչման» աղավաղված ձև է համարել⁴: Պատմաբան Կ. Մաթևոսյանի կարծիքով՝ Գեորգ կաթողիկոսի վերաբերյալ «հոյլ որբուկ» արտահայտությունն արվել է «ամբողջովին որբ» իմաստով, քանի որ նրանից քիչ առաջ աթոռակալած Եսայի հայրապետի համար Սամվել Անեցին հայտնում է, թե նա միակողմանի որբ էր⁵: Ենթադրելի է, որ Գեորգ Բյուրականցին հովվապետել է խոր ծերության հասակում:

Յոթ տարվա ընթացքում (788-795) միմյանց հաջորդած չորս ծեր հոգևորականների կաթողիկոսության փաստը պատահականությունն չէ: Մանավանդ եթե ընդունում ենք, որ Արմինիայում Հայոց կաթողիկոսը փաստացի քաղաքական դեմք էր և ոչ թե փոքրամասնություն կազմող կրոնական համայնքի ղեկավար: Այստեղ հայ նախարարները (Հայոց իշխան, սպարապետ) կարող էին բարձր դիրքերի հասնել առանց կրոնափոխ լինելու⁶: Այս ամենը հաշվի առնելով՝ արաբները հետևողականորեն հեղինակագրկում էին Հայոց հայրապետի ինստիտուտը: Խալիֆայության ստեղծած ծանր պայմանները ստիպում էին երիտասարդ և գործունյա հոգևորականներին հեռու մնալ կաթողիկոս ընտրվելու գայթակղությունից: Իսկ ծեր և տարիքավոր հոգևորականների կաթողիկոսացմամբ արաբները բռնի վճարումներ ունենալու առիթ և պատեհություն էին ստեղծում:

Հովսեփ Բ Փարպեցու աթոռակալությունը

795 թ.՝ Գեորգ Ա Բյուրականցուց հետո կաթողիկոս է ընտրվում Յովսեփ Բ-ն, որը, ի տարբերություն իր սակավակյաց նախորդների, աթոռակալում է համեմատաբար երկար՝ տասնմեկ տարի: Նա նույնպես Արագածոտն գավառից էր: Հովհաննես Դրասխանակերտցին նրա բուն ծննդավայր է նշում «ի բնակչաց Սրբոյն Գրիգորի»⁷: Աստղիկը փոքր-ինչ հստակեցնում է՝ նշելով, որ

¹ Ստեփանոս Տաթևեցի Աստղիկ, նշվ. աշխ., էջ 706:

² Տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, նշվ. աշխ., էջ 161, Սամվել Անեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1893, էջ 90, Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 75:

³ Բյուզանդացի Ն., Նախնիք, Ժնև, 1996, էջ 127:

⁴ Ամենայն հայոց կաթողիկոսներ, հանրագիտարան, էջ 36:

⁵ Տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, նշվ. աշխ., էջ 376, ծանոթ. 154:

⁶ Այլ ուստիկանություններում քրիստոնյա իշխանը կարող էր բարձր դիրքի հասնել կրոնափոխ լինելու ճանապարհով (տե՛ս Տէր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 41-42):

⁷ Յովհաննես Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 426:

նա ծագում էր «ի գեղջէ սուրբ Գրիգորի»։ Այս տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ նոր հայրապետի ծննդավայրը Արագածոտն գավառի Փարպի գյուղն է, որտեղ կառուցված եկեղեցին կրում է սուրբ Գրիգորի անունը։ Ասողիկը նշում է նաև նրա մականունը՝ «Կարիճ»¹։ Հովսեփի կաթողիկոսության օրոք Արմինիայի ոստիկան է նշանակվում տխրահռչակ Խուզիյամա իբն Խազիման (803-806), որի հարաբերությունները կառավարման սկզբում հայ նախարարների հետ հաշտ էին։ Սակայն շուտով նա ձեռնամուխ է լինում անօրեն կեղեքումների և «զընդ իւրեւ կացեալսն նուաճէր»։ Խուզիյամա իբն Խազիման շարունակում է հայկական կալվածները յուրացնելու և այդ տարածքների վրա արաբ վերաբնակիչների համայնքներ հիմնադրելու խալիֆայության ծրագիրը։ Նա փորձում է հայրապետական տիրույթներից յուրացնել մի շարք դաստակերտներ և ազարակներ։ Տեսնելով «զգեղեցկութիւն մեծամեծ դաստակերտիցն տան կաթողիկոսարանին»՝ նա պահանջում է իրեն վաճառել Արարատյան դաշտում գտնվող երեք նշանավոր կալվածքները՝ Արտաշատը, Կավակերտը և Հոռոմոց մարզը. «դաւաճանեալ ի չար ցանկութենէն եւ ի դիւամոլ ազահութենէն ուժգին իմն դժրութեամբ յինքն (Խուզիյամա իբն Խազիման – Վ. Ա.) ի հայրապետէն Յովսէփայ խնդրէր տալ նմա զմեծ դաստակերտս իբր ի պատճառս գնոց արծաթոյ»²։ Խուզիյամա իբն Խազիման իրականում ոչ թե ցանկանում էր գնել նշվածները, այլ վաճառքի անվան տակ օրինական տեսք տալ եկեղեցու կալվածքների հափշտակությանը։ Կաթողիկոսը մերժում է նրան պատասխանելով, որ ինքն իրավասու չէ եկեղեցու գույքը և ունեցվածքը վաճառելու, քանզի դրանք նվիրատվություններ են։ Կաթողիկոսին համոզելու զանազան հնարքների ապարդյուն գործադրումից հետո ոստիկանն անցնում է ճնշումների և բռնադատությունների։ Իր նպատակին հասնելու համար ազահ ոստիկանը բանտարկում է կաթողիկոսին և «կապէր զնա ի շղթայս եւ գանիւ հարկանէր»։ Խիզախ հայրապետը, «զմահ ընդ կեանս խառնեալ», տոկունությամբ կրում է իրեն հասած անմարդկային տանջանքները։ Ցանկացածը ամեն գնով ձեռք բերելու մոլուցքով տարված խորամանկ ոստիկանը բեմադրում է Հայոց հայրապետին կաշառելու շինծու մի ներկայացում. նա հրամայում է ծառաներին հրապարակավ, ի տես բոլորի, գանձերով լցված երեք պարկ, որոնցից յուրաքանչյուրում իբրև մեկ դաստակերտի գինն էր, տանել կաթողիկոսի բանտախուց։ Սակայն ներսում դրանք պետք է գաղտնաբար տեղափոխվեին այլ վայր։ Այս ամենը պետք է այնպես արվեր, որ հայրապետը չկռահեր նրանց մտադրությունը։ Դուրս գալով այդտեղից ոստիկանի գործակալները պետք է լուրեր տարածեին, որ հայրապետը վերցրել է գանձերը և դաստակերտները վաճառել ոստիկանին։ Այդքանից հետո ոստիկանը զավթում է դաստակերտները։ Այս բեմադրության նպատակը իր

¹ Տե՛ս **Ստեփանոս Տաթևնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 706։ Հայր Օրմանյանը կասկածում է «կարիճ» մականվան հավաստիությանը և կարծում, որ այն գրչագրական սխալ է և ավելի հավանական է, որ լինի «կտրիճ» (տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 629, սյունակ 1065)։

² **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 426։

զավթումների «օրինականությունը» ապահովելն էր, քանզի չէր կարող այդ ամենն անել բացահայտ, որովհետև «ոչ ունէր զայն իշխանութիւն յամիրապետէն»¹: Այնուհետև կաթողիկոսին ազատում են բանտից, և նա վերադառնում է իր պաշտոնին: Լսելով կեղծ գործարքի մասին՝ աներկյուղ կաթողիկոսը վճռականորեն «յատենի ուղղոց»-ում² պաշտպանում է Հայոց եկեղեցու իրավունքները: Իսլամական դատարանում նա ապացուցում է վաճառքի ապօրինությունը, ազահ ոստիկանի ձեռքից ետ է վերցնում Կավակերտն ու Հոռոմոց մարզը, իսկ Արտաշատը դուրս է գալիս կաթողիկոսարանի տիրույթների ցանկից և անցնում արաբներին: Ընչաքաղց արաբ պաշտոնյան չի դադարեցնում բռնությունները եկեղեցու նկատմամբ, չարչարանքների են ենթարկվում նաև քահանաները: Հայոց հայրապետի համառությունը կոտրելու համար դիմում է նրա հարազատներին ահաբեկչելու միջոցին. նրա ուղարկած մարդիկ Մեծամոր գետի ակունքում խեղդամահ են անում կաթողիկոսի եղբորը, որը փորձել էր ամբաստանագրով խալիֆին տեղեկացնել ոստիկանի գործած ապօրինությունների մասին: Եղբոր մահը ծանր վիշտ է պատճառում Հովսեփ կաթողիկոսին: Պաշտոնավարելով տասնմեկ տարի՝ 806 թ. նա հիվանդանում է և մահանում: Հիրավի, Հովսեփ հայրապետի գործելակերպը եկեղեցու իրավունքներն ու ունեցվածքը անձնվիրաբար պաշտպանելու հարցում, դրա համար խոստովանողական տանջանքներ կրելը, դատարանում իր իրավացիությունն ապացուցելը և կալվածքները ետ բերելը արժանի են բարձր գնահատականի: Հովսեփ կաթողիկոսի օրոք տեղի է ունենում ոստիկանի փոփոխություն, Խուզիյամա իբն Խազիմանին փոխարինում է Հուլը: Չի բացառվում, որ արաբ պաշտոնյայի այս փոփոխությունը թելադրված էր հենց Հայոց եկեղեցու նկատմամբ նրա հրահրած սադրանքներով և հակամարտությամբ: Արաբների համար այս շրջանում կրոնական հալածանքները միջոց էին իրենց հիմնական նպատակի իրագործման համար³: Հայոց եկեղեցու և հոգևորականության դեմ գործադրված բռնությունների և հալածանքների հիմնական նպատակը ոչ թե հրով ու սրով հայերի մեջ անպայման իսլամի տարածումն էր, այլ երկրի կողոպուտը:

Վարդան Ալեքսանյան – Հայոց եկեղեցին Աբբասյան հարստության օրոք (VIII դարի երկրորդ կես)

Հայոց եկեղեցին Աբբասյանների տիրապետության առաջին ժամանակաշրջանում՝ 750-800-ական թթ., ապրում էր իր բազմադարյան պատմության դժվարին ժամանակաշրջաններից մեկը: Եկեղեցին դիմագրավում էր միաժամանակ երեք ուղղություններով նետված մարտահրավերների, որոնք գալիս էին մուսուլման արաբներից, քաղ-

¹ Զամչյան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 427:

² Մ. Օրմանյանի կարծիքով, «յատենի ուղղոց»-ը խալիֆի դատարանն է, «ինչը որ կատարելապես կը յարմարի Հարուն-ել-Ռաշիդի, օրենսգիտութեամբ եւ մեծանձնութեամբ հռչակուած ամիրապետին» (Օրմանյան Մ., նշվ. աշխ., § 630, սյունակ 1067):

³ Տե՛ս Մելիք-Բախշյան Ստ., նշվ. աշխ., էջ 137-138:

կեդոնական Բյուզանդիայից և պավլիկյաններից: Եռակի գրոհի պայմաններում Հայոց եկեղեցին ամրապնդում էր իր ինքնուրույնությունը, կերտում ազգային օրենսդրություն և գաղափարախոսություն: Կամայականություններով և կողոպուտով ուղեկցվող եկեղեցական ունեցվածքի և հողերի բռնագրավումը, արաբական ցեղերի վերաբնակեցումը և Հայաստանի ժողովրդագրական քարտեզի փոփոխումը լուրջ հարվածներ էին Հայաստանի ինքնավարությունը մարմնավորող Հայոց եկեղեցուն: Այդ ամենի հետևանքով խարխլվում և թուլանում էր հոգևոր-ավատական կառույցի տնտեսական հիմքը՝ եկեղեցական հողատիրությունը, կրճատվում էին նրանից եկող հասույթները: Հայոց եկեղեցին դիտելով որպես կողոպուտի և հարստացման առարկա՝ արաբները չէին անտեսում նաև այն հանգամանքը, որ դրանով թուլացնում էին իրենց գլխավոր ախոյանի՝ Բյուզանդիայի ազդեցության տարածման կարևոր լծակներից մեկը՝ Հայաստանում: Եկեղեցական հալածանքներն ավելի սանձարձակ դարձան հատկապես 774-775 թթ. ապստամբության պարտությունից հետո, երբ Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացան Մամիկոնյան և Կամսարական նախարարական տները, որոնք եկեղեցու ջերմ աջակիցն էին և պետականության ջատագովը: Հոգևորական դասը դարձավ ավելի անպաշտպան և խոցելի, քանզի արաբները չէին խորշում անգամ հոգևորականների խոշտանգումներից և սպանություններից: Արաբները հեղինակագրկում էին Հայոց հայրապետի ինստիտուտը, որը հայության համար միասնության խորհրդանիշն էր: Արաբ պաշտոնյաների նկատմամբ ունեցած ընդգծված զգուշավոր վերաբերմունքը չէր խանգարում հայոց կաթողիկոսներին անձնվիրաբար պայքարելու եկեղեցու իրավունքների և ունեցվածքի պաշտպանության համար:

Вардан Алексанян – *Армянская церковь в период Аббасидской династии (вторая половина VIII века)*

Ключевые слова – Арабский халифат, армянский патриархат, Сион I Бавонеци, Есаи I Египатрушеци, Согомон I Гарнеци, Овсеп II Парпеци, историк Левонд, церковное поместье, угнетение, налоговая политика, Партавский церковный собор, грабеж церковного имущества

С приходом к власти Аббасидов серьезным образом ухудшилось состояние Армянской церкви. Во второй половине VIII века Армянская церковь пережила один из самых сложных периодов своей многовековой истории. Церковь одновременно столкнулась с тремя вызовами, исходящими от арабов-мусульман, халкидонских византийцев и павликианцев. В условиях тройственного нападения Армянская церковь укрепила свою независимость, сформировала национальное законодательство и идеологию. Сопровождающийся произволом грабеж церковного имущества, конфискация земель, переселение арабских племен, изменение демографической карты Армении стали серьезными ударами по церкви, олицетворяющей автономию Армении. В результате была ослаблена экономическая база духовно-феодальной структуры – церковное землевладение, и сокращены доходы от нее. Воспринимая Армянскую церковь как объект грабежа и обогащения, арабы в то же время не могли игнорировать тот факт, что тем самым они ослабляют один из важных рычагов распространения влияния в Армении их главного врага – Византии. Гонения на Армянскую церковь особенно усилились после поражения восстания в 774-775 гг., когда с политической арены Армении ушли феодальные дома Мамиконян и Камсаракан, которые были ярыми сторонниками церкви и государства. Духовенство стало более уязвимым, потому что арабы не гнушались пытать или убивать его представителей. Арабы дискредитировали институт армянского патриарха, который был для армян символом единства. Выраженное настороженное отношение к арабским чиновникам не помешало армянским католикосам самоотверженно бороться за защиту прав и имущества церкви.

Vardan Aleksanyan – Armenian Church in the Period of the Abbasid Dynasty (Second Half of the VIII Century)

Key words – Arab Caliphate, Armenian Patriarch, Sion I Bavonetsi, Esai I Ehyapatrushetsi, Soghomon I Garnetsi, Hovsep II Parpetsi, Historian Levond, Church Estate, Oppression, tax policy, Partava Church Cathedral, robbery of church property

With the coming to power of the Abbasids, the condition of the Armenian Church seriously deteriorated. In the second half of the VIII century, the Armenian Church experienced one of the most difficult periods in its centuries-old history. The church simultaneously faced three challenges coming from the Muslim Arabs, the Chalcedonian Byzantines and the Paulicians. In conditions of the triple attack, the Armenian Church strengthened its independence, formed national legislation and ideology. The robbery of church property, the confiscation of lands, the resettlement of Arab tribes, the change in the demographic map of Armenia, accompanied by arbitrariness, became serious blows to the church, which personified the autonomy of Armenia. As a result, the economic base of the spiritual-feudal structure - church land ownership - was weakened, and the income from it was reduced. Accepting the Armenian Church as an object of robbery and enrichment, at the same time, the Arabs could not ignore the fact that by doing so they weakened one of the important levers for spreading the influence of the main enemy of Byzantium in Armenia. The persecution of the Armenian Church especially intensified after the defeat of the uprising in 774-775, when the feudal houses of Mamikonyan and Kamsarakan, who were ardent supporters of church and state, left the political arena of Armenia. The clergy became more vulnerable because the Arabs did not disdain to torture or kill them. The Arabs discredited the institution of the Armenian Patriarch, which was a symbol of unity for the Armenians. The expressed wary attitude towards the Arab officials did not prevent the Armenian Catholicos from selfless struggle for the protection of the rights and property of the church.

Ներկայացվել է 13.04.2022

Գրախոսվել է 10.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Աղբյուրային Վարդան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (vardanalexanyan406@gmail.com)

ԵՐԵՎԱՆԻ 1724 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանալի բառեր – Աբրահամ Երևանցի, Չելեբի-Ջադե, Երևանի բերդ, Ձորագյուղ, ինքնապաշտպանություն, օսմանյան բանակ, պաշարում, ամրոցի գրավում

Հայոց պատմության նշանակալի իրադարձություններից է Երևանի 1724 թ. հերոսական ինքնապաշտպանությունը օսմանյան թուրքերից: Ամիսներ շարունակ Երևանի բնակիչները համառ կռիվներով կասեցնում էին թուրքական բազմահազարանոց բանակի անընդհատ հարձակումները՝ նրան պատճառելով հսկայական կորուստներ: Պետք է փաստել, որ Երևանի հայության ինքնապաշտպանությանն առնչվող աղբյուրագիտական տեղեկությունները միայնացից էապես տարբերվում են, որի պատճառով հաճախ պատմաբաններն իրարամերժ եզրակացությունների են հանգել: Ներկայումս, երբ Երևանի պատմության ուսումնասիրությունը բացի զուտ պատմական իրողությունների լուսաբանումից ստացել է նաև քաղաքական հնչեղություն, հրատապ է Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության ամբողջական և խորքային ուսումնասիրությունը:

Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության մասին աղբյուրագիտական տեղեկությունները

1720-ական թվականների սկզբին աֆղանների ներխուժման պատճառով իրանական պետությունը հայտնվել էր կործանման եզրին: Օգտվելով ախոյան երկրի ծանր վիճակից՝ օսմանյան թուրքերը վերստին օրակարգ են բերում Երևանին տիրելու իրենց վաղեմի ծրագիրը: Օսմանյան բանակն անցնում է հարձակման: 1724 թ. սկզբին Երևանի պարսիկ խան Միհր-Ալին Եղվարդում փորձում է կասեցնել թշնամու առաջխաղացումը, բայց պարտվելով նահանջում է Երևան, որտեղ ապաստանել էին նաև շրջակա գյուղերի բնակիչները: Ապրիլին սկսվում է Երևանի հայերի շուրջ երկամսյա ինքնապաշտպանությունը:

Այս հերոսամարտն ամենայն մանրամասնությամբ նկարագրված է Աբրահամ Երևանցու «Պատմութիւն թագայորի Պարսից» երկում¹, որտեղ նշվում է, որ մարտի 6-ին օսմանյան բանակը Ախուրյան գետի (Արփա-չայ)

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ պատրաստեց Հ. Սահակ Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, Վենետիկ – Ս. Ղազար, 1977:

ափից շարժվեց և հասավ Եղվարդ: Այստեղ նրա դեմ դուրս եկավ Երևանի Միհր-Ալի խանի 12 հազարանոց բանակը, որը պարտվեց և գրեթե լիովին ոչնչացվեց: Օսմանյան բանակը Եղվարդից տեղաշարժվեց և պաշարեց Կարբի գյուղը: Գյուղացիները շուրջ 40 օր պաշտպանվեցին, մինչև որ տեղ հասած փաշան առաջարկեց նրանց հանձնվել: Կարբեցիները 10 օր խնդրեցին որոշում կայացնելու համար, այդ ընթացքում Երևանի խանից օգնություն խնդրեցին, բայց չստացան, ուստի որոշեցին հանձնվել: Այնուհետև Աբրահամ Երևանցին տեղեկացնում է, որ օսմանյան զորքը շարժվել է դեպի Երևան. «Եղեվարդայ վեր կացավ մինչ ի Երեւման, գ [=3] ավուրն հասավ Երեւանայ մօտն»: Այդ ընթացքում Երևանի բոլոր կողմերի գյուղերի բնակիչները եկել, ապաստանել էին քաղաքում: Օսմանյան զորքը Երևանին մոտեցավ արևմուտքից: «Երեւանայ խանն, որ կասեն Միհրայլի խան, հրայման ետ, քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մէջն մտավ, կոիվ արին օսմանցուն հետ մինչ ի կ [=60] օրն»: Մի քանի օր տևած կռիվներից հետո օսմանյան զորքը թուլանում է և օգնության կանչում այլ ուժերի: Բայագետից ուղարկում են 35 հազար զինվորներ, բայց դրանից հետո ևս Երևանը մնում է անառիկ: Սուլթանը կրկին 10 հազարանոց զորաբանակ է ուղարկում, որը բանակում է Նորագավթի կողմում: Օգնություն ստանալուց երեք օր անց օսմանյան բանակը հզոր հարձակում է ձեռնարկում և անցնելով գետը՝ քաղաք մտնում Ձորագյուղի կողմից՝ կոտորելով երկու հազար հայերի: Այդ ժամանակ «տաշիզըն (պարսից զինվորները – Մ. Ե.) փախավ մտավ բերդի մէջն, քրիստոնայ մնաց ի քաղաքի մէջն»¹: Խանի զինվորներն իրենց հետ բերդ էին տարել մի քանի հայ մեծամեծերի՝ իրենց ընտանիքներով²: Գիշերը Երևանի ինքնապաշտպանության հրամանատարները՝ «Հունդի բէկենց Յօհանն, Քէչի բէկենց Պողոսըն, Միրզայջանենց Թավի, Կառճիկ Օվանէսն», հավաքվում են խորհրդակցության: Նրանք հասկանում էին, որ եթե իրենք օգնություն չստանան, հաջորդ օրը օսմանյան բանակը ամբողջությամբ կգրավի քաղաքը: Նրանք որոշում են դիմել Կոնդի բոշաների օգնությանը: Բոշաների մեծավորները խոստանում են 200 զինվոր ուղարկել և, իրոք, շուտով ներկայանում են 234 զինվորներով³: Օգտվելով այն բանից, որ հաջորդ օրը թշնամին գրոհ չձեռնարկեց, որոշվեց արագորեն զորահավաք կատարել Երևանում ապաստանած շրջակա գյուղերի ժողովրդի շրջանում: Երևանցիներից և փախստականներից հավաքված և Ձորագյուղում կենտրոնացված զինվորները բաժանվեցին խմբերի՝ պաշտպանելու Ձորագյուղ բերդը ճանապարհները և կարևոր տեղամասերը: Ձորագյուղում ապաստանած փախստականներից հավաքվել էր երեք հազար զինվոր⁴, Երևանի Ջուհայրենց թաղից 955 զինվոր,

¹ Աբրահամ Երևանցի, էջ 23-26:

² Տե՛ս նույն տեղում, էջ 29:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

⁴ Այս զինվորները, ըստ Մ. Կարապետյանի, ձորագյուղցիներ էին (տե՛ս Կարապետյան Մ., Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թվականներին //

Հին Երևան թաղից՝ չորս հազար զինվոր: Վերջիններիս գլխավորում էին փահլևան (գոտեմարտիկ) Նիկողոսը (Նիկողայոս), Մարիամի որդի (Մարիամյան) Անդոնը (Անտոնիոս), Խաթունի որդի (Խաթունյան) Բուրիքը և տեր Մովսեսը: Ինքնապաշտպանության զինվորների ընդհանուր թիվը 9423 էր, իսկ խաղաղ բնակչության թիվը հասնում էր 28 հազարի: Ըստ այդմ՝ զինվորներից շուրջ 5000-ը հավաքագրվել էին Երևանի բուն հայ ազգաբնակչությունից, իսկ այլը՝ փախստականներից և Կոնդի բռնաներից:

Ինքնապաշտպանական ուժերի՝ Ձորագյուղում կենտրոնանալն ուներ իր պատճառը: Ըստ Աբրահամ Երևանցու՝ օսմանյան բանակը շրջապատել էր քաղաքը բոլոր կողմերից, սակայն, բացի Ձորագյուղի կողմից, մոտենալ չէր կարողանում, քանի որ քաղաքը պաշտպանված էր անանցանելի ծառատաններով¹:

Շուտով օսմանյան բանակին օգնության եկավ երեք հազարանոց եգիպտական զորքը, որը սկզբում տեղակայվեց Նորագյուղի կողմում, իսկ այնուհետև գրոհեց Ձորագյուղի ուղղությամբ՝ ճեղքելով պաշտպանությունը: Հայ զինվորները սկսեցին նահանջել և Ձորագյուղի կեսն ընկավ թշնամու ձեռքը: Ինքնապաշտպանությանը միացան 234 բռնա զինվորները: Հայկական ուժերը մեծ հաղթանակ տարան՝ տալով 1300 զոհ: Պարտված և գետի մյուս կողմը նահանջած օսմանյան բանակի սպանված զինվորների թիվը վեց հազար էր:

Օսմանյան բանակը հաջորդ անգամ գրոհեց Կոնդի վրա: Հայկական ուժերը արագորեն տեղափոխվեցին նոր ճակատ և քշեցին թշնամուն՝ տալով 440 զոհ (400 հայ և 40 բռնա): Օսմանյան բանակը մինչ օգնական նոր ուժերի գալը երկար ժամանակ չէր գրոհում, իսկ 15 օր անց, երբ երկու փաշաների գլխավորությամբ եկան նոր զորքեր², կռիվը վերսկսվեց: Հայկական զորքը հավաքվել էր Ձորագյուղում, իսկ թուրքերը գրոհում էին տարբեր կողմերից: Ճակատամարտը տևեց առավոտից մինչև երեկո, Երևանի պաշտպանները կռվեցին մինչև վերջին զինվորը: Օսմանյան բանակը նրանց կարողացավ հաղթել միայն թվաքանակով՝ կենտրոնացնելով ահռելի ուժեր: Աբրահամ Երևանցին արձանագրում է. «Թվին ՌՃՀԳ [1724] ումն, ունիսի է [=7] ումն, օսմանցին առավ քաղաքն, նստավ: Մնաց բերդն»: Երևանի գրավումից հետո թուրքերը սկսեցին հայերի կոտորածը³:

Անդրադառնալով պաշարված բերդի հանձնմանը՝ Աբրահամ Երևանցին գրում է, որ այդ հարցում միջնորդ եղավ Հայոց կաթողիկոս Աստվածատուր

«ՊԲՀ», 1987, թիվ 3, էջ 95), սակայն հազիվ թե նման կարծիքի կարելի է հանգել Աբրահամ Երևանցու «Ձորայգեղայ հզորքն (իմա՝ զորք – Մ. Ե.), որ է ԳՌ [3. 000] պատվայկան գեղից մարդիք» տեղեկությունից (**Աբրահամ Երևանցի**, էջ 28): Վերջինս իրականում վկայում է այն մասին, որ զինվորները հավաքագրվել էին Երևանի շրջակա գյուղերից քաղաքում ապաստանածներից («պատվայկան գեղից մարդիք»):

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

² Տե՛ս նույն տեղում, էջ 28-30:

³ Նույն տեղում, էջ 31:

Ա Համադանցին (1715-1725), որի շնորհիվ ապահովվեց կայագործի անվտանգ հեռացումը¹: Այնուհետև պատմիչն արձանագրում է բերդի հանձնման ամսաթիվը. «Թվին ՌՃՀԳ [1724] ումն, օգոստոսի ի [20] մին, եղավ վերջ, հանդարտեցավ օսմանցին, միչ ի նուեմբերն»²:

Աբրահամ Երևանցու աշխատության՝ «Պատմութիւն պատերազմացն» կոչվող խմբագրված տարբերակում նշմարելի են որոշակի տարբերություններ: Մասնավորապես, Երևանի վրա Եղվարդից արշավող զորքն Աբդուլլա փաշայի բանակն էր, որն օգնության էր հասել Կարբին պաշարող օսմանյան զորքին³: Հայերի կողքին նշվում է Միհր-Ալի խանի հրամանով մարտնչող պարսիկների և ոչ թե թուրքերի մասին⁴, հայերի հրամանատարներն էին՝ Հովհաննես Հունդիբեկյանը, Պողոս Քիջիբեկյանը, Հովհաննես Կառջիկը և Դավիթ Միրզեջանյանը⁵, Երևանի բերդից օսմանյան փաշայի կողմից ազատ արձակվածները հիշատակված են որպես պարսիկ, այլ ոչ թե թուրք⁶:

Երևանի գրավման մասին Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին (1701-1728) 1724 թ. սեպտեմբերի 4-ին գրում է, որ օսմանյան զորքերը տիրել են պարսկական տերության տարբեր շրջանների՝ մինչև Երևան: Ընդ որում՝ նա հատուկ նշում է. «Դուք մի մտածեք, որ այդ վայրերը գրավված չեն, իրապես գրավված են»⁷:

Այլ հայ հեղինակներ նշում են Երևանի բնակչության կոտորածի⁸, օսմանյան բանակի՝ սեպտեմբերին Երևանը գրավելու⁹ կամ շուրջ երեք ամիս բերդը պաշարելու մասին¹⁰: Հայկական սկզբնաղբյուրներում նշվում է նաև 1724 թ. մարտին կամ սեպտեմբերին Երևանի անկման չճշտված լուրերի մասին¹¹:

Նկարագրելով Երևանի գրավումը՝ թուրք հեղինակ Չելեբի-Ջադեն պատմում է, որ օսմանյան բանակը շարժվել է Ախուրյան գետի (բնագրում՝ Արփա-Չայիր) ափի բանակավայրից դեպի Երևան հունիսի 13-ին: Երևանի

¹ Աբրահամ Երևանցի, էջ 35:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 99:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 100:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 101:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

⁷ Զօբ Դ., Сношения Петра Великого с армянским народом, документы, СПб., 1898, с. 378.

⁸ Տե՛ս Դավթա Մեքաստացի, Դավիթ Բեկ կամ Պատմութիւն Ղափանցոց, բնագիրը՝ Հ. Սամուել Արամեանի, Երևան, 1992, էջ 102, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 433:

⁹ Տե՛ս Հակոբյան Վ., Ժամանակագրական մի փաստի ճշգրտման շուրջը // «ԼՀԳ», 1974, թիվ 5, էջ 81: Հեղինակը վկայակոչել է Մատենադարանի թիվ 3602 ձեռագիրը:

¹⁰ Տե՛ս Հակոբյան Վ., նշվ. աշխ., էջ 79-80: Այստեղ հեղինակը վկայակոչել է Մատենադարանի թիվ 2121 ձեռագրի 367բ էջը:

¹¹ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, под ред. А. Г. Иоаннисяна, Ереван, 1967, с. 84-85, 198-199:

բերդի պաշարման սկզբում ներխուժելով բերդի պարիսպներին արտաքուստ կից «վարոշ» (արվարձան)՝ օսմանյան զորքը կոտորել է 10 հազար պարսիկ զինվորների: «Բացի այդ, ժողովրդից 10 հազարից ավելի ընտանիք և երեխաների գերի վերցրին»¹: Նրանք նաև քանդել են քաղաքի՝ բերդին հարևան տները և բերդի շուրջն ամայի տարածք ստեղծել՝ պաշարելով այն²: Օսմանյան բանակը պարբերաբար օգնական ուժեր էր ստանում, որոնցից հատկապես հիշատակելի է եգիպտացիների երեք հազարանոց զորագունդը³: Երկարատև պաշարումից հետո՝ սեպտեմբերի 23-ին, Միհր-Ալի խանը Երևանի բերդը հանձնել է թշնամուն⁴:

«Ռեվանի (Երևանի – *Ս. Ե.*) գրավման մասին գրքում», որ գրվել է դեպքերի ժամանակակցի կողմից, ներկայացված է Երևանի բերդի պաշարման այլ թվագրում՝ 1724 թ. հուլիսի 6-ից հոկտեմբերի 7-ը⁵:

Ըստ Կոստանդնուպոլսի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Նեպյունի 1724 թ. սեպտեմբերի 1-ի տեղեկագրի՝ Պարսկաստանում գործող զորքերի փաշան գրել է Բարձր դռանը, որ ցանկանում է միանալ Երևանը պաշարած զորքին, քանի որ այն ի վիճակի չէ գրավելու հայերի, պարսիկների և մի խումբ վրացիների համատեղ ուժերով պաշտպանվող քաղաքը, որի կեսը շրջափակված է զառիթափ լեռներով, իսկ մյուս կեսը՝ ջրով⁶: Ըստ Ի. Նեպյունի 1724 թ. սեպտեմբերի երկրորդ կեսի տեղեկագրի՝ Երևանի շուրջը հավաքվել է 30 հազարանոց թուրքական կանոնավոր բանակ, նույնքան անկանոն զորամիավորումներ, որոնց միացել է Եգիպտոսից ուղարկված երեք հազարանոց զորաջոկատը: Թուրքերն ամեն օր մարդ են ուղարկում քաղաք՝ առաջարկելով հանձնվել, սակայն քաղաքացիները հրաժարվում են՝ նախընտրելով մեռնել կովում, քան հանձնվել: Երևան քաղաքի կովողների թիվը հինգ հազար է: Ըստ դիվանագիտական ներկայացուցչի՝ մեկ այլ փաշա արշավում է դեպի Թավրիզ, բայց թուրքերը հույս չունենին, թե նա կկարողանա գրավել այն, քանզի գրավված վայրերում կայագործներ է թողել և մի մեծ զորախումբ Երևան ուղարկել⁷: Իսկ հոկտեմբերի 10-ի զեկուցագրում Ի. Նեպյունը գրում է, որ Երևանի բերդի կայագործը հանձնվել է թշնամուն 60-

¹ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», թարգմ. թուրքերեն բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 143:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 146:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 149-150:

⁵ Տե՛ս «1720-1724 Osmanlı-İran münâsebetleri ve Silâhşör Kemânî Mustafa Ağâ'nın Revân fetih-nâmesi», by M. Münir Aktepe, İstanbul, 1970, s. 45-70:

⁶ Տե՛ս **Մարտիրոսյան Վ.**, Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը // «ՊԲՀ», 1965, թիվ 2, էջ 189-190:

⁷ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, с. 220:

օրյա կռիվներից հետո՝ 1724 թ. սեպտեմբերի 22-ին¹:

Ջ. Հանվելը հաղորդում է, որ օսմանյան բանակն անցել է Արաքսը 1724 թ. հունիսի կեսին և հասել Երևան հունիսի վերջին²: Բերդը հանձնվել է հոկտեմբերի սկզբին³:

Մ. Լ. Շելը հայտնում է, որ Երևանի պաշարումը տևել է 90 օր⁴, փաստորեն՝ հունիսից մինչև սեպտեմբեր:

Ըստ Թ. Կրուշինսկու՝ օսմանյան բանակը, որն արշավել է Երևանի ուղղությամբ, այն գրավել է առաջին իսկ գրոհից, իսկ 30 հազար հայեր, որոնք չեն կարողացել ապաստանել քաղաքում, կոտորվել են: Բերդը դիմադրել է երկու ամիս և հանձնվել հայոց պատրիարքի միջնորդությամբ⁵:

Երևանի 1724 թ. կռիվների հարցը պատմագիտության մեջ

Երևանի պաշտպանության և գրավման վերաբերյալ հայագիտության մեջ արտահայտվել են բազմաթիվ և հակասական տեսակետներ:

Ղ. Ալիշանը և, նրանից օգտվելով, Ե. Շահագիզը, առանց ժամանակագրական հստակեցումների, պարզապես վերապատմում են Աբրահամ Երևանցու տեղեկությունները Երևանի ինքնապաշտպանության մասին⁶:

Լեոն, Ա. Միրզոյանը և Ա. Միմոնյանը, հիմնվելով Աբրահամ Երևանցու տեղեկությունների վրա, օսմանյան բանակի կողմից Երևանի գրավումը թվագրում են 1724 թ. հունիսի 7-ին⁷:

Ա. Պողոսյանը և Թ. Հակոբյանը Երևանի ինքնապաշտպանության 60 օրը թվագրում են ապրիլի 7-ից հունիսի 7-ը⁸:

Ա. Հովհաննիսյանը Երևանի 1724 թ. կռիվներին վերաբերող փաստաթղթերում առկա «պարսիկներ» էթնանունը առաջարկում է կարդալ «Անդրկովկասի շիաներ» կամ «ադրբեջանցիներ»⁹, որից հետո պնդում է, թե քաղաքի հայերը կազմում էին բնակչության չորրորդ մասը, իսկ մեծամաս-

¹ Տե՛ս **Մարտիրոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 190:

² Տե՛ս «The Revolutions of Persia by Jonas Hanway», the Third Edition, Vol. II, London, 1762, p. 211:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 212-213:

⁴ Տե՛ս **Shay M. L.**, The Ottoman Empire from 1720 to 1734 as Revealed in Despatches of the Venetian Baili, Urbana, 1944, p. 120:

⁵ «The History of the Late Revolutions of Persia», Taken from the Memoirs of Father Krusinski, Procurator of the Jesuits at Ispahan, the Second Edition, Vol. II, London, 1733, p. 178.

⁶ Տե՛ս «Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 305, **Շահագիզ Յե.**, Հին Յերեվանը, Յերեվան, 1931, էջ 105-108:

⁷ Տե՛ս **Լեո**, Երկեր, հ. Գ, գիրք Բ, Երևան, 1973, էջ 157, **Միրզոյան Ա.**, Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը թյուրքական զավթիչներից // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1953, թիվ 3, էջ 93-96, **Միմոնյան Ա. Պ.**, Երևան 1920-1967, Երևան, 1968, էջ 45-47:

⁸ Տե՛ս **Պողոսյան Ա. Պ.**, Հայ ժողովրդի պատմություն, հ. II (IX-XIX դդ.), Երևան, 1965, էջ 285-288, **Հակոբյան Թ. Խ.**, Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, 1971, էջ 77-90:

⁹ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть I, под ред. А. Г. Иоаннисяна, Ереван, 1964, с. LXXV, LXXVII:

նությունն աղբբեջանցիներ էին¹: Նրա կարծիքն իր ուսումնասիրության մեջ օգտագործում է աղբբեջանցի հեղինակ Ս. Մամեդովը՝ ընդգծելով, որ մնացած բնակիչները եղել են թաթարներ, այն է՝ աղբբեջանցիներ²: Մ. Կարապետյանը ապացուցել է, որ Ա. Հովհաննիսյանի օգտագործած սկզբնաղբբյուրի՝ Մամի-Կլերակի տեղեկությունը հայերի քանակի մասին վերաբերում է ոչ թե քաղաքին, այլ բերդին, ուստի ուսումնասիրողի՝ դրա վրա հիմնված տեսակետը Երևան քաղաքում հայերի և այսպես կոչված աղբբեջանցիների թվաքանակների հարաբերակցության մասին հիմնագուրկ է³: Ա. Հովհաննիսյանը համոզված է, որ հայերը, պարսիկները և աղբբեջանցիները Երևանում միասնական ճակատով կռվել են թուրքական զորքի դեմ⁴: Նա գրում է, որ թուրքերի հարձակումը Երևանի վրա սկսվել է հունիսին և շարունակվել երեք ամիս⁵: Աբրահամ Երևանցու տեղեկություններն Ա. Հովհաննիսյանը ժամանակագրորեն տեղավորում է հունիս-սեպտեմբեր ամիսներին, իսկ Երևանի բերդի հանձնումը, հենվելով մի թուրք հեղինակի կարծիքի վրա, թվագրում 1724 թ. սեպտեմբերի 28-ով⁶:

Վ. Մարտիրոսյանը Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության ուսումնասիրության մեջ օգտագործել է նոր սկզբնաղբբյուրներ, որոնցից հատկապես կարևորվում են Ի. Նեպյունի զեկուցագրերը՝ ուղղված ցարական արքունիքին: Ուսումնասիրողը փորձում է հիմնավորել այն, որ Աբրահամ Երևանցու տեղեկությունը, թե Երևանը գրավվել է հունիսի 7-ին, ճիշտ չէ, իսկ իրականում Երևանն ընկել է 1724 թ. սեպտեմբերի 22-ին, ինչպես նշված է Ի. Նեպյունի զեկուցագրում⁷: Նա հավելում է, թե իբր Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության ժամանակ «կողք-կողքի համատեղ պայքարել են հայերը, աղբբեջանցիները և վրացիները»⁸, թեև Երևանի պաշտպանությանն այսպես

¹ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, часть I, с. LXXVII:

² Տե՛ս **Мамедов С.**, Исторические связи азербайджанского и армянского народов во второй половине XVII – первой трети XVIII в., Баку, 1977, с. 83:

³ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. // «ՊԲՀ», 1986, թիվ 2, էջ 108:

⁴ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, часть I, с. LXXVII:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ LXXVIII:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ LXXIX: Մեկ այլ տեղում ուսումնասիրողը Երևանի գրավումը թվագրում է սեպտեմբերի 26-ով: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 157:

⁷ Տե՛ս **Մարտիրոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 190-191: Տե՛ս նաև *նույնի՝* Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), Երևան, 1971, էջ 149:

⁸ **Մարտիրոսյան Վ.**, Անդրկովկասի ժողովուրդների համատեղ ազատագրական պայքարի պատմությունից // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1965, թիվ 7, էջ 22: Տե՛ս նաև *նույնի՝* Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, էջ 191:

կոչված աղբբեջանցիների¹ մասնակցության մասին որևէ փաստ չի հղում:

Ճիշտ նույն կերպ է Երևանի գրավման ժամանակագրությունն ու բովանդակությունը ներկայացնում Ջ. Արզումանյանը²:

Մ. Կարապետյանը գտնում է, որ Երևանի հայերը, ստանալով քաղաքի մուսուլմանների աջակցությունը, շուրջ երկու ամիս պաշտպանվել են: Իսկ «թուրք», ինչպես նաև «տաճիգ» տերմինները, ըստ նրա, պատմիչն օգտագործել է դավանանքային նշանակությամբ՝ նկատի ունենալով մուսուլմաններին³: Նա կարծում է, որ թուրքերը սկզբում գրավել են քաղաքը, իսկ մի քանի ամիս անց՝ սեպտեմբերի 22-ին, բերդը⁴:

Հաշվի առնելով օսմանյան բանակի՝ Երևանի գրավմանն առնչվող գիտական գրականության մեջ առկա տարաձայնությունները՝ Վ. Հակոբյանը հարկ է համարել թեզերի ու հակաթեզերի այդ «բանավեճում» հանդես գալ յուրահատուկ սինթեզի դիրքերից: Նա Երևանի գրավման վերաբերյալ տեսակետները համադրում է և եզրակացնում, որ սկզբնաղբյուրների տեղեկությունները վերաբերում են երկու իրողության՝ Երևան քաղաքի և Երևանի բերդի գրավմանը, որոնցից առաջինը տեղի է ունեցել հունիսի 7-ին, իսկ երկրորդը՝ սեպտեմբերի 22-ին⁵:

Հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրների և հետազոտությունների ամփոփմամբ Երևանի գրավման ժամանակագրությունը ճշտելու փորձ է կատարել Ա. Այվազյանը: Նա Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները հավաստի չի համարում, քանի որ ըստ պատմիչի՝ մարտի 6-ից սկսած, երբ օսմանյան բանակը Արարատյան երկրում սկսեց իր առաջխաղացումը, մինչև Երևանի պաշտպանության մեկնարկը տեղի են ունեցել 60 օր տևած իրադարձություններ, մասնավորապես Կարբիի 40-օրյա ինքնապաշտպանությունը: Երևանի պաշարումը, ըստ Աբրահամ Երևանցու, տևել է երկու ամիս: Ա. Այվազյանը իր այս հաշվարկից ելնելով՝ նշում է, որ նման ժամանակագրությամբ Երևանի պաշարումը մայիսի 5-ից շուտ սկսվել չէր կարող, իսկ այդ պարագայում քաղաքի պաշարումը հունիսի 7-ին ավարտվել չէր կարող⁶:

Փոխարենը Ա. Այվազյանը հավաստի է համարում իբրև թե օսմանյան

¹ «Այսպես կոչված աղբբեջանցիներ» արտահայտությունը շեշտադրվում է այն պատճառով, որ XVIII դարում Այսրկովկասի քոչվոր թյուրք-թաթարները «աղբբեջանցի», իսկ Այսրկովկասի արևելյան հատվածն Աղբբեջան դեռևս չէին կոչվում:

² Տե՛ս **Արզումանյան Ջ.**, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի պատմությունից // «ԼՀԳ», 1973, թիվ 11, էջ 31-33: Բացառություն է միայն Երևանի պաշտպանության այսպես կոչված աղբբեջանցիների մասնակցությունը, որի մասին նա չի նշում:

³ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում, էջ 96:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 96-97:

⁵ Տե՛ս **Հակոբյան Վ.**, նշվ. աշխ., էջ 78-81:

⁶ Տե՛ս **Այվազյան Ա.**, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին // «ՊԲՀ», 1991, թիվ 1, էջ 94-95:

պաշտոնական փաստաթղթերից օգտված թուրք հեղինակ Չելեբի-Ջադեի ժամանակագրական տվյալները՝ կատարելով նաև հիջրայի ամսաթվերի վերծանումը, ըստ որոնց՝ Ախուրյան գետի ափից օսմանյան բանակը հունիսի 13-ին շարժվել է դեպի Երևան, որի մատույցներում բանակել է հունիսի 24-ին՝ սկսելով քաղաքի պաշարումը: Հունիսի 26-ին օսմանյան բանակը գրավել է Երևանի՝ բերդից դուրս գտնվող հատվածը՝ վարոշը: Երևանի բերդը հանձնվել է սեպտեմբերի 23-ին¹: Ա. Այվազյանը կարծում է, որ Չելեբի-Ջադեի տեղեկությունը վարոշը գրավելու մասին վերաբերում է ոչ թե ամբողջ քաղաքի, այլ նրա որոշ թաղամասերի գրավմանը, քանզի Աբրահամ Երևանցին ևս նկարագրում է Ձորագյուղի և Կոնդի շրջանում ընթացող մարտերը²:

Համադրելով Աբրահամ Երևանցու և Չելեբի-Ջադեի տեղեկությունները՝ Ա. Այվազյանը փորձում է ճշգրտել Երևանի պաշարման ժամանակագրությունը: Նա որպես հիմք է ընդունում «եգիպտական զինվորների» մասնակցությունը Երևանի պաշարմանը: Նրա հաշվարկներով նրանք ժամանել են օգոստոսի 13-ին և մասնակցել Երևանի մատույցներում տեղի ունեցած հնգօրյա ճակատամարտին՝ 1724 թ. օգոստոսի 14-18-ը: Մուսուլմանները, որ մինչ այդ Երևանի խանի հրամանով հայերի հետ մասնակցում էին քաղաքի պաշտպանությանը, բերդում են պատսպարվել ու հայերին մենակ թողել օգոստոսի 14-ին: Ի վերջո, հեղինակը կատարում է հետևյալ ամփոփումը. օսմանյան բանակը Երևանը պաշարել է 1724 թ. հունիսի 24-ին, Ձորագյուղը ընկել է սեպտեմբերի 8-ին՝ Էրզրումի Սարի Մուստաֆա փաշայի զորքի ժամանելու հաջորդ օրը, իսկ բերդը՝ սեպտեմբերի 23-ին³: Փաստորեն, Ա. Այվազյանը, մերժելով Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները, փաստում է, որ վարոշի ինքնապաշտպանությունը տեղի է ունեցել հունիսի 24-26-ին, երբ օսմանյան զորքերը գրավել էին որոշ թաղամասեր, այնուհետև քաղաքի մյուս թաղամասերի հայերի պաշտպանությունը քաղաքի մուսուլմանների հետ տեղադրում է հունիսի 26-օգոստոսի 14-ին, որից հետո վերջիններս լքել են հայերին՝ ամրանալով բերդում: Սեպտեմբերի 16-ին կռիվները դադարում են և սկսվում են բերդը հանձնելու բանակցությունները⁴:

Թեև Ա. Այվազյանը ժամանակագրական առումով լիովին անտեսում է Աբրահամ Երևանցու տվյալները, իրականում վերջինիս ժամանակագրության մեջ առկա են այնպիսի տվյալներ, որոնք ճշգրիտ են: Մասնավորապես, անդրադառնալով 1724 թ. հունիսի 7-ին օսմանյան բանակի վճռական զրոհին, նա նշում է, որ այն տեղի է ունեցել ուրբաթ օրը, ինչը ճշգրիտ է: Նմանապես քաղաքի պաշտպանության մասին հեղինակի մանրամասն տեղեկությունները՝ հաճախ շաբաթվա օրերի, մարտիկների քանակի և այլնի

¹ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 142-150:

² Տե՛ս **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 97:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 100:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 97-100:

վերաբերյալ նշումներով, որևէ հնարավորություն չեն ընձեռում կասկածի ենթարկելու նրա ներկայացրած ժամանակագրական տեղեկությունները, քանի որ իրավիճակի վերաբերյալ նման խորքային տեղեկությունների տիրապետող հեղինակը անհնար է, որ չտիրապետեր դեպքերի ժամանակագրությանը:

Տեսակետների նման բազմազանության պայմաններում, երբ «բանավեճը» կարծես այն բանի օգտին է, որ 1724 թ. Երևանում տեղի ունեցած կռիվներում պետք է առանձնացնել քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը բերդի դիմադրությունից, զարմանալի է, որ 2010 թ. հրատարակված՝ «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության համապատասխան հատվածի հեղինակ Վ. Դիլոյանը հենվում է միմիայն Վ. Մարտիրոսյանի և Ա. Այվազյանի վերոբերյալ տեսակետների վրա՝ դրանք ենթարկելով ժամանակային վերաձևումների: Ըստ նրա՝ Երևանի՝ հունիսի 7-ին սկսված պաշտպանությունը տևել է երեքուկես ամիս, իսկ սեպտեմբերի 22/23-ին Երևանի խանը հանձնել է բերդը¹:

Օսմանյան թուրքերի կողմից Երևանի գրավմանն անդրադարձել են նաև աղբրեջանցի հեղինակները: Վերջիններս հակված են Երևանի 1724 թ. կռվում լիովին անտեսելու քաղաքի հայերի ինքնապաշտպանության իրողությունը և ներկայացնելու միայն բերդի հետ կապված զարգացումները: Ն. Գյոզալովան, բոլորովին չանդրադառնալով հայկական սկզբնաղբյուրներին և ներկայացնելով սահմանափակ թվով եվրոպական սկզբնաղբյուրների տեղեկությունները, կարծիք է հայտնում, որ կռիվը կենտրոնացված է եղել հիմնականում Երևանի բերդի շուրջ, որը սկսվել է 1724 թ. հունիսին և ավարտվել սեպտեմբերի 28-ին²:

Երևանի խանության պատմության վերաբերյալ կոլեկտիվ մենագրության մեջ աղբրեջանցի հեղինակները 1724 թ. Երևանի ինքնապաշտպանությունը ներկայացնում են որպես աղբրեջանցիների կողմից հայրենի հողի պաշտպանության կռիվ, քանի որ, ըստ նրանց՝ «Իրևանի (Երևան – Ա. Ե.) պաշտպանության ժամանակ քաղաքի բնակչությունն ամբողջությամբ բաղկացած էին աղբրեջանցիներից»³: Փորձ է կատարվում նաև ներկայացնելու, թե իբր օսմանյան թուրքերը հովանավորում էին հայերին⁴: Ակնհայտ է, որ աղբրեջանցի հեղինակների ներկայացրած տեսակետները պատմական իրականության հետ որևէ կապ չունեն, ինչն ի հայտ է գալիս ոչ միայն հայկական և օտար սկզբնաղբյուրների տեղեկություններին ծանոթանալիս, այլև

¹ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 40-42:

² Տե՛ս **Гёзалова Н.**, Вопросы истории Азербайджана XVIII в. (на основе сведений англоязычных источников историографии), Баку-Москва, 2010, с. 57-60:

³ **Махмудов Я.** и др., Иреванское ханство: российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Баку, 2010, с. 45.

⁴ Նույն տեղում:

երկու աղբբեջանական վերոնշյալ մենագրություններում ներկայացված՝ Երևանի կռիվների նկարագրություններից, որոնք միմյանցից ամբողջությամբ տարբերվում են: Պատճառն այն է, որ առաջին հեղինակը փորձել է խնդիրը ներկայացնել եվրոպական սկզբնաղբբությունների և պատմագրության հիման վրա, ուստի ստացվել է երկրորդ մենագրության՝ հակահայկականությամբ տոգորված հեղինակների գրածից լիովին տարբերվող տեքստ. խոսք չկա այսպես կոչված աղբբեջանցիների կողմից Երևանը պաշտպանելու և Երևանի բնակչության այսպես կոչված աղբբեջանական լինելու մասին:

Հետազոտողների կարծիքներից պարզ է, որ Երևանի 1724 թ. կռիվների վերաբերյալ չկա միասնական և հստակ տեսակետ, ուստի անհրաժեշտ է սկզբնաղբբությամբ նոր քննություն՝ հայոց պատմության այդ կարևոր դրվագի խորքային լուսաբանման և պատկերի ամբողջական բացահայտման նպատակով:

Երևան քաղաքի պատմական աշխարհագրությունը XVIII դարի սկզբին

Երևանի 1724 թ. կռիվների վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ճշգրտել քաղաքի տարբեր հատվածների տեղադրությունը, կատարել սկզբնաղբբությունների քննական վերլուծություն, որի հիման վրա հնարավոր կլինի պարզաբանել քաղաքի ինքնապաշտպանության թե՛ բովանդակությունը և թե՛ ժամանակագրությունը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում իրադարձությունների կենտրոնում Երևանի այն բերդն էր, որը 1827 թ. գրավեցին ռուսական զորքերը: Այն ուներ գույգ պարիսպ: Ըստ Չելեբի-Չադեի՝ Երևանը «մեկը մյուսից 35 քայլաչափ տարածությամբ երկու ամրակուռ և հաստատուն պարիսպներով էր շրջապատված»¹: Ըստ Ժ. Շարդենի՝ բերդն ուներ երեք շարք պարիսպներ²: Դատելով թուրք հեղինակի այն տեղեկությունից, թե Երևանի բերդի «պաշարումը անպայմանորեն կապված էր վարոշի գրավման հետ»³, ինչպես նաև այն նշումից, որ օսմանյան զինվորների կողմից «վարոշի պարիսպների մոտ գտնվող և նրանց կից տները ամբողջովին հողին հավասարվեցին, և շուրջանակի պարիսպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց»⁴, կարելի է հստակեցնել, որ Երևանի բերդի երկու պարիսպներից արտաքինի հարևանությամբ տարածվում էր թուրք հեղինակների կողմից հիշատակվող վարոշը, որը Ա. Սաֆրաստյանի պարզաբանմամբ՝ հունգարերեն բառ է և ընկալելի է որպես քաղաքի ծայրամաս, արվարձան կամ շրջակայք⁵: Վարոշի առումով խիստ էական տեղեկություններ է պարունակում Էվլիյա Չելեբիի՝

¹ Թուրքական աղբբությունները, հ. Ա, էջ 143:

² Sté u “The Travels of Sir John Chardin into Persia and East Indies”, the Fifth Volume, Containing the Author’s Voyage from Paris to Ispahan, London, 1686, p. 245:

³ Թուրքական աղբբությունները, հ. Ա, էջ 143:

⁴ Նույն տեղում:

⁵ Sté u նույն տեղում, ծանոթագրություն:

Երևանի նկարագրությունը 1640-ական թվականներին. «Բերդը գտնվում է Ջանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է: ...Ունի երեք հաստատուն երկաթե դարպաս: Թավրիզի դարպասը բացվում է դեպի հարավ, Մեյդանի դուռը՝ դեպի հյուսիս: Վերջինս կոչվում է նաև Յայլայի դարպաս...: Յայլայի դռնից դուրս գտնվող մեծ վարոշը կոչվում է Էսքի շեհիր (հին քաղաք – Մ. Ե.)»¹: Ակնհայտ է, որ Էվլիյա Չելեբին ևս վարոշ է կոչում հենց բերդի շրջակա արվարձանը: Ըստ որում՝ օսմանյան բանակը վարոշը գրավում է հայկական թաղերի ռազմակալումից հետո՝ արդեն հունիսի երկրորդ կեսին, քանի որ «վարոշի երկու կողմի քարքարոտ լինելը և դիմացից խիստ ուժեղ թափով հոսող Ջանգի գետը, վարոշի նվաճումն ու գրավումը դժվարացնում էին»²: Մյուս կողմից, այն իրողությունը, որ վարոշը գտնվում էր բերդի պարսպի հարևանությամբ, ևս հաստատում է, որ այն քաղաքի հետ առնչություն չունեին և չպետք է շփոթել քաղաքի հետ, ինչպես արել է Ա. Այվազյանը: Ժ. Շարդենի տեղեկություններից հայտնի է, որ քաղաքը գտնվում էր բերդից թնդանոթային կրակոցի հեռավորության վրա³: Ճիշտ է՝ Ժ. Շարդենի տեղեկությունները վերաբերում են 1670-ական թթ. սկզբներին, որից հետո՝ 1679 թ., տեղի է ունեցել Երևանի երկրաշարժը, սակայն քաղաքի հատակագծում երկրաշարժից հետո առանձնապես զգալի փոփոխություններ չեն կատարվել:

Վերոհիշյալ տեղեկությունները հնարավորություն են տալիս ճշգրտելու Երևանի բերդի և վարոշի աշխարհագրական դիրքերը: Հրազդան գետի ձախ գառիվայր ավին՝ դեպի արևելք, գտնվում էր զույգ պարիսպներ ունեցող բերդը, իսկ նրա հյուսիսային դարպասից դուրս՝ արտաքին պարսպի հարևանությամբ, տարածվում էր վարոշը: Վերջինս, դատելով այն իրողությունից, որ Երևանի քաղաքային հատվածի ինքնապաշտպանության ժամանակ պարսիկների կողմից լքված հայությունը խմբվել էր Ձորագյուղի և Կոնդի հատվածում, բնակեցված էր մուսուլմաններով: Վարոշից այն կողմ՝ դեպի հյուսիս, տարածվում էր Երևան քաղաքը, որն ըստ արդեն նշված հիշատակությունների՝ բնակեցված էր շուրջ 30 հազար զուտ հայ ազգաբնակչությամբ:

Հին Երևանի կարևոր հատվածներից մեկը Ձորագյուղն էր, որը գտնվում էր Կոնդի հարևանությամբ՝ Հրազդան գետի ձախ ավին, ներկայիս Հաղթանակի կամրջից դեպի վեր՝ ընդգրկելով նաև Ս. Սարգիս եկեղեցու տարածքը: Զաքարիա սարկավագն ու Սիմեոն Երևանցին այն կոչում են նաև Խնկելո ձոր կամ Խնկաձոր⁴: Սիմեոն Երևանցին Ձորագյուղի տեղանքի մասին գրում

¹ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Դ, «Թուրքական աղբյուրներ», Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967, էջ 84-85:

² Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 143:

³ Տե՛ս Chardin J., նշվ. աշխ., էջ 246:

⁴ Տե՛ս «Զաքարեայ սարկավագի պատմագրություն», հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 32, 51, «Զամբռ. գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնալից

է. «Ի գեօղս յայս Ձորագեօղ, որ կոչի Խնկաձոր, ... որ է հանդէպ բերթին Երևանու ի հիւսիսակոյսն, ի բարձրահայեաց գագաթանն մեծախոր ձորոյն, ու անցանի գետն Հրաստան»¹: Քաղաքը հյուսիսում ավարտվում էր Կոնդ թաղամասի հյուսիսարևմտյան ծայրամասում գտնվող Երևանի հնագույն գերազմանոցով, որն ի պատիվ միջնադարյան հայտնի պատմագիր և տոմարագետ Հովհաննես Կոզեռնի, որ թաղված էր այնտեղ, հայտնի էր «Կոզեռնի գերեզմանոց» անունով²:

Ի դեպ, Ի. Նեպլյուսի վերոհիշյալ նկարագրությունը, թե Երևան քաղաքի կեսը շրջափակված է գառիթափ լեռներով, իսկ մյուս կեսը՝ գետով, ամենայն հավանականությամբ վերաբերում է քաղաքին և ոչ թե բերդին, քանի որ նկարագրության մեջ ոչինչ նշված չէ բերդի մասին:

XVIII դ. սկզբին Երևանի դիրքը և տեղանքը, որոնք ստիպում էին օսմանյան բանակին քաղաքի վրա գրոհել արևմտյան կողմից դեպի Ձորագյուղ, պատկերացնելու համար կարևոր է հիշել, որ բացի Հրազդան գետին հարող հատվածից, մյուս բոլոր կողմերում քաղաքը շրջապատված էր խիտ ծառատաններով: Աբրահամ Երևանցին, ինչպես տեսանք, գրում է, որ հին ժամանակներից ի վեր քաղաքի շուրջը տնկվել էին խիտ ծառատաններ, ըստ որում՝ այնքան խիտ, որ պահպանում էին և պատսպարում քաղաքը³:

Երևան քաղաքի և բերդի պաշտպանության ժամանակագրությունը

Ի սկզբանե անհրաժեշտ է նշել, որ եթե վստահում ենք Աբրահամ Երևանցու տեղեկություններին, իսկ դրանց չվստահելու հիմքեր իրականում չկան, ապա ճիշտ են այն հեղինակները, որոնք կարծում են, որ Երևանի հայության և բերդի պարսկական կայազորի (նաև բերդի հայերի⁴) ինքնապաշտպանական կոիվները պետք է միմյանցից տարբերակել: Օսմանյան բանակը սկզբում՝ ապրիլից մինչև հունիսի 7-ը, կովում էր Երևան քաղաքի հայության դեմ՝ անպարհսպ⁵ քաղաքը գրավելու նպատակով, իսկ այնուհետև՝ արդեն վարոշի գրավումից հետո, պաշարում է բերդը՝ հունիսից մինչև սեպտեմբերի 22-ը:

որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և տարագրեցեալ ի Սիմեօնի ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցոյ», Վաղարշապատ, 1873, էջ 204:

¹ Միմեօն Երևանցի, էջ 204:

² Տե՛ս **Ղաֆադարյան Կ. Գ.**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 47:

³ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, էջ 102:

⁴ Այն, որ XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին Երևանի բերդում մեծ թվով հայեր կային, հայտնի է հայկական և օտար սկզբնաղբյուրներից: Տե՛ս **Ջաքարիա սարկավազ**, հ. Բ, էջ 89-90: Երևանի բերդի մուտուլմանները ասում էին, որ «մեք ահա դրացի եմք քրիստոնէից, և խառն ի խուռն կամք ընդ նոսա»: Ճիզվիտ Մոնիեն հաղորդում է, որ XVIII դ. սկզբին Երևանի բերդի չորս հազար բնակիչներից հազարը հայեր էին: Տե՛ս Nouveaux mémoires des missions de la campagne de Jésus dans le Levant, t. III, Paris, 1723, p. 37:

⁵ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, էջ 101:

Աբրահամ Երևանցու ներկայացրած ժամանակագրության հավաստիության առումով անհրաժեշտ է նշել մի կարևոր իրողություն, որը զարմանալիորեն դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի 1724 թ. հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված միջպետական սահմանագիծն Այսրկովկասում օսմանյան տիրապետության ներքո էր թողնում մասնավորապես Թիֆլիսը, Երևանը, Նախիջևանը, Գանձակը, Պարտավը և Արցախը¹: Ընդ որում՝ օսմանյան կողմը ճանաչում էր ռուսական նվաճումները Այսրկովկասում և Կասպից ծովի հարավում, իսկ ռուսական կողմը՝ օսմանյան նվաճումները Այսրկովկասում: Նվաճումների փոխադարձ ճանաչման փաստն ակնհայտ է դառնում Ի. Նեպյունի՝ 1724 թ. մայիսի 24-ի զեկուցագրից: Ներկայացնելով ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը՝ նա գրում է, որ պարսկական տերության հողերը նվաճելու համար սուլթանը մեծաթիվ զորքեր է ուղարկել երեք ուղղությամբ²՝ արձանագրելով, որ, փաստորեն, 1724 թ. մայիսի դրությամբ օսմանյան զորքն արդեն ներխուժել էր պարսկական տերություն: Պարզվում է նաև, որ ռուս-թուրքական պայմանագրի շուրջ համաձայնությունը վերջնական տեքստով արդեն առկա էր 1724 թ. մայիսին, և թուրքական բանակն անցել էր իրեն հասանելիք տարածքների գրավմանը: Պայմանագրի դրույթների շուրջ նախնական համաձայնությունը կայացել էր դեռևս 1724 թ. մարտի 28-ի դրությամբ³, ուստի պատահական չէ, որ հենց մարտ ամսին օսմանյան բանակը, Արաքս գետի ափից շարժվելով, սկսեց Արարատյան երկրի և Երևան քաղաքի գրավումը: Փաստորեն, նախքան պայմանագրի կնքումը կողմերը, ամենայն հավանականությամբ, փոխհամաձայնեցված ձգտում էին զբաղեցնել իրենց անցնող տարածքները: Ի դեպ, սա հանգուցային տեղեկություն է Երևանի ինքնապաշտպանության սկիզբը հստակեցնելու համար և փաստորեն հիմնավորում է Աբրահամ Երևանցու ժամանակագրական տվյալների արժանահավատությունը:

Հայկական սկզբնաղբյուրների՝ արդեն բերված տեղեկությունները ևս հիմնավորում են այն, որ Երևան քաղաքը գրավվել է բերդի անկումից առաջ:

Երևանի կռիվների ժամանակագրության և բովանդակության ճշգրտման տեսակետից մյուս կարևոր իրողությունն այն է, որ Աբրահամ Երևանցու նման Չելեբի-Ջադեն ևս պատմում է, որ Երևանի ուղղությամբ օսմանյան բանակը շարժվել է Ախուրյան գետի ափից (բնագրում՝ Արփա-Չայիր): Ճիշտ է, թուրք հեղինակը այն թվագրում է հունիսի 13-ով, սակայն տեղեկության մեջ

¹ Պայմանագրի ամբողջական տեքստը տե՛ս «Полное собрание законов Российской империи с 1649 года», т. VII, 1723-1727, СПб., 1830, N 4531, с. 503-508: Տե՛ս նաև «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, с. 177-181:

² Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, с. 181:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 158-172:

բացակայում են Եղվարդի ու Կարբիի դեպքերը և Երևանի պաշտպանությանը հայերի մասնակցության դրվագները: Բացի այդ, ըստ նրա՝ օսմանյան բանակը անմիջապես հասնում է Երևան ու անհապաղ ձեռնամուխ լինում բերդի պաշարմանը: Հավանական է կարծել, որ թուրք հեղինակի տեղեկություններում միաձուլված են դրանցից երկուսը՝ Ախուրյան գետի ափի բնակավայրից տեղաշարժը վաղ գարնանը և ամռան սկզբին Երևանի բերդի պաշարումը: Ի դեպ, Չելեբի-Ջադեն, ինչպես տեսանք, ներկայացնում է այն իրողությունը, որ Երևանի բերդի գրավումը անհնար կլիներ, եթե նախապես չգրավվեր նրա արտաքին պարսպի հարևանությամբ՝ Հրազդան գետի ափին գտնվող անառիկ վարոշը: Վերջինս գրավվել է հունիսի երկրորդ կեսին միայն: Վարոշի դիրքի հստակեցումից հետո, երբ դիտարկում ենք Չելեբի-Ջադեի նկարագրությունը, պարզվում է, որ Երևան քաղաքի հայության պաշտպանության մասին որևէ խոսք չկա: Թուրք հեղինակն ակնհայտորեն նկարագրում է միմիայն Երևանի բերդի պաշարման ու գրավման հետ կապված իրողությունները: Անշուշտ, ապրիլի 7-ից մինչև հունիսի 7-ը անպարիսպ Երևան քաղաքի դեմ պատերազմելիս օսմանյան զորքը բոլորովին չէր գրոհել բերդի ու վարոշի վրա՝ թերևս բավարարվելով հայերի դեմ կոիվների ընթացքում դրանց մեկուսացմամբ կամ պաշարմամբ, քանի որ միայն ամռանը, երբ հայերի դիմադրությունը հաղթահարվել էր, և քաղաքն ընկել, օսմանյան բանակը ձեռնամուխ եղավ բերդի մերձակա տները վերացնելուն և պարսպի շուրջը բաց տարածք ստեղծելուն՝ ամենայն հավանականությամբ արդյունավետ պաշարում իրականացնելու նպատակով: Ըստ որում՝ Թ. Կրուշինսկու այն տեղեկությունը, թե Երևանը գրավվել է առաջին իսկ գրոհից, 30 հազար հայեր կոտորվել են, իսկ բերդը դիմադրել է երկու ամիս, կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. այդ տեղեկության մեջ խտացված ներկայացված են տեղի ունեցած իրադարձությունները Երևանի շուրջ: Երևանի գրավման ժամանակ իրոք կոտորվել ու գերեվարվել էր շուրջ 30 հազար հայ, հայերի ինքնապաշտպանության անկումից հետո՝ հունիսի երկրորդ կեսին, գրավվել է բերդի վարոշը կամ շրջակայքը¹ այդ ուղղությամբ ձեռնարկած գրեթե առաջին իսկ գրոհով, որից հետո բերդը պաշտպանվել է շուրջ երկու ամիս:

Հավելենք նաև, որ Աբրահամ Երևանցին և Չելեբի-Ջադեն հիշատակում են եգիպտացի երեք հազար օգնական զինվորների ժամանումը Երևան: Նրանց գալը հիշատակում է նաև Ի. Նեպյունը: Թուրք հեղինակը նշում է նրանց ժամանման ամսաթիվը՝ օգոստոսի 13, իսկ ըստ Աբրահամ Երևանցու՝ նրանք եկել են մայիսին՝ հունիսի 7-ից շուրջ 20 օր առաջ: Իսկ ռուս դիվանագիտական ներկայացուցիչը որևէ ժամանակագրական տվյալ չի հայտնում: Ա. Այվազյանի վերոհիշյալ տեսակետի հիմնավորման համար հայ և թուրք հեղինակների միանման տեղեկությունները և նրանցից երկրորդի նշած

¹ Ա. Այվազյանը ևս նման կարծիք է հայտնում: Տե՛ս **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 96:

ամսաթիվը գլխավոր կռվաններից են: Սակայն պետք է նշել, որ եթե Աբրահամ Երևանցին հաղորդում է լոկ նրանց գալու մասին, ապա Չելեբի-Չադեն նրանց գալուն նախորդող դեպքերի մասին հավելյալ մանրամասներ է ներկայացնում: Ըստ նրա՝ Երևանը պաշարածներին օգնության ուղարկված եգիպտացիների գորքը նախատեսված էր Թավրիզ ուղարկվելու համար, սակայն օսմանյան զորքի հրամանատարը որոշում է նրանց ուղարկել Երևան, և նրանք ժամանում են այնտեղ օգոստոսի 13-ին: Ըստ որում՝ Աբրահամ Երևանցու և Չելեբի-Չադեի տեղեկությունները եգիպտացի զինվորների՝ ռազմական գործողություններում ընդգրկվելու վերաբերյալ այնուհետև լիովին տարբեր են: Ըստ Աբրահամ Երևանցու՝ նրանք անմիջապես ներխուժել են Ձորագյուղ, բայց ջախջախվել կատաղի ճակատամարտում, իսկ ըստ Չելեբի-Չադեի՝ նրանք կռվել են խրամատներում՝ փոխարինելով հյուծված զինվորներին: Ըստ թուրք հեղինակի՝ ժամանելուց 22 օր անց նրանցից 300-ը գաղտնի գրոհով բարձրանում են Երևանի բերդի վրա, բայց զոհեր տալով նահանջում¹, իսկ Երևանի բերդը գրավվում է նրանց գալուց ավելի քան մեկուկես ամիս անց²: Մինչդեռ, ըստ Աբրահամ Երևանցու՝ քաղաքի գրավումը տեղի է ունեցել նրանց գալուց շուրջ 20 օր անց: Փաստորեն, բացի եգիպտացի զինվորների՝ Երևանի մատույցներ ժամանելուց և քանակից, պատմիչների տեղեկությունները միմյանց ամենևին չեն համապատասխանում: Ամենայն հավանականությամբ, եգիպտացիների երեք հազարանոց զորախումբը մասնակցել է թե՛ Երևան քաղաքի (մայիսից հունիս) և թե՛ բերդի (օգոստոսից սեպտեմբեր) պաշարմանը: Քաղաքի գրավումից հետո այն ցանկացել են տեղափոխել Թավրիզ, սակայն հետո՝ օգոստոսի 13-ին, վերադարձրել են Երևան՝ բերդի գրավմանը մասնակցելու, քանի որ աչքի էր ընկել հայերի դիմադրությունը հաղթահարելիս: Ի. Նեպլյուևի վերոհիշյալ տեղեկությունները որոշակիորեն հիմնավորում են այս տեսակետը: Նշելով այն մասին, որ Երևան էր ուղարկվել եգիպտական երեք հազարանոց զորախումբը, նա այնուհետև գրում է, որ Թավրիզ արշավող փաշայի զորքն այնքան էր թուլացել գրավված վայրերում կայազորներ թողնելու և Երևան զորախումբ ուղարկելու պատճառով, որ հույս չկար, թե այն կկարողանար գրավել Թավրիզը: Կարելի է կարծել, որ Թավրիզ արշավող փաշան Երևան էր ուղարկել նախապես իր բանակին կցված եգիպտացիների զորախումբը, ինչից մեծապես թուլացել էր: Ինչ վերաբերում է եգիպտական զորախմբի թվաքանակին, ապա երեք հազար թվի հիշատակումը երեք տարբեր հեղինակների կողմից ոչ թե պարզ համընկնում է, այլ զորախմբի անձնակազմի թվաքանակն է, որը, անկասկած, համալրվում էր կռիվներում կորուստներ ունենալուց հետո:

Երևանի հայության ինքնապաշտպանության տևողությանն առնչվող

¹ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 146-148:

² Տե՛ս նույն տեղում, էջ 150-151:

հաջորդ կարևոր խնդիրն այն է, որ այդ ժամանակահատվածը սխալ է հաշվարկվել: Մասնավորապես, Ս. Պողոսյանը, Թ. Հակոբյանը և Ա. Միմոնյանը, ինչպես տեսանք, կարծում են, որ պաշտպանությունը սկսվել է ապրիլի 7-ին և ավարտվել հունիսի 7-ին, այն է՝ տևել է երկու ամիս: Հաշվարկի հիմքում Աբրահամ Երևանցու տեղեկությունն է այն մասին, որ Երևանի հայերի ինքնապաշտպանական կոիվները տևել են 60 օր: Սակայն հաշվարկը ցույց է տալիս, որ հունիսի 7-ին ավարտված 60-օրյա ինքնապաշտպանությունը պետք է սկսվեր ապրիլի 9-ին: Ի դեպ, Երևանի 60-օրյա պաշտպանության մասին գրում է նաև Ի. Նեպյուկը: Ռուս հեղինակի տեղեկությունը կարող էր վերաբերել նաև Երևանի հայերի ինքնապաշտպանությանը. խնդիրն այն է, որ, ինչպես կհամոզվենք, հեղինակի հաղորդումներում հյուսկեն ձևով ներկայացված են իրողություններ Երևան քաղաքի և բերդի կոիվներից:

Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի՝ մարտի 6-ից կատարած հաշվարկին, ապա այն այնքան միանշանակ չէ, քանի որ նա այդ մեկնակետից իր հաշվարկած 60 օրում հերթականության սկզբունքով ընդգրկել է Կարբիի կոիվների 40 օրը և փաշայի՝ կարբեցիներին ներկայացրած վերջնագրին հետևած 10 օրը: Մինչդեռ հաշվարկը հարկ էր կատարել զուգահեռության սկզբունքով՝ Կարբիի կոիվները և Երևանի վրա արշավանքն ու քաղաքի ինքնապաշտպանությունը դիտարկելով որպես զուգահեռաբար ընթացող իրադարձություններ: Դրանով իսկ Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները դառնում են հավաստի: Խնդիրն այն է, որ եթե Աբրահամ Երևանցու՝ «Պատմութիւն թագայորի Պարսից» ձեռագրում Կարբիի բնակիչների դեմ կովող օսմանյան հրամանատարներին 40 օր անց օգնության եկած փաշայի անունը բացակայում է, և բացի այդ, Կարբիի դեպքերի նկարագրությունից հետո նշվում է այն մասին, թե Երևանի ուղղությամբ օսմանյան զորքի արշավանքը սկսվում է Եղվարդից, որը հուշում է, որ օսմանյան բանակի մի մասը այնտեղ պարսկական բանակը ջախջախելուց հետո գնացել էր Կարբիի ուղղությամբ, իսկ մյուս մասը՝ Եղվարդում զորամասեր թողնելով՝ դեպի Երևան: Ամենայն հավանականությամբ հենց այդ վերջին զորամասերն են օգնության գնացել Կարբիի դեմ կովող օսմանցիներին: Մինչդեռ Աբրահամ Երևանցու երկի խմբագրված տարբերակում հստակ նշված է, որ Երևանի վրա Եղվարդից արշավող զորքն Աբդուլլա փաշայի բանակն էր, որ օգնության էր հասել Կարբին պաշարող օսմանյան զորքին: Աբրահամ Երևանցու տեքստում նշված հավելումները ստեղծում են այն տպավորությունը, որ Կարբիի դեմ կովող օսմանցիներին օգնության հասած փաշան այնուհետև Եղվարդից արշավել է Երևանի ուղղությամբ: Իսկ քանի որ նա օգնության էր հասել մարտի սկզբներից Կարբիի դեմ արդեն 40 օր մարտնչող օսմանցիներին և 10 օր ժամանակ տվել կարբեցիներին հանձնվելու համար, որից հետո միայն արշավել դեպի Երևան, ստացվում է, որ, իրոք, ինչպես կարծում է Ա. Այվազյանը, օսմանյան բանակը պետք է Երևան հասներ մայիսի սկզբին: Մինչդեռ, եթե հավատարիմ ենք մնում Աբրահամ Երևանցու

բնագրին, ապա կապը Կարբիում կովոդ օսմանցիներին օգնության գնացած փաշայի և Եղվարդից Երևան արշաված զորքերի միջև բացակայում է, ուստի մեծ է հավանականությունը, որ Կարբիի դեպքերը և Երևանի ուղղությամբ օսմանյան բանակի գրոհը տեղի են ունեցել զուգահեռաբար: Իսկ քանի որ Աբրահամ Երևանցին հիշատակում է Կարբի եկած «մեծ փաշային»¹, ապա կարելի է կարծել, որ նկատի ունի Եղվարդի և Կարբիի ուղղությամբ գործող օսմանյան բանակի հրամանատարին:

Անդրադառնալով Երևանի հայերի ինքնապաշտպանության բուն ժամանակագրությանը, որը, փաստորեն, սկսվել էր ապրիլի 9-ին, ապա անհրաժեշտ է նշել, որ Աբրահամ Երևանցու վերոհիշյալ հաղորդումներով հնարավոր է հստակ ներկայացնել միայն մայիսի կեսերից մինչև հունիսի 7-ը ընկած ժամանակագրությունը: Դա հնարավոր է դառնում հունիսի 7-ից կատարված հետհաշվարկի միջոցով, քանի որ հունիսի 7-ի վճռական գրոհից առաջ՝ 15 օր սպասելով օգնական նոր ուժերի տեղ հասնելուն, թշնամին բավարարվել էր միայն քաղաքի պաշարմամբ և նոր գրոհներ չէր ձեռնարկում: Կարելի է եզրահանգել, որ մայիսի 23-ից սկսած Երևանի մատույցներում ակտիվ ռազմական գործողություններ չեն եղել: Դրանից մեկ օր առաջ՝ մայիսի 22-ին, տեղի էր ունեցել թուրքերի գրոհը Կոնդի ուղղությամբ, երբ հայերը, արագորեն տեղափոխելով ուժերը Ձորագյուղից, պարտության էին մատնել թշնամուն: Դրանից մեկ կամ երկու օր առաջ՝ մայիսի 20-ին կամ 21-ին, տեղի է ունեցել Երևանի հայերի ինքնապաշտպանության մեծագույն ճակատամարտը՝ Ձորագյուղի կոիվը, որտեղ հայերը 1300 զոհ էին տվել՝ ոչնչացնելով թշնամու վեց հազար զինվորի: Պարտված թշնամին քշվել էր Հրազդան գետի մյուս ափը: Ըստ որում, դատելով Աբրահամ Երևանցու ժամանակագրական հստակ տեղեկություններից, կարելի է ներկայացնել դեպքերի ընթացքը՝ սկսած մայիսի 13-ից (հետհաշվարկը՝ մայիսի 20-ից). այդ օրը թշնամուն օգնության են եկել մեծաթիվ զորքեր: Երեք օր անց՝ մայիսի 16-ին, թուրքերն անցնում են Հրազդան գետը և մտնում Ձորագյուղ՝ ամրանալով այնտեղ և սպանելով երկու հազար քրիստոնյայի: Խանի զինվորները, որոնք մինչ այդ կովում էին հայերի կողքին, լքում են նրանց և ապաստանում բերդում: Այն, որ խանի պարսիկ զինվորները կովում էին հայերի հետ, հիշատակված է նաև Ի. Նեպլյուևի տեղեկագրերում: Իսկ այն, որ հայերի ու պարսիկների համատեղ կոիվը հենց քաղաքում է տեղի ունեցել և ոչ թե բերդում, հստակորեն արձանագրված է Ի. Նեպլյուևի տեղեկագրում, ըստ որի՝ քաղաքն անառիկ էր՝ շրջապատված զառիթափ լեռներով ու գետով, իսկ բերդի մասին խոսք չկա: Հետաքրքրական է, որ նրա հիշատակությունը քաղաքի հինգ հազար պաշտպանների մասին գրեթե լիովին համապատասխանում է Երևան քաղաքից հավաքագրված հայ զինվորների թվին: Փաստորեն, մեկ ամսից

¹ Տե՛ս Աբրահամ Երևանցի, էջ 24:

ավելի պարսից զինվորները կռվել են հայերի կողքին: Խնդիրն այն է, որ համատեղ մարտնչելով՝ խանի զորքը դրանով հետաձգում էր գրոհը Երևանի բերդի ուղղությամբ, սակայն ակնհայտ է, որ մայիսի 16-ի կռվի ժամանակ նրանց թվացել է, թե Ձորագյուղի ինքնապաշտպանությունն այլևս անհույս է և հեռացել են ու ապաստանել բերդում:

Այդ պահից սկսած, փաստորեն, հայերի ինքնապաշտպանությունը դատապարտվել է: Հաջորդ օրը՝ մայիսի 17-ին, օսմանյան բանակը գրոհ չձեռնարկեց, որը հնարավորություն տվեց հայերին զորահավաք անցկացնելու: Այնուհետև թուրքերին օգնության ուղարկվեց եգիպտացի երեք հազար զինվոր, որոնք տեղակայվեցին Նորագյուղի մոտակայքում և մայիսի 20-ին գրոհեցին Ձորագյուղի վրա: Հայ պաշտպանները սկզբում նահանջեցին՝ կորցնելով Ձորագյուղի կեսը, բայց օգնության եկած բռնների հետ ամրապնդեցին իրենց շարքերը և, ինչպես տեսանք, վճռական կռվում ջախջախեցին թշնամուն՝ նրան ետ շարտելով գետի մյուս կողմը: Ինչ վերաբերում է ապրիլի 9-ից մինչև մայիսի 13-ը ընկած ժամանակաշրջանին, ապա ըստ Աբրահամ Երևանցու տեղեկությունների՝ թշնամին, չնայած մեծաքանակ կորուստներին, որևէ առաջխաղացում չի ունեցել, որի պատճառով հուսահատվել և անընդհատ օգնություն է խնդրել:

Հունիսի 7-ի կռիվը մեր պատմության ամենահերոսական դրվագներից է: Ավելի քան 60 հազարանոց օսմանյան բանակի դեմ հայ զինվորները կռվեցին մինչև երեկո, և թշնամին կարողացավ քաղաքը գրավել միայն այն ժամանակ, երբ մարտադաշտում ընկել էր վերջին հայ մարտիկը: Դրանից հետո սկսվեցին թուրքերի բարբարոսություններն անպաշտպան բնակչության նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ, դատելով վերոասացյալից, Ի. Նեպլյունի տեղեկագրերում արտացոլված են ինչպես Երևան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը (առաջին երկու տեղեկագրերը), այնպես էլ բերդի գրավումը՝ թվագրված 1724 թ. սեպտեմբերի 22-ով:

Ի վերջո, անդրադառնալով այն պնդմանը, թե Աբրահամ Երևանցու երկում Երևանի բերդի գրավման թվականը սխալ է, հարկ է նշել, որ դա այնքան էլ ճիշտ չէ: Ավելին, հեղինակի տեղեկությունն այն մասին, թե հունիսի 7-ին՝ քաղաքի անկումից հետո, Երևանի բերդը շարունակեց պաշտպանությունը մինչև օգոստոսի 21-ը¹, որևէ ուսումնասիրող չի քննարկել: Միայն Ա. Այվազյանն է, որ այդ վկայությանն անդրադարձել է, այն էլ՝ ցույց տալու համար Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունների հավաստի չլինելը²: Մինչդեռ, եթե ընդունենք, որ Երևանի բերդի հանձնման ամսաթիվը՝ օգոստոսի 21-ը, ձեռագրական վրիպակ է, որն իրականում սեպ-

¹ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, էջ 35:

² Տե՛ս **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 93:

տեմբերի 21-ն է, ապա ամեն ինչ կլինի իր տեղում, քանի որ կատացվի, որ Աբրահամ Երևանցին ևս ճշգրիտ է հիշատակում բերդի անկման ամսաթիվը: Եթե առաջարկված ճշգրտումը հավանական է, ուրեմն կարելի է համարել, որ գուցե իրականում բերդը հանձնվել է հենց սեպտեմբերի 21-ին և ոչ թե 22-ին, ինչպես նշում է Ի. Նեպլյուևը: Ի դեպ, Կոստանդնուպոլսում գտնվող ռուսական դիվանագիտական ներկայացուցչի սխալվելու հավանականությունն ավելի մեծ է, քան ականատես Աբրահամ Երևանցունը: Կարելի է փաստել, որ ուսումնասիրողները լիովին անտեսել են Աբրահամ Երևանցու երկում ներկայացված ժամանակագրությունը հիմնավորող տեղեկությունը:

Արման Եղիազարյան – Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը

Երևանի հայության 1724 թ. հերոսական ինքնապաշտպանությունը հայոց պատմության ամենահիշարժան իրադարձություններից է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճիշտ են այն հետազոտողները, որոնք առաջարկում են Երևան քաղաքի հայության ինքնապաշտպանությունն առանձնացնել Երևանի բերդի պաշտպանությունից, որը սկսվել է հայերի ինքնապաշտպանության ավարտից հետո և շարունակվել մինչև սեպտեմբերի 22-ը: Երևանի հայության ինքնապաշտպանությունը սկսվել է ապրիլի 9-ին և ավարտվել հունիսի 7-ին՝ տևելով 60 օր: Մայիսի 20-ին տեղի է ունեցել Երևանի հայության ինքնապաշտպանության ամենախոշոր Ձորագյուղի ճակատամարտը, որտեղ հայերը, 1300 զոհ տալով, ջախջախել են օսմանյան բանակն ու ստիպել նահանջել՝ պատճառելով վեց հազար զինվորի կորուստ: Երևանի հայության ինքնապաշտպանական ջոկատների դեմ կենտրոնացնելով ավելի քան 60 հազարանոց բանակ՝ օսմանյան թուրքերը հունիսի 7-ի առավոտյան ներխուժել են քաղաք: Հայկական ինքնապաշտպանական խմբերը կովել են մինչև վերջ՝ փորձելով փրկել ժողովրդին: Քաղաքը թալանելուց և բնակչությանը կոտորելուց կամ գերեվարելուց հետո օսմանյան բանակը հարձակվել է Երևանի բերդի փոքրիկ արվարձանի՝ վարոշի վրա, գրավել ու ոչնչացրել այն, որից հետո երեք ամիսների ընթացքում բերդը պաշարված է եղել: Այն հանձնվել է Հայոց Աստածատուր Ա Համադանցի կաթողիկոսի (1715-1725) միջնորդությամբ 1724 թ. սեպտեմբերի 21-ին:

Арман Егизарян – Самооборона Еревана в 1724 году

Ключевые слова – история Еревана, самооборона, Ереванская крепость, Дзорагюх, Османская армия, Абраам Ереванци, Челеби-заде, осада, взятие крепости

Героическая самооборона армян Еревана в 1724 г. – одно из самых памятных событий истории Армении. Исследование показывает, что правы те исследователи, которые предлагают разделять самооборону армян города Еревана от обороны Ереванской крепости, начавшейся после завершения самообороны армян города и продолжавшейся до 22 сентября. Самооборона армян Еревана продолжалась 60 дней, с 9 апреля до 7 июня. 20 мая на окраине Еревана, в Дзорагюхе, произошло крупнейшее сражение самообороны Еревана, где армяне ценой жизни 1300 воинов разгромили османскую армию и

заставили ее отступить с потерями в 6000 солдат. Сосредоточив против сил самообороны Еревана армию численностью более 60 000 человек, турки-османы утром 7 июня вторглись в город. Армянские отряды самообороны сражались до конца, пытаясь спасти людей. Разграбив город, убив и взяв в плен население, османская армия напала на небольшой пригород Ереванской крепости, захватила и разрушила ее, после чего крепость три месяца находилась в осаде. Ереванская крепость была сдана туркам при посредничестве армянского католикоса Аствацатура Амаданци (1715-1725) 21 сентября 1724 года.

Arman Yeghiazaryan – *The Self-Defense of Yerevan in 1724*

Key words – *Abraham Yerevantsi, history of Yerevan, Yerevan fortress, Dzoragyugh, Ottoman army, Celebi-zade, siege, capture of the fortress, self-defense*

The heroic self-defense of the Armenians of Yerevan in 1724 is one of the most memorable events in the history of Armenia. The study shows that researchers are right to propose separating the self-defense of the Armenians of the city of Yerevan from the defense of the Yerevan fortress, which began after the end of the self-defense of the Armenians of the city and lasted until September 22. The self-defense of the Armenians in Yerevan lasted 60 days, starting on April 9 and ending on June 7. On May 20, on the outskirts of Yerevan, in Dzoragyugh, the largest self-defense battle of the Armenians of Yerevan took place, where the Armenians, at the cost of the lives of 1,300 soldiers, defeated the Ottoman army and forced it to retreat, causing loss of 6,000 soldiers. Having concentrated an army of more than 60,000 people against the self-defense forces of the Armenians of Yerevan, the Ottoman Turks invaded the city on the morning of June 7. Armenian self-defense units fought to the end, trying to save people. Having plundered the city, killed and captured the population, the Ottoman army attacked the small suburb of the Yerevan fortress, captured and destroyed it, after which the Yerevan fortress was under siege for three months. The Yerevan fortress surrendered to the Turks through the mediation of the Armenian Catholicos Astvatsatur Hamadantsi (1715-1725) on September 21, 1724.

Ներկայացվել է 06.05.2022

Գրախոսվել է 23.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Արման Եղիազարյան – ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (armanyeghiazaryan@ysu.am)

ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1915 թ.

***Բանալի բառեր** – Արևմտյան Հայաստան, Դիարբեքիր, Տիգրանակերտ, Արղանա Մադեն, Մարդին, Հայոց ցեղասպանություն, կոտորածներ, տեղահանություն, իսլամացում, Մեհմեդ Ռեշիդ*

Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգի տարածքը 1915-1923 թթ. ամբողջությամբ դարձավ հայ ժողովրդի ոչնչացման կենտրոններից մեկը: Բացի այն, որ նահանգի գրեթե բոլոր բնակավայրերից հայերը ենթարկվեցին տեղահանության, բնակչության մի մասը տեղում կոտորվեց: Դիարբեքիրը դարձավ նաև տարբեր նահանգներից դեպի անապատներ տեղափոխվող գաղթականների վերջին հանգրվանը: Անդրադարձ կատարենք Դիարբեքիրի նահանգի հայության կոտորածներին, տեղահանությանն ու հայրենազրկմանը 1915 թ.:

Հայ բնակչության թվաքանակը նահանգում 1914 թ.

1870-1880-ական թվականներին ձևավորված Դիարբեքիրի կամ Տիգրանակերտի նահանգը Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից էր, որը բաժանվում էր երեք՝ Դիարբեքիր, Արղանա Մադեն և Մարդին գավառների: Դիարբեքիրի նահանգում Հայոց ցեղասպանության նախօրյակին հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ միայն մի քանի ընդհանուր տվյալներ կան: Ըստ Կ. Պոլսի պատրիարքարանի 1912 թ. տվյալների՝ Դիարբեքիրի նահանգի տարածքում, բացառությամբ հարավային մասի, ապրում էր 105.000¹, իսկ ըստ 1913-1914 թթ. ցուցակների՝ 106.867 հայ բնակիչ²: Մինչդեռ, ըստ Հայոց ցեղասպանությունը վերապրած մտավորական Թեոդիկի հրատարակած տվյալների, որոնք ևս հիմնված են պատրիարքարանի վիճակագրյունների տվյալների վրա, նահանգի տարածքում բնակվում էր 88.000 հայ բնակիչ, որից 71.300-ը՝ լուսավորչական, 9900-ը՝ կաթոլիկ, իսկ 7600-ը՝ բողոքական³: Սակայն նա այս տվյալներից խիստ տարբեր վիճակագրություն է ներկայացնում «Ամենուն տարեցոյց» տարեգրքում. Դիարբեքիրի նահանգի հայության թվաքանակը ըստ այս ցուցակի՝ 1915 թ. 124.000 էր⁴: Դժվար է այս

¹ Տե՛ս «Արարատ», 1914, հ. Թ, էջ 808-809:

² Տե՛ս **Kévorkian R., Paboudjian P.**, Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide, Paris, 1992, p. 59:

³ Տե՛ս **Թեոդիկ**, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին, Թէհրան, 2014, էջ 356:

⁴ Տե՛ս «Ամենուն տարեցոյց» (Կ. Պոլիս), 1921, էջ 261:

տվյալներից որևէ մեկին նախապատվություն տալը: Ինչպես Ռ. Գևորգյանն է հավաստում, հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական մարդահամարները վստահելի չեն եղել, ավելին՝ կարող ենք վստահաբար ասել, որ պատրիարքարանի տվյալները ևս հաճախ չէին արտացոլում հայերի իրական թվաքանակը այս կամ այն գավառում և նահանգում: Մրա վառ ապացույցը նախ այն փաստն է, որ 1915 սեպտեմբերի 15-ով թվագրվող Դիարբեքիրի վալի, դոկտոր Ռեշիդի հեռագրում՝ ուղղված Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարին, նշվում է, որ տեղահանվել են Դիարբեքիրի նահանգի 120.000 հայերը¹, այն դեպքում, երբ, ըստ պատրիարքարանի տվյալների, 1914 թ. դրությամբ Դիարբեքիրի նահանգում հաշվարկվում էր 106.867 հայ:

Կարծում ենք, որ հիշյալ բոլոր սկզբնաղբյուրներում հայ բնակչության թվաքանակը հիմնականում նվազ է տրված: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ դեռևս 1882 թ. պատրիարքարանի տվյալներում Դիարբեքիրի նահանգում հիշատակվում էր 150.000 հայ բնակիչ²: Պարզ է, որ հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության և հատկապես համիդյան կոտորածների հետևանքով նրանց թվաքանակը պետք է որոշակիորեն նվազեր գրեթե բոլոր բնակավայրերում, բայց ոչ այդ չափով: Մեր կարծիքով, Դիարբեքիրի կամ Տիգրանակերտի նահանգի տարածքում 1915 թ. նախօրյակին ապրում էր շուրջ 130.000 հայ բնակիչ, այդ թվում՝ նույնանուն գավառում՝ շուրջ 67.000³, Արդանա Մադեն գավառում՝ ավելի քան 40.000⁴: Ինչ վերաբերում է Մարդինի գավառակին, ապա այստեղ 1915 թ. դրությամբ, ըստ Թեոդիկի հրատարակած պատրիարքարանի տվյալների, ապրում էր շուրջ 12.300⁵, ըստ «Ամենուն տարեցոյց»-ի՝ 19.000 հայ⁶:

Բնություններ մինչև 1915 թ.

Դիարբեքիրի նահանգում անհանգստությունները սկսվեցին 1909 թ. կիլիկյան կոտորածների օրերին, և ուշագրավ է այն հանգամանքը, որ անհանգստությունները նահանգի որոշ բնակավայրերում վերաճեցին դիմադրության: Այսպես, կոտորածի լուրը ստանալուն պես, Արդանա Մադեն գա-

¹ Տե՛ս **Кеворкян Р.**, Геноцид армян: полная история, Москва, 2015, с. 392, 404:

² Տե՛ս *Population arménienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat arménien de Constantinople*, Paris, 1920, p. 9:

³ Տե՛ս **Բաբլումյան Ա.**, Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի (Տիգրանակերտ) գավառի հայ բնակչությունը XIX դարի վերջերին-XX դարի սկզբներին // Հայոց պատմության հարցեր, թիվ 21, Երևան, 2020, էջ 91-119:

⁴ Տե՛ս **Bablumyan A.**, The Armenian Population of Arghana Maden Sanjak of Province Diarbekir (Tigranakert) at the End of XIX-Beginning of XX Centuries // «Բանբեր հայագիտության», 2021, թիվ 2, էջ 43-62:

⁵ Տե՛ս **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 384:

⁶ Տե՛ս «Ամենուն տարեցոյց», 1921, էջ 261:

վառի Չնքուշ բնակավայրի թուրքերը պայմանավորվում են քաղաքը շրջապատող քրդերի հետ այստեղ ևս հայերի նկատմամբ բռնություններ կազմակերպել: Բարեբախտաբար արտագնա աշխատանքի մեկնող հայերը դեռևս Չնքուշում էին, և այս բնակավայրը նախապատրաստվեց դիմադրության: Սա նահանգի տարածքում թե՛ համիդյան կոտորածների, թե՛ ցեղասպանության տարիներին կազմակերպված դիմադրության եզակի փորձերից էր: 20.000 քրդեր շրջապատում են Չնքուշը: Այդ ընթացքում մյուդիբը իր մի քանի ոստիկաններով միանում է հայերին: Ժողովուրդը ապաստանում է եկեղեցում: Պաշարումը տևում է 21 օր, 10-րդ օրը Ջերմուկից¹ Չնքուշ է գալիս մի հարյուրապետ՝ 12 զինվորների ուղեկցությամբ: Նա իբր ցրում է քրդերին և հայերին պարտավորեցնում անցնել բնականոն կյանքի: Հայերը խոստումը կատարում են, սակայն պաշտպանությունը չեն թուլացնում: Շուտով մի շեյխ է ժամանում Չնքուշ, մուսուլմաններին հրավիրում մզկիթ և փորձում, հայերին հանկարծակիի բերելով, պատժել ու կոտորել: Սակայն հայերը շարունակում են պայքարը, խուճապի չեն մատնվում և օգնության խնդրանքով նամակներ են ուղարկում Արդանա Մադեն ու Տիգրանակերտ: Այս անգամ օգնություն լինում է, և հանցագործներին ի վերջո քշում են Տիգրանակերտ: Վերջիններիս, սակայն, չեն պատժում, այլ մի քանի օր անց ազատ են արձակում, որքան էլ որ չնքուշցիները նամակներ հղեին կուսակալին²: 1909 թ. որոշ անհանգստություններ եղան նաև Հայնիում³: Չնքուշի դիմադրության հաջողությունը նախ պայմանավորված էր հայերի հաստատակամությամբ և հեռատեսությամբ, նաև չմոռանալ այն հանգամանքը, որ իշխանությունները թերևս դեռևս չունեին ավելի լայնածավալ ոչնչացման քաղաքականության անցնելու ծրագիր կամ գուցե հարմար առիթի էին սպասում կիլիկյան արհավիրքը տարածելու նաև Արևմտյան Հայաստանի նահանգներում և մյուս հայաբնակ բնակավայրերում: Կոտորածների մտավախություն կիլիկյան կոտորածների օրերին եղավ նաև հայաշատ այլ բնակավայրերում, սակայն դրանք օրերի ընթացքում ցրվեցին:

Իթթիհատի հայաստաց քաղաքականության դրսևորման առիթ դարձավ Առաջին համաշխարհային պատերազմը, իսկ Դիարբեքիում իշխանությունները որոշակի գործողությունների անցան արդեն 1914 թ. օգոստոսի 18-ի լույս 19-ի գիշերը՝ քաղաքի շուկան հրդեհելով: Այս միջադեպով արդեն նշմարվում էր հայերի դեմ իրագործվելիք հստակ քաղաքականության նոր փուլի սկիզբը: Ականատեսների հավաստմամբ՝ հրդեհը կազմակերպվել էր ոստիկանության ղեկավար Մեմդուհ բեյի, ինչպես նաև Դիարբեքիից խորհրդարանի պատգամավոր Փիրինջի գադե Ֆեյզիի ղեկավարությամբ: Սա էր պատճառը, որ ոչինչ չձեռնարկվեց հրդեհն արագ մարելու համար,

¹ Բնակավայր Արդանա Մադեն գավառի Ջերմուկ գավառակում:

² Տե՛ս **Գեորգեան Գ.**, Չնքուշապատում: Քննական պատմություն հայոց Չնքուշի, հ. Ա, Երուսաղեմ, 1970, էջ 88-90:

³ Տե՛ս «Արևելք», 26 մայիս 1909:

ավելին՝ ոստիկանությունը խանութների տերերին թույլ չտվեց որևէ ապրանք փրկել: Տիգրանակերտի վերաբերյալ հուշամատյանի նյութերից մեկում նշվում է, որ երկու ժամվա ընթացքում շուկայում այրվել էին 1100 խանութ և երկու խան՝: Իսկ ըստ Դ. Գոնտի տվյալների՝ այդ հրդեհի ժամանակ այրվել էին 1578 խանութներ, որոնց մեծ մասը պատկանում էր քրիստոնյաներին²: Դիարբեքիրում անգլիական փոխյուպատոս Թ. Մկրտչյանը ևս վստահեցնում է, որ հրդեհը ծրագրվել ու իրագործվել էր «Ինթիպահ չիրքեթի» ընկերության նախագահ Ֆեյզիի հրամանով՝ հայ վաճառականությանը եկամտի և ապրուստի միջոցներից զրկելու նպատակով³: Նա նաև շեշտում է, որ 60 մուսուլման խանութպաններ զգուշացվել էին և իրենց ապրանքը նախօրոք տեղափոխել ապահով վայր⁴:

Մեմդուհի և Ֆեյզիի մասնակցությունն այս հրդեհմանը այնքան ակնհայտ էր, որ երբ Դիարբեքիրում նահանգապետ նշանակվեց Համիդ բեյը, նրա առաջին գործերից մեկը եղավ Մեմդուհիի հեռացումը ոստիկանության ղեկավարի պաշտոնից⁵: Մեմդուհի բեյը քստրովում է Ադանա, ձերբակալվում և բանտարկվում են նաև մի քանի քուրդ աշիրեթների առաջնորդներ:

Հայերի դեմ բնաջնջման ծրագրված քաղաքականության մասին է վկայում մեկ այլ դեպք ևս, որը տեղի ունեցավ դեռևս 1914 թ. սեպտեմբերի 15-ին: Այդ օրը ինքնասպան է լինում զինվորական, հազարապետ Մուշթաֆ բեյը, որը սեպտեմբերի 14-ով թվագրված երեք նամակ էր հղել հարազատներին և Տիգրանակերտի զինվորական հրամանատարին: Նա գրում էր, որ սեպտեմբերի 10-ին Երզնկայից՝ «Գօլ Օրտու»-ի կենտրոնից, ստացված գաղտնի հրամանով հրահանգվում էր զինվորական իշխանություններին «ճնշել եւ շնչասպառ ընել Հայերը», ահա ինչու նա որոշեց ինքնասպան լինել՝ «ամօթ զգալով թիւրք անուան տակ ապրելէ այլեւս»⁶:

Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյը

Դիարբեքիրի նահանգապետ Համիդ բեյը իր պաշտոնավարման վեց ամիսների ընթացքում՝ մինչև 1915 թ. մարտի 1-ը, ըստ Ռ. Գևորգյանի, փորձում էր հնարավորինս սահմանափակել Դիարբեքիրի երիտթուրքերի սանձարձակությունները, բայց նա անկարող եղավ Ֆեյզիի ու նրա կապերի դեմ, որոնք վերջինս ուներ երիտթուրքերի կենտրոնական կոմիտեում: Ավելին, դոկտոր Մեհմեդ Ռեշիդ Շահինգիրայի՝ Դիարբեքիրի հաջորդ նահանգա-

¹ Տե՛ս **Մկունդ Տ.**, Ամիտայի արձագանգներ, 1950, ԱՄՆ, էջ 246:

² Տե՛ս **Gaunt D.** Deaths End: the General Massacres of Christians in Diarbekir // Diarbekir and Edessa/Urfa, Edites by R. Hovannisian, Costa Mesa, California, 2006, p. 309:

³ Տե՛ս **Մկրտիչեան Թ.**, Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու զազանութիւնները, Գահիրէ, 1919, էջ 21:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

⁵ Տե՛ս **Кеворкян Р.**, նշվ. աշխ., էջ 394:

⁶ Տե՛ս **Մկրտիչեան Թ.**, նշվ. աշխ., էջ 28:

պետի պաշտոնում հաստատումը պայմանավորված էր Իթթիհատի կենտրոնական կոմիտեի՝ հայ բնակչության ճակատագրին վերաբերող արդեն իսկ ընդունված որոշման իրականացմամբ: Մարտի 28-ին, երբ նա ժամանեց Դիարբեքիր, ամենայն հավանականությամբ արդեն ուներ նախատեսվող գործողությունների պլան¹:

Ռեշիդ բեյը ծագումով չերքեզ էր, Մոսուլի նախկին նահանգապետը և Դիարբեքիր եկավ 40-50 հոգանոց չերքեզ չեթենների խմբով, որոնք ժանդարմի հագուստ էին կրում: Նրա անձնական թիկնապահներն էին չերքեզներ Ռուշտի և Շաքիր բեյերը²: Ըստ Ս. Փայասլյանի՝ հակաքրիստոնեական Ռեշիդ բեյի նշանակումը որպես Դիարբեքիրի վալի իրավամբ կարելի է համարել Դիարբեքիրում հայերի, նաև ընդհանրապես քրիստոնյաների լիովին բնաջնջմանն ուղղված քայլ³: Հ. Կայգերը, սակայն, նրա նշանակումը Դիարբեքիրի նահանգապետի պաշտոնում համարում է օսմանյան կառավարության ընտրության սահմանափակ հնարավորությունների և մի շարք պատահականությունների հետևանք⁴: Սակայն դեպքերի ամբողջ ընթացքը հաստատում է այն տեսակետը, որ Ռեշիդի նշանակումը ամեննին պատահական չէր և անմիջականորեն մաս էր կազմում հայերի ոչնչացման ծրագրի:

Դիարբեքիրի հայերի բնաջնջման ծրագիրն իրագործելիս վալիին պետք է օգնեին Ֆեյզի բեյը: Դա նախապատրաստվեց ու իրագործվեց նշված անձանց և ոստիկանապետի պաշտոնում վերահաստատված Մեմդուհ բեյի միջոցով: Ռեշիդը Դիարբեքիր ժամանելուն պես ստեղծեց «միլիցիա», որն իրականում կազմված էր Հատուկ կազմակերպության մի քանի ջոկատից: Ապրիլին արդեն նրա հրամանով Ջեմիլ փաշա գաղե Մուսթաֆային և գնդապետ Յասին գաղե Շելվքիին հանձնարարվեց տարածքի հանցագործներից ստեղծել չեթենների 11 ջոկատ, որոնցից 10-ը պետք է ունենար 500 անդամ, իսկ վերջինը պետք է լինեին այսպես կոչված «մսագործների» ջոկատ: Ռեշիդի հաջորդ քայլն էր ստեղծել անձամբ վալիի ղեկավարությամբ գործող «Բարձր խորհուրդ»⁵, որի խնդիրը, թերևս, ամբողջ նահանգում տիրող իրավիճակի վերահսկումն էր:

Ուշագրավ է այն փաստը, որ Դիարբեքիրում խիստ կարևորում էին հայերի բնաջնջմանն ուղղված գործողությունների կազմակերպչական կողմը և առանձին օղակներում դրանց իրագործման պատասխանատուներին: Ֆեյզի բեյը 1915 թ. ապրիլին մեկնում է նահանգի տարբեր բնակավայրեր և «տարագիր հայերը քստորի ճամբուն մեջ կողոպտելու, բնաջնջելու դժոխային ամե-

¹ Տե՛ս Կеворкян Р., նշվ. աշխ., էջ 395-396:

² Տե՛ս Մկրտիչեան Թ., նշվ. աշխ., էջ 36:

³ Տե՛ս Payaslian S., The Armenian Genocide in Diarbekir, 1915 // Diarbekir and Edessa/Urfa, edited by R. Hovannisian, Costa Mesa, California, 2006, p. 289:

⁴ Տե՛ս Kaiser H., The Extermination of Armenians in the Diarbekir Region, Istanbul, 2014, p. 151:

⁵ Տե՛ս Կеворкян Р., նշվ. աշխ., էջ 396-397:

նաահարկու կարգադրութիւններ ընելէ վերջ՝ քիրտ, արաբ եւ չերքեզ աշիր-
 էթապետներու, շէյխերու և էշրէֆներու հետ կը վերադառնա Տիգրանա-
 կերտ»¹: Մյուս ղեկավարները ևս անձամբ մասնակցել են կոտորածներին ու
 տեղահանությանը: Այս ուղղորդումը և պլանավորումը պայմանավորված
 էին նահանգապետի քաղաքականությամբ: Ինչպես Կոստանդնուպոլսի գեր-
 մանական դեսպանությանն ուղղված՝ 1915 թ. օգոստոսի 15-ի նամակում
 գրում է Մոսուլում Գերմանիայի փոխհյուպատոս Հոլշտայնը, «Դիարբեքի
 վալին իր վիլայեթում քրիստոնյաների հանդեպ կատարված սարսափելի
 ոճրագործությունների ոգին է»: Նա կարծում է, որ իրենք պետք է Բարձր
 դռանը ստիպեն պատասխանատվության ենթարկել հանցագործներին, ով-
 քեր պաշտոններ են զբաղեցնում Դիարբեքիում, Մարդինում, Սղերդում, և
 որ միայն այդ դեպքում կվերանան իրենց նկատմամբ առկա կասկածները:
 Հոլշտայնը հեռագիրը եզրափակում է հետևյալ նախադասությամբ. «Աշխա-
 րը դեռ չի տեսել և չի տեսնի այնպիսի ահավոր ոճիրներ, ինչպիսիք՝ պաշտո-
 նապես ապացուցելի, իրագործվել են Դիարբեքիի վիլայեթում»²:

Նշենք սակայն, որ միշտ չէ, որ Ռեշիդի հրամանները անթերի էին կա-
 տարվում. եղան դեպքեր, երբ ղեկավարներից ոմանք հրաժարվեցին կատա-
 րել հայերին ոչնչացնելու նրա հրամանները: Առաջիններից մեկը Մարդինի
 մութեսարիֆ Հիլմի բեյն էր, որը 1915 թ. մայիսին ազատվեց պաշտոնից:
 Նրան հաջորդած Շեֆիկ բեյը մեկ ամիս անց նույն պատճառով ևս հեռացվեց:
 Ի վերջո նահանգապետը Մարդինում մութեսարիֆի պաշտոնակատար նշա-
 նակեց իրեն հավատարիմ մարդկանցից մեկին՝ Իբրահիմ Բեդրեդդին բեյին,
 իսկ Մարդինի գավառի ոստիկանության ղեկավար նշանակվեց Գեվրանլի
 զադե Մեմդուհը³: Աշխատանքից հեռացվեց նաև Ջեզիրեի կայմական Խալիլ
 Սամին, իսկ Լիճքի կայմական Հուսեյին Նեսիմի բեյն ու Բշերիկի կայմական
 Ալի Սաբիդ էլ-Սուվեյդին սպանվեցին⁴:

Անդրադառնալով Ռեշիդ բեյի մոտեցումներին և հայերի բնաջնջմանն
 ուղղված գործողությունների վերլուծությանը՝ Հ. Կայգերը գրում է, որ վերջինս
 «հետապնդում էր բնաջնջման քաղաքականություն, որն ուղղված էր ընդհան-
 րապես հայերի ֆիզիկական բնաջնջմանը», քանզի նա հայերին համարում էր
 «միկրոբներ»: Ավելին, Ռեշիդը չէր ընդունում նաև հայ որբերի իսլամացման
 հնարավորությունը: Նահանգապետի համար կարևոր էր հայերի բնաջնջումը,
 որպեսզի հնարավոր դառնար այդտեղ բնակեցնել մուսուլման զաղթական-
 ների Բալկաններից ի հակակշիռ արդեն գերիշխող քուրդ բնակչության⁵:

¹ Մկրտիչեան Թ., նշվ. աշխ., էջ 48:

² Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916. Գերմանիայի արտաքին գործերի
 նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, 2005, էջ 149-150:

³ Տե՛ս Կеворкян Р., նշվ. աշխ., էջ 401:

⁴ Տե՛ս Payaslian S., նշվ. աշխ., էջ 291:

⁵ Տե՛ս Kaiser H., նշվ. աշխ., էջ 425:

Պատերազմի սկիզբը, նաև հակահայկական տրամադրություններ ունեցող վերոնշյալ անձանց նշանակումները բարձր պաշտոններում քրիստոնյա և հատկապես հայ բնակչությանը դրեցին ավելի ծանր վիճակում: Բացի հոգեբանական ծանր վիճակից, հայերի նկատմամբ խստացվել էր նաև հարկային, տնտեսական քաղաքականությունը: Դիարբեքիի առաջնորդ Մկրտիչ վրդ. Չլդատյանը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին գրում է, որ մարդիկ այնպիսի վիճակում են հայտնվել, որ անհնար է այդպես ապրել, և դա հատկապես անտանելի է Սլիվանում և Բշերիկում: Մարդկանցից ամենայն խստությամբ, պատժամիջոցների սպառնալիքով պահանջում էին հավաքել այլուր, անասուններ, յուղ, կաշվեղեն ևն: Այդ ապրանքները չունեցողերը պետք է գնեին և տային, այլապես դատարանի առջև կկանգնեցվեին: Այս ամենին զուգահեռ՝ կրկին ակտիվացել էին քրդերը, որոնք վերադարձել էին հայերին թալանելու իրենց սովորույթին¹: Ինչպես շեշտում է Հ. Կայգերը, Դիարբեքիում խնդիրները, այդ թվում՝ ֆինանսական, շատ էին: Դեռևս նահանգապետ Համիդ բեյը նախաձեռնեց ստուգել նահանգի ֆինանսների վիճակը, արդյունքները ցնցող էին. պարզվեց, որ նահանգում հարկերի գրեթե կեսն է միայն հավաքվում: Պատճառը խորը արմատավորված կաշառակերությունն էր ֆինանսներով զբաղվող վարչակազմի շրջանում: Կային լուրջ խնդիրներ նաև սանիտարահիգիենիկ հարցերում ևն²:

Դիարբեքիում շատ էր զինվորագրումից խուսափողների, նաև դասալիքների թվաքանակը: Նրանց մի մասին ձերբակալում էին և ուղարկում ծառայության, բայց մի ստվար հատված մնում էր ազատության մեջ³:

Դիարբեքիի նահանգի հայ բնակչության տեղահանությունն ու զանգվածային ոչնչացումը

Ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում, Դիարբեքիում ևս իշխանությունների գործողությունների թիրախում նախ և առաջ հայ տղամարդիկ էին, զինվորներն ու մտավորականները: Արդեն զարնանը ամերիկացի միսիոներ, բժիշկ Ֆ. Սմիթը Դիարբեքիի մոտակայքում տեսել է ձերբակալված, ժանդարմների ուղեկցությամբ անցնող տղամարդկանց խմբեր: Դրանք Դիարբեքիի հայ համայնքի ներկայացուցիչներն էին, որոնց տանում էին Խարբերդի ուղղությամբ⁴: Հայ մտավորականների ձերբակալություններն այստեղ սկսվում են ապրիլի 16-ին և շարունակվում մինչև մայիսի 27-ը, իսկ մայիսի 28-ին ձերբակալվում է նաև Առաջնորդական փոխանորդ Մկրտիչ վրդ. Չլդատյանը: Մայիսի վերջերին Դիարբեքիում ձերբակալվել ու բան-

¹ Տե՛ս **Payaslian S.**, նշվ. աշխ., էջ 290:

² Տե՛ս **Kaiser H.**, նշվ. աշխ., էջ 137:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 134:

⁴ Տե՛ս **Barton J.**, *Turkish Atrocities: Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917*, Ann Arbor, 1998, p. 93:

տարկվել էին ընդհանուր առմամբ 1600 երևելի անձինք, որոնց մեծ մասը հայեր էին, թեև կային նաև ասորիներ և քաղղեացի կաթոլիկներ¹։ Մայիսի 30-ին 635 բանտարկյալի՝ նախապես կազմված ցուցակով հանում են քաղաքից, տանում դեպի Տիգրիս գետը, նստեցնում լաստերը և ճանապարհ ընկնում։ Ընթացքում պահանջում են իրենց ի պահ տալ ոսկիները, քանի որ վտանգավոր տարածքով են անցնելու։ Հավաքվում է 6000 ոսկի՝ հետո վերադարձնելու պայմանով։ Երբ ցամաք են իջնում, վեցական կապած բանտարկյալներին տանում են Պեզվանու ձոր, որի բարձունքները ամբողջությամբ գրավել էին Ռեմման աշիրեթ քրդերը՝ Ամարոյի հրամանատարությամբ, ոստիկաններն ու չերքեզ զորախմբերը։ Հրամանից հետո երկու ժամ հրացանաձգություն է տեղի ունենում, սպանվում են և վիրավորները, ինչպես նաև Դիարբեքիրի հայտնի մարդիկ²։ Ուշագրավ է այն փաստը, որ դեպքից 15 օր անց նահանգապետն ու Ֆեյզին Ամարոյին հրավիրում են Դիարբեքիր՝ իբր վարձատրելու և պատվելու համար, սակայն նա դավադրաբար սպանվում է։

Ինչ վերաբերում է Դիարբեքիրից զորակոչված հայերին, ապա ըստ Լորդ Ջ. Բրայսի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուում տեղ գտած մի նամակի՝ Դիարբեքիրի նահանգի բոլոր հայ զինվորները սպանվեցին Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհներին։ Դիարբեքիրի տարածքում սպանվեցին նաև հարակից նահանգներից տեղահանվածները, ինչպես օրինակ՝ Խարբերդից 1800 երիտասարդներ ուղարկվեցին Դիարբեքիր՝ իբր աշխատելու, և սպանվեցին հարակից Արդանա բնակավայրում³։ Իսկ հունիսի 1-ին Տիգրանակերտ-Խարբերդ ճանապարհին խողխողվեցին դեռևս 1914 թ. նոյեմբերից Բալուում ճանապարհների վրա աշխատող 12.000 հայ զինվորներ⁴։

Դիարբեքիրի ընդհանուր տեղահանությունը կազմակերպվեց հունիսի սկզբներին, ընդ որում՝ ընտանիքները հաշվառվում էին և գիշերները ոչ մեծ խմբերով տարվում Մարդին, ապա՝ Ռաս ուլ-Այն, այնտեղ կոտորվում և նետվում հորերը։ Պատմաբան Ունգուր Ուգուրը գրում է, որ հայ տղամարդկանց հիմնական մասի ոչնչացումից հետո Ռեշիդը ձեռնամուխ է լինում տեղահանության կազմակերպմանը։ Մասնավորապես, հունիսի 1-ին Խանչեփեքի շրջակայքից Մարդինի դարպասով տեղահանվում է 1060 հոգի։ Նրանց առաջարկում են կրոնափոխ լինել, բայց վերջիններս մերժում են։ Թալանվելուց հետո տեղահանվածներին սպանում են կացիներով, սրերով ևն։ Այս խմբի կանանցից շատերը առևանգվեցին, ոմանց որպես ստրուկներ վաճա-

¹ Տե՛ս Gaunt D., նշվ. աշխ., էջ 326-327։

² Տե՛ս Մկունդ Տ., նշվ. աշխ., էջ 251-252։

³ Տե՛ս The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. With a Preface by Viscount Bryce, London, 1916, p. 14։

⁴ Տե՛ս Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը, Պէրուք, 1960, էջ 343։

ոեցին աճուրդով¹: Ըստ Թ. Մկրտչյանի՝ Տիգրանակերտից օրական շուրջ 100 ընտանիք էր արքայազնի, մի խումբը՝ Մարդինի ճանապարհով, մյուսը՝ դեպի արևմուտք՝ դեպի Ռաս ուլ-Այն, Նսեպին ու Դեր Զոր²: Այսպես շարունակվում է մինչև հոկտեմբեր: Մեծ թվով տարագիրներ կոտորվել են Տիգրանակերտից մոտ մեկ ժամվա հեռավորությամբ գտնվող Զարոխիկ գյուղի մոտ՝ Գուլան Տերեում: Այս խմբերը սպանվել են ոստիկանների և քրդերի կողմից: Կարևոր փաստ է, որ նահատակված այս հայերի գլուխներին ճերմակ շոր էին փաթաթում, կանանց՝ լաչակ կապում և նկարում՝ ներկայացնելով նրանց մուսուլմաններ, որոնց իբր հայ ապստամբներն են սպանել, հետևաբար տեղական իշխանությունները չեն կարող զսպել քրդերի զայրույթը³:

Սևերակում⁴, ինչպես և մյուս հայաբնակ բնակավայրերում իշխանությունների գործողությունները հայերի դեմ սկսվեցին խուզարկություններով և ձերբակալություններով: Այստեղ հայերի ոչնչացման գործում մեծ դեր խաղաց ոստիկանության նոր նշանակված տնօրեն, տրապիզոնցի Նեճիպ Ալի Էֆենդին: Վերջինս, չվստահելով նախկին ոստիկաններին, դիմում է Դիարբեքիրի կուսակալին, որ նա ուղարկի 300 նորեկների՝ կազմված չերքեզ, թուրք, քուրդ, չեչեն, զազա խառը աշիրեթներից: Կուսակալը կատարում է խնդրանքը և գերմանական բեռնատարերով ուղարկում ոստիկաններին Սևերակ⁵: Նախ ձերբակալում են 50 հայ երիտասարդների, որոնց մոտ իբր արգելված զենքեր էին հայտնաբերել: Նրանցից յուրաքանչյուրին հանձնարարվեց Տիգրանակերտ, ապա Խարբերդ հասցնել 50-ական կգ ցորեն, գարի: Երկրորդ խումբը բաղկացած էր արդեն 75 հոգուց, նրանց ևս նույն բեռներով և ճանապարհով ուղարկեցին: Երրորդ խումբը բաղկացած էր 100-150 երիտասարդներից: Հետագա օրերին Սևերակում հավաքվում էին և մահվան ուղարկվում մի քանի հարյուր հոգուց բաղկացած նորանոր խմբեր, որոնց ևս նախ աշխատեցնում էին, ապա՝ կոտորում: Փաստորեն Սևերակում ձերբակալված և քաղաքից դուրս հանված խմբերը կազմվեցին և ծառայեցին նախ որպես բեռնակիրներ, ապա՝ ճանապարհաշինության բանվորներ: Բոլոր այդ խմբերում զոհերի թվաքանակը առավելագույնն էր, միայն հատուկենտ տղամարդկանց էր հաջողվում փրկվել մահից: Սևերակում հայերի հիմնական սպանդավայրերը դարձան մի քանի ուղղություններում գտնվող բնակավայրեր: Մի մասը բնակավայրից հեռացվեց Ուրֆայի ուղղությամբ, մի մասը՝ Տիգրանակերտի ուղղությամբ՝ դեպի Գարապաղչայ, մյուս մասը մահկանացուն կնքեց Եփրատ

¹ St' u **Üngör U.**, The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia 1913-1950, Oxford, 2012, p. 74:

² St' u **Մկրտչյան Թ.**, նշվ. աշխ., էջ 72:

³ St' u նույն տեղում, էջ 74-75:

⁴ Բնակավայր Դիարբեքիրի գավառի Սևերակ գավառակում:

⁵ St' u **Արապեան Թ.**, Յուշամատենան Սևերակի, Պէյրուք, 1971, էջ 244:

⁶ St' u նույն տեղում, էջ 245-246:

գետի ուղղությամբ՝ Մսեպին գյուղ չհասած, մի խումբ տարվեց դեպի Ջերմուկ՝ մինչև Աղաճա խան¹: Խմբերին սպանդարան ուղեկցող հարյուրապետերն ու ռատիկանները վերադառնում էին մեծ ավարով: Ուշագրավ է, որ կանանց, երեխաների այս խմբերի տեղահանությունը կատարվում էր միայն գիշերը, որպեսզի տեղում մնացող անձինք տեղյակ չլինեին հեռացողների ճակատագրին:

Զնքուշից և շրջակայքից հավաքված 35.000 տեղահանվածների խումբը ևս նախ թալանվեց, ապա ուղղվեց դեպի Եռուտան Տերե, որտեղ սվինահարվեց ու նետվեց անդունդը²:

Դիարբեքիի տարածքում մեծապես տուժեցին նաև կաթոլիկ, բողոքական հայերը և այլ քրիստոնյաներ: Այսպես, Նազլյանը գրում է, որ միևնույն չարչարանքները կրեց նաև հայ կաթոլիկ բնակչությունը, սակայն ավելի դաժանությամբ՝ Տիգրանակերտում, քանի որ այստեղ հայ կաթոլիկ եպիսկոպոսը ազգականն էր Գազազյան ընտանիքի, որը Տիգրանակերտի ամենահարուստ ընտանիքներից էր³: Կաթոլիկ բնակչությունը կենտրոնացած էր հիմնականում Մարդինի գավառում: Հայերի և մյուս քրիստոնյաների բնաջնջումը իրականացնելու հանձնարարությամբ այստեղ էին ուղարկվել մեքթուպճի Պետրետտինը, որը փոխարինում էր մուրեսարիֆ Հիլմի բեյին, և գոմիսեր Մեմդուհ բեյը: Նրանք պետք է բնաջնջեին ոչ միայն Մարդինի հայերին, այլև Տիգրանակերտի այն տարագիրներին, որոնք պետք է անցնեին այս տարածքներով: Պետրետտինն ու Մեմդուհը որոշում են հայերի սպանդարանի վերածել դեռևս հռոմեացիների կառուցած դատարկ հորերն ու զնդանները, որոնք գտնվում էին Տարայի և Ռաս ուլ-Այնի շրջակայքում⁴:

Մարդինում պաշտոնավարող Հիլմի բեյի հեռացումից հետո՝ հունիսի 4-5-ին, Մարդինում կալանավորվեցին 662 քրիստոնյաներ, ձերբակալություններ եղան նաև Թել Արմենում: Հունիսի 9-ին 85 յակոբիտներ ազատ արձակվեցին իշխանությունների կողմից, իսկ մինչ այդ յակոբիտյան քահանա Մահրիան և իր հավատակիցներից ևս ութ հոգի միացել և ստորագրել էին տեղացի մուսուլմանների հայտարարությունը, որը վերաբերում էր հայերի ենթադրյալ մեղավորությանը: Այսպիսով, բանտում մնացին հիմնականում կաթոլիկներ և բողոքականներ՝ հիմնականում ազգությամբ հայ: Հունիսի 10-ին ավելի քան 400 բանտարկյալներ հանվեցին քաղաքից և սպանվեցին⁵: Ոչ հայ քրիստոնյաների ձերբակալությունների մասին հիշատակվում է նաև մի օտարերկրացու՝ 1915 թ. օգոստոսի 19-ի թվակիր զեկույցում՝ ուղղված Հայաստանի ու Սիրիայի օգնության ամերիկյան կոմիտեին: Նամակում մասնավորապես նշվում էր, որ Մարդինից կառավարությունը տեղահանել է մեծ

¹ Տե՛ս **Արապեան Թ.**, նշվ. աշխ., էջ 256:

² Տե՛ս Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը, էջ 344:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 342:

⁴ Տե՛ս **Սկրտիչեան Թ.**, նշվ. աշխ., էջ 65:

⁵ Տե՛ս **Gaunt D.**, նշվ. աշխ., էջ 334-336:

թվով սիրիացիների, կաթոլիկների, քաղդեացիների ու բողոքականների, և վախ կա, որ բոլոր քրիստոնյաները, ինչպես նաև հրեաները պետք է ներառվեն հրամանում¹: Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ այս շրջանում աղմուկ բարձրացվեց՝ ի պաշտպանություն կաթոլիկների, հետևաբար և այլ քրիստոնյաների նկատմամբ գործողությունները դադարեցվեցին: Ամենայն հավանականությամբ մյուս քրիստոնյաների ոչնչացման մասին հատուկ հրաման ու ծրագիր չկային, այլ վերոնշյալ ձերբակալվածների մեջ ոչ հայերի ներկայությունը վկայում էր տեղական իշխանությունների սեփական նախաձեռնության մասին:

Մարդինի հայ կաթոլիկների ընդհանուր տեղահանությունը սկսվեց հուլիսի 2-ին. տեղահանվեց 600 հոգի, ապա շարունակվեց հետագա օրերին ու ամիսներին: 2000-ից ավել հայ կաթոլիկներ, ինչպես նաև բողոքականների շուրջ 100 ընտանիք կոտորվեցին միայն Մարդին քաղաքում: Տանջամահ արվեցին ու խոշտանգվեցին գերապայծառ Իգնատիոս Մալոյանը, Պոտուրյան Հովհաննես վարդապետը, ընդհանուր առմամբ՝ 17 հոգևորական, նաև բողոքականների երեքը²: Ամբողջությամբ հայաբնակ Թել Արմեն գյուղը հրդեհվեց, ավելի քան 6000 հայ կաթոլիկներ՝ սպանվեցին³:

Դիմադրության փորձեր

Ի տարբերություն Խարբերդի նահանգի, որտեղ Հայոց ցեղասպանության տարիներին հայությունը դիմադրության փորձեր գրեթե չունեցավ, Դիարբեքիի նահանգի որոշ բնակավայրերում նման դեպքեր եղան: 1914 թ. պատերազմի ազդարարումից հետո Հավալի⁴ հայկական կուսակցությունների անդամները ժողովներ գումարեցին՝ դիմադրություն կազմակերպելու նպատակով: Այն դեկավարելու համար վերակազմյալ հնչակյաններից ընտրվեց Պ. Արամյանը, դաշնակցականներից՝ Մ. Գասպարյանը: Այդ օրերին Հավալում էին ապաստանել նաև թուրքական բանակից դասալիք եղած 150 հայ զինվորներ, որոնք ևս կարող էին աջակցել դիմադրությանը: Սակայն այս անգամ ևս հայերը միասնական չէին. կառավարությունը նախ ձերբակալեց 185 հոգու, ապա հավաքեց զենքերը⁵:

Արդանա Մադենի գավառի Չնքուշ բնակավայրում ևս մի քանի տասնյակ փախստական զինվորներ, ապաստանելով լեռներում, կռվեցին անձնվիրաբար ու նահատակվեցին⁶:

¹ St' u The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. With a Preface by Viscount Bryce, p. 549:

² St' u **Մկրտիչեան Թ.**, նշվ. աշխ., էջ 67:

³ St' u Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը, էջ 382:

⁴ Բնակավայր Արդանա Մադեն գավառի Բալու գավառակում:

⁵ St' u **Զախատուբեան Վ.**, Հաւալի ըմբոստ արծիւը. Պ. Արամեանի Յուշատետրից, Նիւ Եորք, 1950, էջ 25:

⁶ St' u **Գեորգեան Գ.**, նշվ. աշխ., էջ 97-99:

Միդիաթում և Հազակում քրիստոնյաները ինչ-որ չափով ընդդիմացան իշխանությունների քաղաքականությանը, մասնավորապես Հազակում տեղի ղեկավարները որոշեցին, ի պաշտպանություն իրենց մոտ ապաստան գտած հայերի, դիմադրել հարձակմանը: 1915 թ. օգոստոսի 17-ին բնակավայրը շրջափակվեց, և սկսվեց հարձակումը: Դիմադրությունը տևեց մի քանի շաբաթ¹:

Դիարբեքիի տարածքի խոշոր սպանդավայրերը

Դիարբեքիի նահանգի բազմաթիվ բնակավայրեր, ժայռեր ու հորեր վերածվեցին խոշոր սպանդարանների: Նման տարածքներից էին Տիգրանակերտի մոտ՝ Գոգան, Շեյթան տերեւները, Պեգուանի ձորը Շգավթան գյուղի մոտ, Ուտուեյլեռի ձորը Մարդինի մոտ, Տարայի հռոմեական նկուղներն ու զնդանները, Ռաս ուլ-Այնի հորերը²: Պագր Մադենի մոտակայքում գտնվող հիմնական սպանդարաններն էին Տեպո անունով վայրը, Զայրլըղ վայրը, Թոխմախ կոչված տանջարանը, նաև՝ Գալեմտան կոչված պանդոկը³:

Ականատեսների վկայությամբ՝ չնքուշցի կանայք ու երեխաները կոտորվել են Տուտանի տարածքում: Նրանց այստեղ սպասում էին ոստիկանները, որոնք մերկացրել են գոհերին, տարել Տուտանի գազաթը, սպանել սրերով ու կացիններով, վերջում կողոպտել նրանց հագուստներն ու իրեղենները: Զոհերից շատերը երեխաների ձեռքերը բռնած իրենց նետել են ժայռից⁴: Զերմուկի հայության հիմնական սպանդավայրը ևս դարձել է Տուտանը, որտեղ ծերերին, կանանց, երեխաներին կոտորելով՝ լցրել են փոսը⁵:

Ինչպես արդեն նշել ենք, Դիարբեքիի նահանգի մի շարք բնակավայրեր դարձան նաև այլ նահանգներից տեղահանվածների սպանդավայրերը: Մասնավորապես, հունիսի առաջին կեսին Բալուի կամուրջը դարձավ Էրզրումի նահանգից՝ հիմնականում Քդիից, տեղահանված շուրջ 10.000 հայերի սպանդավայր⁶:

Դիարբեքիի նահանգի տարածքում խոշոր սպանդավայրեր էին հատկապես Մարդինի գավառի մի շարք բնակավայրեր, որտեղ նահատակվեցին նաև այլ նահանգներից տեղահանված տասնյակ հազարավոր հայեր: Այսպես, հուլիսի 3-ին շուրջ 1200 կին ու երեխա, որոնք տեղահանվել էին Մուշից, հասան Մարդին, հաջորդ օրերին այդտեղ հասան գրեթե նույնքան գաղթականներով լի այլ խմբեր⁷:

Դոմինիկյան հոգևորական Հ. Սիմոնը արձանագրել է 1915 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Դիարբեքիի տարածքում իրագործված 52 հիմնա-

¹ Տե՛ս **Kaiser H.**, նշվ. աշխ., էջ 333:

² Տե՛ս **Մկրտիչեան Թ.**, նշվ. աշխ., էջ 77:

³ Տե՛ս **Պեղպեղեան Ե.**, Պագր-մատեն, Նիւ Եորք, 1984, էջ 145:

⁴ Տե՛ս **Գեորգեան Գ.**, նշվ. աշխ., էջ 99:

⁵ Տե՛ս **Պարսամեան Ս.**, Յուշարձան Զերմուկի, Պոսթըն, 1969, էջ 87:

⁶ Տե՛ս **Кеворкян Р.**, նշվ. աշխ., էջ 411:

⁷ Տե՛ս **Payaslian S.**, նշվ. աշխ., էջ 295:

կան կոտորածներ՝ ամսաթվերով և զոհերի մոտավոր թվաքանակով: Առավել խոշոր կոտորածներից էր Մարդինի տարածքի գյուղերից Բրահիմի մոտ տեղի ունեցածը, որի ժամանակ հունիսի 25-ին կոտորվեց 4000 մարդ, Միդիաթում՝ հուլիսի 19-ին՝ 7000, Ջեզիրեում օգոստոսի 8-ին՝ 15.000, իսկ օգոստոսի 20-ին՝ 6000: Հունիսի 20-ին 12.000 հոգուց բաղկացած խմբին կոտորեցին Դիարբեքիր-Մարդին ճանապարհին, հուլիսի 11-ին՝ 7000 հոգու Դարայում, սեպտեմբերի 10-ին՝ 12.000 հոգու կրկին Դիարբեքիր-Մարդին ճանապարհին և մի շատ մեծ խմբի՝ սեպտեմբերի 14-ին Նիսիբիսի մոտ¹:

Բռնությունները հայ երեխաների ու կանանց նկատմամբ

Հայոց ցեղասպանության տարիներին ընդգծված վերաբերմունք կար նաև հայ երեխաների ու կանանց նկատմամբ. բացառություն չէր նաև Դիարբեքիրի նահանգը: Խոսքը ոչ միայն տեղահանության ընթացքում արձանագրված սպանդի տեսարաններն էին, այլ նաև կոտորածներից հետո որբանոցներում հավաքված երեխաների նկատմամբ վերաբերմունքը: 1915 թ. սկզբներին՝ դեռևս մինչև կոտորածները, երբ տեղական իշխանությունները արդեն իսկ պատրաստվում էին այդ ոճիրին, ըստ Թ. Մկրտչյանի՝ Ֆեյզիի նախագահությամբ ժողով է գումարվում՝ որոշելու նահանգի հայության զանգվածային բնաջնջման եղանակները: Ինչպես արդեն նշել ենք, նահանգապետ Ռեշիդը գտնում էր, որ հայերին ամբողջությամբ պետք է բնաջնջել՝ չխնայելով նույնիսկ երեխաներին: Միակ անձը, ով այս ժողովի ընթացքում պնդում էր, որ պետք է 12 տարեկանից փոքր երեխաներին խնայել՝ նրանց իսլամացնելու նպատակով, իսկ գեղեցիկ կանանց ու աղջիկներին ընդգրկել հարեմներում՝ գեղեցկացնելու քուրդ ցեղը, մուֆթի Իբրահիմ էֆենդին էր: Ժողովը ընթանում է Ուլու Ճամիում և տևում երեք օր. ի վերջո որոշվում է բնաջնջել հայերին՝ խնայելով միայն ընտրված գեղեցիկ կանանց²: Չնայած այս որոշմանը՝ իսլամացումը ոչ միշտ էր հայ կանանց պաշտպանում տեղահանությունից ու կոտորածից: Այս մասին է վկայում արաբ ակնաստես Ֆայեզ ալ Ղոսեյնը: Նրա վկայությամբ՝ կոտորածների ընթացքում Դիարբեքիրի կանանցից մի քանիսը կրոնափոխ եղան, և իշխանությունները սկզբնական շրջանում ընդունեցին նրանց իսլամացման փաստը, քանի որ այդ կանայք ամուսնացան կա՛մ թուրքերի, կա՛մ քրդերի հետ: Սակայն որոշ ժամանակ անց կառավարությունը սկսեց հավաքել այս կանանց և ուղարկեց մահվան: Միայն վալիի հեռացումից հետո հրաման եկավ, որ յուրաքանչյուր մարդ, ով ցանկանում է իսլամ ընդունել, կարող է դա անել՝ լինի դա տղամարդ թե կին³:

Պատահական չէր, որ տեղական իշխանությունների և հատկապես Ռեշիդի հայատյաց մոտեցման պատճառով ինչ մոտեցում որդեգրվեց հայ երե-

¹ Տե՛ս **Gaunt D.**, նշվ. աշխ., էջ 327-328:

² Տե՛ս **Մկրտչյան Թ.**, նշվ. աշխ., էջ 63:

³ Տե՛ս **Faiz El- Ghusein**, Martyred Armenia, New York, 1918, p. 39:

խաների ու կանանց նկատմամբ: Դիարբեքիից Մարդինի ուղղությամբ տեղահանված կանանց ու երեխաների առաջին խմբում քաղաքի հայտնի ընտանիքների՝ Գազազյանների, Տերպանջանների, Եղիայանների, Խանդանյանների և այլոց անդամներն էին: Այս խմբի կանանց ու երեխաներին առանձնացրեցին Ալի բունար գյուղում և ստիպեցին հայտնել թաքցրած թանկարժեք իրերի տեղը, ապա հեռացրին բնակավայրից և սպանեցին՝ հիմնականում կոկորդները կտրելու եղանակով: Այս խմբից մոտ 510 կանանց ու երեխաների ևս սպանեցին՝ նետելով Ջեզիրե քաղաքի ճանապարհին գտնվող Դարեի բյուզանդական հորերը¹:

1915 թ. սեպտեմբերի 10-ին Խարբերդից և Էրզրումից տեղահանված 8000 կանայք ու երեխաներ կոտորվեցին նույն Տիգրանակերտ-Մարդին ճանապարհին²:

5000 կանանց ու երեխաների Չնքուշի մոտակայքում՝ Եփրատի ձախ ափին, բարձունքից նետեցին Տուտանի անդունդը³, իսկ հունիսի 25-ին Սևերակից դեպի Ուրֆա տեղահանված խմբից Հաճի Քամիլի կամրջի մոտ ոստիկանները, խլելով մեկից ութ տարեկան երեխաների, նրանց նետեցին կամրջի 30 մ բարձրությունից⁴: Նման օրինակները բազմաթիվ էին և հատուկ գրեթե բոլոր տեղահանված խմբերին:

Ինչ վերաբերում է կոտորածներից փրկված երեխաների ճակատագրին, ապա նրանք հավաքվեցին մեծ կամ փոքր որբանոցներում, որոշ ժամանակ ապաստան ունեցան, սակայն հետագա ամիսներին հիմնականում կոտորվեցին: Թ. Մկրտչյանը գրում է. «Կառավարությունը 400-էն աւելի 1-3 տարեկան հայ երկսեռ որբեր հաւաքելով կը լեցնի բողոքականաց դպրոցին (Մեծ Գօնաղ) շէնքին մէջ: Քանի մը ամիսներ խնամք կը տարուի անոնց: Բայց յանկարծ, օր մըն ալ կէսը կառքերուն մէջ լեցնելով կը տարուին կամուրջը (քաղաքէն կէս ժամ յեռու, հարաւը, Տիգրիս գետին վրայ Սարակիոսսներէ շինուած հին կամուրջ մը) և ողջ ողջ ամենքն ալ ոտքերէն, ձեռքերէն կամ գլուխներէն բռնելով կամուրջին վրայէն կը նետէն սուրացող Տիգրիսին մէջ... մնացեալ կէսն ալ՝ ուրիշ օր մը Գարապաշ կը տանին (Տիգրանակերտի արեւելքը մէկ ու կէս ժամ հեռու գիւղ մը), ոմանց ոտքերէն բռնելով, իրենց ուժը փորձելու համար, երկուքի կը ձեռքէն, ոմանց վրայ ալ իրենց խանչարներու կամ յուրոցի սրութիւնը փորձելու համար կանդամահատեն ձեռք, ոտք, գլուխ, մէկ հարուածով կը կտրեն կամ մեջտեղէն երկու կտորի կը բաժնեն...»⁵:

Խիստ սակավ դեպքերում երեխաները որբանոցներից տեղափոխվում էին ավելի ապահով վայրեր ու փրկվում կոտորածից, ինչպես օրինակ՝

¹ Տե՛ս Կеворкян Р., նշվ. աշխ., էջ 402:

² Տրապիզոնի թեմին վիճակատը Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը, էջ 343:

³ Տե՛ս Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Բ հրատ., Անթիլիաս, 2010, էջ 277:

⁴ Տե՛ս Արապեան Թ., նշվ. աշխ., էջ 271-272:

⁵ Մկրտիչեան Թ., նշվ. աշխ., էջ 78:

Դիարբեքիրում ապաստան գտած շուրջ 610 որբեր 1919 թ. Միրզա Քեթեն-ձյանի խնամակալությամբ տեղափոխվեցին Միրիա¹: Ցավոք, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի մյուս նահանգների և հատկապես Դիարբեքիրին հարակից Խարբերդի նահանգի, այս տարածքով տեղահանված հայ որբերի ու կանանց համար փրկվելու հնարավորությունները շատ քիչ էին, քանի որ Դիարբեքիրի նահանգի տարածքում 1915-1923 թթ. հատուկենտ միսիոներներ էին գործում: Խնդիրն այն է, որ դեռևս 1915 թ. ամռանը այստեղից արտոնվեց Դիարբեքիրի հայության տեղահանության ու կոտորածների ակնատեսը դարձած ամերիկացի բժիշկ Ֆլոյդ Սմիթը, որի անձնուրաց աշխատանքի մասին բազմաթիվ վկայություններ կան: Արտոնվեցին նաև Մարդինում գործող միսիոներներից Ալֆեուս Էնդրյուսը, բժիշկ Դենիել Թոմը և Ազնես Ֆրնանզան: Մարդինի կայանում մնացին միայն միսիոներուհիներ տիկին Դյուվեյը, օրիորդ Դյուվեյը, օրիորդ Գրաֆը², որոնց ջանքերը՝ փրկելու, խնամելու հայ տարագիրներին, խիստ համեստ կարող էին լինել Խարբերդի միսիոներական կայանում աշխատող միսիոներների կատարածի համեմատ: Թեև նշենք, որ Մարդինում էր, որ նշված ժամանակահատվածում գրեթե միշտ գործել են մի քանի ամերիկացի միսիոներներ, որոնց որբախնամ գործունեության շնորհիվ հնարավոր է եղել փրկել բազմաթիվ որբերի կյանք, նրանց կեցության պայմաններով ապահովել, ապա տեղափոխել ավելի ապահով տարածքներ:

Ինչ վերաբերում է հայ կանանց՝ հարեմներում տեղավորելու, վաճառելու և այլ հանցանքներին, ապա նման դեպքերը ևս Դիարբեքիրում բազմաթիվ էին: Ֆ. Ալ Ղոսեյնը վկայում է, որ Դիարբեքիրում մուսուլմանների գրեթե բոլոր տներում կային մեկից հինգ հայ սպասուհիներ: Նշվում է, որ վերջիններիս թիվը քաղաքում գերազանցում է 5000-ը, որոնք հիմնականում Էրզրումից, Խարբերդից, նաև այլ նահանգներից էին³:

Դոմինիկյան առաքելության մեծավոր վերապատվելի Հայր Պերեի տեղեկագրում ևս նշվում է հայ կանանց նկատմամբ անարգանքների մասին. ակնատեսը գրում է, որ Մարդինով անցնող բոլոր խմբերին կանգնեցնում էին քաղաքի մերձակայքում, հնարավորություն տալիս իսլամներին ընտրել գեղեցիկ կանանց ու աղջիկների: Նա նշում է, որ տարբեր նահանգներից Կոնիա բերված ֆրանսիացի տեղափոխվածներ (ցավոք, հեղինակը չի հստակեցնում նրանց անունները) իրեն վստահեցրել են, որ նաև «գերման պաշտոնատարներ եւ սպաներ զանազան տեղեր բազմաթիւ հայ աղջիկներ ձեռք անցուցած են»: Մասնավորապես, հոգևորականը վկայում է այն մասին, որ Սեբաստիայում հայ ընտանիքները գերմանացի հյուպատոսի պաշտպանությանն են հանձնել մի քանի աղջիկների, ինչպես նաև նրանց ապրուստի

¹ Payaslian S., նշվ. աշխ., էջ 305:

² «The Missionary Herald», November 1916, p. 518.

³ Տե՛ս Faiz El- Ghusein, նշվ. աշխ., էջ 37:

համար անհրաժեշտ գումարներ, սակայն ընտանիքների տեղահանությունից հետո նա նրանց հանձնել է մուսուլմաններին¹: Հայ կանանց վաճառում էին հատուկ շուկաներում, ինչպես 1915 թ. օգոստոսին 15-ին Մարդինում կազմակերպված հայ երիտասարդ կանանց բաց վաճառքն էր: Կախված կնոջ տարիքից և գեղեցկությունից՝ նրանցից յուրաքանչյուրի համար գնորդները վճարում էին մեկ-երեք թուրքական լիրա²:

Այսպիսով, Դիարբեքիրի նահանգը դարձավ Հայոց ցեղասպանության խոշոր կենտրոններից մեկը, ընդ որում առավել լայնածավալ կոտորածները տեղի ունեցան հենց 1915 թ.: Նահանգի մի շարք բնակավայրեր դարձան նաև այլ նահանգներից տեղահանվածների սպանդավայրեր. Դիարբեքիրից, Խարբերդից, Էրզրումից, Բիթլիսի տարբեր բնակավայրերից տեղահանված հայերի բազմաթիվ խմբեր իրենց մահկանացուն կնքեցին Դիարբեքիր-Մարդին ճանապարհին, Տարայի հոռմեական նկուղներում ու զնդաններում, ավելի հարավ՝ Ռաս ուլ-Այնի շրջակայքում: Դ. Գոնտի կարծիքով՝ 1915 թ. վերջերին նահանգում ավելի քան 100.000 մարդ է սպանվել³: Դիարբեքիրի վերաբերյալ ծավալուն ուսումնասիրության հեղինակ Հ. Կայգերը ևս եզրակացնում է, որ Դիարբեքիրի նահանգում հայերի զոհերի թվաքանակը վստահաբար գերազանցում էր 100.000-ը⁴: Իհարկե նշված թվաքանակի մեջ ներառված չեն այլ նահանգներից տեղահանված և Դիարբեքիրի նահանգի տարածքում սպանվածները, որոնց թիվը գերազանցում էր տեղի հայերի թվաքանակին:

Արփինե Բաբումյան – Դիարբեքիրի նահանգի հայ բնակչության կոտորածները 1915 թ.

Հայ բնակչության ոչնչացմանն ուղղված կոնկրետ գործողությունների առաջին ազդակը Դիարբեքիրի նահանգում դարձավ դեռևս 1914 թ. օգոստոսին Դիարբեքիրի շուկայի հրդեհումը, որից մեծապես տուժեցին հայ առևտրականներն ու արհեստավորները: 1915 թ. Դիարբեքիրի նահանգի հայաբնակ բոլոր բնակավայրերում, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ մյուս բնակավայրերում հայ բնակչությունը ենթարկվեց բռնությունների, տեղահանության ու կոտորածների: Ընդ որում, եթե մյուս բնակավայրերում բավական տարածված էր հայերի իսլամացման քաղաքականությունը, ապա Դիարբեքիրում թեև իսլամացումը կարող էր տեղահանությանը կամ կոտորածին այլընտրանք լինել, բայց ամբողջովին չէր ապահովում կրոնափոխի հետագա անվտանգությունն ու ապահովությունը: Այն հանգամանքը, որ Դիարբեքիրում փրկության հնարավորությունները

¹ Տե՛ս Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը, էջ 375:

² Տե՛ս Кеворкян Р., նշվ. աշխ., էջ 417:

³ Տե՛ս Gaunt D., նշվ. աշխ., էջ 310:

⁴ Տե՛ս Kaiser H., նշվ. աշխ., 423-424:

շատ նվազ էին, նաև ընդգծված դաժանություններ էին կիրառվում կանանց, երեխաների նկատմամբ, պայմանավորված էր այս նահանգի նահանգապետի անձով: Ռեշիդի համար գերխնդիր էին տարածքի ընդհանրապես հայաթափությունը, ինչպես նաև դրա վերջնական թրքացումը: Նաև՝ մեկ այլ բնորոշ գիծ, որ նկատվում է այս նահանգում. դա խիստ կազմակերպված գործողությունների պլանն էր ու դրանց գրեթե անթերի իրականացումը, ինչը ևս, թերևս, կապված էր Ռեշիդի անձի հետ: Հայերի ոչնչացմանը գրեթե զուգահեռ՝ այս տարածքներում սկսեցին բնակեցնել տասնյակ հազարավոր քուրդ գաղթականների: 1915 թ. հետո կոտորածներից փրկված և ինչ-որ տեղ ապաստան գտած հայերի նկատմամբ ևս շարունակվեց նույն վախի, կոտորածների ու արքայի քաղաքականությունը, ինչը հանգեցրեց տարածքի վերջնական հայաթափմանն ու արդեն սակավաթիվ վերապրածների հայրենազրկմանը:

Արփինե Բաբլումյան – *Массовое истребление армянского населения провинции Диарбекир в 1915 году*

Ключевые слова – *Западная Армения, Диарбекир, Тигранакерт, Геноцид армян, депортация, исламизация, Аргана Маден, Мардин, Мехмед Решид*

Первый сигнал о конкретных действиях, направленных на истребление армянского населения в провинции Диарбекир, поступил в августе 1914 года, когда от поджога на городском рынке Диарбекира в финансовом плане пострадали именно армянские торговцы и ремесленники. В 1915 г. во всех населенных пунктах провинции Диарбекир, как и по всей Западной Армении, армянское население подверглось насилию, депортации и резне. Более того, если политика исламизации армян была достаточно распространена в других населенных пунктах, то в Диарбекире исламизация могла быть альтернативой депортации и резне, но она не обеспечивала в полной мере дальнейшую безопасность новообращенного. Жестокость по отношению к женщинам и детям, а также тот факт, что в Диарбекире шансы на спасение были очень низкими, были связаны с личностью губернатора этой провинции. Главной задачей Решида было истребление армян в целом и окончательная тюркизация провинции. С Решидом связаны также строго организованный план действий и его почти идеальная реализация. Ряд поселений на территории Диарбекира превратились в бойни депортированных армян из других провинций. Практически одновременно с истреблением армян на этих территориях стали заселяться десятки тысяч курдских мигрантов. После 1915 г. политика страха, резни и изгнания продолжалась по отношению армян, которые пережили резню, и это привело к окончательному изгнанию армян с этой территории.

Arpine Bablumyan – *The Massacres of Armenian Population of Diarbekir Province in 1915*

Key words – *Western Armenia, Diarbekir, Tigranakert, the Armenian genocide, deportation, islamization, Arghana Maden, Mardin, Mehmed Reshid*

The first signal of concrete actions aimed at the extermination of the Armenian population in Diarbekir province was in August of 1914 when fire broke out in the market of Diarbekir city and greatly affected mainly Armenian traders and craftsmen. In 1915, all Armenian-populated areas of Diarbekir province, as well as throughout Western Armenia, the Armenian population was subjected to violence, deportation and massacres. Moreover, if the policy of Islamization of Armenians was quite widespread in other settlements, in Diarbekir, Islamization could have been an alternative to deportation or massacre, but did not fully ensure the further security and safety of the converted person. There were lots of evidences of cruel treatment against women and children in this province and the chances of rescue were low. The fact that the policy of extermination of the Armenian population was well organized and implemented in Diarbekir was connected with the governor's personality of this province. The main task for Reshid was the elimination of Armenians, and the final Turkification of the area. Many settlements in Diarbekir province became the slaughterhouses of deportees from other provinces. At the same time with the extermination of Armenians, tens of thousands of Kurdish migrants began to settle in these areas. The same policy of fear, massacres and exile continued towards the Armenians who survived in 1915 which led to the final exile of Armenians from this area.

Ներկայացվել է 05.04.2022

Գրախոսվել է 15.04. 2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Արփինե Բաբլումյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (arpinebablumyan@rambler.ru)

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, Միրիա, Լիբանան, որբեր, որբանոցներ, որբանոցային մամուլ, հայապահպանություն, ինքնություն, կրթություն, մայրենի լեզու, հավատ, խնամատարություն, արհեստներ

Հայոց ցեղասպանությունը վերապրած կրտսեր սերնդի միայն մի մասին էր բախտ վիճակվել հայտնվել հայկական որբանոցներում: Մինչև 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուղրոսի զինադադարը գործել են նաև թուրքական որբանոցներ, իսկ մինչև 1930-ական թվականների սկիզբը՝ հայկական որբանոցներին զուգահեռ՝ նաև օտարերկրյա և միսիոներական որբանոցներ:

Անհերքելի է, որ երեխաները ևս՝ որպես ազգի անբաժանելի մաս, Հայոց ցեղասպանության զոհ էին դառնում¹: Նրանք թիրախավորվում էին ոչ միայն որպես հասարակության անբաժանելի, միաժամանակ խոցելի հատված, այլև մի մաս, որին ավելի դյուրին էր ինտեգրվել այս կամ այն հասարակությանը, ինքնության խնդիրները մոռացության տալ, տարատեսակ նպատակների ծառայեցվել, ձուլվել մեկ այլ ազգությանը և այլն՝ լինեին դրանք թուրքական, օտարերկրյա իշխանությունների, կազմակերպությունների կամ անհատների կողմից իրականացվող: Երիտթուրքական կառավարությունը, իրագործելով ցեղասպանությունը, թիրախավորել էր ընտանիքը՝ խմբերի վերարտադրության և հավաքականության ամենափոքր հիմնական միավորը, հաշվի առնելով այն փաստը, որ հետագայում նրա անդամները, մասնավորապես երեխաները, թեկուզ և կրոնափոխ եղած, ինչ-որ մի պահի հնարավոր է վերադառնային իրենց արմատներին: Դրանով նրանք փորձում էին զրկել հայ տարագիրներին նաև գոյատևման հիմնական հենարանից, ինչպես նաև ինքնապաշտպանվելու կարողությունից: Այս կերպ կառավարությունն ապահովագրում էր իրեն՝ ցեղասպանական գործողությունների համար պատասխանատվության ենթարկվելու հավանականությունից:

Հայոց ցեղասպանության առաջին տարիներին որբ երեխաների տեղաշարժերն անկանոն էին, որբահավաք աշխատանքները՝ անկազմակերպ,

¹ Տե՛ս **Dadrian V.**, Children as Victims of Genocide: the Armenian Case // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2003, թիվ 7, էջ 3:

նրանք մի որբանոցից տեղափոխվում էին մյուսը, հաճախ դրանք ֆինանսական սղության, համաճարակների, կառավարության կողմից մի շարք արգելքների և այլ պատճառներով փակվում էին, ու այդ ընթացքում իրավիճակին հազիվ համակերպված որբերը ստիպված էին հերթական դժվարություններն ու բարդությունները հաղթահարել:

Ցեղասպանության տարիներին գործել են հայկական և օտարերկրյա բարեգործական տարբեր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող որբանոցներ, որտեղ պայմաններն ինչ-որ չափով բարենպաստ են եղել, ինչը որբերին հնարավորություն է ընձեռել պահպանել հայկական ինքնությունն ու չմոռանալ մայրենի լեզուն: Լրիվ հակառակ պատկերն էր թուրքական պետական որբանոցներում, երբ բոլոր հնարավոր միջոցները գործադրվում էին՝ որբերին հայկական ինքնությունը մոռացության տալու, ազգափոխ անելու և նրանց ծառայեցնելու թուրք ազգի շահերին՝ այն ակնկալիքով, որ մի քանի տարի անց թրքացած որբերը պետք է ազնվացնեին թուրքական արյունը¹, թեև թուրքական շրջանակներում միշտ մտավախություն է եղել, որ այդ երեխաները, այդպիսի փրկվելով, հետագայում վրեժխնդիր կլինեն:

Հայկական որբանոցներում ապաստանած հայ որբերի խնդիրները նույնպես բազմաբնույթ էին: Որբանոցների գործունեությանն առնչվող հարցերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է այն դիտարկել ցեղասպանական՝ տեղահանության, արքայի գործընթացներին զուգահեռ, երբ սկիզբ էին առել երեխաների հավաքագրման աշխատանքները: Բնականաբար սա նոր երևույթ չէր, քանզի դրանք սկսվել էին դեռևս արդուլիամիդյան ջարդերի տարիներին:

Նշենք, որ արքայազնայաններում, համակենտրոնացման ճամբարներում երբեմն հանդիպում ենք թուրքական, հայկական և օտարերկրյա կազմակերպությունների նախաձեռնությամբ գործող վրանային որբանոցների, որտեղ որոշ ժամանակահատված պահելուց հետո որբերին տեղափոխում էին դասական բնույթի որբանոցներ: Այն է՝ նրանց երբեմն կենտրոնացնում էին որոշակի վայրերում՝ որոշելու նրանց հետագա ճակատագիրը: Սկզբնական ժամանակահատվածում ավելի ակտիվ էին գործել միսիոներական, օտարերկրյա կազմակերպություններն այն պարզ պատճառով, որ նրանց գործունեությունն ինչ-որ առումով, եթե չասենք, արտոնված էր, ապա արգելված կամ սահմանափակված չէր: 1915 թ. Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությունը, Դանիացի տիկնանց միությունը կարողանում էին Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում և հարակից այլ վայրերում որբանոցներ հիմնել: Տարածաշրջանում ակտիվ գործունեություն է ծավալել նաև Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպությունը:

¹ Տե՛ս **Բանեան Գ.**, Յուշեր մանկութեան եւ որբութեան, Անթիլիաս, 1992, էջ 168:

Միսիոներական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից որբերի հավաքագրումը շատ արագ թափ է ստանում, ինչը մտավախություններ էր առաջացնում հայկական շրջանակներում, քանզի որքան էլ դա վերաբերեր երեխաների փրկությանը, տվյալ պարագայում՝ զուտ ֆիզիկական, պարզ էր, որ հայկական կողմը չէր կարող այդ փաստին հանգիստ վերաբերվել:

Մերձավոր Արևելքում հայկական որբանոցների ցանցի ստեղծման համար կարևոր էր ազգային, բարեգործական կազմակերպությունների, Կիլիկիո կաթողիկոսարանի, մասնավորապես Սահակ կաթողիկոսի, Հալեպի առաջնորդարանի, Կ. Պոլսի պատրիարքարանի դերը: Որբանոցներ հիմնադրելու ու դրանց գործունեությունն ապահովելու համար նյութական միջոցներ էին պետք, ինչը շատ խնդրահարույց էր: Հայկական կողմը ֆինանսավորման համար դիմում էր բազմաթիվ միջոցների. հայկական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ, հայրենակցական միություններ ու անհատ որբախույզներ պարբերաբար կազմակերպում էին դրամահավաքներ, իրականացնում հանգանակություններ: Հայերի փրկության առաքելության գաղափարը քարոզվում էր ԱՄՆ-ից մինչև Ռուսական կայսրություն, Եթովպիայից մինչև Զիբուրի ու Ավստրալիա կազմակերպվում էին «Որբերի կիրակի», «Որբերի փրկության շաբաթ», «Փրկենք անապատի որբերը», «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսներով հանգանակություններ: Հանրությանն իրազեկելու նպատակով տպագրվում էին գրքեր, ալբոմներ, որոնց հասույթը փոխանցվում էր խնամատարության գործին: Այս ամենն իրականացվում էր «Վաղն արդեն ուշ է լինելու»¹ կամ «Միայն հայի դրամը կարող է հայ որբին փրկել»² կարգախոսներով: Այսպիսով, հայկական որբանոցներում երեխաներն ունեին առաջին հերթին ֆիզիկական ապահովություն, իսկ որպես առանձնահատկություն նշենք, որ ընդունելության հարցում, ի տարբերություն օտար ֆինանսավորմամբ որբանոցների, երեխաների ընտրություն չէր կատարվում: Հայկական կողմի համար հայ որբն ուներ մեկ չափանիշ՝ ազգությամբ հայ, և դա բավարար էր:

Հայերի ջանքերով հիմնված առաջին որբանոցը Հալեպի հայկական որբանոցն էր³, որը բացվել է 1915 թ. հուլիս 31-ին վերապատվելի Ահարոն Շիրաճյանի ղեկավարությամբ և իր տասնամյա գործունեության ընթացքում հազարավոր հայ երեխաների կյանք փրկել: Սա այն ժամանակահատվածն էր, երբ Օսմանյան կայսրությունը հետևողականորեն իրականացնում էր հայերի բնաջնջման քաղաքականությունը, ուստի վերջինիս գործունեությունը մշտապես վտանգված էր:

¹ Մինչև ե՛րբ պիտի սպասեն... օրերը կ'անցնին // «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 30 օգոստոս/12 սեպտեմբերի 1919, թիվ 281:

² Անապատի մեծ առաքյալը // «Ժողովուրդի ձայնը», 1/14 սեպտեմբեր 1919, թիվ 283:

³ Տե՛ս **Մարգարյան Ն.**, Հալեպի հայկական որբանոցը 1915-1924 թթ. // «Ցեղասպանագիտական հանդես» (այսուհետև՝ «ՑՀ»), 2019, թիվ 7/1, էջ 27-53:

Երբեմն որբանոցների ֆինանսական աղությունից և շենքում նրանց տեղավորելու հնարավորությունից ելնելով՝ որբանոց ընդունվելու պայման էր դրվում երկկողմանի ծնողագուրկ լինելը, թեև նրանց թշվառ վիճակը թույլ չէր տալիս ընդունման համար պատասխանատու մարդկանց ու մարմիններին մերժել որևէ երեխայի, բայց իհարկե եղել են նաև նման դեպքեր: Հալեպի որբանոցի աշխատակից Էլմաս Պոյաճյանն իր հուշերում որբանոցի մասին գրում է. «Նորաբաց որբանոցին դուռը շարաններով կը սպասեին դժբախտներ՝ տնօրենին կարգադրութեանը: Այժմ որբանոցը եղաւ «Հայ տուն», ուր կային կաթընկեր մանուկներէն մինչեւ Հայնիէն աքսորված ծերունի ... Թէպէտ բաւարար ուտելիք չունէինք՝ Պատուելին կ'ըսէր. «Թող հայուն բեկորները փողոցը չմեռնին»¹: Վերապատվելի Շիրաճյանը որբանոց է ընդունել բոլոր որբերին՝ բորոտով, տրախոմայով, դիզինտերիայով կամ տիֆով վարակված՝ առանց որևէ խտրականության: Տնօրենությունը հատուկ պայմաններ էր ստեղծում, սենյակ էին տրամադրում հիվանդ որբերին, մեկուսարաններ՝ նորեկների ախտահանման և կարատինում մնալու համար²:

Եգիպտոսի հայ որբախնամ կազմակերպության³ հոգաձության ներքո գտնվող Ադանայի որբանոցն իր գործունեությունը սկսել էր 1919 թ. սկզբներին, 350 որբերով, որոնք մինչ այդ տեղավորված էին տեղի Հայ ազգային միության շենքում: Նրանց թիվն արագորեն համալրվել է՝ հասնելով 950-ի, որոնք հիմնականում Կեսարիայի և Սեբաստիայի շրջաններից էին, ապա՝ 1300-ի, թեև որբանոցը կարող էր տեղավորել 400-500 որբի⁴: Ավելին՝ ավետարանական եկեղեցու բակում բորոտության համար անօգնական թողնված որբերին նույնպես բերել են որբանոց, որոնք ամերիկյան հիվանդանոցում բուժում ստանալուց հետո ապաքինվել են և համալրել որբանոցի շարքերը⁵: Նման գերծանրաբեռնվածությունը նոր խնդիրներ ու տարաձայնություններ էր առաջացնում Որբախնամի, Հայ ազգային միության և որբանոցի տնօրենության միջև:

Որբանոցներում երեխաների միջև տարբերակումներ չդնելու ու ցեղա-

¹ **Պոյաճյան Է.**, Հայկական որբանոցի կեանքն // «Ջանասեր» (Պէրյոթ), 1 հոկտեմբեր 1964, թիվ 19, էջ 415:

² Տե՛ս **Kévorkian R.**, The Armenian Genocide: a Complete History, London, New York, 2011, p. 643:

³ 1905 թ. հիմնված և 1916 թ. Ալեքսանդրիայում վերակազմավորված Որբախնամ կազմակերպությունը Կանոնագրության առաջին հոդվածով իր գլխավոր նպատակն է սահմանում. «Ջարդին ու սովին արհաւիրքներէն ճողոպրած հայ որբերուն անմիջական նպաստ հասցնել, ըլլայ Հայաստանի, ըլլայ Կիլիկիոյ մէջ»: Տե՛ս Կանոնագիր Հայ որբախնամ ընկերութեան (Աղեքսանդրիա), Գահիրե, 1916, էջ 2:

⁴ Տե՛ս Հայ որբախնամ ընկերութիւն, տեղեկագիր Հայ որբ. Ընկ. Գահիրէի հատուածին, շրջան 1919 օգոստ. 17-էն 1921 դեկ. 31, էջ 10:

⁵ Տե՛ս Ատանայի ազգ. Որբանոցը (Քաղուած Ազգ. Միութեան ներկայացուած տեղեկագրէն) // «Կիլիկիա» (Ադանա), 18 ապրիլ 1919, թիվ 2:

սպանության հոգեցնցումը հաղթահարելու, իրենց վերագտնելու նպատակով խմբեր էին ստեղծվում կույր երեխաների համար, փորձում էին նրանց նույնպես ներգրավել որբանոցի առօրյային: Նրանք հիմնականում որբանոցների համար արհեստագործական աշխատանքներ էին կատարում, անգամ՝ երաժշտական նվագախմբեր կազմում:

Նշենք, որ հայկական որոշ որբանոցներ ընդունել են խառնածին երեխաների՝ փորձելով նրանց խեղված ճակատագրերը հայությանը վերադարձնել, թեև այդ երեխաների ինքնության հարցին և առհասարակ երևույթին միանշանակ գնահատական տալը բարդ է և դուրս մեր ուսումնասիրության շրջանակից:

Հայկական որբանոցներում առաջնային մարտահրավերը հայկական ինքնության, հայկական միջավայրի ապահովումն էր: Որբերը տարբեր վայրերից ու տարբեր ճանապարհներով կենտրոնանում էին որբանոցում, նրանց համար անծանոթ միջավայրում և առաջին գիտակցումը լինում էր հայկական հավաքականության գաղափարը: Այդտեղ խոսում էին տարբեր լեզուներով, տարբեր գավառաբարբառներով, զրկված ծնողական խնամքից, միմյանց անծանոթ էին և գիտակցում էին, որ բոլորը եղբայրներ են, արյունակից ու հայրենակից: Ուրախ էին, որ թափառական կյանքը պետք է ավարտին հասներ¹:

Հայկական միջավայրի պահպանման առաջին պայմանը մայրենի լեզվով հաղորդակցությունն ապահովելու խնդիրն էր, որը պարտադիր էր բոլոր որբանոցների համար: Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Սուրիո պատվիրակ Միքայել Նաթանյանն իր հոդվածում քննադատում էր ցանկացած փոքր միջադեպ, երբ որբանոցում թուրքերենով էին հաղորդակցվում. «Ասիկա Հայ լեզուին մարտիրոսվածութիւն է»²:

Նշենք ավելին՝ եթե օտար ֆինանսավորմամբ գործող որբանոցներում մինչև 1918 թ. թուրքական իշխանությունները թույլատրում էին որբանոցներում տեղավորել հայ որբերին, բայց մշտապես արգելում էին կրթական գործունեություն սկսելու փորձերը, օրինակ՝ Հալեպի հայկական որբանոցում կրթական ծրագրերը երեք անգամ կասեցվել են³:

Բացառապես հայերենով հաղորդակցվելու սկզբունքով առաջնորդվելիս անհրաժեշտ էր հաղթահարել որոշ խոչընդոտներ, որոնցից կարելի է առանձնացնել մի քանիսը. մայրենի լեզուն յուրացնելու խնդիր էին ունենում Կիլիկիայի շրջանի հայերը, որոնք մեծամասամբ թրքախոս էին, ինչպես նաև ավելի ուշ որբանոցում հայտնված որբերը: Այն է՝ երեք-չորս տարի անց՝ 1918 թ. հետո, որբերը տարբեր հանգամանքներում էին հայտնվում որբանոցնե-

¹ Տե՛ս Յուշամատեան Ճիպէյի ամերիկեան որբանոցի 1920-1925, Պէյրոթ, 1969, էջ 10:

² **Նաթանեան Մ.**, Ամանորի հանդէս որբանոցի մէջ // «Հայ Ձայն» (Հալէպ), 9 հունվար 1919, թիվ 49, Ա տարի:

³ Տե՛ս Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919), Հալէպ, ա.տ., 1919, էջ 6:

րում. օրինակ՝ փրկվելով իսլամական միջավայրից՝ արաբների, քրդերի տներից կամ թուրքական որբանոցներից, նրանք մայրենի լեզուն մոռացել էին կամ եթե տարիքով ավելի փոքր էին, չէին հասցրել անգամ տիրապետել իրենց լեզվին, ուստի նոր էին սկսում սովորել:

Շուրջ երեք տարի Անթուրայի թուրքական որբանոցում¹ հայերենը խստիվ արգելված լինելու պատճառով մայրենի լեզվին իսպառ չտիրապետող կամ այն մոռացած հայ որբերը թուրքական ղեկավար անձնակազմի՝ որբանոցից հեռանալուց հետո կարողացել են վերհիշել մայրենի լեզուն, վերականգնել են իրենց հայկական անունները, մայրենի լեզվի դասերը, սկսել են հայերեն երգել: «Քանի ամիս մը հետո... հեզելով, ծանր-ծանր վանկերը կապելով բառերը դուրս կուգան տղոց բերնէն»²: Այնթափի որբանոցում գտնվողները Այնթափ-Քիլիսի տարածաշրջանից էին, և երկու ամիս անց անգամ բառ չիմացող որբերը խոսել են հայերեն³:

Ադանայի որբանոցի սան Երվանդ Փոստալյանը⁴ նշում է, որ տնօրեն Վահագն Տաթևյանի ձերբակալումից և կախաղան բարձրացվելուց հետո հայկականությունն իսպառ վերացել է որբանոցում⁵:

Եթե դիտարկում ենք հայկական որբանոցներում կիրառվող լեզվի ուսուցման մեթոդները, ապա հարկ է նշել, որ դրանք բավականին արդյունավետ են եղել: Վկայությունները բազմաթիվ են, ամիսներ անց երեխաները կարողացել են հաղորդակցվել մայրենի լեզվով, միջոցառումներ են կազմակերպվել, որտեղ հայ գրականության և լեզվին նվիրված անդրադարձներ են եղել: Մայրենի լեզվի ուսուցմանը նպաստել են նաև որբանոցների խմորատիպ թերթերը:

¹ Անթուրայի որբանոցը թուրքական կառավարության հիմնած ամենամեծ որբանոցներից է եղել, որը տեղակայվել է Բեյրութից մոտ երեսուն կիլոմետր հյուսիս-արևելք գտնվող կաթոլիկ լազարիստական միաբանության Մր. Հովսեփ քոլեջի շենքում: Որբանոցն առանձնացել է հայ որբերի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով ու թրջացման ուղղված իր հետևողական գործողություններով: Անթուրայի որբանոցի շուրջ 2000 հայ երեխաներից միայն 650-ն են կարողացել վերապրել: 1918 թ. հետո Անթուրայի վերահսկողությունն անցել է հայկական, ապա Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպությանը:

² **Բանեան Գ.**, նշվ. աշխ., էջ 271-272:

³ Տե՛ս Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն եւ քառամեայ պատմութեան վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս), հայ որբախնամ ընկերութեան Այնթափի որբանոց, Ճիւնիէ-Լիբանան, Աղեքսանդրիա, 1923, էջ 7-8:

⁴ Երվանդ Փոստալյանը ծնվել է 1903 թ. Հաճըն քաղաքում: Հայրը գոհվել է Հաճընի 1909 թ. ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Շուրջ 230 երեխաների քարավանի հետ նա անցել է Ադանա, որտեղ նրանց խնամատարությունը ստանձնել է Վահագն Տաթևյանը (1875-1916): Շուրջ 1600 որբեր ապաստանել են Քարդայի որբանոցում, որը վերանվանվել է Ջեմալ փաշայի անունով: 1915 թ. փետրվարին թուրքական կառավարության հրամանով Վահագն Տաթևյանին ու 32 հայ ուսուցիչների բանտարկել են, որից հետո որբանոցի ղեկավարումն անցել է թուրքական կողմին:

⁵ **Փոստալյան Ե.**, Հաճնցի 1600 որբերից մեկի ճակատագիրը // Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետև՝ ՇՅԹԻ) թանգարանային ֆոնդեր, բժ. 8, թպ. 93, ֆ.հ. 4164, էջ 14:

Հայոց ցեղասպանությունից հետո որբանոցային սերունդը սկզբնավորել է մի յուրահատուկ գրական ուղղություն, այն է՝ որբանոցային մամուլը: Այն բնորոշ էր ավելի երկարատև գործած ու կազմակերպված որբանոցներին, բայց հարկ է փաստել, որ որևէ պարբերական հրատարակելու գաղափարն իրականության վերածելու համար կարևոր էր որբանոցում տիրող մթնոլորտը: Խմորատիպ թերթեր ունեցել է Հալեպի հայկական որբանոցը, որի մասին միայն որոշ հիշատակումներ կան: Այնթափի որբանոցն ունեցել է «Այգ» անունով թերթ, որի մասին հիշատակվում է Եգիպտոսի Որբախնամի տեղեկագիր-ակնարկում¹: 1918-1919 թթ. Թիֆլիսում տպագրել է «Փարոս»-ը, որը եղել է Ամերիկյան կոմիտեի որբանոցների աշակերտական միության օրգանը: 1925-1928 թթ. Բեյրութում տպագրվել է «Որբաշխարհի աստղ» ամսագիրը, որը Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպության որբերի դաշնակցության/լիգայի համատեղ թերթն էր:

Թերթերի հրատարակումը կարևոր էր լեզվի պահպանության, ազգային տարրերի շարունակականության ապահովման տեսանկյունից: Թերթերում զետեղվում էին ամենատարբեր իրադարձություններին, թեմաներին վերաբերող նյութեր, իսկ բովանդակային վերլուծություններից նկատում ենք, որ ազգապահպան հրապարակումները մեծամասնություն են կազմում:

Որբանոցային խմորատիպ թերթի դասական օրինակ է Ջեյլի որբանոցի² «Տուն» աշակերտական ձեռագիր ամսագիրը: Վերջինիս 34 համարները՝ շուրջ 850 էջ, բավականաչափ ծավալուն են ու հարուստ գրական փորձերի, հուշագրությունների ու որբանոցային կյանքի տեսանկյունից: Դրանք լուսաբանում են որբանոցի առօրյան, տեղեկություններ են պարունակում իրենց ծննդավայրի, հայրենիքի, որբանոցում հայտնվելու պատճառների և առհասարակ հայ լինելու և իրենց նախնիների պատմության ու թողած ժառանգության մասին³: Նշենք, որ որբանոցը մինչև «Տուն» ամսագիրն ունեցել է «Հոսանք» խորագրով խմորատիպ թերթ, որի ստեղծման նախաձեռնությունը կրկին եղել է որբանոցի ավարտական դասարանների աշակերտներին⁴: Նմանատիպ թերթերի բոլոր համարներում ակնհայտ են աշակերտների ու ուսուցչական կազմի ազգային ինքնության վերակերտմանն ուղղված ջանքերը:

Որբանոցներում ազգային ինքնության պահպանման առաջնահերթու-

¹ Տե՛ս Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն..., էջ 21:

² Ջեյլի որբանոցը գտնվում է Միջերկրական ծովի ափին՝ Բեյրութից 40 կմ հեռավորության վրա, այն իր գործունեությունը սկսել է 1920 թվականից, եղել Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպության որբանոցային ցանցում: Մանրամասն տե՛ս Յուշամատեն Ճիպեյլի ամերիկեան որբանոցի 1920-1925:

³ Մանրամասն տե՛ս **Մարգարյան Ն.**, Ջեյլի որբանոցի աշակերտական «Տուն» ամսագիրը. ազգային վերակերտման փորձ // «ՅՀ», 2020, թիվ 8/2, էջ 42-75:

⁴ Յուշամատեն Ճիպեյլի ամերիկեան որբանոցի 1920-1925, էջ 78:

թյուններից էին նաև հայոց պատմության դասերը: Անգամ դասագրքերի բացակայության պարագայում նրանք հնարավորություն են ունեցել սերտել հայոց պատմության կարևոր դեպքերն ու իրադարձությունները, որոշ որբանոցներում ներկայացվել են պատմական թատերգություններ, որին մասնակցել է նաև ուսուցչական անձնակազմը: Հալեպում Բոստոնի «Ազգ-Պահակ» թերթի թղթակից Նշան Կ. Տեր-Պետրոսյանն իր «Հայկական որբանոցը Հալեպի մեջ» հոդվածում նշում է, որ որբանոցում երեխաները սովորում էին հայերեն, անգլերեն և ֆրանսերեն՝ հավելելով. «Մէկ-երկու դասարաններու Ազգային պատմութեան դասաւանդութեան հանդիպեցայ, չէ կարելի հիացումս չի յայտնել այդ առթիւ»¹:

Ազգապահպան գործընթացում հաջորդ կարևոր դերակատարումն ուներ կրոնը՝ հայ առաքելական եկեղեցին: Նշենք, որ հայկական որբանոցներում որբերն ազատ էին իրենց դավանանքի հարցերում և հայտարարվում էր, որ երեք հարանվանական եկեղեցիները հավասարաչափ ընդունելի են եղել կամ առնվազն արգելված չեն եղել: Դրան զուգահեռ, հարկ է նշել, որ հավասարաչափ ընդունվելու հարցը փոքր-ինչ հարաբերական էր, քանի որ փոքրահասակ երեխաներին կարելի էր որոշակիորեն ուղղորդել ավետարանական կամ կաթոլիկ եկեղեցիները, ինչն առավել տարիքով որբերի պարագայում ավելի դժվար էր, քանզի երեխաները քննադատության, անգամ ծաղրի էին ենթարկվում: Հաճախ հոգևոր այրերն իրենք էին այցելում որբանոցներ՝ երեխաների հետ շփվելու, եկեղեցական արարողություններ կատարելու, նրանց մկրտելու, տարբեր միջոցառումների մասնակցելու, բանախոսություններ կազմակերպելու համար, որոնք ուղղված էին հայապահպան առաքելությանը²:

¹ **Լալեան Ս.**, Յուշամատենան նուիրուած Ատուր Զ. Լեւոնեանի: Ինքնակենսագրութիւն եւ դրուագներ իր կեանքէն ու գործէն, Պէրոյ, 1967, էջ 207:

² Ջբելի որբանոցում անգամ պատարագ էր մատուցվում, բանախոսություններ էին կազմակերպվում, օրինակ՝ Տ. Դիոնիս Ա. քահանա Տրեգյանը բանախոսել է «Ինչպես պետք է հայ ապրիլ» թեմայով, և տարբեր պատմություններով հոգևոր հայրը բացատրել նրանց նվիրական պարտավորությունները հայ ժողովրդի և մայրենի լեզվի հանդեպ: Տե՛ս Տ. Դիոնիս Ա. Քինյ. Տրեգեան // «Տուն» աշակերտական ամսագիր (Ջբել), հոկտ.-նոյեմ.-դեկտ. 1924, թիվ 26-27-28, էջ 62:

1924 թ. սեպտեմբերի 15-ին Սահակ կաթողիկոսը նամակ է ուղղել որբանոցի ամսագրին՝ այն վերնագրելով՝ «Սիրելի՛ ճարտարապետներ Աշակերտական «Տուն»-ի ճիպելի Ամերիկյան որբանոցին», որտեղ նշում էր. «Հայրենի հողի վրայ տուն շինելը անելի դիրքն ու ապահով է, որովհետև հայի յատկութիւնը, ուժը, տարողութիւնը և տոկունութիւնը ծանօթ են, իսկ օտար հողը անծանօթ ըլլալուն մանրակրկիտ ուսումնասիրութեան պետք կայ: Բարոյական տան մը շինութեան գլխաւոր ատաղձն է լեզուի, գաղափարի, զգացման և սկզբունքի համերաշխութիւնը... Աչքերնիդ չորս կողմերնիդ դարձուցէք, պիտի տեսնէք, որ արաբախօս, թրքախօս, քրտաբարբառ հայերը կէս հայեր են: Այս պարագան նկատի ունեցէք, որպէսզի «Աշտարակ»ին պէս կիսաւարտ չմնայ Ձեր սկսած «Տուն»-ը ... Աշխատեցէք լաւ Հայեր ըլլալ»: Տե՛ս Սիրելի

Չնայած որբանոցներում, ինչպես նշվեց, երեխաներն ազատ էին կրոնական հարցերում, բայց հարանվանական եկեղեցիների միջև որոշակի խտրականություն եղել է: Հալեպի որբանոցի սան Անդրանիկ Ծառուկյանն այս առիթով գրել է. «Մեր եկեղեցի գնացողները կը տարվեին դասին ճիշտ ետևը ու ամբողջ երկու ժամ ոտքի կը մնային: Իսկ Ժողովարան գնացողները հանգիստ կը նստեին նստարաններու վրա: Հետերնին կը բերեին նաև գունավոր նկարներ»¹: Ամեն դեպքում հարկ է նշել, որ Ժողովարանի բարեկեցիկ պայմանները նպաստել են երեխաների ավետարանական կողմնորոշմանը, թեև որևէ ձևով հարկադրանքի և ստիպողականության դեպքերի՝ ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել:

Բոլոր որբանոցներում ամեն օր եղել են աստվածաբանության դասեր: Ճաշից առաջ միշտ աղոթել են «Հայր մեր»-ը կամ «Փառք ու պատիվ Քեզ»-ը: Ֆիլիփ Զաքարեանի «Ես Ճիպեյլի որբերէն եմ» հուշերում կարդում ենք, որ աչքերը փակ աղոթողներին մյուս որբերը ծաղրում էին: Նշենք նաև, որ որբերն իրենք էին խոստովանում, որ միշտ չէ, որ որբանոցում բոլոր երգերը նույն խանդավառությամբ էին կատարում: Նրանց երգացանկի «Բամբ Որոտան», «Մայր Արաքս», «Ի՛՞զեն հայեր, ի՛՞ սուր», «Կռուեցէ՛ք տղերք» երգերն ավելի լիաթոք էին հնչում, իսկ այդ թափն ընկնում էր, դժգունում և այլակերպվում, երբ բողոքական քարոզչական բնույթի երգեր էին երգում: Որբերը ճնշող մեծամասնությամբ հայ ազգային եկեղեցու զավակներն էին, հետևաբար զարմանալի չէր նման վերաբերմունքը, երբ պարտադրված էին աչքերը փակել ու գլուխները խոնարհել, մինչդեռ նույն հարկադրանքը չկար շարականներ երգելու պարագայում:

Հալեպի որբանոցի մասին է պատմում նաև այնթափցի Զապել Այվազյանը (ամուսնական ազգանունը՝ Ճեպեճյան): Կարևորելով այնտեղ ստացած իր ուսումը, մասնավորապես՝ հայոց պատմության, հայ եկեղեցու պատմության ու աշխարհագրության դասերը, խոր ակնածանքով է նշում Այնթափի ինքնապաշտպանության ղեկավարներից Ներսես քահանա Թավուզճյանի՝ հայ եկեղեցու պատմության դասերի մասին, որոնց ժամանակ նա ասում էր. «Գիրք չունիք, ես պիտի պատմեմ, թուականները, պատահարները նօթագրեցէ՛ք»²:

Հայոց ցեղասպանության հոգեցնցումը որբանոցի սաները փորձել են հաղթահարել կրոնի, եկեղեցու, հավատի միջոցով: Ինչ վերաբերում է դպրությանն ու քրիստոնեությանը, ապա ըստ ընդհանուր գաղափարի՝ վերջիններս այն զույգ ազդակներն են, որոնք պետականության անկումից հետո սատարել են հայ ժողովրդի հարատևմանը, պահպանել և զարգացրել

ճարտարապետներ Աշակերտական «Տուն»-ի Ճիպեյլի Ամերիկյան որբանոցին // «Տուն» աշակերտական ամսագիր, սեպտեմբեր 1924, թիվ 25, էջ 4-5:

¹ Ծառուկյան Ա., Մանկություն չունեցող մարդիկ, Երևան, 1963, էջ 42:

² Եսաեան Զ., Հուշեր // ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, բժ. 8, թ. 93, ֆ. հ. 79, էջ 15:

հայ ազգային առանձնահատկությունները և սովորույթները¹:

Կարևոր բաղադրիչներից էր նաև ազգային պատկանելության, հիշողությունների պահպանման խնդիրը՝ ընտանեկան հիշողություններից, տվյալ տարածաշրջանի ավանդույթներից մինչև ցեղասպանությանն առնչվող հիշողությունները: Բոլոր որբանոցներում երեխաները պատկերացում ունեին հայ մեծանուն գրողների, պատմության կարևոր դրվագների մասին՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Գրիգոր Լուսավորիչ, Ավարայրից մինչև Սարգսրապատ:

Ցեղասպանության մասին հիշողությունները վերապատմելու հարցում որբերն ինքնամփոփ էին, պարփակված, ավելի ուշ էին սկսում խոսել այդ մասին. դժվար էր հաղթահարել բարդությոթ, խոստովանել սեփական անձի, ընտանիքի, ազգի ողբերգությունը, զոհի կարգավիճակը: Սկզբնական շրջանում նրանց պատմությունները, հուշագրությունները հիմնականում ընտանեկան են՝ համադրված որբանոցային կյանքի դրվագներով: Կարելի է նկատել, որ ցեղասպանությունը վերապրելը նրանց համար հավաքական, ազգային միավորող կարևոր գործոն էր: Նկատենք, որ սկզբնական շրջանում ցեղասպանության վերաբերյալ հիշողությունները ընտրողաբար են ներկայացվել, աստիճանաբար են նրանք հաղթահարել բարդությունները իրականության մասին խոսելիս:

Հայոց ցեղասպանությունը հաղթահարելու ու լուրջությունը խախտելու առումով հետաքրքրական է այն դրվագը, երբ Թալեաթ փաշայի սպանության լուրը Լիբանանի Ջբելի որբանոց հասնելու օրը տնօրեն Ռեյ Թրնիսը թույլատրել է հայրենասիրական մեծ երթ անցկացնել: Նա անձամբ է, հայկական եռագույնը ձեռքին, առաջնորդել որբերին, որոնք ժամեր շարունակ ազգային-հայրենասիրական երգերով պտույտներ են կատարել որբանոցի շուրջը²:

Հալեպի հայկական որբանոցի Սաբուն խանի հատվածը 1918 թվականից հետո փոքրիկ Հայաստանի է վերածվել՝ ազգային երգերով, փայտյա զենքերով և զինվորական մարզանքներով: Կիրակի՝ կեսօրից հետո, որբանոցին պատկանող բոլոր տներից որբերն իրենց պատասխանատուների հետ հավաքվում էին, և յուրաքանչյուր խումբ իր սովորած հայրենասիրական երգն էր երգում հյուրերի ներկայությամբ: Որբանոցի զինվորական մարզանքը սկսվում էր Հայաստանի Հանրապետությանն ուղղված ողջույնով³:

Բաքուբայի որբանոցում⁴ Մուշեղ արքեպիսկոպոսը հայապահպանու-

¹ Տե՛ս **Զաքար**, Վարդանանք. 15 դարերու մէջէն // «Տուն» աշակերտական ամսագիր, փետրվար 1923, թիվ 6, էջ 2-3:

² Տե՛ս Յուշամատեան Ճիպէլի ամերիկեան որբանոցի, էջ 142:

³ **Պօյաճեան Է.**, Հայկական որբանոցի կեանքէն // «Ջանասեր» (Պէրյուր), 1964, էջ 416:

⁴ Բաքուբայի որբերին ցուցակագրելու և տեղում գաղթականների հարցերով զբաղվելու համար 1918 թ. հոկտեմբերի 15-ին Մուշեղ եպիսկոպոսն այնտեղ է ուղարկում Բաղդադի Ս.

թյան կարևոր խորհրդանիշ էր համարում եռագույնի տարածումը որքանոցի տարածքում¹, որտեղ փորձում էին ամեն գնով նաև կրթական դասեր կազմակերպել²: Նշենք, որ 1919 թ. որբերի քանակը հասնում էր 1200-ի, որոնց թվում էին Մոսուլի 300 և Համադանից հասած նույնքան որբեր, ովքեր ուսում և մարմնակրթական պատրաստվածության դասեր էին ստանում այնտեղ³:

Ինչ վերաբերում է Երուսաղեմի՝ Արարատյան և Վասպուրականի որբանոցներին, ապա այնտեղ ևս հայապահպանության գործը լավ էր կազմակերպված⁴:

Հայապահպանությանն էին ուղղված պետական և հոգևոր տարբեր այրերի այցելությունները որբանոց. օրինակ՝ 1924 թ. սեպտեմբերի 26-ին Ջբելյի որբանոց է այցելել Հայաստանի Հանրապետության լուսավորության նախկին նախարար Նիկոլ Աղբալյանը: Նա աշակերտների և պաշտոնյաների ներկայությամբ 40 բուպե տնոդությամբ «կուռ և շենիչ» բանախոսությամբ ոգևորել է ներկաներին⁵: Այցելությունների շարքը կարելի է շարունակել Սահակ կաթողիկոսն այցելել է Ջբելյի, Կիլիկիայի որբանոցներ, Հալեպի Առաջնորդարանի փոխանորդ Հարություն քահանա Եսայանը՝ Հալեպի հայկական որբանոց և այլն:

Ուշագրավ են նաև ժամանակի հայտնի մտավորականների այցերը: Ամանորին Երվանդ Օտյանը եղել է Հալեպի հայկական որբանոցում, որի մասին երեխաներին նախօրոք տեղեկացրել են. «Հյուրը նշանավոր մեկն է, շատ մը գիրքեր գրած է և միշտ կը խնդա ու կը խնդացնե»⁶: Սակայն որբերն այդ ժամանակ չեն հիշել ու չեն իմացել, թե ով է Երվանդ Օտյանը: Միջոցառմանը գրողը մեծ դժվարությամբ է փորձել ողջույնով դիմել որբերին, սակայն

Վահան քահանա Թաճիրյանին: Նրան այդ հարցում աջակցում էր վանեցի Ս. Հովհաննես քահանա Սիմոնյանը, ով վրանաքաղաքի բաժիններով ցուցակագրում էր բոլոր որբերին, ինչպես նաև մոտ 40 կանանց, ովքեր 30-ից բարձր տարիք ունեին: Նախատեսվում էր, որ նրանք պետք է լինեին որբանոցի մայրապետները, ընտրվում է ուսուցչական խորհուրդ: Տե՛ս **Վարդանան Ե.**, Անապատե՛ անապատ, Սուրբ Ղազար-Վենետիկ, 1923, էջ 114:

Բաքուբայի որբանոցը 1920 թ. օգոստոսի 18-ին տեղափոխում են Բասրայի մոտ գտնվող Նահր Ալ-Օմար, որտեղ ներքին մատակարարման, կրթական, կարգապահական և այլ խնդիրները շարունակում է ղեկավարել Բաքուբայի վրանավանդում ստեղծված Հայ գաղթականության կոմիտեն՝ Լևոն Շադոյանի ղեկավարությամբ: Տե՛ս **Հայցագործեան Ա.**, Պաքուբայի հայ փախստականները // «Կիլիկիա», 14 հունիս 1919, թիվ 56:

¹ Տե՛ս **Վարդանան Ե.**, նշվ. աշխ., էջ 121:

² Տե՛ս **Սեբեդեան Մ.**, Դիտումներ եւ դատումներ (Էջեր օրագրես), Պէյրոթ, 1932, էջ 122:

³ Տե՛ս Հայ որբախնամ ընկերություն, Իննամսեայ տեղեկագիր Հայ որբախնամ ընկ. Գահիրէի հատվածին գործադիր ժողովին, 1918 նոյեմբերին 1919 յուլիս 31, Գահիրէ, 1922, էջ 13:

⁴ Տե՛ս **Kévorkian R.**, The Araradian and Vaspuragan Orphanages in Jerusalem (1922-1926): a Model of Reconstruction? // «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2020, էջ 75-90:

⁵ Տե՛ս Ներքին լուրեր // «Տուն» աշակերտական ամսագիր, սեպտեմբեր 1924, թիվ 25, էջ 56:

⁶ **Շառուկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 47:

խիստ հուզվել է և միայն մի նախադասություն արտաբերել. «Որբե՛ր, ես ձեզ շատ կսիրեմ»: Տարիներ անց Ա. Ծառուկյանը, իր նախակրթարանի դասագրքում տեսնելով Օտյանի նկարը, հիշել է նշանավոր հավաքի օրը, իրենց հավաքական ողբերգությունը, իսկ ավելի ուշ, ծանոթանալով գրողի աշխատություններին, ըմբռնել է՝ «... տասնյակներով գրքերու հեղինակ գրագետն ինչու երկու խոսք չէր գտած մեզի ըսելիք»¹:

Որբահավաք գործիչներ Ռուբեն Հեռյանը, Դավիթ Աղամյանը, Լևոն Յոթնեղբարյանը նույնպես տարբեր ժամանակներում այցելել են հայկական զանազան որբանոցներ. նպատակը նման անձանց ներկայությունից որբերը ևս մեկ անգամ գիտակցում էին, որ նրանք անտեսված չեն ու հետևողական քայլեր են արել հայապահպանության համար:

Որբանոցներում ազգային բարձր ինքնագիտակցություն ապահովելուն զուգընթաց՝ մտածում էին որոշ որբանոցների սաների Հայաստան տեղափոխելու մասին: Ալեքսանդր Խատիսյանը Եգիպտոս կատարած այցի ժամանակ հանդիպել է Որբախնամի երկու հատվածների Վարչական ժողովի անդամների հետ և քննարկել Իրաքի Նահր Ալ-Օմարի որբանոցը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու հարցը: «Արդեն ազատուած և պատսպարուած որբերին հանդէպ ունինք դեռ հրամայողական պարտականութիւններ: Բաւական չէ անոնց սնունդ, հագուստ և գրենական պիտոյք հայթայթել: Անհրաժեշօրեն հարկ է կեղդոնացնել զանոնք *ազգային մթնոլորտի մը մէջ*, պիտի ընենք նոյն իսկ՝ *հայրենի հողերու վրայ*»:

Ամփոփելով նշենք, որ Հայ բարեգործական ընդհանուր միություն, Հայ ազգային միություն, Եգիպտոսի հայ որբախնամ, Միջագետքի տարագրելոց և այլ կազմակերպություններ, որոնք զբաղվում էին որբանոցների ֆինանսավորման, կրթության ապահովման հարցերով, խիստ կարևորում էին հայկականության պահպանումը: Իհարկե, որբանոցներում միանգամից, կանոնակարգված դասացուցակով, դասագրքերով, ազգային հատուկ ծրագրով դասեր չեն իրականացվել, դրանք աստիճանաբար են կազմվել: Սկզբնական շրջանում որբանոցների գերխնդիրը նյութական միջոցների ապահովումն էր, որբերին ապաստան տալու և սննդով ապահովելու հարցն էր, մանավանդ որբանոցից փախուստների թիվն աճում էր:

Աստիճանաբար, դասերի կազմակերպմանը զուգահեռ, որբանոցը նաև հնարավորություններ էր ստեղծում, որ երեխաները հմտանան որևէ արհեստում, ինչը միտված էր նաև որբանոցի առօրյա կարիքները հոգալուն: Հայկական, օտարերկրյա, անգամ թուրքական որբանոցներում մշտապես գործել են փայտամշակության, ատաղձագործական, կոշկակարության, դերձակության, գորգագործության, ասեղնագործության արհեստանոցներ: Որբերի

¹ Ծառուկյան Ա., նշվ. աշխ., էջ 52:

² Գայանեան Յ. Թ., Անյետաձգելին // «Որբունի» (Աղեքսանդրիա), 1920, թիվ 11, էջ 219:

ձեռագործները երբեմն արտասահման էին ուղարկվում, մասնակցում էին աճուրդների ու այդ հասույթը նույնպես ուղղվում էր որբանոցի կարիքներին: Անգամ Հալեպի հայկական որբանոցում արհեստագործական արտադրանքի վաճառքից ստացված գումարի մի մասը պահվում էր և տվյալ որբին էր տրվում որբանոցից դուրս գալու ժամանակ:

Այս ոլորտում հայապահպանության առանձնահատկություններից էր Արևմտյան Հայաստանի կամ Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերի տարբեր տարածաշրջաններին բնորոշ արհեստները վերակենդանացնելը: Երբեմն լավ վարպետ-ուսուցիչները կարողանում էին կարևոր հմտություններ փոխանցել որբերին. օրինակ Այնթափի գորգագործության և ասեղնագործության ավանդույթները պահպանելը, Կիլիկիայի, Մարաշի, Ուրֆայի, Խարբերդի արհեստներին տիրապետելը և այլն:

Հայապահպանության հարցում երբեմն որոշակի նշանակություն ուներ, թե տվյալ որբանոցի հոգածությունը որ երկրի կամ կազմակերպության ֆինանսավորմամբ էր իրականանում: Իսկ քանի որ միայն հայկական կողմը չէր կարող հոգալ որբանոցի բոլոր ծախսերը, շատ հաճախ այն հայկականից անցնում էր ամերիկյան, հետո՝ ֆրանսիական, չէր բացառվում նաև անգլիական տարբեր կազմակերպությունների հոգածությանը, ինչը որոշակի փոփոխություններ էր մտցնում որբանոցային կյանքում: Նման պարագայում հայկական կողմը ձգտում էր իր պատասխանատվության տակ վերցնել գոնե որբանոցների կրթական հարցերը, դասագրքերի մատակարարումը, ուսուցչական անձնակազմի ապահովումը և նմանատիպ լուծումներով ապահովել հայկական կողմի ներկայությունը:

Ուսուցչական կազմը միաժամանակ աշխատում էր տարբեր ուղղություններով: Ազգային գիտակցումը, նույն ակունքներից սերած լինելու գաղափարը, հայրենիքի, լեզվի, մշակույթի պահպանումը կարևորվում էին հայկական որբանոցներում:

Հայկական որբանոցային ցանցի առանձնահատկություններից էր նաև մարզական կյանքի կարևորությունը, որը որբերին ֆիզիկական տարբեր վարժություններով, սպորտային մրցումների միջոցով կոփելու, հետագայում դժվարությունները հաղթահարելու նպատակին պետք է ծառայեր¹: Մարմնակրթությունը և սպորտը լայն տարածում ունեցան որբանոցներում՝ որպես

¹ Մարմնամարզական կյանքի ակտիվացմանը նպաստել է 1918 թ. նոյեմբերին Կ. Պոլսում հիմնադրված Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ): Համահայկական մարզական միություն ստեղծելու և սկստիական կազմակերպությունները համախմբելու գաղափարը Շավարշ Քրիսյանին էր: Տե՛ս «Մարմնամարզ» (Կ. Պոլիս), մայիս 1913, թիվ 5: Ինչ վերաբերում է որբանոցներում սպորտի տարածմանը, ՀՄԸՄ-ն ուներ իր հստակ տեսլականը. «Լայն և պարզ ծրագրով մը սկսիլ մարմնակրթանքի գործը և այն մտցնել մասնաւորապէս դպրոցներէ և հիմնելի որբանոցներէն ներս»: Տե՛ս **Թորիկեան Բ.**, Պատմութիւն Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան, հ. Ա., Սկիզբէն մինչեւ 1939 թ., Պէրյութ, 1995, էջ 40:

ազգային պատկանելության գիտակցման, հայապահպանության, միասնականության և պատրաստվածության համակցություն, այն նաև կարևոր էր դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու, ծնողական խնամքից զրկված, ցեղասպանության հոգեցնցումը տարած երեխաներին առողջ ապրելակերպի ընտելացնելու համար:

Տարածաշրջանի որբանոցներում նույնպես մարզական կյանքն ակտիվ էր: Հալեպի հայկական որբանոցի համար որբանոցի սան Ա. Ծառուկյանն այս կապակցությամբ գրում է. «...թաղին մեջ շինվեցավ մարզարան մը, մեծ տղաքը ֆուտբոլ ունեցան և բոլորս միասին ունեցանք պարոն Լևոնը»¹: Լևոն Աբգարյանը մարզիչ էր և մարմնամարզությունը որբանոցի ծրագրի անբաժան մասն էր դարձրել, աշխատել տարբեր որբանոցներում:

Զբեղի որբանոցի «Տուն» ամսագրի համարներից նույնպես պարզ է դառում, թե որքան կարևոր էր մարզական կյանքը: Ամսագրի «Ընտիր Խոհեր» բաժնում ներկայացվում է սկաուտի բնութագիրը և «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» կարգախոսի նշանակությունը: «Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան» գրքույկից վերցված և ամսագրի համարներում շարադրված էին նաև սկաուտի երգը, կարգախոսը, 12 կանոնները, որոնց պետք է հետևի սկաուտը, անգամ «Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան» հայտագիր-ծրագրի² կարևոր հատվածներ են զետեղվել թերթում: Որբանոցում կարևորվում էին նաև միջորբանոցային սպորտային մրցումների դերը, ինչպես նաև մարզական արշավները:

Մարզական կյանքին կարևորություն տալու տեսանկյունից կարելի է նշել արաբական արևելքում գործող հայկական և օտարերկրյա բոլոր որբանոցները՝ ամենևին չանտեսելով Կ. Պոլսի և հարակից շրջանների որբանոցները³:

Այսպիսով, Մերձավոր Արևելքի արաբական երկրներում գործող որբանոցների, որբերի թվի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար հարկ է մեջբերել «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերու կացութեան, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ»⁴ փաստաթուղթը⁵: 1922 թ. Ուրֆայի շրջակայքից, Մարդինից, Խարբերդից,

¹ Ծառուկյան Ա., նշվ. աշխ., էջ 119:

² Քաղուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) գրքույկէն // «Տուն» աշակերտական ամսագիր, սեպտեմբեր 1922, թիվ 1, էջ 15-17:

³ Կարևոր երևույթ էր Գուլեի միջորբանոցային օլիմպիական խաղերի անցկացումը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի հովանավորությամբ:

⁴ Սույն տեղեկագիրը, ինչպես նաև «Տուն» ամսագրի ամբողջական թվային տարբերակը մեզ է տրամադրել ՀՅԹԻ հիմնադրամի տնօրենի խորհրդական Միհրան Մինասյանը, որի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրան:

⁵ Փաստաթուղթը կազմվել է Հայ ազգային պատվիրակության պահանջով 1923 թ., փաստ, որը մեծապես նպաստում է դրա հավաստիությանը: Տեղեկագիրն ամենայն հավանականությամբ կազմվել է Արամ Անտոնյանի կողմից, չնայած ոչ մի տեղ նրա անունը չի նշվում,

Ակնից և Մալաթիայից շուրջ 9.500 որբերի տարահանումից և Հալեպ, Ջբել, Մամլեթեյն, Ղազիր, Ջունիե, Բեյրութ, Սայդա և Դամասկոս քաղաքների որբանոցներում տեղաբաշխումից հետո¹ պատկերը հետևյալն է².

ՀԲԸՄ հոգածության տակ՝ Հալեպում՝ 97, Բեյրութի Քելեկյան-Սիսուան որբանոցում³՝ 575 որբ,

Ազգային հոգատարություն և Մերձավոր Արևելքի նպաստամատույցի համատեղ աջակցությամբ՝

Հալեպի հայկական որբանոցում՝ 1164 որբ,

Ջունեյի որբանոցում՝ 284 որբ,

Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի աջակցությամբ՝

Լիբանանի Նահր Ալ-Իբրահիմ, Ջիբել, Մամլեթեյն, Ղազիր, Նազարեթ, Բրումանայի, Բեյրութի որբանոցներում՝ 3984 որբ,

Ավստրալական նպաստամատույցի հոգածության տակ՝ Անթիլիասի որբանոցում՝ 1326,

Երուսաղեմում՝ ՀԲԸՄ հոգածության տակ⁴՝ Արարատյան որբանոց՝ 457 որբ և Վասպուրականի որբանոց՝ 352 որբ, ընդհանուր՝ 809 երեխա:

Ընդհանուր՝ 8239 որբ:

Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա տեղի հայությունն այնտեղ որբանոցներ չի հիմնել: Այս հարցում Եգիպտոսի ռազմավարությունն այլ էր. Կահիրեի, Ալեքսանդրիայի հայ համայնքներն իրենց պատասխանատու են համարում հայրենակիցների համար օգնության արշավներ կազմակերպելու գործում: Եգիպտոսի համայնքի դերն ավելի է կարևորվում, երբ Կ. Պոլսի հայկական Պատրիարքարանը պաշտոնապես լուծարվում է երիտթուրքական կառավարության կողմից: Ստեղծվել էր իրավիճակ, որտեղ հարկավոր էր նախաձեռնող մի ուժ, որը կհամակարգեր հայ տարագիրների օգնության կազմակերպումը և դրսից եկող օգնությունների արդյունավետ բաշխումը: Եվ պատահական չէ, որ Եգիպտոսում կազմավորվում, վերակազմավորվում

բայց հաշվի առնելով այն փաստը, որ նա այդ ժամանակ եղել է Ազգային պատվիրակության քարտուղար, հիմք է տալիս նրան համարել սույն տեղեկագրի կազմողը:

¹ Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմություն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1975, էջ 255:

² Տեղեկագրում գործող որբանոցների, որբերի մասին տվյալները ներկայացված են ըստ հոգատարության մարմինների և տարածաշրջանների:

³ Վերջինս գործել է 1922-1925 թթ. Վահան Քյուրքճյանի ղեկավարությամբ: Այստեղ գալիս էին տասնհինգ տարին բոլորած որբերը, մեկ տարի մնում, արհեստ սովորում, ինքնաբավ լինելուց հետո դուրս գալիս որբանոց-ապաստարանից: Տե՛ս Դար մը պատմություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, հ. Ա, 1906-1940, Գահիրե-Փարիզ-Նիւ Եորք, 2006, էջ 151:

⁴ Իրաքի Նահր Ալ-Օմարի որբանոցի և Մոսուլի փակման ենթակա որբանոցի 47 որբերը Երուսաղեմ են հասել 1922 թ. փետրվարի 11-ին, որտեղ նրանց դիմավորել են Հայոց պատրիարքը, Միության մասնաճյուղի և Խնամակալության պատվիրակները՝ Լևոն Ասատուրի գլխավորությամբ: Տե՛ս «Արեւ» (Աղեքսանդրիա), փետրվարի 24, 1922, թիվ 126, **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 122:

են հայկական բարեգործական տարբեր կազմակերպություններ, որոնք արագ արձագանքում են սիրիական անապատներում ապաստանած հայ գաղթականներին, որբերին ու այրիներին օգնելու ձեռնարկներին՝ ֆինանսական որոշ հոսքեր ուղղելով այնտեղ:

Բացի այդ, Եգիպտոսում գաղթականների կամ որբերի կուտակումներ չեն եղել, բացառությամբ մուսալեռցիների, որոնք 1915 թ. սեպտեմբերից ապաստանել էին Պորտ Սաիդի վրանաքաղաքում, որին կից գործել է Սիսուան դպրոցը¹: Միակ որբանոցը, որը գործել է մինչև 1919 թ. նոյեմբեր, Պորտ Սաիդի² որբանոցն էր, այն ունեցել է ավելի քան 350 երեխա: ՀԲԸՄ կազմակերպությունը, ի թիվս մյուս որբանոցների, աշխատել է իրականացել հայապահպանությանն ուղղված իր ծրագրերը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության հոգեցնցումը որբանոցի սաները փորձում էին հաղթահարել մայրենի լեզվի, եկեղեցու, հավատի միջոցով: Նրանցից ոմանք լրիվ ինտեգրվում էին որբանոցային կյանքին՝ անգիտակցորեն դառնալով ինքնամփոփ, եթե խոսքն իրենց զգացմունքների, հուշերի մասին էր, մյուս մասը այս կամ այն կերպ բացահայտում էր դրանք իր առօրյա հարաբերություններում, բայցևայնպես աղետից փրկված անչափահասի ուղեղն ու միտքը, անկարող լինելով ընկալելու և իմաստավորելու ասիավոր պատահարների շարունակականությունը, ենթագիտակցորեն խցանում են զգացումներն ու հարմարվում ծանր հոգեվիճակին³:

Որբանոցների պարագայում հայապահպանության գործում առկա էին կառուցողական ազգայնականության հիմնական բաղադրիչները, որոնցից մի քանիսն ինքնաբերաբար մուտք էին գործում և կիրառվում որբանոցներում: Օրինակ՝ ցեղասպանությունը վերապրելու, ազգային արժեքների, հավատի ընդհանրությունները նրանց համար սոցիալականացման հիմք էին և հետագայում կարող էին որպես գործիք ծառայել ազգի, նրա ներուժի կենտրոնացման, հասարակության մեջ համերաշխության, փոխգործակցության ապահովման և այլ նպատակներով:

Ստեղծված հանգամանքների բերումով, Հայոց ցեղասպանությունը

¹ 1915 թ. աշնանը Պորտ Սաիդում ապաստանած մուսալեռցի գաղթականների մեջ կային 1260 երեխաներ, որոնց համար ՀԲԸՄ հիմնում է «Սիսուան» դպրոցը, որտեղ հիմնական ուսուցումն իրականացվել է հայերենով:

² 1918 թ. ՀԲԸՄ նպատակ ուներ Երուսաղեմում կենտրոնացնել հայկական որբանոցները, սակայն բրիտանական կառավարությունը մերժում է հայկական առաջարկը և պահանջում տեղի որբերին ու գաղթականներին տեղափոխել Պորտ Սաիդ, որոնք Վիկտորյա Արշարունու հետ 1918 թ. սեպտեմբերին հասնում են այնտեղ: Գիլիկիա վերադարձի շարժման ոգևորությամբ նրանք տեղափոխվել են Մերսին, ապա Գիլիկիայի վերջնական հայաթափումից հետո՝ Սիրիայի և Լիբանանի որբանոցներ: Տե՛ս Դար մը պատմություն..., էջ 51-52, 124-126:

³ **Փարազաշեան Մ.**, Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը, Երևան, 2006, էջ 72:

վերապրելու գիտակցմամբ ձևավորվում է ժամանակի պահանջներին համապատասխան հայապահպանության ձևաչափ-մոդել, որն աստիճանաբար վերամշակվում, համալրվում և հաջողությամբ ներդրվում է անգամ օտարերկրյա հոգածության տակ գտնվող որբանոցներում այնտեղ աշխատող հայ ուսուցիչների ու աշխատակիցների շնորհիվ: Այն գործնականում կիրառվում է Մերձավոր Արևելքի բոլոր որբանոցներում՝ ապահովելով հնարավորինս դրական արդյունք, չնայած որևէ տեղ կամ որևէ հաստատության կողմից այդ ձևափաշը պաշտոնապես չէր հաստատվել:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը վերապրած որբերի մի հատվածը տարբեր միջոցներով կարողացել է ֆիզիկապես փրկվել, բայց այդուհանդերձ ի վիճակի չի եղել լիովին հաղթահարելու ցեղասպանության հոգեբանական հետևանքներն ու դիմագրավելու ժամանակի մարտահրավերներին: Այն զրկվել է որակյալ կրթություն ստանալու հնարավորությունից կամ կարողությունները լիովին դրսևորելու միջոցներից, բայցևայնպես այս իրողությանը զուգահեռ՝ որբանոցային սերունդը հնարավորինս պահպանել է իր հայկական դիմագիծը և կարևոր դերակատարում ունեցել նաև տարածաշրջանի կենսունակ հայ համայնքների վերաձևավորման գործում, և մանկություն չունեցող որբանոցային սերունդը կարողացել է կյանք տալ արդեն մանկություն ունեցող սերնդին:

**Նարինե Մարգարյան – Հայապահպանության խնդիրներն ու
առանձնահատկությունները Մերձավոր Արևելքի որբանոցներում Հայոց
ցեղասպանության տարիներին**

Հայոց ցեղասպանության տարիներին կարևոր էր որբերի փրկության, ապա նաև հայապահպանության խնդիրը: Հոդվածում ներկայացված են այն խնդիրներն ու առանձնահատկությունները, որոնք առկա են եղել տարածաշրջանի որբանոցներում, վերլուծվել են նաև արտաքին և ներքին այն գործոնները, որոնք կարող էին ազդել որբանոցների հայապահպանության գործընթացների վրա: Որբանոցներում կիրառվող նախաձեռնությունների, մեթոդների, ուսումնասիրությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ որբանոցներում առօրյա և կրթական կյանքը հայկական կողմը կազմակերպել է՝ առաջնորդվելով մայրենի լեզվի, հայկական մշակույթի, հայոց առաքելական եկեղեցու, ցեղասպանության մասին որբերի պատկերացումների, հիշողությունների փոխանցման դրսևորումների, ինչպես նաև ցեղասպանության բարդույթը հաղթահարելու սկզբունքներով: Կարևոր դեր են խաղացել մի շարք առանձնահատկություններ՝ մայրենի լեզվի, քրիստոնեության նկատմամբ առավել ուշադրություն, որբանոցային թերթերի հրատարակում, սպորտային միջոցառումներով ազգային ինքնագիտակցության բարձրացում, փոխօգնության միջավայրի ստեղծում, ու այս ամենն իրականացվում էր որբերի միջև խտրականություն չդնելու սկզբունքով: Ցեղասպանությունը վերապրելու գիտակցմամբ ձևավորվում է ժամանակի պահանջներին համապատասխան հայապահպանության մի մոդել, որն աստիճանաբար վերամշակվում, համալրվում և ներդրվում է անգամ օտարերկրյա

խմամատարության տակ գտնվող որբանոցներում այնտեղ աշխատող հայ ուսուցիչների ու աշխատակիցների կողմից: Այն գործնականում կիրառվում է Մերձավոր Արևելքի բոլոր որբանոցներում՝ որևէ տեղ պաշտոնապես չհաստատված, հստակ ծրագրի ձևով չհանդիպող, բայց իր ժամանակների համար հնարավորինս դրական արդյունք ապահովելով:

Нарине Маргарян – Проблемы и особенности сохранения армянской идентичности в детских домах Ближнего Востока во время Геноцида армян

Ключевые слова – Геноцид армян, сироты, детские дома, пресса детских домов, Сирия, Ливан, сохранение армянской идентичности, идентичность, образование, родной язык, вера, помощь, ремесла

Вопрос спасения сирот, а затем и сохранения армянской идентичности, был важной задачей во время Геноцида армян. В статье анализируются проблемы и особенности местных детских домов, внешние и внутренние факторы, которые оказали влияние на процесс сохранения армянской идентичности. Изучив инициативы и методы в детских домах, мы можем сделать вывод о том, что армяне организовали повседневную жизнь детских домов, основываясь на принципах сохранения и передачи представлений сирот о родном языке, армянской культуре, Армянской апостольской церкви, а также о важности преодоления комплекса Геноцида. Особое внимание уделялось родному языку и христианству, публикациям прессы в детских домах, организации спортивных мероприятий для повышения национальной идентичности и создания атмосферы взаимопомощи. Все эти действия были основаны на принципе недопущения дискриминации среди сирот ни при приеме в детские дома, ни при их дальнейшем пребывании. Современная модель сохранения армянской идентичности была разработана с главной целью – пережить Геноцид. Армянские учителя и сотрудники доработали и успешно внедрили эту модель даже в детские дома, находящиеся под управлением иностранных благотворительных организаций. На практике эта модель была внедрена во все детские дома Ближнего Востока, обеспечив возможный положительный результат, даже несмотря на то, что модель не была официально одобрена ни одним учреждением.

Narine Margaryan – The Features and Problems of the Preservation of the Armenian Identity in the Orphanages of the Middle East during the Armenian Genocide

Key words – Armenian Genocide, orphans, orphanages, orphanage press, Syria, Lebanon, Preservation of the Armenian identity, identity, education, native language, faith, relief, crafts

The issue of saving the orphans, and later the preservation of the Armenian identity, was a significant one as their Armenian identity was constantly lost during the Armenian Genocide. The paper analyzes the issues and features of the local orphanages, the external and internal factors, which had an impact on the process of preservation of the Armenian identity. After studying initiatives and methods at the orphanages, we can conclude that the Armenians organized the daily life of the orphanages based on the principles of preserving and transferring the orphans' perceptions about the native language, Armenian culture, Armenian Apostolic Church, as well as on the significance to overcome the complex of Genocide. There was a focus on the native language and Christianity, publications in of press in the orphanages, organization of sports events to raise the national identity, and establishing the environment of mutual assistance. All these actions were based on the principle of not discriminating among

orphans. The modern model of preserving the Armenian identity was elaborated with the primary goal to survive the Genocide. The Armenian teachers and staff members further tuned and successfully implemented the model even in the orphanages under the management of foreign relief organizations. In practice, the model was implemented in all orphanages of the Middle East, securing the possible positive result, even though the model was not approved officially by any institution.

Նարինե Մարգարյան – «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու
(nmargaryan@gmail.com)

Ներկայացվել է 01.04.2022

Գրախոսվել է 03.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

**ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1920-1921 ԹԹ.)**

Բանալի բառեր – Ղարաքիլիսայի գավառ, Ալեքսանդրապոլի գավառ, Շիրակի նահանգ, Փամբակ, չեզոք գոտի, քեմալականներ, կոտորածներ, ողջակիզում, ցեղասպանություն, դիմադրություն

Փամբակի տարածքի (Ղարաքիլիսայի գավառ) 1920 թ. կոտորածները հայ պատմաբանները երբեմն ներկայացնում են Ալեքսանդրապոլի գավառի ջարդերի համատեքստում^{*}։ Տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունները (1920 թ. թուրք-հայկական պատերազմ) ներկայացնող քարտեզները նույնպես չեն արտահայտում իրական պատկերը. շատ տեղերում բացակայում է Ղարաքիլիսայի գավառի նշումը և թուրքական բանակի կողմից ռազմակալված Փամբակի տարածքի հիշյալ հատվածը ներկայացվում է Ալեքսանդրապոլի գավառի կազմում¹։ Նման մոտեցման պատճառը թերևս այն է, որ Փամբակի տարածքը ժամանակին եղել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում՝ իբրև Առաջին տեղամաս, սակայն ավելի ճիշտ է 1920 թ. դեպքերն ուսումնասիրել ըստ առանձին գավառների՝ հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի վարչատարածքային բաժանումները։

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք ներկայացնել Ղարաքիլիսայի գավառում քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները և դրանց հետևանքները։ Այն հիմնված է Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի և ժամանակի մամուլի նյութերի, պատմագիտական գրականության մեջ օգտագործված տեղեկությունների, ազգագրական և բանահավաքչական դաշտային աշխատանքների^{**} տվյալների, Հայոց ցեղա-

^{*} Խոսքը Ջաջուրի լեռնանցքից մինչև Նալբանդ կայարան ընկած տարածքի մասին է, որը Ղարաքիլիսայի գավառի Նալբանդի շրջանն էր։

¹ Տե՛ս օրինակ՝ Թուրք-հայկական պատերազմը (28.09-18.11.1920 թ.) // Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2008, էջ 109։ Քարտեզ՝ «Կարսի մարզ» ենթաբաժին՝ «Թուրք հայկական պատերազմը և հետևանքները 1920 թ.» (հեղինակ՝ Բաբկեն Հարությունյան) ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ, «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ 2015 թ.։

^{**} Վերապրածների ժառանգների շնորհիվ մեզ հասած հիշողությունները պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում, դրանց մեծ մասը գիտահետազոտական վերլուծությունների ձևով լույս է տեսել՝ **Հախոյան Վ.**, Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920-1921 թթ.) // «ՅՀ», 2021, 9, թիվ 1, էջ 83-122։

սպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող ձեռագիր հիշողությունների բաժնի հուշագրությունների ուսումնասիրության վրա:

Մուտք

1918 թ. հոկտեմբերի 7-ի ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ Մեծ Ղարաքիլիսայի տեղամասը (Փամբակ) դուրս է բերվում Ալեքսանդրապոլի գավառի կազմից և միավորվելով Դիլիջանի և Քարվանսարայի (ներկայումս՝ Իջևան քաղաք Տավուշի մարզում) տեղամասերի հետ՝ ընդգրկվում նոր ձևավորված Դիլիջանի գավառում¹: Ղարաքիլիսայի գավառը կազմավորվել է 1919 թ. փետրվարի 26-ին ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ²: Նույն թվականի մայիսի 23-ի օրենքով Մեծ Ղարաքիլիսան (ներկայումս՝ Վանաձոր քաղաքը Լոռու մարզում) ստանում է քաղաքի կարգավիճակ: Այս գավառի մաս էին կազմում Փամբակի, Լոռու, Բորչալուի տեղամասերը³: 1920 թ. մայիսի 25-ին ՀՀ տարածքը բաժանվեց չորս նահանգի՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց: Ղարաքիլիսայի գավառը ընդգրկվում էր Շիրակի նահանգում⁴:

1918 և 1920 թթ. թուրքական բանակի կողմից Փամբակի տարածքի բնակչությունը ենթարկվել է կրկնակի կոտորածների: 1918 թ. օսմանյան արշավանքի ժամանակ Փամբակի տարածքը Ալեքսանդրապոլի գավառում էր: 1918 թ. տեղի ունեցավ Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտը, որով թեև կասեցվեց թուրքական արշավանքը, բայց թուրքական զորքերին, այդուհանդերձ, հաջողվեց մտնել Մեծ Ղարաքիլիսա, որտեղ կոտորվեցին 3500-ից ավելի մարդիկ, Ղշլաղում (ներկայումս՝ Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս)՝ 200, այդ թվում նաև կանայք ու երեխաներ, Բզովդալում (ներկայումս՝ գյուղ Բազում Լոռու մարզում)՝ ավելի քան 300, Համամլուում (ներկայումս՝ քաղաք Սպիտակ Լոռու մարզում)՝ 350, Պարնիում (ներկայումս՝ գյուղ Մեծ Պարնի Լոռու մարզում)՝ 150 մարդիկ: Զանգվածային սպանություններ են կատարվել նաև Դարբազ (ներկայումս՝ գյուղ Դարպաս Լոռու մարզում), Հաջի-ղարա (ներկայումս՝ գյուղ Լեռնապատ Լոռու մարզում), Ավդիբեկ (ներկայումս՝ գյուղ Ծաղկաբեր Լոռու մարզում), Նալբանդ (ներկայումս՝ գյուղ Շիրակամուտ Լոռու մարզում), Թափանլու (ներկայումս՝ գյուղ Գեղասար Լոռու մարզում) և

¹ Տե՛ս **Հայրապետյան Ա.**, Օսմանյան ցեղասպանական քաղաքականության շարունակությունը Ղարաքիլիսայի շրջանում (1918 թ. մայիս-հոկտեմբեր) // Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Միջազգային գիտաժողով նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին և Վանաձորի պետական համալսարանի (Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի) հիմնադրման 50-ամյակին, Երևան, 2019, էջ 259:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 203, ց. 1, գ. 181, թ. 8:

³ Տե՛ս **Քառյան Ս.**, Ղարաքիլիսայի գավառը 1919-1920 թվականներին // «ԼՀԳ», 2004, թիվ 2, էջ 212:

⁴ Տե՛ս «Հայաստանի նահանգների նոր բաժանումը» // «Յառաջ», 1920, թիվ 126, էջ 2, **Քառյան Ս.**, նշվ. աշխ., էջ 212:

Որդնավ (ներկայումս՝ գյուղ Ջրաշեն Լոռու մարզում) գյուղերում¹:

Հայ բնակչության կոտորածները տեղի էին ունենում հեղեղատներում, բարձր սարերում, կիրճերում, խրամատներում, որպեսզի այնպիսի տպավորություն ստեղծվեր, որ նրանք մահացել էին ռազմական գործողությունների ընթացքում²: Այսօրինակ կոտորածները նախապես պլանավորված էին Ջեմալ-Ջավիդ բեյի կողմից: Տարածաշրջանի ամբողջ հայ ազգաբնակչությունը հայտարարվում է ռազմագերի³: Մոտավոր հաշվարկներով այդ ընթացքում սպանվել է 5000-ից 7000 մարդ⁴:

Հայ բնակչության զանգվածային սպանությունները կատարվել են ամենայն դաժանությամբ: 1918 թ. Ղարաքիլիսայում 17-ից բարձր տարիքի տղամարդկանց քառասուն հոգուն կապում էին միմյանց պարաններով ու երկաթյա լարերով և սպանում: Մի մասին տարել են անտառ և համազարկերով սպանել⁵: Այդ դաժանությունների մասին վկայում են կոտորածներից հինգ ամիս անց՝ 1918 թ. նոյեմբերի 1-ից 4-ը կատարված լուսանկարները, որոնցում տեսանելի են կապված զոհերը, Փամբակ գետի ափերին ցրված մարդկային զանգերն ու ոսկորները, «Մեծ ձոր» կիրճի բարձունքից մինչև ստորոտ թափված դիակները⁶: Մարդկանց կապելու և այնուհետև սպանելու այս ձևը Փամբակի տարածքում կիրառել են նաև քեմալականները 1920 թ., ինչը կրկին փաստում են լուսանկարները⁷: Մարդկանց սպանել են իրենց իսկ գերեզմանները փորել տալուց հետո, իսկ ոմանց թաղել են ողջ-առողջ⁸: Իրականացվել են նաև ողջակիզումներ: Պարաններով միմյանց կապկապված տղամարդկանց Ղարաքիլիսայից տարել են Հաջի-Ղարա գյուղից ոչ հեռու գտնվող Կարաքաշիյանցի ձմեռանոց և այրել⁹:

1918 թ. թուրքերը Փամբակի տարածքին պատճառեցին նաև նյութական մեծ կորուստներ: Փամբակի շրջանի 28 հայկական գյուղերը թալանվեցին և կողոպտվեցին, բացի մեկից՝ Համգաշիմանից (ներկայումս՝ Մարգահովիտ գյուղը Լոռու մարզում), որտեղ նրանք բարեբախտաբար ոտք չդրեցին: Առաջնահերթ տարել են բնակիչների մանր և խոշոր եղջերավոր անասունները, շատ գյուղերում չեն թողել նույնիսկ հավ ու սագ¹⁰: Կողոպուտի է ենթարկվել Մեծ

¹ ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 240, թ. 36:

² Տե՛ս **Ներսիսյան Մ.**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 126:

³ **Հայրապետյան Ա.**, նշվ. աշխ., էջ 257:

⁴ **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 128:

⁵ Նույն տեղում էջ 126: ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 240, թ. 36, 37:

⁶ **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 126-128:

⁷ Տե՛ս ՀԱԱ, Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ: Լուսանկարներ՝ p-34, p-246, p-247 «Ավդիբեկի զոհերը», p-243 «Նալբանդի զոհերը»:

⁸ ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 240, թ. 37:

⁹ **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 128:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 240, թ. 37:

Ղարաքիլիսայի և բոլոր գյուղերի տների մեծ մասը, քանի որ բնակիչները երկյուղից լքել էին իրենց բնակավայրերը: Թալանվել են նաև այն տները, որտեղ դեռևս բնակիչներ են եղել: Տարել են պահարանները, գորգերը, ոսկյա և արծաթյա զարդերը, դրամները, անգամ պատուհանների ապակիները: Շատ տղամարդկանց հագից հանել են հագուստները, կոշիկները, գլխարկները¹: Համալուծում մերկացրել են նաև երեխաներին, Պարնիում հափշտակել են կանանց գլխաշորերը: Այս ամենը կատարվել է պարբերաբար Փամբակ մուտք գործելուց մինչև հեռանալը²: Թուրքերը վնասել են Փամբակի տարածաշրջանի ամբողջ բերքը, այն է՝ ցորենի ցանքսերը, բանջարանոցները, այգիները: Ոչնչացվել են հարուստ մեղվանոցները: Ավերվել են դպրոցները, արհեստանոցները, գրադարանները, որոնց գրքերը, ինչպես նաև բոլոր դպրոցների նստարաններն ու սեղանները վառելանյութ են դարձրել³:

Ինչպես 1918 թ., այնպես էլ 1920 թ. Փամբակի տարածքում սրի քաշվեցին բազմահազար հայ փախստականներ Ալեքսանդրապոլի և Կարսի տարածաշրջաններից: 1918 թ. Ալեքսանդրապոլի գրավումից հետո բնակիչները շատ դեպքերում մերկ ու ոտաբոբիկ դիմեցին փախուստի՝ հասնելով մինչև Մեծ Ղարաքիլիսա: Թուրքերը, փակելով նահանջի ուղղությունները, թե՛ ձորերում և թե՛ անտառներում նրանց ենթարկում էին սվինահարության⁴: Մեծ Ղարաքիլիսայի ձորերում հիմնականում սպանվեցին արական սեռի տարբեր տարիքի ներկայացուցիչներ և ռազմական գործողությունների հետ կապ չունեցող խաղաղ բնակիչներ ու փախստականներ: Չխնայեցին անգամ մանկահասակ երեխաներին: Այս ամենը կատարվեց Ղարաքիլիսայի հերոսամարտից հետո: Դաժան սպանությունների ականատեսներից շատերը հոգեկան խեղումներ են ստացել կամ խելագարվել⁵: Կանանց և աղջիկների մեծ մասը բռնաբարվել է⁶: Կան գյուղեր, որտեղ բնակվող կանայք, հենց իրենց՝ գյուղացիների խոստովանությամբ, ենթարկվել են բռնաբարության, ինչպես օրինակ՝ Նալբանդ գյուղում: Բռնաբարվել են գրեթե բոլոր տարիքային խմբերը՝ աղջիկներից մինչև նորատի հարսներ և պառավ կանայք: Եղել են նաև արվամուլության դեպքեր⁷:

Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումից հետո տարածաշրջանը հագիվ էր ոտքի կանգնել, երբ սկսվեց թուրքական բանակի նոր արշավանքը, որն աղետաբեր եղավ Վանանդի և Շիրակի նահանգների

¹ ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 240, թ. 37:

² Նույն տեղում, թ. 38:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, թ. 44:

⁵ Նույն տեղում, թ. 44, 45:

⁶ Նույն տեղում, թ. 45, Ներսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 128:

⁷ Տե՛ս Դավաթյան Վ., Մարության Ա., Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2008, էջ 272:

համար: 1920 թ. Քյազիմ Կարաբեքիրի ղեկավարած զինուժի մասնակցությամբ զանգվածային կոտորածներ տեղի ունեցան Կարսում, Ալեքսանդրապոլի գավառում, որոնք շարունակվեցին Ղարաքիլիսայի գավառում: Ջաջուռի լեռնանցքից (թամբոց) մինչև Նալբանդ կայարան հատվածի բնակչությունը ենթարկվեց կոտորածի: Եթե 1918 թ. օսմանյան արշավանքի ժամանակ հիմնական հարվածը հասավ Փամբակի արևելյան շրջանին, մասնավորապես Մեծ Ղարաքիլիսային, ապա 1920 թ.՝ քեմալական արշավանքի ժամանակ, Փամբակի արևմտյան շրջանին:

Դիմադրություն

Ալեքսանդրապոլի անկումից հետո քեմալական զորքն ուղղություն է վերցնում դեպի Ղարաքիլիսա: Թուրքերը խախտում են նոյեմբերի 7-ին կնքված զինադադարի պայմանները և չընդունելով նոյեմբերի 10-ի ՀՀ կառավարության հաշտության բանակցությունների առաջարկությունը վերսկսում են ռազմական գործողությունները: Հայ ժողովրդին ուղղված նոյեմբերի 11-ի կառավարական հաղորդագրության մեջ նշվում է, որ թշնամին չի ուզում հաշտվել և փորձում է զենքի ուժով թելադրել իր կամքը, ոտնակոխ անել երկիրը, բնաջնջել հայ ժողովրդին և հիմնահատակ կործանել պետությունը: Կոչ է արվում կռվել և զենքով պաշտպանել սեփական գոյությունը¹:

Թե՛ 1918 թ. և թե՛ 1920 թ. թուրքական արշավանքի ժամանակ Ալեքսանդրապոլի և Կարսի փախստականների մի մասը խուճապահար փախչում է Փամբակի տարածք: Ալեքսանդրապոլի գավառի Առաջին գավառամասի զանգվածային կոտորածներից² հետո թուրքերը ճեղքում են Փամբակի լեռնաշղթան և գրավում նրա որոշակի հատվածը:

Հայկական զորամասերը նոյեմբերի 14-ին Ջաջուռի ուղղությամբ թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ երեկոյան նահանջում են Համամլու գյուղը³: Մինչ այդ տեղի էին ունեցել թեժ մարտեր, Ջաջուռի ջոկատը նոյեմբերի 14-ի և 15-ի կռիվներում թուրքերին պատճառել էր մեծ կորուստներ՝ վիրավորներ և սպանվածներ, որոնց խուճապահար նահանջելիս նրանք չէին հասցրել իրենց հետ տանել⁴: Ջորավար Սեպուհը (Արշակ Ներսիսյան) Ղարաքիլիսայից գորահրամանատարին ուղարկում է հեռագիր, որտեղ նշում է Ղալթախի գյուղի կոտորածների, մարտական գործողությունների և հակառակորդի մեծ թվով կորուստների մասին, ինչպես նաև, որ մարտերը տեղի են ունեցել նոյեմբերի 16-ին⁵:

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 253:

² Առավել մանրամասն տե՛ս **Հախոյան Վ.**, Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գավառում (1920-1921 թթ.) // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2021, թիվ 3, էջ 72-84:

³ «Նոյեմբերի 15-ին» // «Յառաջ», 1920, թիվ 251, էջ 4:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 321: Տե՛ս Վերջին ժամ, «Մեր ճակատում, Ջաջուռի ուղղությամբ» // «Յառաջ», 1920, թիվ 253, էջ 4:

⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 307:

Մարտական գործողություններն ընթանում էին Ջաջուռի լեռնանցքում¹: Ականատես-վերապրածների ժառանգները հիշատակում են Շիրակի դաշտում և Ջաջուռի լեռնանցքում «արցախյան ջոկատի» անձնուրաց պայքարի մասին²: Հավանաբար Ջաջուռի ջոկատը մեծամասամբ կազմված էր արցախցիներից, որը եղել է բնակիչների շրջանում «արցախյան (ղարաբաղցիների) ջոկատ» անվան առաջացման պատճառը:

Հայտնի է, որ Սեպուհը զինադադարի նախօրյակին հանկարծակի հարձակվել է Ջաջուռի բարձունքում տեղակայված թուրքական առաջատար զորամասերի վրա, թեժ մարտերում խուճապի մատնել նրանց, սակայն հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշմամբ ի վերջո նահանջել է Դիլիջան³:

Համադրելով մարտական գործողությունների մասին տարբեր տվյալները և դրանց ժամանակագրությունը՝ կարող ենք ասել, որ եթե 1920 թ. նոյեմբերի 17-ի զորքերի հրամանատարի շտաբի ամփոփագիրը հիշատակում է նոյեմբերի 14-ի և 15-ի մարտերի մասին (Սեպուհը՝ նոյեմբերի 16-ի), իսկ նոյեմբերի 14-ին հայկական զորքը նահանջել է Համալու, ուրեմն խոսքը Սեպուհի հարձակման և նահանջի մասին է, որը տեղի է ունեցել նոյեմբերի 14-ին, իսկ Ջաջուռի ջոկատի՝ նոյեմբերի 15-ի և 16-ի կռիվները (Ջաջուռի լեռնանցքում) «արցախյան ջոկատն» է իրականացրել: Եվ մինչ նրանք Ջաջուռի լեռնանցքում դիմակայում էին թուրքերին՝ փորձելով թույլ չտալ նրանց մուտքը Փամբակ, սակայն թուրքերն արդեն այնտեղ էին և կոտորում էին տեղի անպաշտպան բնակչությանը:

Քեմալականներն առաջին անգամ Փամբակ մտան նոյեմբերի 14-ին ոչ թե Ջաջուռի լեռնանցքից, որտեղ հերոսաբար մարտնչում էին հայ զինվորները և նրանց միացած շրջակա մի քանի գյուղերի բնակիչների մի մասը, այլ Փամբակի լեռնաշղթան ճեղքելով՝ Փոքր Քափանակ (ներկայումս՝ գյուղ Հովիտ Շիրակի մարզում) գյուղից դեպի Ղալթախչի (ներկայումս՝ գյուղ Հարթագյուղ Լոռու մարզում) լեռնային ճանապարհով⁴: Թուրքերը մեկ թնդանոթով և բազմաթիվ գնդացիներով մտնելով Ղալթախչի հայտարարեցին, որ բնակիչները չվախենան և չփախչեն, որովհետև նրանք գործ ունեն «թուրքահայերի» հետ⁵: Ճարահատյալ խաղաղ բնակիչները գյուղի ազդեցիկ մարդ-

¹ ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38:

² **Հախոյան Վ.**, նշվ. աշխ., էջ 73:

³ Նույն տեղում, էջ 73: Տե՛ս **Տէր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը, քեմալական արշաւանքը, Կարսի եւ Ալեքսանդրաբոլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները, պաշէվիքեան տիրապետութիւնը (անտիպ փաստաթուղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ), Կ. Պոլիս, 1921, էջ 91:

⁴ Տե՛ս **Խանգադյան Մ.**, Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը, Երևան, Հրագրան, 2000, էջ 178, Պատասխան թուրք կեղծարարներին // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2003, թիվ 8, էջ 106, 108, ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38:

⁵ «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնութիւնները» // «Յառաջ», 1920, թիվ 254, էջ 4, **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 129:

կանց առաջնորդությամբ թուրքերին դիմավորում են աղ ու հացով. նման բազում դեպքերի մասին հիշատակումներ կան Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների գյուղերում, ինչը հարկ է դիտարկել ոչ թե թուրքերին հնազանդվելու, այլ անպաշտպան մնացած ժողովրդին զանգվածային կոտորածից փրկելու ճարահատյալ քայլ¹: Ղալթախչի գյուղի բնակիչների թուրքերին ուղղված առաջարկությանը, որ զորքի համար ճաշ պատրաստեն, նրանք մերժում են՝ ասելով, որ կճաշեն՝ վաղը: Նրանք իրենց մոտ են կանչում գյուղի երեք ազդեցիկ մարդկանց և քահանային, նրանց վերցնելով իրենց հետ, թնդանոթը թողնելով գյուղում՝ զորքերի հետ հեռանում են Փոքր Քափանակի ուղղությամբ²: Քեմալականների այս գործողություններից պարզ է դառնում, որ Ջաջուռի տարածքում տեղի ունեցած մարտական գործողություններից հետո Փամբակի տարածքում նրանց գտնվելու առաջին օրը հետախուզական բնույթի էր:

Փամբակի գյուղերի կոտորածը

Թուրքերը Փամբակի տարածք են վերադառնում նոյեմբերի 15-ի կեսօրին ավելի մեծ ուժերով՝ երեք զորապույունով: Մի զորապույունը մնում է Ղալթախչիում, մյուսը գնում է Ղարաբոյա (ներկայումս՝ գյուղ Խնկոյան Լոռու մարզում), իսկ մյուսը՝ Աղբուլաղ (ներկայումս՝ գյուղ Լուսաղբյուր Լոռու մարզում)³: Գյուղերում տղամարդիկ քիչ կային, շատերը ժամանակավորապես լքել էին իրենց գյուղերը: Մի մասը զորակոչված էր բանակ, մյուս մասը դարձել էր ակտիվ քարոզչության զոհ, որն իրականացնում էին թե՛ հայ բոլշևիկները և թե՛ քեմալականները⁴: Իսկ հայկական զորքը նահանջել էր 25 կմ: Գյուղերում մնացել էին հիմնականում կանայք, երեխաներ և ծերեր:

Քեմալական զորքերը գյուղերում անմիջապես բռնությունների չեն դիմում, այլ սկսում են տարբեր հնարքներ կիրառել մարդկանց տարբեր վայրերում կենտրոնացնելու համար, երբեմն նաև ահաբեկելով: Ղալթախչի գյու-

¹ Նույն տեղում էջ 129: Տե՛ս **Խանգաղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 178: ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38: Բանասաց՝ Հասմիկ Խաչատուրի Մուքոյանը (ծնվ. 1936 թ., Թիֆլիս), պատմությունը լսել է հորից՝ դեպքերի ժամանակակից՝ Խաչատուր Միքայելի Հարոյանից (ծնվ. 1874 թ., Մեծ Քափանակ): Բանասաց՝ Գոհարիկ Այվազի Կյուրեղյանը (ծնվ. 1920 թ., Նալբանդ) պատմությունները լսել է ականատեսներ տատիկից՝ Մարիամ Կյուրեղյանից (Նալբանդ, ծն. թիվը անհայտ) և մորից՝ Հայկանուշ Կյուրեղյանից (ծնվ. 1903 թ., Նալբանդ): Բանասաց՝ Վահագն Պետրոսյանը (ծնվ. 1966 թ., Ծաղկաբեր), ականատես՝ Նազան Աշուղաթոյանի (ծնվ. 1895 թ., Մեծ Պարնի) թոռը, պատմությունը լսել է հորից՝ Արամ Պետրոսյանից (ծնվ. 1926 թ., Ավդիբեկ): Տե՛ս **Ալեքսանեան Կ.**, Ալեքսանդրապոլի գաւառը 1920ի թուրք-հայկական պատերազմի նախօրեակին // «ՀՀՀ», հ. ԼԲ, Պէյրութ, 2012, էջ 377:

² «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնությունները», էջ 4, **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 129:

³ «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնությունները», էջ 4, **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 129:

⁴ Բանասաց՝ Ազատ Սահակյան (ծնվ. 1935 թ., Ղալթախչի), պատմությունը լսել է հորից՝ ականատես Մեխակ Սահակյանից (ծնվ. 1877 թ., Ղալթախչի):

դում հայտարարում են, որ ով չներկայանա ցուցակագրմանը կամ թաքնվի, կախաղան կբարձրացվի, իսկ նրանց տները հրի կմատնվեն: Ասկյարները գյուղի տարբեր թաղամասերում տարբեր հայտարարություններ են անում՝ իբր գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում օգնություն են բաժանելու, այնուհետև եկեղեցու բակում հավաքված մարդկանց ենթարկում են դաժան կոտորածի: Հայտարարում են նաև, որ գյուղի մեծ մարագներում և օղաներում փաշայի մասնակցությամբ ժողով է լինելու, որտեղ կատարում են արյունալի սպանդ¹: Ղարաբոյայում նույնպես հայտարարում են գյուղի եկեղեցում օգնություն (այլուր) բաժանելու, նաև կանանց ձեռքի ավերում կնիք խփելու մասին, որից հետո բնակիչներով լցված Սբ. Աստվածածին եկեղեցին այրում են, այնուհետև կոտորում ողջ մնացածներին: Ողջակիզում են նաև դպրոցում նախապես հավաքած մարդկանց²:

Աղբուլաղում ասկյարներն անցնում են տնից տուն և տարբեր թաղամասերում հայտարարում նպաստ բաժանելու ու ցուցակագրման մասին: Մի թաղամասի բնակչությանը կենտրոնացնում են Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում, մյուս թաղամասի ժողովրդին՝ այլ վայրում, հետո բոլորին միավորում են, առանձնացնում տղամարդկանց և պատանիներին ու ողջակիզում, իսկ առանձնացրած կանանց և երեխաներին հավաստիացնում են, թե իբր տանում են Գյումրի՝ հաշվառելու, սակայն սպանում են Հզազի ձորում (Ջարդի ձոր)³: Այսպես, տարբեր միջոցներ գործի դնելով, մարդկանց հավաքում են գյուղերի եկեղեցիներում, մարագներում և օղաներում ու դաժանաբար կոտորում: Այնուհետև թաքնվածներին գտնելու և սպանելու նպատակով սկսում են տների խուզարկությունները⁴:

Այսպիսով, զանգվածային սպանությունների տարածված ձևերից էին ողջակիզումները, ծխախեղդ անելը, նաև ջրհորներում խեղդամահությունները:

¹ Տե՛ս «Ղալթախի գիւղի կոտորածների մանրամասնությունները», էջ 4, **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 129: Բանասաց՝ Ավետիս Ավագյանը (ծնվ. 1927 թ., Ղալթախի)՝ ականատես Հեղինար Ավագյանի (ծնվ. 1900 թ. Կարս) որդին, պատմությունը լսել է մորից: Բանասացներ՝ Ավետիք Գալստյանը (ծնվ. 1940 թ. Ղալթախի)՝ ականատես Արեգ Աֆրիկյանի (ծնվ. 1905 թ., Ղալթախի) որդին, Էմմա Գալստյանը (ծնվ. 1953 թ. Լենինական)՝ ականատեսի հարսը, պատմությունը լսել են ականատեսից:

² Տե՛ս «Վերապրածի վկայություն», Վարդանուշ Խաչատրյանի վկայությունը (ծնվ. 1898 թ. Նալբանդ) // ՀՅԺԻ, Թանգարանային ֆոնդեր, ք. 8, ֆ.հ. 42: Բանասաց՝ Ջանիբեկ Մամիկոնի Հարությունյանը (ծնվ. 1946 թ. Խնկոյան)՝ ականատես Շուշանիկ Կուրդիյանի (ծնվ. 1890 թ., Ղարաբոյա) թոռը, պատմությունը լսել է ականատեսից: Բանասաց Սամվել Բադալյանը (ծնվ. 1972 թ., Խնկոյան)՝ ականատես Հայկանուշ Բադալյանի (ծնվ. 1895 թ.) թոռը ևս, պատմությունը լսել է ականատեսից:

³ Տե՛ս **Խանգաղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 178, ՀՅԺԻ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38: Բանասաց Հռիփսիկ Հարությունյանը (ծնվ. 1926 թ. Աղբուլաղ) պատմությունը լսել է հորից ականատես Սարիբեկ Հարությունյանից (ծնվ. 1875 թ., Աղբուլաղ):

⁴ Բանասաց՝ Լևոն Գաբրիելյանը (ծնվ. 1949 թ.)՝ ականատես Սիմոն Սիմոնյանի (ծնվ. 1906 թ., Ղալթախի) որդին, պատմությունը լսել է ականատեսից: Գյուղում պահպանված կոլեկտիվ հիշողություն:

րը¹: Հայերին ծխով խեղդելը և այրելը հիշեցնում են 1915 թ. Մուշի Ալի-Ջոնան և Աղչան գյուղերի մարագներում տեղի ունեցած դեպքերը²:

Կոտորածի հիմնական վայրերից էին ձորերը: Փամբակի տարածքում թուրքերը արյունալի կոտորած են իրականացնում Ղարաբոյայի արևմտյան մասում գտնվող բավականին խորը ձորում: Այստեղ կոտորում են հիմնականում կանանց, նրանց նախապես շարում են ձորի երկու կողմերում՝ վերնից ներքև, այնուհետև ասկյարները բաժանվում են երկու խմբի՝ կանգնելով ձորի երկու կողմում: Նրանք սվինահարում են կանանց և լցնում ձորը: Երեք օր դաժանաբար սվինահարում են վիրավորներին ու անշնչացած դիերը³:

Սպանությունների հիմնական վայրերից էր նաև Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի սահմանագլխին գտնվող Հզազի ձորը (Ջարդի ձոր, Ջաջուռի լեռնանցքում): Այստեղ պարբերաբար իրականացված կոտորածների ժամանակ սպանվեցին նաև Աղբուլաղի բնակիչները՝ կանայք, երեխաները և Փամբակի տարածքում պատսպարված փախստականները (Ալեքսանդրապոլի գավառից և Կարսի նահանգից)⁴:

Փամբակի նշված գյուղերում առավել սարսափելի էին ծխականացված սպանությունները: Աղբուլաղում քահանային խաչել են, իսկ բնակիչների մի մասի ողջակիզումն իրակացրել դիոլ-գուռնայի ուղեկցությամբ, Ղարաբոյայում՝ տղամարդուն բոլորի առջև մաշկազերծ են արել, Ղալթախչիում՝ մորը կապել են պոնին և նրա աչքերի առաջ դաժան միջոցներով սպանել բոլոր երեխաներին, Նալբանդում մարդկանց ողջ-ողջ թաղել են և այլն⁵: Նմանատիպ կոտորածներ են տեղի ունեցել նաև Ավդիբեկ և Ղարալ գյուղերում, ինչն արձանագրված է լուսանկարներով⁶:

Հայ բնակչության զանգվածային կոտորածներն իրականացվել են թե՛

¹ Բանասաց՝ Ազատ Սահակյան (ծնվ. 1935 թ., Ղալթախչի), դեպքերի ժամանակակից Մեխակ Սահակյանի (ծնվ. 1888 թ., Ղալթախչի) որդին: Գյուղում պահպանված կոլեկտիվ հիշողություն: Բանասաց՝ Ջանիբեկ Մամիկոնի Հարությունյանը (ծնվ. 1946 թ. Խնկոյան)՝ դեպքերի ականատես Շուշանիկ Կուրդիյանի (ծնվ. 1890 թ., Ղարաբոյա) թոռը, պատմությունը լսել է ականատեսից:

² ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 326, թ. 80:

³ ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, ք. 8, ֆ. հ. 42: Տե՛ս նաև Պատասխան թուրք կեղծարարներին, էջ 111-112:

⁴ Հզազի ձորի (Ջարդի ձոր) կոտորածի մասին առավել մանրամասն տես՝ **Հախոյան Վ.**, նշվ. աշխ., էջ 78-79:

⁵ **Խանգաղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 178-179: Հուշագրող՝ Սողոմոն Սարգսյանը, ականատես Եղիսաբեթ Եղիկյանի որդին (ծնվ. 1927 թ., Ղալթախչի), «Մորս պատմածից (եղելություն)»: Նաև **Սարգսյան Ս.**, Աղավաատուն, Նոյեմբերյան, Գրոց, 1997, 55-63 // Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=0947J5T-uxU>: Բանասաց՝ Սամվել Բադալյան (ծնվ. 1972 թ. Խնկոյան), ականատես Բադալ Բադալյանի (ծնվ. 1895 թ. Ղարաբոյա) թոռը: Բանասաց Գոհարիկ Կյուրեղյան (Շիրակամուտ):

⁶ Տե՛ս ՀԱԱ, Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ: Լուսանկարներ՝ p-33, p-34, p-242, p-246, p-247 Ավդիբեկի գոհերը, p-32, p-249 Ղարալի գոհերի մնացորդները:

կանոնավոր բանակի և թե՛ մուսուլմանական մոլեռանդ հրոսակախմբերի կողմից: Զինագրավված ամբողջ տարածքում սպանությունների ընթացքում և հետո անողորմաբար բռնաբարվել է կանանց ու աղջիկների մեծ մասը¹:

Զորահրամանատարի գլխավոր շտաբի հաղորդագրությունը (Երևան, 1920, 17 նոյեմբեր) հայտնում է, որ Ջաջուռի ուղղությամբ Ղալթախչիից փախած կանայք տեղեկացնում են, որ թուրքերը երկու անգամ գրավել են հիշյալ գյուղը և կազմակերպել ամբողջ ազգաբնակչության կոտորած՝ չինա-յելով նույնիսկ կանանց, երեխաներին և ծերերին²: Հայ բնակչության զանգ-վածային կոտորածները Փամբակի տարածքում ավարտվել են նոյեմբերի 18-ին հաստատված զինադադարով, բայց բռնաճնշումները, կոռուպցիոն ու թա-լանը և մասնակի սպանությունները շարունակվել են Ղարաքիլիսայի գավա-ռի հիշյալ հատվածի (Նալբանդի շրջան) ռազմակալման ամբողջ ընթացքում (1920 թ. նոյեմբերի 15-1921 թ. ապրիլի 22):

Այսպիսով, Ալեքսանդրապոլի գավառի հետ ռազմակալվեց նաև Ղարա-քիլիսայի գավառի մի հատվածը՝ մինչև Նալբանդ գյուղը: Հայաստանի հա-տույկ հանձնաժողովի (ԿԿ) նախագահի տեղակալ Ամատունու Դիլիջանի, Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի գավառներ 1920 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1921 թ. հունվարի 10-ը կատարած ծառայողական ուղևորությունից պարզ է դառնում, որ Նալբանդ և այլ գյուղերում տեղակայված թուրքական զորքերի վայրագությունների պատճառով Ղարաքիլիսայի գավառի բնակչու-թյունն ամեն ժամ եղել է սարսափի մեջ³: Ասկյարներն ամեն օր, առանձին խմբերով շրջելով գյուղերում, պահանջում և վերցնում են մթերք ու թանկար-ժեք իրեր: Ինչպես նշում է Ամատունին, «հանրահայտ պատճառներով» իրեն չի հաջողվում բացահայտել առանձին փաստեր⁴: Ուսումնասիրելով «Չեզոք գոտու» գյուղերին վերաբերող նրա արձանագրությունները՝ կարող ենք եզրակացնել, որ նրա դիտարկումների ժամանակ թուրքական զորքի կողմից հսկողություն էր սահմանված զանգվածային կոտորածների խոշոր վայրերում և նրան թույլ չեն տվել մուտք գործել այդ գյուղերը:

Հարկ է նաև նշել բնակչիմայական պայմանների մասին: Ըստ ականատես-վերապրածների վկայությունների՝ կոտորածների ժամանակ՝ նոյեմբերի 15-ին, արդեն ձյուն էր եկել⁵: Դիակների մեծ մասը ռազմակալման ամբողջ ընթացքում չեն թաղվել: Փամբակի տարածքի վերոհիշյալ հատվածում և Ջաջուռի

¹ Բանասաց Սամվել Բադասյանը (ծնվ. 1972 թ., Խնկոյան)՝ ականատես Հայկանուշ Բադասյանի (ծնվ. 1895 թ.) թոռը, պատմությունը լսել է ականատեսից: Բանասաց՝ Ազնիվ Աֆրիկյանը (ծնվ. 1946 թ., Հարթագյուղ)՝ ականատես Ֆիդային Գրիգորյանի (ծնվ. 1908 թ., Ղալթախչի) հարսը, պատմությունը տեղեկացել է ականատեսից և նրա հուշագրությունից: Բանասաց՝ Ազատ Սահակյան:

² Տե՛ս Վերջին ժամ, «Մեր ճակատում, Ջաջուռի ուղղությամբ», էջ 4:

³ ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 15:

⁴ Նույն տեղում, թ. 15:

⁵ Տե՛ս Պատասխան թուրք կեղծարարներին, էջ 108, 111:

լեռնանցքում լինում էին սաստիկ ձմեռներ, գարունը ուշ էր գալիս, ձյան բարձրությունը հասնում էր մինչև 1,5 մետրի: Հետևաբար դիակները մնացել են ձյան տակ, ձորերում, տներում, մարագներում, կոտորածների այլ վայրերում¹: 1921 թ. մայիսի 11-ին Համամուլի Զինկումին ուղղված Ղարաքիլիսայի գավառային զինկումիսարիատի 1921 թ. մայիսի 2-ի հեռագրով տրվում է հ. 182 կարգադրությունը, որով հանձնարարվում է թաղել 1920 թ. նոյեմբերին թուրքական զորքերի կողմից՝ Ղալթախչի, Ղարաբոյա, Աղբուլաղ գյուղերում կոտորածի ենթարկված հայերի դիերը: Այդ նպատակով կազմվում է հանձնաժողով և 1921 թ. մայիսի 3-ին նշված բնակավայրերում սկսվում են աշխատանքները: Հաշվի առնելով դիերի քայքայվածությունը և բազմաքանակ լինելու հանգամանքը՝ որոշվում է դրանք թաղել տեղում, քանզի տեղափոխությունը տվյալ բնակավայրերից այլ վայրերում թաղելու համար հնարավոր չէր: Որոշվում է մաքրել միայն դիերով լեցուն բնակարանները: Այդ աշխատանքներում ներգրավվում են հիշյալ գյուղերի ողջ մնացած, ինչպես նաև հարևան գյուղերի բնակիչները: Ընդհանուր առմամբ թաղվում է 11.886 դի, որոնց 90 %-ը կանայք և երեխաներ էին և միայն 10 %-ը՝ տղամարդիկ: Դիերի գնությունից հստակ երևում էր, որ ջարդը կատարվել է գազանաբար, քանզի դրանց վրա առկա էին 10-15-ից ավելի սրի հարվածի հետքեր: Դիերի զգալի մասը գլխատված էր և այլանդակված: Կոտորածի ենթարկվածների մի մասին այրել էին տներում: Այսպիսով, Ղալթախչիում սպանվել է 2100 մարդ, Աղբուլաղում՝ 1186, Ղարաբոյաում՝ 1100: Հիշյալ գյուղերում միայն տեղի բնակիչներից կոտորվել է 4386 մարդ: Նրանց հետ զոհվել են Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից եկած 7500 փախստականներ, որոնք պատսպարվել էին այդ գյուղերում: Հանձնաժողովն իրեն վերապահված պարտականությունները կատարում է յոթ օրվա ընթացքում՝ մայիսի 4-ից 11-ը²: ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարար Ասքանազ Մռավյանը հեռագրում է Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Դովլաթովին՝ ներկայացնելով Փամբակի երեք գյուղերի սարսափելի կոտորածը, նշելով վերոնշյալ փաստերը և թվերը³:

Փամբակի զինագրավված տարածքի բնակչության մի մասը, ինչպես նշվեց, կոտորվել է Հզազի ձորում (Զարդի ձոր): Այդտեղ 1921 թ. ապրիլի 28-ին դիտարկումներ է կատարում Ղարաքիլիսայի Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ Չարլզ Գրանտը նույն կոմիտեի անդամներ Ռեյ Օգդենի և Ջորջ Բեյ Մամիկոնյանի հետ: Ջաջուռի լեռնանցքի գրեթե բարձունքին՝ 200 ֆուտ տարածության վրա նրանք տեսնում են մեծամասամբ երեխաների դիեր: Նրանք հանգում են այն եզրակացության, որ դրանք մերձակա գյուղերի հայ բնակիչների դիերն էին, որոնք մորթվել էին երեք-չորս ամիս առաջ:

¹ Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան: Փամբակի վերոհիշյալ գյուղերում պահպանված կոլեկտիվ հիշողություն:

² ՀԱՍ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 6, 7, ֆ. 114, ց. 1, գ. 131, թ., 12, ֆ. 114, ց. 2, գ. 27 թ. 85:

³ ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 86:

Զոհերի թիվը մոտավորապես 1200-1500-ի էր հասնում, որոնք, դատելով գտնված ընդամենը 200 փամփուշտների պարկուճներից, մեծամասամբ սպանվել էին սվիններով կամ այլ տեսակի սառը զենքերով, ինչը հաստատվում էր հատկանշական վերքերով: Օրինակ՝ կտրված կրծքեր, հղի կանանց ճեղքված որովայններ և այլն: Տղամարդկանց դիակներն իսպառ բացակայել են: Արական սեռի ամենատարիքով զոհը 14 տարեկան է եղել: Պարկուճների թուրքերեն գրությունները և փամփուշտների վրայի կիսալուսնի ու աստղի նշանները կասկած չեն թողել, թե ովքեր են եղել մարդասպանները: Կոտորածի տեղում թափված փամփուշտների ուղիղ հավասար շարքը պարզ կերպով վկայում է, որ կոտորածները կատարվել են վարժեցված, պատշաճ դեկավարված զորաջոկատի կողմից¹: Քեմալականների իրականացրած զազրելի ռճրի մասին վկայում են նաև Փամբակի տարածքում և «Զարդի ձորում» կատարված լուսանկարները²: Այսպիսով, համեմատելով 1918 թ. օսմանյան արշավանքի ժամանակ թուրքական բանակի գործողությունները 1920 թ. քեմալական գործողությունների հետ, կարող ենք արձանագրել զանգվածային սպանությունների մեթոդների և ձևերի նմանությունը:

«Չեզոք գոտի»

Ըստ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նոյեմբերի 18-ի զինադադարի՝ Նալբանդ կայարանից մինչև Համզաչիման հայտարարվում է հայ-թուրքական զորքերի «չեզոք գոտի», որը սկզբում, փաստորեն, գտնվում էր թուրքերի վերահսկողության ներքո³: Նրանք ներկայացուցիչ ունեին նաև Ղարաքիլիսայում⁴: Այդուհանդերձ, ռազմակալված գյուղերի ողջ մնացած բնակիչները կարողացան իրենց փրկությունը գտնել այդտեղ և Ղարաքիլիսայի գավառի այլ վայրերում: Ըստ 1920 թ. նոյեմբերի 18-ի զինադադարի՝ հայկական և թուրքական զորքերի միջև ստեղծված «չեզոք գոտու» սահմանները և տարածքն սկսվում էր մի կողմից (արևմուտքից արևելք)՝ Նալբանդ կայարանից մինչև Համզաչիման, մյուս կողմից Ղուլիջանից (ներկայումս՝ գյուղ Սպանդարյան Շիրակի մարզում) մինչև Բաշ-Ապարան, Ալագյազ (Արագած) կայարանից մինչև Արաքս կայարան⁵: Այդ գոտում մնացին 45 գյուղեր, որոնք շուտով լցվեցին թուրքիայից, Սարիղամիշից, Կարսից, Ալեքսանդրապոլից և այլ վայրերից եկած գաղթականներով⁶: Թուրքական զորքերը հաճախակի փորձեր են անում «չեզոք գոտին» գրավելու համար՝ իբր վերացնելու այնտեղ

¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 131, թ. 13, ֆ. 114, ց. 1, գ. 134, թ. 1:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134, թ. 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10: Լուսանկարներ «Աղբուլաղի և Ջաջուռի սպանդանոցներից»:

³ Սարգսյան Գ., Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում // «Գարուն», 1990, թիվ 4, էջ 43:

⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 15:

⁵ Տե՛ս Թուրք-հայկական պատերազմը (28.09-18.11.1920 թ.) // Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2008, էջ 109:

⁶ Տե՛ս Ալեքսանեան Գ., նշվ. աշխ., էջ 378:

տիրող խառնաշփոթ վիճակը: Թուրքերն ամեն միջոցի դիմում են գոտուն սահմանակից շրջանների բնակչությանը տնտեսապես վերջնականորեն քայքայելու և ստրկացնելու համար¹: Ղարաքիլիսայի գավառի մի մասը գտնվում էր «չեզոք գոտում»: Թուրքական ոտնձգություններ են տեղի ունենում նաև այդ հատվածում: Թուրքական շարժը «չեզոք գոտում» ակտիվանում է, երբ Համամլու գյուղում տեղակայված Ղարաքիլիսայի կայազորի կարմիրբանակայինների բաժանմունքը կայազորի պետի որոշմամբ հետ է կանչվում: Այդ նույն օրը թուրքերը սկսում են առնանգել կանանց, հափշտակել անասուններ²: Թալանի դեպքեր են արձանագրվում Ղարալ (ներկայումս՝ գյուղ Կաթնաջուր Լոռու մարզում), Քյուլուջա (ներկայումս՝ գյուղ Սարահարթ Լոռու մարզում), Սպիտակ (ներկայումս՝ գյուղ Լեռնանցք Լոռու մարզում), Ղաչաղան (ներկայումս՝ գյուղ Լեռնավան Լոռու մարզում), Որդնավ, Փամբ (ներկայումս՝ գյուղ Լեռնապար Արագածոտնի մարզում) գյուղերում: Թուրքերը տանում էին այն ամենը, ինչը հնարավոր էր տեղաշարժել³: Թալանվել էին նաև զանգվածային կոտորածների ենթարկված երեք գյուղերը՝ Ղալթախչին, Ղարաբոյաը, Աղբուլաղը: Աղբաբայից (համապատասխանում է Ամասիայի և մասամբ Աշոցքի շրջաններին, Շիրակի մարզ) այդ շրջաններ են բերվել մեծ քանակությամբ սայլեր (500 սայլ)՝ կոտորված ազգաբնակչության ունեցվածքը տեղափոխելու նպատակով⁴: Հայտնի է, որ թուրքերը Ղալթախչին անվանակոչում են Քյուլուկ Իստամբուլ (Փոքր Ստամբուլ): Այսպես էին անվանում այն գյուղերը, որտեղից մեծ հարստություն էին ձեռք բերում: Այդպես են անվանել նաև Հաջի Նազար գյուղը (ներկայումս՝ գյուղ Կամո Շիրակի մարզում) Ալեքսանդրապոլի գավառում⁵: Փամբակի հիշյալ գյուղերը 1918 թ. թուրքական արշավանքի հետևանքով դարձյալ կրել էին ֆիզիկական, տնտեսական և նյութական կորուստներ⁶:

Հայաստանի խորհրդայնացման ժամանակ «չեզոք գոտու» տարածքը կառավարվում էր Հայկական վարչության կողմից⁷: «Չեզոք գոտին» վերացվեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո⁸:

Ղարաքիլիսայի Գավկումի 1921 թ. հուլիսի 4-ի ժողովի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Նալբանդի շրջանը գտնվում է ծայրաստիճան քայ-

¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 80, 81:

² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 15:

³ Նույն տեղում:

⁴ «Ղալթախչի եւ Փոքր Քապանաքի ազգաբնակչութիւնը տեղահանուած» // «Յառաջ», 1920, թիվ 263, էջ 2, «Թուրքերի գրաւուած վայրերում» // «Յառաջ», 1920, թիվ 264, էջ 2:

⁵ **Հախոյան Վ.**, նշվ. աշխ., էջ 82:

⁶ ՀԱԱ, ֆ. 240, ց. 1, գ. 326, թ. 62:

⁷ Տե՛ս Հայաստանի խորհրդայնացումը (12. 1920 թ. - 07. 1921 թ.) // Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2008, էջ 112: «Չեզոք գոտու» ներկայացված սահմաններում որոշակի անճշտություն կա՝ պետք է սկսվի Նալբանդ կայարանից, սկսվում է Համամլուից:

⁸ Նույն տեղում, էջ 114-115:

քայլված վիճակում: Զանգվածային կոտորածների ենթարկված Ղալթախչի, Աղբուլաղ, Ղարաբոյա գյուղերի ողջ մնացած բնակչությունը սովահար վիճակում էր¹:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ քեմալականների կատարած զանգվածային կոտորածները Ղարաքիլիսայի գավառում թուրքական պետության ցեղասպան հանցավոր քաղաքականության հետևողական շարունակությունն էր: Թուրքերը կոտորում էին գրավյալ տարածքների հայ խաղաղ բնակչությանը, նրանց մի մասին դարձնում տարագիր: Այդ զանգվածային հանցագործություններն իրագործվում էին հատուկ մտադրությամբ՝ մարդկանց ֆիզիկապես ոչնչացնելու և հոգեկան խեղումներ պատճառելու եղանակներով, որոնք ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի տվյալ հանցագործության հանցակազմի կարևոր բաղադրատարրերն են:

Վազգեն Հախոյան – Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Ղարաքիլիսայի գավառում (1920-1921 թթ.)

Հռդվածում ներկայացվում են 1920-1921 թթ. քեմալականների կողմից Ղարաքիլիսայի գավառում հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված կոտորածները, բռնաճնշումներն ու թալանը և նրանց հետապնդած նպատակները: 1920 թ. թուրք-հայկական պատերազմը ողբերգական հետևանքներ ունեցավ Վանանդի (Կարսի) և Շիրակի նահանգների համար: Քեմալականները ռազմակալեցին նաև Ղարաքիլիսայի գավառի մի հատվածը: Թուրքական զորքերի կողմից Փամբակի տարածքը ենթարկվել է կրկնակի կոտորածների: Համեմատական վերլուծության են ենթարկվել 1918 թ. օսմանական և 1920 թ. քեմալական արշավանքների հետևանքները Փամբակի տարածքում: Եթե 1918 թ. օսմանյան արշավանքի ժամանակ հիմնական հարվածը տրվեց Փամբակի արևելյան շրջանին, մասնավորապես Մեծ Ղարաքիլիսային, ապա 1920 թ. քեմալական արշավանքի ժամանակ՝ Փամբակի արևմտյան շրջանին: Զաջուռի լեռնանցքից մինչև Նալբանդ կայարան հատվածի բնակչությունը ենթարկվեց կոտորածի: Փամբակի տարածքում քեմալական զինուժի և մոլեռանդ խուժանի կողմից մինչև հերթական զինադադարի կնքումը երեք օր տեղի ունեցան դաժան ու արյունալի կոտորածներ: Սպանվեցին հազարավոր մարդիկ՝ կանայք, երեխաներ, ծերեր: Տեղի բնակիչների հետ կոտորվեցին նաև այս տարածքում ապաստանած 7500 փախստական Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից: Ուսումնասիրությունները և կատարված վերլուծությունները փաստում են քեմալականների կողմից հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպան գործողությունները: Ղարաքիլիսայի գավառի՝ կոտորածները կարելի է համարել Հայոց ցեղասպանության շարունակականությունը՝ արդեն Արևելյան Հայաստանի տարածքում:

¹ ՀԱԱ, ֆ. 504, ց. 1, գ. 3, թ. 27:

Вазген Ахоян – Массовые погромы, осуществленные кемалистами в Каракилисском уезде (1920-1921 гг.)

Ключевые слова – Каракилисский уезд, Александропольский уезд, Ширакская область, Памбак, кемалисты, резня, холокост, геноцид, сопротивление

В статье представлены резня, репрессии и грабежи, осуществленные кемалистами по отношению к мирному армянскому населению в Каракилисском уезде в 1920-1921 годах, а также преследуемые ими цели. Турецко-армянская война 1920 года имела трагические последствия для провинций Вананд (Карс) и Ширак. Кемалисты вторглись в часть Каракилисского уезда. Район Памбак подвергся двойной резне со стороны турецких войск. Были проведены сравнительные анализы последствий османских и кемалистских нашествий 1918 и 1920 гг. на территории Памбака. Если в 1918 г. во время османского вторжения основной удар пришелся на восточный регион Памбак, особенно на Большой Каракилис, то в 1920 году во время кемалистского вторжения – на западную часть Памбака. Население на участке от горного перевала Джаджур до станции Налбанд было уничтожено. До подписания кемалистской мафией очередного перемирия в районе Памбак, в течение трех дней происходили жестокие и кровавые расправы. Были убиты тысячи людей – женщины, дети, старики. Вместе с местными жителями было расстреляно 7500 беженцев из Карсского и Александропольского районов, укрывшихся в этом районе. Исследования и проведенный анализ доказывают геноцидальные действия, совершенные кемалистами в отношении мирного армянского населения. Погромы в Каракилисском уезде можно считать продолжением Геноцида армян, уже на территории Восточной Армении.

Vazgen Hakhoyan – Massacres Executed by the Kemalists in Karakilisa Province (1920-1921)

Key words – Karakilisa Province Aleksandrapol Province, Shirak region, Pambak, neutral zone, Kemalists, massacres, holocaust, genocide, resistance

The article presents the massacres, repressions and looting, and the goals they pursued, carried out by the Kemalists against the Armenian civilian population in Karakilisa province in 1920-1921. The Turkish-Armenian war of 1920 had tragic consequences for Vanand (Kars) and Shirak provinces. The Kemalists also invaded a part of Karakilisa province. The Pambak area was twice subjected to massacres by Turkish troops. Comparative analyses of the Ottoman invasions of 1918 and the Kemalist invasions of 1920 in the area of Pambak were made. If during the Ottoman invasion of 1918 the main blow reached the eastern region of Pambak, particularly the Great Karakilisa, then during the Kemalist invasion of 1920 it reached the western region of Pambak. The population of the area from Dzhadzhur mountain pass to Nalband station was massacred. Cruel and bloody massacres took place in the area of Pambak for three days by the fanatical mob and the Kemalist armed forces, until the signing of another ceasefire. Thousands of people were killed – women, children and the elderly. 7500 refugees from Kars and Alexandropol regions, who found refuge in this area, were massacred together with the locals. Studies and the analyses carried out prove the genocidal acts committed by the Kemalists against the Armenian civilian population. The massacres of Karakilisa province can be considered the continuation of the Armenian Genocide, already within the territory of Eastern Armenia.

Ներկայացվել է 07.04.2022

Գրախոսվել է 26.04.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Վազգեն Հախոյան – Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ (van.karno@gmail.com)

ՄԵՐՁԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ
ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ*

*Բանալի բառեր – մերձամուսնություն, կին, քրիստոնեություն, եկեղեցի, կանոնա-
կան իրավունք, ազգակցական աստիճան, օրենսդիր ժողով, կաթողիկոսական կոնդակ*

Որքան էլ որ մարդկության պատմության տարբեր ժամանակներում եղել են խառնամուսնություններ¹, այնուամենայնիվ նոր քաղաքակրթությունների ժողովուրդներն արդեն կարևորում էին բարոյական որոշակի հարցեր: Քրիստոնեությունն սկսում է նոր ձևեր որոնել ոչ միայն հասարակության վարքագծի կարգավորման, այլև հասարակությանը սպառնացող հիվանդությունները կանխելու համար: Ելակետային են համարվում քրիստոնեության հումանիստական-բարոյական օրենքով ապրելու սկզբունքը, չարի և բարու թույլատրելիության սահմանների ու բարոյական շրջանակների հստակեցումը, որոնք կօգնեն մարդուն հասկանալ իր կյանքի իմաստը, նպատակը, բարոյական դիրքորոշումը, ամուսնական հարաբերությունների արյունակցական (ինքնատուոգ) կապերի վերանայումը, կնոջ արժևորման փոփոխությունը:

Քրիստոնեական արժեհամակարգի արմատավորմամբ մարդկությունն արդեն սկսեց պատկառանք զգալ ընտանիքի նկատմամբ՝ որպես սրբություն, և դնել մի հստակ սահման արյունակիցների ամուսնության հարցում: Տարբեր ազգերի մեջ տարբեր են եղել արյունակիցների ամուսնության արգե-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Արիստակես Եպիսկոպոս Մեղրակյանը բերում է օրինակներ համընտանի ամուսնությունների վերաբերյալ. երբայական ցեղերի մեջ տեսնում ենք ամենամերձավոր արյունախառնության օրինակներ: Բայց նա նաև ներկայացնում է հակառակ պատկերը: Օրինակ՝ հռոմեացիների ազգականները չէին կարող միմյանց հետ ամուսնանալ, Հնդկաստանում, ինչպես նաև Չինաստանում ապօրինի էր համարվում ամուսնանալ միևնույն տոհմական անունը կրող կնոջ հետ: Որչափ էլ որ արական գծի ազգակցությունը հեռավոր լինի, միևնույնն է, այս պարագայում ամուսնությունը բացարձակ արգելք էր: Չինաստանում կան նաև այլ արգելքներ, օրինակ՝ օրենքը թույլ չի տալիս երկու եղբայրներին ամուսնանալ երկու քույրերի հետ, ինչպես նաև այրիացած տղամարդը չի կարող իր որդուն ամուսնացնել այն այրի կնոջ աղջկա հետ, ում հետ ինքն է ցանկանում ամուսնանալ (տե՛ս Մեղրակեան Ա. Եպս., Ամուսնական խնդիրներ, գիրք Ա, Մոսկւա, 1891, էջ 15-17): Այստեղ նկատելի են երկու ծայրահեղ մոտեցումներ:

լանքի աստիճանները՝ համապատասխանեցված տվյալ ժողովրդի կրոնական, բարոյական և իրավական ընկալումներին:

Ինչպես քրիստոնյա շատ ազգերի, այնպես էլ հայերի մոտ ամուսնացողների միջև ազգակցական հեռավորությունը որոշվում էր ճյուղահամարով կամ «պորտով»: Այս ազգակցական հեռավորությունը սահմանվում էր եկեղեցական կանոնադրությամբ: Այդ կերպ եկեղեցին մեծ և բարերար բարոյական ներգործություն է թողնում հասարակության վրա:

«Կանոնագիրք հայոց»-ի երկրորդ գրքում կա Թաղևուս առաքյալի անվամբ ավանդված կանոնական խումբ¹, որի 31-րդ կանոնը վերաբերում է ազգակիցների ամուսնությանը և խիստ դատապարտում վերոհիշյալ երևույթը՝ նշելով, որ այս պարագայում պետք է լուծարել ամուսնությունը և նրանց ենթարկել ծանր ապաշխարության²: Թեև հաստատված չէ այդ կանոնների՝ առաքյալի կողմից գրված լինելու փաստը, այնուամենայնիվ հայ առաքելական եկեղեցին, որի հիմնադիրը Թաղևուս առաքյալն է, չի կարող իր ուշադրությունից դուրս թողնել վերջինիս վերագրվող կանոնախումբը, քանի որ այն գրեթե ամբողջությամբ համապատասխանում է հայ առաքելական եկեղեցու կանոնական իրավունքին:

Հայոց առաջին եկեղեցական ազգային ժողովը տեղի է ունեցել Աշտիշատում 354 թ.՝ Ներսես Մեծի գլխավորությամբ, որը պաշտոնական կանոններ սահմանող ժողովների հիմքն է դնում Հայաստանում³: Աշտիշատի ժողովն արգելեց մերձավորների ամուսնությունը: Բանն այն է, որ հայկական նախարարական միջավայրում շատ տարածված էին տոհմական ժառանգությունը պահպանելու, այն է՝ շահադիտական նկատառումներով ազգակցական ամուսնությունները: Այս երևույթն արդեն խոր արմատներ էր գցել հայկական ազնվական դասում⁴: Բայց այս ժողովի վեց կանոններից հենց առա-

¹ Մելիք Թանգյանը նկատում է, որ այդ կանոնախումբը չի կարող պարտադիր ընդունելի լինել հայ առաքելական եկեղեցու իրավունքի ոլորտում, քանի որ վստահաբար չենք կարող ասել, թե արդյո՞ք այդ կանոններն իսկապես Թաղևուս առաքյալն է ավանդել, թե մեկ ուրիշը: Այնուամենայնիվ, այդ կանոններում հայ եկեղեցուն հակառակ ոչինչ չկա: Այս խնդրի վերաբերյալ Թանգյանը բերում է մի քանի փաստարկ. օրինակ՝ Գրիգոր Լուսավորիչը, Ներսես Մեծը և Սուրբ Սահակն իրենց կանոններում և քարոզներում ոչ միայն չեն հիշատակում Թաղևուս առաքյալի կանոնները, այլև նրա անունը նույնիսկ չեն հիշում իբրև կանոնագիր (տե՛ս **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Բ, Շուշի, 1905, էջ 71, էջ 413):

² Կանոնագիրք հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 39, **Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան (մ. թ. ա. IX - մ. թ. ա. XIX դ.), Երևան, 2001, էջ 88:

³ Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, նշվ. աշխ., գիրք Ա, Շուշի, 1903, էջ 274-275:

⁴ Աշտիշատի ժողովն իր սահմանած կանոնով դատապարտեց այն նախարարներին, որոնք իրենց տոհմական ժառանգությունն ամբողջական պահելու նկատառումներով ամուսնանում էին մերձավոր ազգականների հետ: Բայց պետք է նշել, որ ժողովը պատիժ չի սահմանել արյունակցական ամուսնության սուբյեկտների նկատմամբ: Հավանաբար, եկե-

ջինով արգելվեց մերձավոր ազգականների ամուսնությունը: Ճիշտ է, Աշտիշատի ժողովը չսահմանեց կոնկրետ աստիճանական հեռավորություն, այնուամենայնիվ մերձավոր ամուսնություններն արգելող առաջին քայլն էր¹: Կան վկայություններ, որ առաքելական կանոններով սահմանվել է ամուսնության չորս աստիճան հեռավորություն: Առաքելական կանոնը պահանջում էր խստորեն կիրառել Մովսեսի օրենքները՝ չամուսնանալ մոտիկ ազգականի, քրոջ, դստեր, հորաքրոջ, մորաքրոջ, հոր կնոջ, որդու կնոջ և քեռու հետ: Սեռական կենսակցությունը մինչև չորրորդ զարմը դատապարտվում էր: Թեև այդ ժամանակ տակավին օրինական էր համարվում եղբոր մահից հետո նրա կնոջ հետ մյուս եղբոր ամուսնությունը: Ներսես Մեծը արյունակցական մերձավոր ամուսնությունը որակում էր «խառնակցություն», «անարժան և չար վարք», «պիղծ ամուսնություն» և այլն²:

Մերձավոր ազգականների ամուսնությունների հաջորդ արգելքը սահմանում է Շահապիվանի 444 թ. ժողովի 13-րդ կանոնը³. «Ոչ ոք չհամարձակվի ամուսնանալ քեռորդու, եղբորորդու կամ հորաքրոջ և այլ ազգականի հետ մինչև չորրորդ ծնունդը: Այն հոգևորականը, ով գիտենալով կկատարի այսպիսի պսակ կամ կօրհնի այդ պսակը, կզրկվի իր հոգևոր աստիճանից: Իսկ եթե, այնուամենայնիվ, ամուսնությունը կայացել է, և ամուսնացածները պիղծ ամուսնությունից ետ են դառնում, ապա պետք է իրենց ունեցածի կեսը բաժանեն կարոտյալներին և իրենց կյանքն անցկացնեն ապաշխարելով: Իսկ նրանց պսակած հոգևորականները գումար պետք է բաժանեն աղքատներին և ապա նոր վերսկսեն իրենց քահանայությունը»⁴: Շահապիվանի ժողովի կանոններից եզրահանգում ենք, որ հոգևորականը՝ որպես Տիրոջ սպասավոր, միևնույն հանցանքի համար համեմատաբար ավելի մեղմ պատիժ էր կրում, քան աշխարհիկը⁵:

Աղվանից արքա Վաչագանի կանոնական Սահմանադրության (V դար) մեջ նշվում է, որ ոչ մի տղամարդ երկրորդ պորտի ազգակցուհի չպետք է առնի և եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա⁶:

դեցին դեռևս այնքան մեծ հեղինակություն չէր ազնվական դասի համար, որպեսզի կարողանար պարտադրել: Որոշ պատմիչներ թողել են հիշատակություններ այն մասին, որ հայոց մեծամեծերն այս հարցում արհամարհում էին Ներսես կաթողիկոսի արգելքները: Տե՛ս **Աղոյան Ա. Դ.**, Հայկական ամուսնա-ընտանեկան հարաբերությունները միջնադարյան օրենքներում // «ՊԲՀ», 1965, թիվ 3, էջ 51:

¹ Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 276:

² Տե՛ս **Աղոյան Ա. Դ.**, նշվ. աշխ., էջ 50:

³ Առհասարակ, Շահապիվանի ժողովի 19 կանոններից ինը բացառապես վերաբերում են ամուսնաընտանեկան և սեռական կենսակցության խնդիրներին: Այստեղից ինքնին բխում է այն եզրակացությունը, որ հայոց կենցաղից չէին անհետանում սովորության իրավունքի նախկին նորմերը: Տե՛ս նույն տեղում, էջ 52:

⁴ **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 293:

⁵ Տե՛ս **Աղոյան Ա. Դ.**, նշվ. աշխ., էջ 52:

⁶ Տե՛ս **Ավագյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 139:

Պարտավի 768 թ. ժողովը ևս արգելեց մերձավոր ազգականների ամուսնությունը և հստակ սահմանեց, որ մինչև չորրորդ զարմ չի կարելի ամուսնանալ, այլապես ամուսնացողները նզովքի կարժանանան¹:

Փաստորեն, Աշտիշատի ժողովում առաջին անգամ արգելվեց մերձավորների ամուսնությունը, իսկ Շահապիվանում ևս մեկ անգամ հաստատվեց մինչև չորրորդ զարմի արգելքը: Կարելի է ասել, որ Պարտավի ժողովի 16-րդ կանոնի բովանդակությունը համընկնում է Շահապիվանի ժողովի 13-րդ կանոնին: Պարտավի ժողովի կանոնների այս հատվածի ընդունումը վկայում է, որ այս շրջանում դեռևս շարունակվում էին քրիստոնեական կարգերի տարածումն ու ամրապնդումը: Եկեղեցին ամեն ջանք գործադրում էր ամուսնական կարգերը առավել բարոյական հիմքերի վրա դնելու համար: Երբ խոսքը վերաբերում է, օրինակ, մերձավորների կամ անհավատների հետ ամուսնություններին, կարելի է ենթադրել, որ, չնայած նախորդ դարերում ընդունված կանոններին, հավանաբար նման անընդունելի ամուսնություններ դեռևս կատարվում էին, ուստի Պարտավի ժողովը ևս մեկ անգամ խստորեն դատապարտում էր այս տեսակ անօրեն ամուսնությունները:

Ներսես Շնորհալին ամուսնության համար առաջին անգամ սահմանում է ազգակցական ամուսնության պարագայում ութ աստիճան հեռավորությունը: Կանոնը պահանջում էր, որ միայն ինը և տասը աստիճանի միջև լինեն ազգակցական ամուսնությունները կամ ութերորդը՝ իննի հետ²:

Հայոց եկեղեցական ազգային օրենսդիր ժողով գումարվեց Սսում 1243-1246 թթ: Այն հրավիրվել է Կոստանդին կաթողիկոսի³ նախաձեռնությամբ՝ Հեթում թագավորի և նրա որդու մասնակցությամբ: Այստեղ ընդունվել են 25 կանոններ, որտեղ կրկին սահմանվում են ազգականների միջև արյունակցական հեռավորության աստիճանը, ամուսնության համար չափահասության տարիքը: Մասնավորապես, յոթերորդ կանոնը սահմանում է, որ պսակը վեց աստիճանով հեռու արյունակիցների միջև չի կարող լինել: Այն է՝ սահմանվում է ամուսնական յոթ աստիճանի հեռավորություն: Մենք տեսանք, որ սրանից առաջ Ներսես Շնորհալին այլ աստիճան էր սահմանել, որը հավանաբար շատ էր: Մինչ օրս Սսի 1246 թ. ժողովում ընդունված յոթը պորտը համարվում է վերջնական արգելական կետը և թույլատրական աստիճանը ազգակցական ամուսնությունների պարագայում⁴:

Անդրադառնալով հայ եկեղեցու նոր շրջանին՝ կտեսնենք, որ մերձ-

¹ Տե՛ս Կանոնագիրք հայոց, էջ 12:

² Տե՛ս **Ներսես Շնորհալի**, Ընդհանրական Թուղթ Սրբոյն Ներսիսի, Յերուսաղէմ, 1871, էջ 62-64:

³ Խոսքը Կոստանդին Ա Բարձրաբերդցի Ամենայն հայոց կաթողիկոսի մասին է (1221-1267): Տե՛ս **Ամենայն հայոց կաթողիկոսներ**, Հայ եկեղեցու հանրագիտարան, պրակ Ա, Ս. Էջմիածին, 2008, էջ 106:

⁴ **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 71, 394-395:

ամուսնությունների վերաբերյալ կատարվել են մասնակի շտկումներ կամ փոփոխություններ: Սակայն, որքան եկեղեցին փորձում էր խստորեն պահպանել ամուսնական յոթը պորտի կանոնը, այդուհանդերձ հայ իրականության մեջ նկատվում էին որոշակի շեղումներ նույնիսկ բարձրաշխարհիկ միջավայրում: Դրա տիպիկ օրինակը Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի և Խաչատուր Լազարյանի միջև միջադեպն է¹:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը 1875 թ. հրատարակել է պսակի մասին կանոններ, որտեղ կրկին արգելում է արյունակիցների և մերձավորների ամուսնությունը²:

Մկրտիչ Ա Վանեցին իր 1899 թ. հունիսի 30-ի կաթողիկոսական կոնդակով թույլ է տվել, որ հինգերորդ խնամիական աստիճաններով պսակ կատարվի և այն էլ կոնսիստորիաների հրամանով՝ առանց Սինոդին դիմելու: Այնուհետև՝ 1899 թ. դեկտեմբերի 17-ին համար 1490 կոնդակով թույլ է տալիս Սինոդին ազգակցական յոթ աստիճանում պսակ կատարել³: Այս մասին գրում է Ս. Կանայանը՝ նշելով, որ ամուսնության համար սահմանված աստիճաններից ամեն մի շեղում զայրացնում է մանավանդ հասարակ ժողովրդին: Բայց և այդ նույն ժողովուրդը հաճախ օգտվում էր Խրիմյան Հայրիկի՝ ամուսնության աստիճանների թուլացման վերաբերյալ հայրապետական կոնդակի դրույթներից⁴: Այսինքն, Մկրտիչ Խրիմյանի սկզբում սահմանած հինգերորդ աստիճանը⁵ թուլացնում էր դրանից առաջ սահմանված ամուսնական աստիճանական հեռավորությունը, ինչը կրկին շեղվում էր ճիշտ կանոններից, և հավանաբար, մեծանուն Հայրապետը, ինքն էլ գիտակ-

¹ Խաչատուր Լազարյանի միակ արու զավակը՝ Հովհաննեսը, վախճանվել էր վեցուկես տարեկան հասակում, իսկ դուստրերից մեկն ամուսնացած էր օտարազգի տղամարդու հետ: Ուստի Խ. Լազարյանը խնդրում է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին, որ վերջինս թույլ տա իր դուստրերին Աննային և Եղիսաբեթին, ամուսնացնել իր քրոջ՝ Մարիամի որդու և իր մյուս քրոջ՝ Մարթայի որդու հետ, որը ազգակցական չորրորդ աստիճան էր համարվում: Կաթողիկոսը մերժում է Լազարյանի խնդրանքը՝ պատասխանելով, որ եկեղեցական օրենքը պարտադիր է բոլորի համար, լինի հարուստ թե աղքատ: Ներսես Աշտարակեցու մերժումից հետո Լազարյանը մի քանի անգամ կրկին դիմում է նրան՝ նպաստներ խոստանալով, ինչից կաթողիկոսն ավելի է վրդովվում: Բայց Խ. Լազարյանը չի հրաժարվում իր մտքից, և հետագայում՝ 1852 թ., Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսից ստանում է արտոնությունը: Այս միջադեպից հետո Ներսես Աշտարակեցու և իշխան Խաչատուր Լազարյանի լավ հարաբերությունները դարձան թշնամական (տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, սյուն 4450-4451):

² Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն. Վ.**, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 560-561:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 590:

⁴ Տե՛ս **Կանայանց Ս.**, Ամուսնական արտակարգ երևույթներ // «Արարատ», 1917, հունիս-հուլիս, էջ 517:

⁵ «Ավելի ճշդությամբ վարուեացաւ ազգակցութեան և խնամութեան ճիւղերով արգիլուած ամուսնութիւնները թուլցնելու մէջ, ազգակցութեան արգելքը եօթնէն վեցի վերածելով, եւ խնամութեան արգելքը եօթնէն չորսի իջեցնելով եւ կնքահայրութեան կամ հոգեւոր ազգակցութեան արգելքն ալ երեքի մէջ ամփոփելով»: Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., սյուն 5742:

ցելով այս, վերանայեց իր որոշումը՝ ազգակցական հինգ զարմը փոխելով յոթի:

Շատ հաճախ, սակայն, հաշվի չառնելով եկեղեցու կողմից սահմանված կանոնները, չորս աստիճանի սահմանը խախտվում էր¹: Հայտնի է, որ Տիրան վրդ. Ներսոյանը 1940 թ. փետրվարի 9-ին դիմում է կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին՝ Պատրիկ և Վերա Կուլպենկյանների՝ չորս պորտ ազգակցությամբ չհաս ամուսնությունը թույլատրելու խնդրանքով: Կա նաև խնդրանքի՝ 1940 թ. մարտի 29-ի պատասխանը: Ստորև մեջբերում ենք խնդրանք նամակը², որից պարզ է դառնում, որ հայ եկեղեցին թույլատրել է այս ամուսնությունը: Եվ այս պարագայում հայ եկեղեցին դրսևորել է լայնախոհություն, քանի որ այդ գույզին սպասվող հասարակական խարանձու ամոթանքը հավանաբար կմեղմվեին եկեղեցական ամուսնության դեպքում: Սա, իհարկե, եզակի բացառություն է, որը կարող է ընդունելի չհամարվել շատերի համար, քանզի ոչ միայն եկեղեցական իրավունքի տեսանկյունից, այլև քրիստոնեական բարոյականության արժեքների դիտանկյունից երևույթը խիստ դատապարտելի է: Սրա վառ ապացույցն են վերոհիշյալ կանոնական դրույթների մեջբերումները, որոնք պարզորոշ են դարձնում մերձամուսնությունների արգելքը հայոց մեջ: Բնությունն ինքնին դեմ է ազգականների ամուսնությանը, քանի որ կենսաբանական և ֆիզիոլոգիական

¹ Տե՛ս **Բենսե**, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Ընտանեկան բարք և սովորություն // «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ «ԱՀ»), 1899, գիրք Ե, թիվ 1, էջ 118:

² Մեջբերում ենք խնդրանքն ու պատասխանը. «Տեղույս գաղութի անդամներէն Պատրիկ Կիւլպենկեան, ծնած 1904-ին, որդի Բարսեղ Կիւլպենկեանի, և Վերա Գ Կիւլպենկեան, ծնեալ 1915, դուստր եղբոր վերոյիշեալ Բարսեղ Կիւլպենկեանի, երկար ժամանակէ ի վեր սիրով կապուած ըլլալով իրարու, եւ չուզելով օտարի հետ ամուսնանալ, այս տարուայ ապրիլին, երբ տեղույս քահանան վախճանած էր, կնքած են քաղաքային ամուսնութիւն: Յիշեալ զոյգը իրարու հօրեղբոր գաւակ լինելով, իբրեւ չորս պորտ, չհաս են իհարկէ: Սակայն աւելի քան տասը ամիսէ ի վեր միացած են եւ կինն յղի ալ է: Կը փափակին Ս. Պսակով օրինութիւն ստանալ եկեղեցույ մեջ: Եթէ դիմեն օտար եկեղեցի՝ իրենց համար դժուար չէ պսակուիլ, վասնզի բացի չհասութեան պարագայէ-այլապէս ամէն ինչ կարգին է: Իսկ իրենք ազգասէր եւ եկեղեցասէր երիտասարդներ են, թէեւ ազդուած ժամանակին անկանոն ոգիէն, եւ չեն փափաքէր որ եկեղեցիէ դուրս գաւակ ունենան:

Ուստի պիտի խնդրէի Ձեր Բարձրաշնորհ Սրբազնութենէն Արտօնութիւն, եթէ պատշաճ դատեք ներել, կատարելու վերոյիշեալ զոյգին պսակը, նախ քան գաւակի ծնունդը, որպէսզի կարելի ըլլայ սորանով նաեւ նորածինը մկրտել իբրեւ օրինաւոր ծնողաց գաւակ...»:

Պատասխան նամակից հատված. «Գ. Հ. Խորհուրդը լսեց զեկուցումն Պատրիկ Կիւլպենկեանի եւ Վերա Կիւլպենկեանի ամուսնութեան մասին՝ արենակցութեան չորրորդ աստիճանաւ:

Խորհուրդը որոշեց ի նկատ առնելով գործի բացառիկ հանգամանքները, ինչպէս նաեւ աստիճանակցութեան նոյն աստիճանի թոյլտուութեան նախընթացները՝ արտօնել Պատրիկ եւ Վերա Կիւլպենկեանների ամուսնութիւնը ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցույ»: Տե՛ս **Վավերագրեր հայ եկեղեցու պատմության**, գիրք ԺԲ, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան (1904-1989 թթ.), Սբ. Էջմիածին, 2004, էջ 56:

հետազոտությունները ցույց են տվել, որ համարյա մերձեցումից ծնված երեխաները կարող են ունենալ առողջական լուրջ խնդիրներ¹:

Արյունակցական ամուսնության բացառիկ օրինակներ նշում է նաև Ստեփան Կանայանցը՝ հիշատակելով կրկին Լազարյանց տոհմի մերձավոր ամուսնության կապերը: Նաև վերհիշում է Սուրմալուի գավառում մորաքրոջ աղջկա հետ կենակցության մի դեպք²:

Մերձամուսնության դրսևորումներ եղել են նաև Զաքարյան սպասալարների, հայ Օրբելյանների, Բագրատունյաց, Արծրունյաց և Սյունաց տոհմերի միջև, Կիլիկյան թագավորությունում³:

Այդուհանդերձ, բացի բուն արյունակցությունից, եղել են նաև այլ արտակարգ հանգամանքներ, որոնց պարագայում ևս չի թույլատրվել ամուսնություններ: Օրինակ՝ Մխիթար Գոշը սահմանում ունի այն անձանց ամուսնության մասին, ովքեր մեկ մոր կաթով են սնվել⁴: Խոսքը «Դատաստանագրքի» ՃՂԳ գլխի մասին է, որտեղ նա հարց է տալիս, թե արդյոք նրանք, ովքեր օտար են միմյանց, բայց սնվել են մեկ մոր կաթով, երբ հասուն տարիքում լինեն, կարող են միմյանց հետ ամուսնանալ: Մխիթար Գոշի պատասխանն արգելող է, քանի որ, ըստ նրա՝ ծնողը և ստնտուն նույնն են⁵: Այս մասին կարդում ենք նաև Ռուբեն Ավագյանի «Հայ իրավական մտքի գանձարան» գրքի «Թաղետոս առաքյալին վերագրվող 33 կանոնները» գլխի ԼԱ կանոնում, որտեղ նույնպես նշվում է, որ նույն կաթով սնվածներն ամուսնանալ չեն կարող⁶:

Ուշագրավ փաստ է, որ ո՛չ եկեղեցական, բայց սովորության իրավունքով թույլ չի տրվել որդեգրին ամուսնանալ որդեգրողի որդիների, քույրերի կամ եղբայրների հետ⁷: Եկեղեցին նույնպես դեմ է այսպիսի ամուսնությանը: Սա բացատրվում է նրանով, որ երբ մարդը երեխա է որդեգրում, նա նրան ընդունում և մեծացնում է որպես իրենից ծնված երեխաների քույր կամ եղբայր՝ հարազատության սկզբունքով: Սա է պատճառը, որ եկեղեցին, չնայած արյունակցական կապի բացակայությանը, մեկ ընտանիքում մեծացած երե-

¹ Տե՛ս **Սեդրակեան Ա. Եպս.**, նշվ. աշխ., էջ 19-20:

² Տե՛ս **Կանայանց Ս.**, նշվ. աշխ., էջ 518:

³ Տե՛ս **Ադոյան Ա. Դ.**, նշվ. աշխ., էջ 53:

⁴ Իրենց մանկիկներին դիեցնելու (սնուցանել կաթամբ ստեանց) (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևան, 1979, հ. Ա, Ա-Կ, էջ 623) պարտականությունից ազնվական հայ մայրերը երբեմն հրաժարվել են, նրանց կյանքի այդ ամենից նեղացուցիչ շրջանը չկարողանալով հաշտեցնել իրենց փափկակեցության հետ, ուստի այդ հոգսն օտարներին են հանձնել (տե՛ս **Հաջունի Վ.**, Հայուհին պատմութեան առջեւ, Թեհրան, 2009, էջ 88): Մրա պատճառն այն է, որ կանայք երբեմն ցանկանում էին պահպանել իրենց կազմվածքը և այդ իսկ պատճառով երեխային հանձնում էին ստնտու կանանց:

⁵ Տե՛ս **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, Երևան, 1975, էջ 112: Տե՛ս նաև **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Գ խմբագրություն, Երևան, 2005, էջ 132:

⁶ Տե՛ս **Ավագյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 88:

⁷ Տե՛ս **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, Ընտանեկան բարք, ամուսնութիւն եւ հարսանիքի սովորութիւններ // «ԱՀ», գիրք Զ, 1900, էջ 243-244:

խաներին համարում է հարազատ քույր ու եղբայր և դեմ է այս տեսակ ամուսնություններին:

Եկեղեցին բացարձակապես արգելում է որևէ ամուսնություն քավորի և սանամոր միջև՝ համարելով այն հավասար առաջին կամ երկրորդ աստիճանի ազգակցության¹:

Խորթ արյունակիցների համար եկեղեցական ժողովներում առանձին կանոններ չեն նշվում: Միայն հիշատակություններ են եղել այն մասին, որ խորթ արյունակիցների համար ևս գործել են նույն կանոնները, ինչ որ հարազատների համար: Հակոբ Ղրիմեցին առանձնացնում է խորթության երկու տեսակ. խորթ՝ հոր կողմից և խորթ՝ մոր կողմից: Նրա կարծիքով՝ նրանց համար, ովքեր մի հորից են և երկու մորից, եկեղեցով սահմանված կանոնները արյունակցության հարցում նույնը պետք է լինեն, ինչ որ հարազատների համար: Իսկ նրանք, ովքեր մի մորից են և երկու հորից, այդ աստիճանը երկուսով պետք է պակասեցնել²:

Համադրելով մեզ հասած սովորությանին և եկեղեցաիրավական տեղեկությունները մերձամուսնությունների մասին՝ տեսնում ենք, որ Աշտիշատի ժողովից սկսած՝ հայ առաքելական եկեղեցին փորձել է կարգավորել ժողովրդի ամուսնական հարցերը՝ դրանց նկատմամբ դրսևորելով բազմակողմանի մոտեցում: Համեմատելով տարբեր շրջաններում ազգակցական ամուսնությունների կամ կենակցությունների վերաբերյալ եկեղեցու ընդունած կանոնները՝ տեսնում ենք, որ քրիստոնեության ընդունումից սկսած մինչև մեր օրերը ազգակցական այդ աստիճանական հեռավորությունը ենթարկվել է մասնակի փոփոխության: Վաղ միջնադարում սահմանված չորս աստիճանը միջնադարում փոխարինվել է նույնիսկ մինչև ինը կամ տասը աստիճանով: Հետագայում հստակ սահմանվել է «յոթ պորտ» հեռավորությունը:

Ամփոփելով մերձամուսնությունների վերաբերյալ քննությունը՝ հանգում ենք այն հետևության, որ երկար դարերի ընթացում հայ առաքելական եկեղեցին իր ժողովներով և կաթողիկոսական կոնդակներով սահմանել է կարգեր, որոնց վերջնական արմատացման համար պահանջվել են մեծ ջանքեր: Հայ ժողովուրդը, բավականին ժամանակ ապրելով նահապետական կյանքով, փորձել է ամուր պահել ամուսնության համար սահմանված «յոթը պորտը»: Իհարկե եղել են շեղումներ և դրանցից բխող բացառություններ: Այնուամենայնիվ փաստենք, որ ազգակցական ամուսնությունները կամ մերձամուսնություններն անըդունելի են համարվում և՛ բնության, և՛ ժողովրդական սովորույթների, և՛ եկեղեցական իրավունքի, և՛ ի վերջո՝ առողջ սերունդ ունենալու տեսակյունից: Եկեղեցին, մուտք գործելով այնպիսի բարդ և փակ համակարգ, ինչպիսին ընտանիքն է, սահմանում է միջանձնային հարաբերություն-

¹ Տե՛ս Իփեկյան Գ., Քաւոր // «ԱՀ», XXIV, 1913, թիվ 1, էջ 94:

² Տե՛ս Սեդրակեան Ա. եպս., նշվ. աշխ., էջ 108-109:

ներում բարձր մշակույթ, կրոնաբարոյական կայուն մոդելներ, արժեքային կոդմտորոշումներ, որտեղ կենտրոնական տեղ են զբաղում բարոյական օրենքն ու արժեքները, որոնք զգալիորեն դառնում են քրիստոնեական եկեղեցու մենաշնորհը: Եվ այս ըմբռնումների վրա կառուցված դիրքերից առաջին հերթին այն առանցքային բացահայտումն է արվում, որ բարոյական դիրքորոշումը սերտորեն առնչվում է հոգեկան առողջության հետ:

Այսպիսով, մարդկային հասարակությունը պետք է անցնի երկար ու բարդ ճանապարհ, որպեսզի գուցավորման կենսաբանական ակտից հասնի ամուսնության սոցիալական ինստիտուտի, որում կանանց նկատմամբ վերաբերմունքը կլինի առավել արժեքային:

Լիանա Դալլաքյան – Մերձամուսնությունների խնդիրը հայոց եկեղեցական և սովորության իրավունքի տեսանկյունից

Հոդվածում պահպանելով պատմական ժամանակագրությունը՝ փորձ է արվել ներկայացնել հայոց պատմության տարբեր շրջափուլերում եկեղեցական ժողովների և հոգևոր ու աշխարհիկ տարբեր գործիչների ընդունած ազգակցական ամուսնություններն արգելող կարգերը: Համադրելով և համեմատելով հոդվածում տեղ գտած նյութը՝ ընդգծվել է այն մեծ ազդեցությունը, որն ունեցել է քրիստոնեական արժեքամակարգը հայոց ամուսնական սովորություններից մերձամուսնությունը դուրս մղելու հարցում: Քրիստոնեության հաստատումից հետո հայ եկեղեցին հեթանոսության դեմ պայքարի շրջանակում իր կանոնադիր ժողովներով սահմանել է մերձամուսնություններն արգելող կանոններ, որոնք, ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ կրելով, հասել են մեզ: Հոդվածում տեղ են գտել կաթողիկոսական կոնդակներից մեջբերումներ, որոնք հստակ ընդգծում են հայ եկեղեցու դիրքորոշումը խնդրո առարկայի վերաբերյալ: Քննարկվել են նաև որդեգիր զավակների և խորթ ազգականների ամուսնությանը վերաբերող հարցերը, և այդ քննարկման արդյունքում տեսնում ենք, որ եկեղեցու դիրքորոշումը նույնն է, ինչ որ բուն արյունակցական ամուսնությունների համար:

Лиана Даллакян – Проблема инцестов с точки зрения армянского церковного и обычного права

Ключевые слова – кровнородственный брак, женищина, христианство, церковь, каноническое право, степень родства, законодательное собрание, кондак католикоса.

С соблюдением исторической хронологии в статье представлены правила, запрещающие кровнородственные браки, принятые церковными приходами и разными духовными и светскими деятелями на различных этапах армянской истории. Сопоставляя и сравнивая материал статьи, автор подчеркнул то большое влияние, которое оказала христианская система ценностей в вопросе исключения кровнородственных браков из армянских брачных обычаев. После принятия христианства Армянская церковь в рамках борьбы с язычеством своими каноническими собраниями установила правила, запрещающие кровнородственные браки. Правила дошли до нас с определенными измене-

ниями, произошедшими с течением времени. В статье приведены цитаты из кондаков католикосов, где четко подчеркивается позиция Армянской церкви по данному вопросу. Были также обсуждены вопросы, связанные с браком между приемными детьми, сводными родственниками, и в результате этого обсуждения стало ясно, что позиция церкви такая же, как и в вопросе собственно кровных браков.

Liana Dallakyan – *The Problem of Congeneric Marriages from the Viewpoint of Church and Tradition*

Key words – Congeneric marriage, woman, Christianity, church, Canonical right, degree of kinship, legislative council, order by Chatholicos

Preserving the historical chronology, the article attempts to reveal and show the laws forbidding marriages based on kinship adopted by both Church Councils, as well as the secular and religious laws. Based on the comparisons and contradictions, the article highlights the great influence that the Christian Value System could have on banning kinship marriages. After the adoption of Christianity and within its efforts to fight against the pagan rights, the Armenian Church via its canonical councils could adopt laws and rules to ban marriages between relatives. During the period, those laws and rules underwent slight changes and reached us in the present form. The article contains some citations from orders by the Chatholicos that particularly emphasise the Church's strong attitude towards the matter under discussion. The article also discusses the questions of marriages between adopted children and step-relatives, where the Church has the same attitude. It is very important to mention the excessive role of the Armenian Church in the solution and reinforcement of the marriage issue in our reality, which in its turn greatly favoured to raising and evaluating the role of the Armenian Woman.

Ներկայացվել է 05.04.2022

Գրախոսվել է 13.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Լիանա Դալլաքյան – ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի կրոնագիտության ամբիոնի ասպիրանտ (dallaqyan.liana@bk.ru)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԸ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Բանալի բառեր – Միսաք Մեծարենց, Ռ. Քիփլինգ, Օսկար Ուայլդ, Ջեֆրի Չոսեր, Թոմաս Լավ Փիքոք, Յուզին Ֆիլդ, թարգմանություններ, անգլո-ամերիկյան գրականություն, արձակ, պոեզիա, «Պիմի (Գապիկի մը պատմությունը)»

Այնքան ազդեցիկ է Միսաք Մեծարենցի (1886-1908) քնարերգության հմայքը, գրեթե անհաղթահարելի՝ արվեստի գայթակղիչ ուժը, որ զանց է առնվել նրա ստեղծագործության մի ուշարժան մասը՝ թարգմանական փորձը: Մինչդեռ այն կարող է լրացնել ու ամբողջացնել, եղիշե Չարենցի բնորոշմամբ՝ «հիվանդ, հանճարեղ պատանու» գրական ժառանգությունը: Բնավ չհավակնելով հարցին տալ սպառիչ պատասխան՝ առաջին անգամ փորձենք քննել Մեծարենցի՝ անգլո-ամերիկյան գրականությունից կատարած թարգմանություններն ու փոխադրությունները:

Հայտնի է, որ արևմտահայ գրողները (Հ. Պարոնյան, Պ. Դուրյան, Գր. Զոհրապ, Դ. Վարուժան, Սիամանթո և այլք) հիմնականում հրաշալի տիրապետել են ֆրանսերենին: Բացառություն չէր նաև Մեծարենցը: Բայց, որքան զարմանալի է, նա ֆրանսերենից թարգմանել է միայն մեկ գործ, այն էլ ռուս գրող Մամին-Սիբիրյակի (1852-1912) 1906 թ. ֆրանսերեն թարգմանությամբ Փարիզի «Ռեյու դե ոկյու» հանդեսում հրատարակված «Խոստովանություն» պատմվածքը, որից կատարել է իր փոխադրությունը՝ «Ձյունին տակ (Ճամբու պատմվածք)» խորագրով: Մեծարենցի՝ մեզ հասած մյուս թարգմանությունները անգլերեն բնագրերից են: Ասել է թե՛ դրանք միջնորդավորված չեն ֆրանսերենից. նա քաջահմուտ էր հատկապես անգլերենին: «Հայերենն առաջ, – գրում է կենսագիրը՝ Թորոս Ազատյանը, – կը ծանոթանա անգլիական գրականության. կը կարդա հետաքրքրական վեպեր, թատերական ու բանաստեղծական երկեր ու կը փորձե թարգմանություններ ընել»¹: Իր հերթին մեկ ուրիշ բանասեր՝ Հակոբ Սիրունին, երկրորդում է, որ Մեծարենցը «հայացումները ըրած է անգլիացի հեղինակներե, ինչպես Էմսենեն»²: Բացի այդ հիշատակենք նաև արձանագրված փաստերից մեկը. «Ծաղիկ տոոց» շաբաթաթերթը, տպագրելով ամերիկացի գրող Յուզին Ֆիլդի (1850-1895)

¹ Ազատեան Թ. Մ., Միսաք Մեծարենց: (Իր կեանքը), Կ. Պոլիս, 1922, էջ 15:

² Տե՛ս Սիրունի Հ., Գիծեր Մեծարենցի կյանքեն // «Հայրենիք», 1923, թիվ 10, էջ 64:

«Հոլանդական օրոք» բանաստեղծության մեծարենցյան թարգմանությունը, հավելել է. «Երիտասարդ բանաստեղծ Միսաք Մեծարենց մանկանց *Ծաղիկ*ին համար անգլիերենն թարգմանած է հետևյալ սիրուն քերթվածը, զոր հաճությամբ կը հրատարակենք»¹: Իսկ վերջում նշված է՝ «Հայացուց ՄԵԾԱ-ԲԵՆՑ»:

Ինչպես նկատում է արևմտահայ գրականության խորագիտակ Ալբերտ Շարուրյանը, Մեծարենցի թարգմանական ժառանգության ստույգ քանակն անհայտ է, ավելին՝ միշտ չէ, որ վավերականորեն կարելի է փաստել կատարված թարգմանությունների ընտրության շարժառիթները, սակայն կոահուսմներ կարելի է անել²: Ուստի այստեղ կներկայացնենք միայն այն թարգմանություններն ու փոխադրությունները, որոնց երկլեզու բնագրերը հասանելի են, և հնարավոր է իրականացնել համեմատական ուսումնասիրություն: Բացի այդ՝ կփորձենք հնարավորինս փաստարկել թարգմանված երկերի մեծարենցյան ընտրությունը. դրանք թե՛ արձակ են և թե՛ չափածո: Եվ ահա նպատակահարմար ենք գտել վաղամեծիկ բանաստեղծի թարգմանական արվեստին վերաբերող այս հրապարակումը տրոհել երկու մասի՝ արձակ և չափածո գործերի դիտարկումներով՝ զանց առնելով ժամանակագրական հերթագայությունը:

1. Արձակ թարգմանությունները

Միսաք Մեծարենցն ամենից առաջ հայտնի է որպես հայրենի բնաշխարհի, քնարական զգացումների անգուգական երգիչ, որը թիթեռնիկի պես կարճ, բայց զարմանալիորեն բեղուն կյանքի ընթացքում կարողացավ կերտել բնական ու խորը այնպիսի պատկերներ, որոնք ընթերցողին մի դեպքում ակամա տեղափոխում են իր ծննդավայր՝ Խարբերդ նահանգի Ակնա գավառակի Բինկյան գյուղ, և պարուրում առինքնող բնության հրաշալիքներով, մյուս դեպքում մտովի մասնակից դարձնում պոետի հոգին խռովվող զգացմունքներին: Անհատի վշտին, դրամային ու բանաստեղծի ճակատագրին նվիրված նրա երկերի քնարականությունն ինքնին ակնհայտ է և առավել քան խոսուն: Ուստի պատահական չէ, որ նման խոհուն ներաշխարհով երիտասարդին թարգմանության ասպարեզում ևս գրավել են հոգեբանական առումով տպավորիչ երկեր, որոնք նա բնագրերից թարգմանել է արևմտահայերեն և թիրախային լեզվին փոխանցել դրանց ոչ միայն ոճական գեղեցկությունը, այլև գաղափարական խորանիստ խնդիրները:

Ուշագրավ է, որ Մեծարենցը թարգմանություններ ու փոխադրություններ է կատարել մահից երկու տարի առաջ՝ 1906-1907 թթ. ընթացքում, և դրանց մի մասը տպագրվել է իր կենդանության օրոք: Ծավալային ու

¹ «Ծաղիկ տղոց», 1907, 26 մայիսի, թիվ 39-40 (պրակ 2), էջ 20:

² Տե՛ս **Շարուրյան Ալ.**, Միսաք Մեծարենց, Երևան, 1983, էջ 192:

Ժանրային առումով այդ թարգմանությունները, անշուշտ, տարբերվում են, սակայն ընտրության ընդհանրությունն ակնհայտ է. դա հոգեբանական խորությունն է ու այն յուրօրինակ մտորումները, որոնք ծագում են ընթերցողի մտքում և ստիպում վերանայելու սեփական մոտեցումները ոչ միայն գրականության, այլև ընդհանրապես կյանքի հանդեպ:

Արձակ երկերից ծավալային առումով ընդգրկուն է անգլիացի հայտնի գրող Ջոզեֆ Ռեյյարդ Քիփլինգի (1865-1936) «Բերտրան և Բիմի» պատմվածքի թարգմանությունը, որը Մեծարենցը վերնագրել է «Պիմի (Կապիկի մը պատմությունը)»: Ուշագրավ է, որ Քիփլինգը՝ ընթերցողների լայն շրջանակին ամենից առաջ հայտնի որպես «Մաուգլի» պատմվածքի հեղինակ, անգլիացի առաջին գրողն է, որը 1907 թ. գրականության ասպարեզում ունեցած իր հաջողությունների համար արժանացել է Նոբելյան մրցանակի: Նշենք նաև, որ երբ Քիփլինգն առաջին անգամ՝ 1891 թ., հիշյալ պատմվածքը տպագրել է իր “Life’s Handicap” ժողովածուում, իսկ ապա նաև “Mine Own People”-ում, այն կրել է “Bimi” («Բիմի») խորագիրը: Դժվար է կռահել՝ արդյոք Մեծարենցը տեղյակ է եղել այս փաստին. նա Քիփլինգի նախընտրած «Բերտրան և Բիմի» խորագրից հետագայում վերցրել է միայն կապիկի անունը և անգամ փակագծում հատուկ նշել, որ պատմությունը հենց այս կենդանուն է վերաբերում ոչ միայն այն պատճառով, որ «զգայուն էր կենդանիների նկատմամբ»¹, այլև, կարծում ենք, մի պարզ մոտեցմամբ, այն է՝ ցանկացել է ցույց տալ, որ կենդանիները ևս կարող են մարդկային զգացումներ ունենալ, ինչպես այս դեպքում, խանդել և անգամ նույն մարդկանց նման որոշակի զգացողություններից դրդված՝ հանցագործություն կատարել: «Մեծարենց, պատմում է դասակիցներից մեկը, առհասարակ սեր ուներ մեկ քանի կենդանիներու հանդեպ: Կը հետաքրքրվեր անոնցմով, գիտեր անոնց հետ զրադելու լեզուն: Կը սիրեր գորտը, անոր ձայնը... ջուրերու մեջ անոր առանձնահատուկ կենցաղը կուսումնասիրեր: Կը հիանար ընտանի կենդանիներեն իշուն համբերատար ոգիին վրա: Կը խենթանար մանավանդ անոր մարմնուն աչքերին ու նայվածքին... Մեծարենց կարդացած էր Բիտերտ Քիփլինկի գրությունները, ուր մեծանուն անգլիացի քերթողը իշուն գովեստը ըրած էր այնքան ինքնատիպ նկարագրություններով: Թարգմանություններ կըներ Քիփլինկեն, որ 1907-ի Նոբելյան պսակավորն էր»²:

Մեծարենցը նշյալ թարգմանությունն առաջին անգամ տպագրել է «Սուրհանդակ»-ի՝ 1906 թ. 23/5 հունվար համարում, իսկ վերջում կատարել է հետևյալ գրառումը՝ «Հայացուց Միսաք Մեծարենց»:

Պատմվածքում օրանգուտանը՝ Բիմին, սպանում է իր տիրոջ՝ Բերտրանի կնոջը, քանի որ խանդում է նրանց սիրուն ու իրեն անտեսված զգում

¹ Տե՛ս **Շարության Ալ.**, նշվ. աշխ., էջ 193:

² Գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի ֆոնդ, հավելված, թիվ 56:

Բերտրանի կողմից, որի հետ կապված էր գրեթե եղբայրական սիրով: Բայց ամենից հոգեցունցն այն է, որ հանցագործությունից հետո նա, այնուամենայնիվ, վերադառնում է տիրոջ մոտ՝ քաջ գիտակցելով իր արարքի անդադնալիությունն ու գուցե նաև սպասվող պատիժը: Ցանկացած կենդանի, սակայն, անասելի հավատարիմ է իրեն խնամողի հանդեպ, ուստի և պատրաստ է անգամ կյանքի գնով շարունակել իր հավատարմությունը:

«Պիմի (Կապիկի մը պատմությունը)»-ը բավական հոգեհարազատ թարգմանություն է: Բնագրային տարբերակը գրված է նավագներին հատուկ խոսվածքով. պատումը վարողը Բերտրանի ընկերն է, որը ևս նավաստի էր, և թարգմանիչը հավատարիմ է մնացել այդ առանձնահատկությանը:

Գնահատելի է նաև Մեծարենցի վերաբերմունքը թարգմանության ընթացքում անգլերենին բնորոշ դերանունների փոխանցման հարցում. նա հմտորեն գործածում է «կապիկ», «օրանկության» և «կենդանի» բառերը՝ նկատի ունենալով կապիկին, քանի որ հայերենում դերանունների միջոցով, բացառությամբ Մ. Պեշկոպաշյանի, Պ. Դուրյանի և արևմտահայ մի քանի ուրիշ գրագետների (*նա // նե*), անհնար է կատարել սեռային տարբերակում. դրանց քերականական արտահայտությունը պարզապես չկա բայի խոնարհման համակարգում:

Թարգմանությունը կատարելիս Մեծարենցն այնուհետև միտումնավոր բաց է թողել որոշակի բառեր կամ մի մասը փոխարինել է սեփական տարբերակով: Զորօրինակ բնագրում՝ պատմվածքի հենց առաջին տողերում, Քիփլինգը Բերտրանի պատմությունը վերապատմող նավաստու մասին (նա, ի դեպ, գլխավոր կերպարն է, և ինքն է մանրամասն ներկայացնում ամբողջ իրադարձությունը) նշում է, որ վերջինս «հաղթանդամ գերմանացի» է (*big-beamed German*)¹, իսկ Մեծարենցը տալիս է միայն անունը՝ Հանս Պոպյոման, և բնավ չի անդրադառնում ազգությանը, քանի որ նրան հետաքրքրում է այս կերպարը զուտ որպես պատմությունը վերապատմող անձ:

Ուշագրավ է նաև, որ թարգմանության մեջ Մեծարենցը կատարել է որոշակի մեղմացումներ. այսպես՝ օրանգուտաններին բռնող նավաստիների մասին Քիփլինգն օգտագործում է “a Lascar”² արտահայտությունը, որն անգլերենում նշանակում է «տղա» (*guy*) կամ «սրիկա», իսկ Մեծարենցն այն թարգմանել է սոսկ իբրև «նավաստի մը»³, հավանաբար ուշադրություն դարձնելով միայն կապիկներին որսալու հանգամանքին: Բացի այդ՝ եթե անգլերենում նման բառի գործածումը պարզապես ընդգծում է կենդանիներին որսալու հանգամանքի անմարդկային բնույթը, հայերենում «սրիկա» բառն ունի բոլորովին այլ ենթաշերտ: Նույն մոտեցումը նկատելի է նաև մեկ

¹ Տե՛ս **Kipling R.**, “Life’s Handicap-Bertran and Bimi”, exported from Wikisource on May 12, 2021, p. 2:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Մեծարենց Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 303:

այլ պարագայում. Եթե Քիփլինգը դեպքը վերապատմող նավաստու՝ Բրայթմանին պատկանող օրանգուտանին (վերջինիս ներկայությունն էլ հենց հիմք է դառնում այս պատմության երևան գալուն) անվանում է “caged devil” («վանդակում փակված սատանա»)¹, ապա Մեծաբեկը թարգմանել է պարզապես «կենդանի»² ցանկանալով ներկայացնել նրան միայն որպես մեկը կապիկիների դասից, այլ ոչ թե ընդգծել այս տեսակի գազանային բնույթը: Մեղմացման բավական ուշագրավ օրինակ է նաև հետևյալ դրվագի թարգմանությունը. Բերտրանի ընկերը հորդորում է նրան սպանել կապիկին, քանի որ հստակ զգում է նրանից եկող վտանգը, սակայն, այդ «խորհրդին» ի պատասխան, Բերտրանն ասում է. “Shall a child **stab** his father?”³ («Երեխան հորը **կդաշունահարի**»), որը մեծաբեկյան թարգմանությամբ հնչում է հետևյալ կերպ. «Ձավակ մը իր հայրը **կը վշտացնե**»⁴: Ակնհայտ է, որ «**դաշունահարել**» բառը փոխարինված է «**վշտացնել**» տարբերակով, քանի որ Մեծաբեկի նուրբ հոգին դժվար թե ընդուներ ծնողին մարմնական վնասվածք հասցնելու գաղափարն անգամ:

Նկատելի է, որ, մեղմացումներին զուգընթաց, Մեծաբեկը երբեմն կատարել է հավելումներ, որոնք առավել շեշտադրում են կատարված իրադարձության լրջությունը: Այսպես՝ պատմվածքի վերջնամասում, երբ սպանություն կատարած Բիմին կրկին սեղան է նստում իր տիրոջ հետ ու գինի ըմպում, Քիփլինգը նրա ձեռքերի նկարագրության ժամանակ գրում է. “Und the hair on his hands was black and thick mit-mit **what had dried on der hands**”⁵ («Եվ նրա ձեռքերի մազերը սև էին ու կոշտացած նրանից, ինչը որ չորացել էր նրա ձեռքերին»), իսկ թարգմանության մեջ Մեծաբեկը նշում է. «Ձեռքի մազը **արյունեն** բոլորովին սևացած ու թանձրացած էր»⁶: Ինչպես պարզ երևում է, հայերեն տարբերակում երկու նախադասությունները միացված են, իսկ «**արյուն**» բառի հավելադրումը հստակ ցույց է տալիս կատարված ոճրագործության ամբողջ ծանրությունը և շեշտադրում է այն:

Նման հատուկ ընդգծման նպատակ է հետապնդում նաև թարգմանչի կողմից «անխռով»⁷ բառի հավելումը, երբ պատմվածքում ներկայացվում է, թե ինչպես է օրանգուտանը ծառայում տիրոջը՝ բերելով նրա հողաթափերը: Այդ մեկ բառի ավելացումով հայ հեղինակը ընթերցողին է փոխանցում կապիկի նրբին ու հաշվարկված խորամանկությունը, որով նա բթացնում է տիրոջ զգուշավորությունն ու ի կատար ածում սպանության, իր տեսա-

¹ Տե՛ս **Kipling R.**, նշվ. աշխ., էջ 2:

² Տե՛ս **Մեծաբեկ Մ.**, նշվ. աշխ., էջ 303:

³ **Kipling R.**, նշվ. աշխ., էջ 7:

⁴ **Մեծաբեկ Մ.**, նշվ. աշխ., էջ 307:

⁵ **Kipling R.**, նշվ. աշխ., էջ 9:

⁶ **Մեծաբեկ Մ.**, նշվ. աշխ., էջ 308:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 307:

կետից՝ վրեժխնդրության ծրագիրը:

Ուշարժան է նաև «Բերտրան և Բիմի» պատմվածքում մշտապես կրկնվող մի արտահայտության թարգմանությունը. օրանգուտանի մասին խոսելիս Քիփլինգը հաճախ է գործածում “You haf too much Ego in your Cosmos”¹ արտահայտությունը, որը Մեծարենցը համարժեքաբար թարգմանել է «Քու Տիեզերքիդ մեջ խի՛ ստ շատ Ես ունիս»²: Մա, անշուշտ, հոգեհարազատ ու ճշգրիտ թարգմանություն է, սակայն մեկ այլ տեղ նույն նախադասությունը նա թարգմանում է «չափազանց եսասեր են անոնք»³ տարբերակով՝ ցանկանալով հատուկ շեշտադրել օրանգուտանի եսակենտրոն բնույթը: Ավելին՝ հենց այս նույն նպատակով Մեծարենցը կատարում է մեկ այլ ինքնօրինակ թարգմանություն. եթե բնագրում օրանգուտանների առնչությամբ նավաստին հայտարարում է՝ “I would sooner collect red devils than little monkeys” («Ես ավելի շուտ կարմիր սատանաներ կհավաքեի, քան փոքրիկ կապիկներ»), ապա հայերեն տարբերակում այս նախադասությունը հնչում է որպես օրանգուտանների բացառիկ վտանգավորության շեշտադրում. «Քիչ մնաց, որ կյանքս վրա տայի այդ կապիկները բռնել ուզելով»⁴:

Հետաքրքրական է նաև անգլերեն “dry man/s”⁵ արտահայտության թարգմանությունը, որը համարժեք իմաստով նշանակում է «ցնցոտիապատ տղամարդ». այսպես է քիփլինգյան հերոսը դիմում իր ընկերոջը՝ Բրայթմանին, և օրանգուտանին՝ Բիմիին, երբ նրանց հրավիրում է միասին խմելու: Սակայն Մեծարենցը նախընտրել է այն թարգմանել որպես «մարդուկս»⁶, շեշտադրելով կապիկի՝ իր տիրոջ կողմից որպես ընկեր, ինչպես նաև մարդկային արարած ընկալվելու հանգամանքը:

«Բերտրան և Բիմի» պատմվածքի մեծարենցյան թարգմանության առիթով ներկայացնենք նաև այն մի քանի բացթողումների հայերեն տարբերակները, որոնք արևմտահայ բանաստեղծը, գուցե անկարևոր համարելով, բնավ չի թարգմանել: Խոսքը վերաբերում է առանձին նախադասություններին, այլ ոչ թե զանց առնված բառերին.

1. that the pace of the ship might give us⁷ – որը կարող էր մեզ տալ նավի ընթացքը (խոսքն այստեղ վերաբերում է քամուն).

2. and the jarring of the ash-lift, as it was tipped into the sea, hurt the procession of hushed noise⁸ – իսկ մոխրամանից ծովի մեջ թափվող մոխրի ձայնը խաթարեց հանդարտ աղմուկը (խոսքն այստեղ նավի շարժիչի մասին է).

¹ Kipling R., նշվ. աշխ., էջ 2:

² Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 303:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 304:

⁴ Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 305:

⁵ Տե՛ս Kipling R., նշվ. աշխ., էջ 8:

⁶ Տե՛ս Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 307:

⁷ Kipling R., նշվ. աշխ., էջ 3:

⁸ Նույն տեղում:

3. which is midway arrested in defelopment¹ – որոնց զարգացումը կանգ է առել կես ճանապարհին (խոսքը վերաբերում է օրանգուտանների հոգուն)։

4. He sold them for tripang – *bêche-de-mer*² – նա դրանք որպես տրեպանգ էր վաճառում – ծովային վարունգներ (խոսքը վերաբերում է Բերտրանին, երբ նա կապիկների որսով էր զբաղվում)։

5. I would not say, pecause it was not me dot was going to be married³ – Ես չեի ասի, որովհետև ես չեի ամուսնացողը (Բերտրանն ամուսնությունից առաջ հարցնում է ընկերոջ կարծիքն իր ընտրության մասին)։

6. Haf you got a new light for my cigar⁴ – Միգարս նորից կվառե՞ս (իրենց գրույցի ընթացքում Բրայթմանն այս խնդրանքով է դիմում հեղինակին)։

7. skippin’ alone on der beach⁵ – միայնակ ցատկոտում էր լողափում (խոսքը Բիմիի մասին է, երբ Բերթրանն արդեն ամուսնացել էր)։

8. pecause you do not talk to him?⁶ – որովհետև դու չես խոսում նրա հետ (դարձյալ օրանգուտանի մասին է, որի վտանգավորությունն արդեն նկատելի է Բերթրանի ընկերոջ համար)։

Մեծարենցյան արձակ հաջորդ թարգմանությունը պատկանում է իռլանդացի գրող Օսկար Ուայլդի (1854-1900) գրչին։ Երիտասարդ գրագետը թարգմանել է նրա երկու պատմվածքները՝ “The House of Judgement” («Դատաստանատունը») և “The Teacher of Wisdom” («Իմաստություն սորվեցնողը»), քանի որ դրանք աչքի են ընկնում մարդկային էության և Աստծո հանդեպ վերջինիս վերաբերմունքի մասին խոր մտորումներով։ Ինչպես իրավացիորեն նկատում է Ալ. Շարուրյանը, այս երկերը «Մեծարենցին կարող էին գրավել այլաբանական-սիմվոլիկ իմաստով, փիլիսոփայական խոհով»⁷։

Վերոնշյալ երկու պատմվածքները ներգրավված են Օսկար Ուայլդի «Արձակ բանաստեղծություններ» (Poems in Prose) ժողովածուում. դրանք առաջին անգամ տպագրվել են 1894 թ. իր ժամանակին հայտնի “The Fortnightly Review” ամսագրում։ Ավելի վաղ՝ 1893 թ., այս երկու պատմվածքները հայտնվել էին նաև Օքսֆորդի շրջանավարտների համար նախատեսված “The Spirit Lamp” ամսագրում։ Իսկ մեծարենցյան այս թարգմանություններն առաջին անգամ լույս են ընծայվել տարաբախտ բանաստեղծի մահից մեկ տարի անց՝ 1909 թ. «Մեծարենցի անտիպ ձեռագիրներեն» ընդհանուր խորագրով՝ «Ազդակ»-ի թիվ 18 և 29 համարներում, իսկ վերջում նշված է՝ «Հայացուց *Միսաք Մեծարենց*»։

¹ Kipling R., նշվ. աշխ., էջ 4։

² Նույն տեղում, էջ 5։

³ Նույն տեղում, էջ 6։

⁴ Նույն տեղում։

⁵ Նույն տեղում, էջ 7։

⁶ Նույն տեղում։

⁷ Շարուրյան Ալ., նշվ. աշխ., էջ 193։

«Դորիան Գրեյի դիմանկարը» գեղագիտական հանրաճանաչ վեպի հեղինակն այս երկու պատմվածքներում քննում է քրիստոնեական հավատի խնդիրը: Նշելի է, որ դրանք, ի թիվս այլ նմանատիպ պատմվածքների, որոնք գետեղված են նույն ժողովածուում, գաղափարական առումով միանշանակ լրացնում են մեկը մյուսին և միմյանց տրամաբանական շարունակությունն են: Գուցեն թոքախտով տառապող Մեծարենցն այս երկերին է անդրադարձել, քանի որ անխուսափելի մահվանն ընդառաջ գնալով՝ նրան հուզել է Աստծո և մարդու, ինչպես նաև հավատի առեղծվածը:

Այսպես «Դատաստանատուն» պատմվածքում Աստված բացում է մարդու Կյանքի գիրքը և ներկայացնում այն բոլոր մեղանշումները, որոնք մարդը միանշանակ ընդունում է: Ուստի Աստված մարդուն դատապարտում և ցանկանում է դժոխք ուղարկել: Դրան ի պատասխան՝ մարդն ասում է, թե այնտեղ արդեն եղել է: Ասել է թե՛ մարդկային կյանքն ինքնին դժոխք է: Իսկ երբ Աստված որոշում է մարդուն դրախտ ուղարկել, այս անգամ ևս մարդը պատասխանում է, որ ինքը նույնիսկ չի կարող պատկերացնել, թե ինչ է դրախտը: Աստծուն այլ բան չի մնում անել, քան լռել: Այն է՝ կարելի է հանգել այն հետևության, որ դրախտը Աստծո սոսկ մտապատկերում է, այդ իսկ պատճառով ինքն անկարող է մարդուն ապացուցել դրա գոյությունը:

Նկատենք, որ Մեծարենցն այս անգամ կատարել է լիովին հոգեհարազատ թարգմանություն, իսկ մեկ-երկու դեպքում պարզապես փոխել է նախադասությունների տեղը կամ անգամ բառը. այսպես, օրինակ, այն պահին, երբ Աստված բացում է մարդու Կյանքի գիրքն ու թվարկում նրա բազում մեղքերը, անդրադառնում է նաև բորոտների՝ Աստծուն գովաբանելու փաստին, և այդ հատվածում Ուայլդը գրում է. “My lapers who lived in the marshes and **were at peace** and praised Me...”¹: **Were at peace** հայերեն թարգմանվում է որպես *խաղաղ լինել*: Այսինքն՝ բնագրի հեղինակը նկատի ունի, որ բորոտների կյանքը խաղաղ էր ընթանում ճահճուտներում, իսկ Մեծարենցը կատարել է մի փոքրիկ շրջադասություն, ինչպես նաև հավելում, որը հանգեցրել է իմաստային կարևոր փոփոխության. «**Ու պողոտաներուն վրա ետևեն ինկար** Իմ բորոտներուս՝ որ ճահիճներու մեջ կ’ապրեին և որոնք **հանգստավետ**՝ զիս կը գովեին»²: Ավելացման նպատակը, հավանաբար, մարդկային զազիր գործերի ուժգնացման գաղափարն է, իսկ ինչ վերաբերում է «**հանգստավետ**» բառի դիրքի փոփոխությանը, ապա ակնհայտ է, որ թարգմանիչն ընդգծում է Աստծուն պաշտելու գաղափարը. գուցե այդ պաշտամունքն իրոք ք հանգստացնում է մարդկային հոգին:

Թեմատիկ առումով ուշագրավ է «Իմաստություն սորվեցնողը» պատմվածքի թարգմանությունը, որը պատմում է, թե ինչպես քրիստոնեական

¹ <https://archive.org/details/poemsfairytaleso00wild/page/204/mode/1up?view=theater>, p. 204.

² Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 314:

հավատի մի հետևորդ մշտապես հազարավոր մարդկանց քարոզում է իր դավանանքը, սակայն հոգեկան բավարարվածություն չի գտնում: Շուտով հենց իր հոգին խորհուրդ է տալիս մարդկանց առաջ չբացահայտել Աստծո վերաբերյալ ունեցած սեփական գիտելիքները, քանի որ դա այդպեղ պնասում է հենց իրեն: Այս ամենից հետո քարոզիչը որոշում է փակվել քարանձավում, սակայն մոտակայքով անցնող երիտասարդ ավագակը գրավում է նրա ուշադրությունը, քանի որ ամեն օր վերադառնում էր մեծ ավարով. պարզ է, որ այդ ավարը նշանակում էր որևէ մարդկային կյանքի ավարտ: Ուստի, երբ ավագակը հարցնում է ճգնավորին, թե ինչու է նա շամփրող հայացքով մշտապես ուղեկցում իրեն, վերջինս բացատրում է, որ դա խղճահարության հայացքն է, և հավելում, որ իր ունեցած գանձը գերազանցում է ավագակի ձեռք բերած ամբողջ ավարին: Հավելենք, որ ճգնավորը չի ցանկանում բաժանվել իր գանձից անգամ սեփական կյանքին սպառնացող վտանգի դեպքում, բայց երբ ավագակը հայտարարում է, որ սեփական հնարքներով ձեռք բերած ավարը նա կօգտագործի քաղաքում իրեն սպասող զենի կյանքի համար, ճգնավորը որոշում է կանխել նման աղետն ու համաձայնում է ուղեկցել նրան՝ ասելով ամբողջ ճշմարտությունը: Աստծո մասին իր գիտելիքներն ավագակին փոխանցելուց հետո նա չքանում է, բայց հայտնվում է Աստծո առաջ, որը նրան հավաստիացնում է, որ այժմ նա կճանաչի աստվածային կատարյալ սերը. այն է՝ Աստծո կատարյալ սիրուն կարելի է արժանանալ միայն հանդերձյալ կյանքում:

Այս պատմվածքի թարգմանությունը ևս աչքի է ընկնում բացարձակ համարժեքությամբ, միայն մեկ-երկու տեղում նկատելի են բացթողումներ: Այսպես՝ ուշագրավ է, որ քարոզչի դեգերումները պատկերելիս, երբ նա անցնում է քաղաքից քաղաք, Ուայլդը նշում է, թե ինչպես նա հասնում է տասնմեկերորդ քաղաքին՝ “which was a city of Armenia”¹ – «որը Հայաստան կոչվող քաղաքն էր»: Զարմանալի չէ, սակայն, որ Մեծարենցը բնավ չի թարգմանել այս հատվածը և Հայաստանի մասին չի հիշատակել. նախ՝ 1896 թվականից մինչև 1908 թ. թուրքական գրաքննության դիվային օրենքներով գրավոր խոսքում արգելված էին «ազգ», «ազատություն», «բռնապետություն», «հեղափոխություն», «հայրենիք», «ազատություն» և բազմաթիվ այլ, այդ թվում՝ «Հայաստան» բառերը, և հետո՝ գուցե երիտասարդ հեղինակը բնավ չի ցանկացել ազգայնացնել հավատը. չէ՞ որ մեծ ցանկության դեպքում նա ի վերջո, ինչպես արևմտահայ որոշ գրողներ, կարող էր «Հայաստան»-ը փոխարինել «բնավայր» գաղտնի կոդով: Ի դեպ, Ուայլդը ևս «Հայաստան» բառը հիշատակում է իբրև քրիստոնեությունը խորհրդանշող վայր և բնավ ոչ որպես որոշակի ազգ ներկայացնող «քաղաք»:

Մյուս բացթողումը հետևյալն է. “Neither now, nor at any time, will I talk to

¹ <https://archive.org/details/poemsfairytales00wild/page/208/mode/1up?view=theater>, p. 208.

you about God”¹ («Ո՛չ հիմա, ո՛չ որևէ այլ պահի ես չեմ խոսի ձեզ հետ Աստծո մասին»): Կարծում ենք, որ այս բացթողումը ևս կատարված է հատուկ դիտավորությամբ, քանի որ Մեծարենցի կարծիքով Աստծո մասին չեն խոսում, այլ միայն հավատում են նրան: Այսպիսով՝ ակնհայտ է, որ մահվան աչքերին նայող «հիվանդ պատանին» այս թարգմանություններով բացահայտում է իրեն կեղեքող ներքին ցավը, որը գուցե մասամբ մեղմանում էր հավատով առ Աստված:

2. Անգլո-ամերիկյան պոեզիայի թարգմանությունները

Ուշարժան են Միսաք Մեծարենցի նաև չափածո թարգմանությունները: Դրանցից առաջինը անգլիական պոեզիայի հայր, նշանավոր «Քենթրբերյան պատմվածքներ» չափածո երկի հեղինակ Ջեֆրի Չոսերի (1343-1400) ստեղծագործական կյանքի վերջին շրջանում գրված երկերից մեկի թարգմանությունն է՝ փոխադրության տարրերով: Հայտնի չէ՝ երբ է ստեղծվել այդ բանաստեղծությունը. գիտնականներն այն վերագրում են Անգլիայի ազգային առաջին պոետի ստեղծագործական կյանքի ուշ շրջանին, որին բնորոշ են սիրային կարճ բանաստեղծությունները:

Մեծարենցի ուշադրությանն արժանացած այդ գործը միջին անգլերենով գրված “Merciless Beaute: A Triple Roundel” («Անգութ գեղեցկուհի. եռակի ռոնդել») բանաստեղծությունն է: Թարգմանիչը զանց է առել դրա ամբողջական վերնագիրը և պարզապես անվանել «Եռանգ»: Ի դեպ, այն Մեծարենցի չափածո առաջին թարգմանությունն է, որին կցված է ուրույն մեկնություն: «Ճիռֆրի Չոսերի հետևյալ եռանգը (rondeau),– նկատում է թարգմանիչը,– ինծի կը հիշեցնե գրեթե իրեն ժամանակակից մեր սիրերգակներուն բանաստեղծությունները՝ սիրային զգացումի միևնույն կրակովը վառված»²: Նա այնուհետև հակիրճ տեղեկություն է հաղորդում օտար հեղինակի մասին, հիշատակում «Քենթրբերյան պատմվածքները»՝ այն համեմատելով Ջովանի Բոկաչչոյի «Դեկամերոն»ի հետ, և նախապատվությունը տալիս առաջինին. «Չոսեր տիրապետած է իր անունովը կոչված ամբողջ գրական շրջանի մը, որ անգլիական գրականության երկրորդ շրջանն է. իր արժանիքը կը կայանա մասնավորապես իրապաշտ վիպագրի իր տաղանդին մեջ, որ ծնունդ տված է «Canterbury Tales» հեքեաթունակ պատմվածքներու կիսավարտ շարքի մը, **Պոգաչիոյ** *Suavopajulին* նմանող, սակայն ամեն տեսակետով անկե գերազանց»³:

Մեծարենցյան այս թարգմանությունն առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում՝ «Օտար էջեր» ընդհանուր վերնագրի տակ: Այն ստորագրված է

¹ <https://archive.org/details/poemsfairytaleso00wild/page/208/mode/1up?view=theater>, p. 208.

² Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 293:

³ Տե՛ս նույն տեղում:

եղել Շախասպ Օրաճան անունով¹:

Ինչպես հայտնի է, ռոնդելը ֆրանսիական բանաստեղծության տեսակ է, որն ունի 13 տող և աչքի է ընկնում ռեֆրեններով, երբ առաջին տան առաջին երկու տողերն ամբողջությամբ կրկնվում են երկրորդ և երրորդ տների վերջում: Բայց Չոսերի 13-տողանի ռոնդելը Մեծարենցը փոխադրելիս կրճատել է՝ ստեղծելով տողերի կրկնության իր տարբերակը. իբրև ռեֆրեն կրկնվում է ոչ թե երկու կամ երեք տող, ինչպես բնագրում, այլ ընդամենը մեկ տող: Այս փոփոխության արդյունքում Մեծարենցի թարգմանությունը դարձել է 10-տողանի.

Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մեկեն,
Իրենց գեղին ա՛լ չեմ կրնար դիմանալ,
Սլաքն անոնց անցավ սրտիս իմ մեջեն:

Բառերըդ լոկ շուտով պիտի դարմանեն
Վերքը սրտիս, մինչ նոր է դեռ անիկա՝
Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մեկեն,

Հավատարիմ ըզքեզ ես միշտ կը կարծեմ,
Ըլլաս կյանքիս կամ մահվանս տիրուհին.
Քանզի մահես վերջն ալ սերըդ պիտ՝ լսեմ.
Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մեկեն²:

Մեծարենցյան «Եռանգ»-ը, այսպիսով, կարող ենք դիտարկել որպես ազատ փոխադրություն: Սակայն սա բնավ մեղանչում չէ բնագրի դեմ, քանի որ փոխադրությունը ևս թարգմանության մի տեսակ է, որն ի հայտ է գալիս, երբ առկա է մշակութաբանական տարբերություն: Ավելին՝ փոխադրությունն ինքնին «ազատ» թարգմանություն է: Ինչպես նշում է թարգմանության անգլիացի հայտնի տեսաբան Փիթեր Նյումարքը (1916-2011), փոխադրությունը «գիտակցված համարժեքություն է» և «մշակութային համարժեքության գործընթաց»³:

Մեծարենցի՝ չոսերյան թարգմանության մեջ առաջին տունն առավել հոգեհարազատ է, մինչդեռ երկրորդ տան մեջ արդեն նկատելի են որոշակի շեղումներ. բնագրում երկրորդ տան ավարտին անգլիացի բանաստեղծը գրում է. “I may the beautee of hem not susteen”⁴ («Ես կարող է չդիմանամ նրանց գեղեցկությանը»), իսկ Մեծարենցն այն ընդհանրապես չի թարգմանել համոզված լինելով, որ նախորդ տողի պատկերը բավարար է, և ավարտում է այսպես. «Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մեկեն»⁵, որը բացարձակապես

¹ Տե՛ս «Մասիս», 1905, 7 մայիսի, թիվ 11, էջ 171:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Newmark P., A Textbook of Translation, New York, 1988, p. 95:

⁴ <https://allpoetry.com/Rondel-of-Merciless-Beauty>.

⁵ Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 293:

հոգեհարազատ թարգմանություն է: Արդեն երրորդ տան մեջ նկատելի է, որ Մեծարենցը ոչ միայն փոխադրությամբ է ներկայացնում երրորդ տողը, այլև բացարձակապես անտեսում է վերջին երկու տողերը, որոնք երկրորդ և առաջին տան վերջին տողերի կրկնությունն են, ինչը հատուկ է ռոնդելին: Այսպես՝ Չոսերի բանաստեղծության մեջ կարդում ենք. “For with my deeth the **trouthe** shal be **sene**”¹, որը Մեծարենցի թարգմանությամբ հնչում է «Քանզի մահես վերջն ալ **սերըդ** պիտ՝ **լսեմ**»² տարբերակով: Ինչպես տեսնում ենք, “**trouthe**”, որ թարգմանաբար նշանակում է «**ճշմարտություն**» և “**sene**”, այն է՝ «**տեսնել**» բառերի իմաստները փոխված են, ուստի Չոսերի այս տողը իրականում պետք է լիներ. «Իմ մահով ճշմարտությունը տեսանելի կլինի»: Կարծում ենք՝ Մեծարենցն այս փոփոխությունն արել է՝ շեշտադրելու համար սիրո զգացմունքը: Մինչդեռ վերջին երկու տողերի՝ “I may the beautee of hem not susteen” և “So wounderh it throughout my herte kene”, այն է՝ ռեֆրենները Մեծարենցը չի կրկնել, որպեսզի թարգմանությունն առավել հոգեհարազատ լինի հայկական պոեզիային բնորոշ ոճին: Նկատենք, որ այդ տողերն իրենց համապատասխան տեղերում բանաստեղծը թարգմանել է և անտեսել սուկ կրկնությունը:

Մեկ ուշագրավ փաստ ևս. Ջեֆրի Չոսերը գրել է նույն թեմայով երեք ռոնդելներ, իսկ Մեծարենցը թարգմանել է միայն մեկը՝ հավանաբար հարկ չհամարելով նույն թեմային անդրադարձը:

Շամանակագրական առումով մյուս բանաստեղծությունը, որն արժանացել է Մեծարենցի ուշադրությանը, անգլիացի գրող Թոմաս Լավ Փիքոքի (1785-1866) “The Grave of Love” («Սիրո գերեզմանը») բանաստեղծությունն է, որի ընտրությունը, անտարակույս, համահունչ է «մահվան սրբոփուկ» («Մթնշաղներ») զգացող պատանու թախծոտ ու հուսահատ բնույթին: Ուշագրավ է, որ Փիքոքը, որը, ի դեպ, անգլիացի մեծագույն ռոմանտիկ գրողներից մեկի՝ Պերսի Բիշի Շելլիի մտերմագույն ընկերն էր, այս բանաստեղծությունը գրել է, ամենայն հավանականությամբ, մոտավորապես 1807 թ.: Այս մասին է վկայում նրա թոռնուհին՝ Էդիթ Նիքոլսը³, որը մանրամասն ներկայացնում է քերթվածքի ստեղծման պատմությունը: Այն ունի վավերական հիմք. պարզվում է, որ Փիքոքը նկատի է ունեցել Ֆեննի Ֆայքներ անունով մի աղջկա, որը եղել է 21-ամյա բանաստեղծի նշանածը: Սակայն մի քանի ամիս անց այս սիրավեպում հայտնվում է մի երրորդը, և 18-ամյա աղջիկը, իրեն անտեսված զգալով, հեռանում է և ամուսնանում մեկ ուրիշի հետ: Փիքոքի թոռնուհին լույս է սփռում նաև բանաստեղծության խորագրի վրա՝ նշելով, որ այն «Սիրո գերեզման» վերնագրով լույս է ընծայել անգլիացի գրող Արթուր Բվիլլեր Քաուչը (1863-1944), երբ այս բանաստեղծությունը 1919 թ.

¹ <https://allpoetry.com/Rondel-of-Merciless-Beauty>.

² Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 293:

³ St. u <https://bidoonism.com/tag/thomas-love-peacock/>:

հրատարակում է “The Oxford Book of English Verse” խորագրով ծաղկաքաղ ժողովածուում: Բնագիր տարբերակը հայտնաբերվել է Փիքոքի մահից հետ, և ի սկզբանե այն որևէ վերնագիր չի ունեցել:

Մեծարենցյան թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել 1907 թ. «Մասիս»-ում՝ ապրիլի 21-ի թիվ 22-ում, և կրում է «Միրո թաղումը» խորագիրը: Անմիջապես նշենք, որ թարգմանված և բնագիր տարբերակները բավական համարժեք են, չնայած կան որոշակի բառային բացթողումներ և անգամ իմաստային առումով տարբերվող թարգմանություններ: Այսպես՝ հենց խորագրում “grave” – «գերեզման» բառը փոխարինված է «թաղում» տարբերակով, որը, անշուշտ, զգացմունքային առումով շեշտադրում է բանաստեղծության տխուր իմաստը: Ուշագրավ է նաև, որ հենց առաջին քառատողի երկրորդ տողում հանդիպում ենք մեծարենցյան «մանկական գերեզմանի պես»¹ թարգմանությանը, մինչդեռ իրական տարբերակում այն հնչում է որպես “What well might seem an **elfin’s** grave”²: Ակնհայտ է, որ թարգմանիչը «էֆի գերեզման» բնագրային տարբերակը փոխարինել է «մանկական» բառով՝ ցանկանալով ընդգծել սիրո նորաբողբոջ էությունը, այլ ոչ թե այդ զգացմանը հաղորդել ինչ-որ հեքիաթային երանգ: Ապա նույն քառատողի վերջին տողում նկատելի է անգլերեն տարբերակի “**false** love”³ «կեղծ սեր» բառակապակցության մեջ «կեղծ» բառի բացթողումը: Մեծարենցի նման սիրո զգացմունքը մեծապես գնահատող պոետի համար գուցե անընդունելի էր այդպիսի մակդիրի գործածումը, և նա միտումնավոր է այն անտեսել: Երկրորդ քառատողի առաջին տողում Փիքոքը, անդրադառնալով հողում թաղված սիրո նկարագրությանը, օգտագործում է “**sod**”⁴ մակդիրը, որը թարգմանաբար նշանակում է «կարծր»: Մեծարենցն այն դարձրել է «գործ»⁵՝ հավանաբար նպատակ ունենալով խտացնել բանաստեղծության մռայլ տրամադրությունը:

Մեկ ուրիշ դիտարկում ևս, որը վերաբերում է վերջին տողերին: Բնագրային տարբերակում հանդիպում ենք հետևյալ նկարագրությանը. “But years shall see the cypress spread, /immutable as my **regret**”⁶: Հայերեն այն թարգմանված է այսպես. «Մակայն՝ իմ **ցավիս** նրման անսասան/Նոճին՝ տարինե՛րն են հանդիսատես»⁷: Ակնհայտ է, որ Մեծարենցը կատարել է իմաստային որոշակի փոփոխություն՝ ցանկանալով խորացնել և ընթերցողին փոխանցել անավարտ սիրո տխուր պատմությունը: Եթե համեմատենք բնագրի հետ, ապա հայերեն թարգմանությունը կհնչի այսպես. «Բայց տարիներն

¹ Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 309:

² <https://internetpoem.com/thomas-love-peacock/the-grave-of-love-poem/>

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 309:

⁶ <https://internetpoem.com/thomas-love-peacock/the-grave-of-love-poem/>

⁷ Մեծարենց Մ., նշվ. աշխ., էջ 309:

ականատես կլինեն նոճու/**Զոջումիս** պես անսասան աճին»: Մեծարենցը ոչ միայն կատարել է որոշակի շրջադասություն, այլև «**զոջում**»-ը փոխարինել է «**ցալ**» բառով՝ նպատակ ունենալով ընդգծել, որ սիրո հարցում զոջումն իբրև զգացմունք չի կարող տեղ գտնել. անկատար սերը սոսկ ցալ է ծնում:

Այսպիսով՝ «Սիրո թաղումը» բանաստեղծությունը լիովին արտահայտում է Մեծարենցի հուսահատ հոգեվիճակն ու մոայլ տրամադրությունը, և միգուցե ինքը ևս ունեցել է ինչ-որ անավարտ սեր:

Իսկ այժմ, անդրադառնալով Մեծարենցի՝ անգլերենից կատարված վերջին երկու բանաստեղծությունների վերլուծությանը, հղում կատարենք Ալ. Շարությանի կատարած դիտարկումներին, որոնք լույս են սփռում և լիովին պարզաբանում ամերիկացի մանկագիր Յուջին Ֆիլդի (1850-1895) «Հոլանտական օրոք» և «Փոքրիկ կապույտ տղան» վերնագրերով ստեղծագործությունների ընտրության հիմնախնդիրը: «Երբ Մեծարենցը գծովեց Ե. Արմենի հետ և հեռացավ «Մասիսից»,– նկատում է գրականագետը,– նրա համար տպագրվելու հնարավորությունները նվազեցին: Այդ պատճառով էլ «հարմարվեց» օրվա հանդեսների պահանջներին, թերևս նաև գրեց նրանց «պատվերով»¹: Ավելացնենք, որ «Հոլանտական օրոքը» առաջին անգամ տպագրվել է «Ծաղիկ տղոց»-ում, վերջում դարձյալ նշված է՝ «Հայացուց Մեծարենց»², իսկ «Փոքրիկ կապույտ տղան» բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է նույն հանդեսում և կրում է նույն ստորագրությունը³:

Ինչ վերաբերում է այս բանաստեղծությունների բնագրային տարբերակներին, ապա հայտնի է, որ Յուջին Ֆիլդը «Հոլանտական օրոք»-ը հրատարակել է 1889 թ. մարտի 9-ին: Այս երևակայական օրոքոցայինը կրում է նաև “Wynken, Blynken, and Nod” խորագիրը, որը պայմանավորված է անգլերեն wink, blink և nod բառերով. առաջին երկուսը թարգմանաբար նշանակում են «աչքերը թարթել», իսկ մյուսը՝ «գլխով անել», և ակնհայտորեն վերաբերում են երեխայի քուն մտնելուն: Ի դեպ, բնագրում անգլերեն այս բառերի արտասանությունը հարմարեցված է նիդեռլանդերենին:

«Հոլանտական օրոք»-ը պատմում է երեք երեխաների մասին, որոնք, փայտե կոշիկի մեջ նստած, նավարկում են ու ձուկ որսում: Մեծարենցը թարգմանել է բանաստեղծության միայն առաջին հատվածը՝ ընթերցողին ներկայացնելով փոքրիկ ձկնորսներին և ծովի ու երկնքի գեղեցիկ պատկերը, բայց անտեսել է շարունակությունը՝ հավանաբար ոչ այնքան հոգեհարազատ համարելով այս օրոքոցայինը:

Ֆիլդի երկրորդ բանաստեղծությունը՝ «Փոքրիկ կապույտ տղան», առաջին անգամ հրատարակվել է 1888 թ. Զիկագոյում լույս տեսնող “America” շաբաթական գրական հանդեսում: Այն պատմում է մի տղայի մահվան

¹ Տե՛ս **Շարության Ալ.**, նշվ. աշխ., էջ 193:

² Տե՛ս «Ծաղիկ տղոց», 1907, 26 մայիսի, թիվ 39-40, էջ 20:

³ Տե՛ս նույն տեղում, 1907, 30 հունիսի, թիվ 49-50, էջ 80:

մասին և բնավ չի վերաբերում հեղինակի որդուն, որը վախճանվել է այս բանաստեղծության տպագրումից մի քանի տարի անց: Նման թեման, որն աչքի է ընկնում խորը զգացականությամբ, պարզապես ընդունված էր XIX դարի պոեզիայում: Ինչ վերաբերում է խորագրին, հեղինակի խոստովանությամբ այն ստեղծվել է սոսկ հանգավորման նպատակով: Բնագրային և թարգմանության համեմատությունը բացահայտում է մեծաբեկցյան տարբերակի բավական հոգեհարազատ փոխանցումը, սակայն նկատելի են նաև թեթևակի անտեսումներ ու փոխակերպումներ. օրինակ՝ բնագրային “In the dust of that little chair”¹ («Այդ աթոռակի փոշիների մեջ») նախադասությունը բնավ թարգմանված չէ, քանի որ թարգմանիչը նպատակ է ունեցել փոխանցել բանաստեղծության տրամադրությունը և ոչ թե խորանալ գուցե ոչ այնքան կարևոր մանրամասների մեջ: Մյուս դիտարկումը կապված է փոքրիկ փոփոխության հետ, որը, սակայն, իր ոչ մեծ ծավալով հանդերձ, լիովին փոխանցում է մեկ այլ հանճարեղ բանաստեղծի՝ ըստ Պ. Դուրյանի՝ «երկնքի հիվանդությունից» տառապող Մեծաբեկցի հոգեվիճակը: Այդ դրվագը պատկերում է քնած երեխային, որը երագում լսում է իրեն ուղղված հրեշտակի հետևյալ երգը. “Oh! **the years are many, the years are long**/But the little toy friends are **true**”²: Իսկ ահա Միսաք Մեծաբեկցի լիովին հոգեհարազատ, բայց մի փոքր ավելի հուզական թարգմանությունը. «**Երկա ք, երկա ք տարիները, օ հ, շուտ անցան**,/Բայց բարեկամ պուպրիկները **դեռ կը մընան**»³: Նշենք, որ անգլերենից հայերեն թարգմանությունն իրականում հնչում է այսպես. «Օ՛հ, տարիները շատ են ու երկար/Բայց փոքրիկ խաղալիք ընկերներն են ճշմարիտ»: Ակնհայտ է, որ Մեծաբեկցն այս փոփոխությունը կատարել է բանաստեղծության տխուր տրամադրությունը խորացնելու և սեփական հոգեվիճակին համապատասխանեցնելու նպատակով. չէ՞ որ երիտասարդ Մեծաբեկցն արդեն դատապարտված էր:

Այսպիսով՝ Միսաք Մեծաբեկցի՝ անգլերենից կատարված թարգմանությունների և փոխադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայ պոետը լիովին տիրապետել է անգլերենին և հիմնականում կատարել է հոգեհարազատ փոխանցումներ կամ, ինչպես ինքն է նշում, «հայացուցել» է, ասել է թե՛ հայացրել է անգլիագիր գրողների երկերը: Ինչ վերաբերում է տեղ-տեղ նկատված բացթողումներին կամ հավելումներին, ապա դրանք լեզվական փոխակերպումների ժամանակ բնական ու գրեթե անխուսափելի են. նկատված բացթողումները չեն խաթարում բնագրային իմաստը, իսկ մեծաբեկցյան հավելումները շեշտադրում են ընտրված երկերի հոգեբանական խորությունը, որը, կարծում ենք, եղել է երիտասարդ քերթողի հիմնական նպատակը: Թեմատիկ առումով ակնառուն այն է, որ բանաստեղ-

¹ <http://holyjoe.org/poetry/field4.htm>

² Նույն տեղում:

³ Մեծաբեկց Մ., նշվ. աշխ., էջ 311:

ծը ոչ միայն հայ ընթերցողին ծանոթացրել է անգլիագիր հեղինակների ոչ այնքան լայն ճանաչում ունեցող, բայց տպավորիչ երկերին, այլև լիովին բացահայտել է դրանց հոգեբանական ենթաշերտերն ու փոխանցել նաև սեփական ներաշխարհում փոթորկվող հույզերը:

Հայկանուշ Շարուրյան – Միսաք Մեծարենցը թարգմանիչ

Առաջին անգամ առանձին ուսումնասիրության նյութ է դարձել Միսաք Մեծարենցի գրական ժառանգության մի ուշագրավ ու արժեքավոր մասը, այն է՝ անգլո-ամերիկյան գրականությունից կատարված թարգմանությունները և փոխադրությունները: Փաստվել է, որ մեզ հասանելի նյութերի պատառիկներն անգամ վկայում են վաղամեռիկ բանաստեղծի՝ անգլերենի քաջիմացությունը, գրական բարձր ճաշակն ու հետաքրքրությունների շրջանակը և, ի վերջո, թարգմանական տեխնիկայի հմտություններին տիրապետելու ձիրքը: Ընդամենը 22 գարուններ ապրած «հիվանդ, հանճարեղ պատանուն» ամենից առաջ գրավել են անգլիագիր հեղինակների՝ հոգեբանական խորք ու գեղարվեստական առավել ազդեցիկ պատկերներ պարունակող երկերը. այն մի դեպքում Ռ. Քիփլինգի մարդեղացված կենդանական աշխարհն է կամ Օ. Ուայլդի փիլիսոփայական խոհը, մյուս դեպքում Ջ. Չոսերի և Թ. Փիքոքի սիրո մորմոքը կամ Յ. Ֆիլդի հոգեպարար օրորոցայինները: Մեծարենց թարգմանիչն ինքնատիպ բացթողում-հավելադրումներով, երբեմն բառիմաստի պատճառաբանված մեղմացումներով կամ փոփոխություններով կարողացել է լիովին թափանցել իր ընտրած գրական ստեղծագործությունների հոգեբանական ենթաշերտերը և թիրախ լեզվին փոխանցել նաև սեփական ներաշխարհում փոթորկվող հույզերը:

Айкануш Шарурян – Мисак Мецаренц – переводчик

Ключевые слова – Мисак Мецаренц, переводы, англо-американская литература, проза, поэзия, Редьярд Киплинг, «Пими (История обезьяны)», Оскар Уайльд, Джеффри Чосер, Томас Лав Пикок, Юджин Филд

Впервые материалом для отдельного исследования стала одна из заслуживающих внимания ценных частей литературного наследия Мисака Мецаренца – переводы и переложения, сделанные из англо-американской литературы. Очевидно, что даже отрывки материалов, дошедшие до нас, свидетельствуют о хорошем знании английского, высоком литературном вкусе, широком круге интересов и, наконец, об отличном владении преждевременно усопшим поэтом навыками техники перевода. Прожившего всего 22 весны «больного гениального юношу» прежде всего привлекали произведения англоязычных авторов, пронизанные психологической глубиной и наиболее впечатляющими картинками: в одном случае это очеловеченный животный мир Р. Киплинга или философские размышления О. Уайльда, в другом – сокрушение о любви Т. Пикок или задушевные колыбельные Ю. Филда. Посредством своеобразных упущений-добавлений, иногда с помощью обоснованных смягчений или изменений слова Мецаренцу-переводчику удалось полностью проникнуть в психологические прослойки выбранных произведений и передать на языке перевода бушующие в собственном внутреннем мире эмоции.

Haykanush Sharuryan – *Misak Metsarents as a Translator*

Key words – *Misak Metsarents; translations; English-American literature; prose; poetry; Rudyard Kipling; “Pimi (A Story of a Monkey)”;* Oscar Wilde; *Geoffrey Chaucer; Thomas Love Peacock; Eugene Field*

For the first time a noticeable and valuable part of Misak Metsarents' literary heritage, that is, translations and adaptations taken from English-American literature became the subject of a separate study. It has been proved that even fragments of the materials available to us testify the prematurely deceased poet's good knowledge of English, high literary taste and range of interests and, finally, his ability to master translation skills. “The sick, gifted young man”, who only lived his 22 springs, was first of all fascinated by the works of English writers containing deep psychology and impressive artistic images: on one hand, it is the humanized animal world of R. Kipling or O. Wilde's philosophical mind, on the other hand, it is G. Chaucer's and T. Peacock's sharp pain of love or E. Field's soulful lullabies. As a translator, Metsarents managed to completely penetrate into the psychological sublayers of the literary works of his choice, to convey to the target language the emotions that were raging in his own inner world: he achieved this by making original omissions-additions, sometimes reasoned mitigations or changes.

Ներկայացվել է 03.05.2022

Գրախոսվել է 05.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Հայկանուշ Շարուրյան – ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (hsharuryan@ysu.am)

ՀԵԿԶԱՄԵՏՐԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՇ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր – հեկզամետր, մոնոստիքոս, դիստիքոս, դակտիլ, վեցաշեշտ տող, տոնիկական ոտանավոր, դոլնիկ, հատած, հեկզամետրի նմանակում, «հուշարձան»

Եղիշե Չարենցի մոնոստիքոսներին (միատող բանաստեղծություններին) նվիրված իր արժեքավոր հոդվածում գրականագետ Սեյրան Գրիգորյանը, ներկայացնելով բանաստեղծական այդ ձևերը ռուս և համաշխարհային գրականության համատեքստում, ուշադրություն է հրավիրում նաև այն փաստի վրա, որ Չարենցի «բոլոր մոնոստիքոսները գրված են հստակ չափաբերությամբ, և որ պարզապես ապշեցուցիչ է, բացառապես հեկզամետրով»¹: Ս. Գրիգորյանը խնդիր է դնում տաղագիտության առջև՝ հատուկ ուշադրություն դարձնելու հեկզամետրի կիրառությանը Չարենցի պոեզիայում. «Գրականագիտության մեջ հատուկ աշխատանք չկա չարենցյան հեկզամետրի մասին, սակայն առկա են բնագրային որոշ նշաններ, որ 1920-ական թվականների վերջից և հատկապես «Գիրք ճանապարհի» ժողովածուում բանաստեղծը որոշակի ուշադրություն է դարձնում այդ չափին»²:

Այս դիտարկումները մեզ մղեցին իսկապես նոր հայացքով քննելու Չարենցի բանաստեղծական ժառանգության տաղաչափական կառուցվածքի որոշ կողմեր, մասնավորապես՝ ուշադրություն դարձնելու այն երկերին, որոնց ռիթմական սկզբունքները կարելի է դիտարկել իբրև անտիկ հեկզամետրի (վեցչափյա տողի) նմանակման արդյունք: Նախ, փորձենք կարճառոտ ներկայացնել համաշխարհային և, մասնավորապես ռուսական պոեզիայում հեկզամետրի դրևորման տարաբնույթ եղանակները և այս համատեքստում դիտարկենք Չարենցի՝ վեցաշեշտ տողերով գրված բանաստեղծությունները, որոնց թիվն իսկապես քիչ չէ, և որոշ դեպքերում դրանք կարելի է դիտարկել իբրև հեկզամետրային չափի նմանակում:

Հեկզամետրը հին հունական պոեզիայի ամենավաղ առաջացած ձևերից է (այն արդեն գործող չափ է եղել մ. թ. ա. IX-VIII դարերում), որով ստեղծվում էին բանաստեղծական մեծ երկերը, մասնավորապես՝ հերոսական, ցիկլիկ և դիդակտիկ պոեմները: Ավելի ուշ այս չափը ժառանգում է հին

¹ Գրիգորյան Ս., Եղիշե Չարենցի մոնոստիքոսները // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ. Բանասիրություն»), 2021, թիվ 1, էջ 12:

² Նույն տեղում, էջ 12-13:

հռոմեական գրականությունը: Առավել լայն տարածում ուներ դակտիլային հեկզամետրը, որի վեց ոտքերից հինգը դակտիլներ էին, իսկ մեկը՝ սպոնդեյ (երկու երկար վանկերից բաղկացած ոտք), ընդ որում՝ սպոնդեյը կարող էր հանդես գալ տարբեր դիրքերում, առավել հազվադեպ՝ նախավերջին ոտքում: Արմատավորվելով իբրև մեծ էպոսի չափ՝ հեկզամետրը որոշ ժամանակ անց սկսում է օգտագործվել նաև միջին չափի ժանրերում, մասնավորապես՝ հովվերգություններում (սկսած Թեոկրիտեսից), սատիրայում և ուղերձում (սկսած Հորացիուսից): Քանի որ հեկզամետրը բավականաչափ երկար չափ է, այն պահանջում էր տողամիջյան դադար (ցեզուրա), որով տողը բաժանվում էր արտասանական երկու հատվածի (հիմնականում իրար հավասար, երբեմն՝ անհավասար): Կիսատողերը ռիթմիկ առումով տարաբնույթ էին, քանի որ «հատածը տեղադրվում էր այնպես, որ եթե առաջին կիսատողն սկսվում էր ուժեղ տեղից՝ իջնող ռիթմով, ապա երկրորդը պետք է սկսվեր թույլ տեղից՝ բարձրացող ռիթմով, և հակառակը...»¹: Սա հնարավորություն էր տալիս խուսափելու կիսատողերի միապաղաղությունից և ներմուծելու ռիթմական բազմազանություն: Բյուզանդական պոեզիայում նույնպես օգտագործվում էր հեկզամետրը, և V-VI դարերից, երաժշտական հատկանիշներից բացի, այդ չափն սկսում է ձեռք բերել նաև տոնիկական (շեշտային) հատկանիշներ, իսկ VII դարից նրանում ներմուծվում է նաև հանգը: XII դարում վազանտ բանաստեղծների պոեզիայում հեկզամետրը կիրառվում է քառատող նույնահանգ տներում (aaaa), մինչդեռ անտիկ հեկզամետրը լիովին անհանգ էր: Բանաստեղծական այս չափն իր որոշակի դրսևորումն է ունենում նաև Վերածննդի մի շարք լատինագիր բանաստեղծների երկերում:

Նոր լեզուներում հեկզամետրը կրում է էական փոփոխություններ՝ կապված երկար և կարճ վանկերի հարաբերությունների փոփոխության, ինչպես նաև բանաստեղծական խոսքում շեշտի դերի ուժեղացման հետ: Այն դառնում է վեցաշեշտ տողի տարբերակ՝ շեշտված վանկերի միջև երկու, երբեմն՝ մեկ անշեշտ վանկով, և այստեղ պարտադիր է մնում տողամիջյան հատածը (հիմնականում՝ յոթերորդ վանկից հետո): Տողը, որպես կանոն, բաղկացած է դակտիլներից, որոնց զուգակցվում են նաև քորեյական ոտքեր: Սա, ըստ էության, դոլնիկային չափ է², և ռուսական պոեզիայում այն սկսեցին կոչել «դակտիլ-քորեյական վեցոտնյա դոլնիկ»: Այս տիպի հեկզամետրը XVIII դարից լայն կիրառություն գտավ Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում (Կլոպշտոկ, Կլայստ, Շիլլեր, Սիդնի և ուրիշներ), իսկ Գյոթեն իր «Հռոմեա-

¹ Гаспаров М. Л., Очерк истории европейского стиха, Москва, 1989, с. 71.

² *Դոլնիկ* է կոչվում ոտանավորի այն ձևը, որտեղ զուգակցվում են անհավասար ոտքեր: Ըստ էության, դոլնիկներն առաջացել են կանոնավոր եռավանկ ոտքերի մեջ որոշ անշեշտ վանկերի տղման արդյունքում և վանկաշեշտականից դեպի համաշեշտ (ակցենտային) ոտանավորի անցման միջանկյալ օղակներ են: Եզրույթը ներմուծել է Վ. Բյուրսովը:

կան էլեգիաները», նաև «Հերման և Դորոթեա» էպիկական պոեմը գրել է այս չափով՝ իբրև նմանողություն անտիկ պոեզիայի:

Սակայն պետք է արձանագրել, որ նոր ժամանակների հեկզամետրը ինչ-որ առումով «պայմանական» է, քանզի նոր լեզուներում, որտեղ չկան երկար և կարճ վանկեր, չափական ոտանավորի նույնատիպ ոտքերի կիրառությունը, ըստ էության, անհնարին է: Բավական է նշել, որ անտիկ հեկզամետրում տողն ուներ 24 վանկ (մորա), իսկ նոր լեզուներում, որտեղ երկար վանկերը փոխարինվեցին շեշտված վանկերով, հեկզամետրային տողը բաղկացած է առավելագույնը 18 վանկից (հաճախ տողերը կարող են ավելի կարճ լինել): Միակ նմանությունը դակտիլային ոտքերի առկայությունն է (արդեն ոչ թե երկար, այլ շեշտված վանկերով), իսկ սպոնդեյին փոխարինում է քորեյը: Սակայն նոր ժամանակներում այս չափն ընդլայնում է իր կիրառության շրջանակները, պայմանականորեն հեկզամետր են կոչում այն բոլոր չափերը, որոնցում տողն ունի վեց ուժեղ շեշտ և տողամիջյան պարտադիր հատած: Խոսելով XIX դարի սկզբներից ռուսական պոեզիայում հեկզամետրի կիրառության մասին, որը կապված էր նաև անտիկ պոեզիայի, մասնավորապես՝ Հոմերոսի պոեմների թարգմանության հետ՝ ռուս տաղագետ Մ. Գասպարովը նկատում է. «Հեկզամետրի յուրացումը առիթ դարձավ՝ փորձեր կատարելու նաև այնպիսի չափերով, որոնք կարելի է «հեկզամետրի դերիվատներ»¹ անվանել...»²: Մասնավորապես, հեկզամետրային չափեր են համարվում նաև ամֆիքրաքոսյան ոտքերով ստեղծված ոտանավորները (դրանք Մ. Գասպարովն անվանում է «պսևդո-հեկզամետրեր»), որոնք գրվում էին գերմանացի բանաստեղծներ Ի. Հոտշեդի և Է. Կլեյստի նմանողությամբ: Ավելի ուշ՝ XX դարի սկզբներին, երբ ռուսական պոեզիայում արմատավորվեց համաշեշտ ոտանավորը, «պսևդո-հեկզամետրային» չափերը նույնպես փոխեցին իրենց բնույթը՝ փոքրացնելով կամ մեծացնելով անշեշտ վանկերի միջակայքը:

Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև Չարենցի այն բանաստեղծությունները, որոնք նա միտումնավոր մոտեցրել է հեկզամետրի չափին: Խախտելով ժամանակագրությունը՝ սկսենք ավելի ուշ գրված, բայց առավել ակնառու օրինակներից՝ մոնոստիքոսներից, որտեղ, ինչպես նկատում է Ս. Գրիգորյանը, առկա է հեկզամետրի միանգամայն գիտակցված կիրառություն: Ինչպիսի՞ հեկզամետրի մասին, սակայն, կարող ենք խոսել այստեղ: Դիտարկելով Չարենցի տասը մոնոստիքոսները՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը. տասը մոնոստիքոսներից երկուսը բաղկացած

¹ *Дериват* է կոչվում այն առարկան, որն առաջանում է մեկ այլ՝ ավելի առաջնային առարկայից կամ նրա հիմքի վրա: Տաղագիտության մեջ այս եզրույթը կիրառվում է՝ մատնանշելու համար այնպիսի իրողություններ, որոնք ձևավորվում են արդեն իսկ գոյություն ունեցող ինչ-որ իրողության հիման վրա, նման են նրան, բայց և նույնական չեն:

² Гаспаров М. Л., Очерк истории русского стиха, Москва, 1984, с. 126.

են 14 վանկից, մեծագույն մասը (վեցը)՝ 17 վանկից, մեկը՝ 16, մեկը՝ 18: Սակայն ոչ այնքան կարևոր է տողերի երկարությունը, որքան դրանց ներքին ռիթմը, հատածի դիրքն ու բնույթը: Այսպես, մոնոստիքոսների գերակշիռ մասի՝ իննի առաջին կիսատողերում պահպանված է դակտիլային կանոնավոր շեշտադրությունը, որն ակնհայտորեն հուշում է մեզ, որ Չարենցը, կիրառելով անտիկ պոեզիայից եկած բանաստեղծական այս ձևը, նաև գիտակցաբար դիմել է հնագույն հեկզամետրային չափին: Մոնոստիքոսների երկրորդ մասերում պատկերը որոշ չափով տարբեր է: Դիտարկենք դրանք հետևյալ հերթականությամբ

Դու ծնվեցիր անվավեր՝ // ինչպես թիվ գերոյով վրիպած...¹

Այստեղ շեշտադրությունը այսպիսին է՝ երեք դակտիլ, երեք անապեստ, սակայն իրականում, եթե տողամիջյան դադարը չլիներ, կարող էինք խոսել դակտիլային վեց ոտքերի մասին, որոնք բանաստեղծն ընդմիջել է հատածով, և առաջին կիսատողի ընկնող ռիթմին հաջորդել է բարձրացող՝ անապեստյան ռիթմը (սա բնորոշ էր հեկզամետրային չափին): Նույնատիպ ռիթմով են կառուցված նաև հետևյալ երեք մոնոստիքոսները, որոնց առաջին կիսատողը դակտիլ է, իսկ երկրորդը՝ անապեստ, թեպետ նախորդից սրանք մեկ վանկով ավելի են (17 վանկ), քանի որ ունեն իգական վերջավորություն.

Անձ ես դու մի առանձին,- // ժողովո՞ւրդն ես համայն, միննույնն է՝

Մերն է երգում քո լեզվով - // և լեզուն այդ - դելփյան ջինջ լեզուն է...

Վա՛յ քեզ Չարենց, երկուստեք, // ո՛չ քո երգն էր տեղին, ո՛չ քո կյանքը²:

Մեկում առաջին կիսատողն ունի իգական վերջավորություն, իսկ երկրորդ կիսատողը՝ արական.

Ո՛չ. մեծերից մեծագույնը,- // օ, դու ինքդ ես, անմահ Շնորհալի...

Մոնոստիքոսներից երկուսը բաղկացած են բացառապես ընկնող ռիթմով դակտիլային-վեց ոտքերից, և այդ պատճառով տողերն այստեղ համեմատաբար կարճ են՝ 14 վանկ.

Ղարս, և՛ Մակու, և՛ աշխարհ,- // ո՞րն էր քո հողը, պոետ...

Ղարս, և՛ Մակու, և՛ աշխարհ,- // ո՞րք քո հողն էր, պոետ...

Ակնհայտ է, որ բանաստեղծի ներմուծած շեշտերը շատ դեպքերում չեն համապատասխանում արտասանական իրական շեշտերին:

Քանի որ Չարենցը մեծապես յուրացրել էր դոլնիկային համաշեշտ չափերի արվեստը, որը ռուսական պոեզիայի անմիջական ազդեցության արդյունք էր, մոնոստիքոսներում նույնպես նա զուգակցել է այդ չափերը դակտիլների հետ կամ ամբողջովին գրել այդ համաշեշտ ոտանավորով.

Մեր ռոպսոդներն էին հին // նախ՝ նրանք, գողթան չքնաղ երգիչները...

Ո՛ւմ անվանեմ ես ապա,- // եթե ոչ - քեզ միակըդ, մե՛ծըդ Նարեկ...

¹ **Չարենց Ե.**, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, 1983, էջ 214: Մոնոստիքոսներից մյուս բոլոր մեջբերումները (բացի մեկից) կկատարվեն սույն գրքի 214-215 էջերից:

² **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1987, էջ 221:

Ղու Ղարստ՝ւմ թեկուզ ծնվեցիր - //բայց աշխարհն էր քո հայրենիքը:

Այսպիսով, կարող ենք պնդել որ մոնոստիքոսներում պահպանված է ինչպես տողամիջյան հատածը, այնպես էլ վեցաշեշտ լինելու պայմանը և, մեծավ մասամբ, դակտիլային շեշտադրությունը: Ավելին, պատահական չէ, որ բերված տասը մոնոստիքոսներից ութում տողամիջյան հատածն ընկնում է յոթերորդ տողից հետո (թեպետ տողերի երկարությունը տարբեր է՝ 14-18 վանկ), ինչն ընդունված էր նոր ժամանակների եվրոպական և ռուսական հեկզամետրում:

Վեցաշեշտ այս չափը, սակայն, նորություն չէր Չարենցի պոեզիայում, այլ գալիս էր ավելի վաղ շրջանից: Դեռևս 1918-1920 թթ. գրված «Ողջակիզվող կրակ» շարքի «Նոր է կարոտս հիմա...» բանաստեղծությունը կարծես մի ինքնատիպ սինթեզ լինի վանկական 14/7+7/ չափի, համաշեշտ ոտանավորի և դակտիլային հեկզամետրի. այստեղ, մի կողմից, պահպանված է յոթերորդ վանկից հետո տրվող տողամիջյան կայուն հատածը, մյուս կողմից, որոշ տողեր ունեն դակտիլային հստակ շեշտադրություն, որը հեկզամետրի կարևորագույն պայմաններից էր.

Նո՛ր է կարոտս հիմա.// հուր է կարմիր ու հրդեհ...

Հո՛ւր ես դարձել ու կրակ, // փայլ ես կարմիր ու փրփուր¹:

Սակայն, ընդհանուր առմամբ, Չարենցի՝ այդ ժամանակաշրջանի պոեզիայում գերակշռում են վանկական չափերը: Իսկ արդեն 1920-ական թթ. կեսին գրված «Ռուբայաթ» շարքը բացում է մի հետաքրքիր պատկեր. այստեղ գերիշխում են համաշեշտ ութմերը՝ եռաշեշտ և վեցաշեշտ տարբերակներով, ընդ որում՝ դոլնիկային համաշեշտ չափերով գրված են 44 ռուբայիներից 30-ը: Թեպետ դրանք վեցաշեշտ են, սակայն պնդել, որ Չարենցի նպատակը հեկզամետրի կիրառումն է եղել, տվյալ դեպքում դժվար է՝ ի տարբերություն ավելի ուշ գրված դիստիքոսների, մոնոստիքոսների և մի շարք այլ բանաստեղծությունների, որտեղ ակնհայտ է հեկզամետրին տրվող նախապատվությունը: Այդ մասին է վկայում նաև այն իրողությունը, որ ռուբայիներում և այդ շրջանում գրված մի շարք այլ վեցաշեշտ բանաստեղծություններում («Աշուն է նստել սեղանիս...», «Հարց և պատասխան») չկան դակտիլային շեշտադրությամբ տողեր, որոնք հետագա շրջանի հեկզամետրային չափերի կարևորագույն բաղադրիչն են. այստեղ գերիշխող են համաշեշտ ութմերը՝ եռավանկ և երկվանկ դոլնիկներով: Բայց միևնույն ժամանակ պետք է նաև արձանագրել, որ այս տիպի վեցաշեշտ դոլնիկներն են եղել այն կամուրջը, որոնցով Չարենցն անցում է կատարել դեպի առավել գիտակցված հեկզամետրային չափերը:

Դակտիլային հեկզամետրին տրվող գերապատվությունը բացահայտորեն երևան է գալիս Չարենցի՝ 1930-ական թթ. ստեղծագործության մեջ,

¹ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 155:

հատկապես «Գիրք ճանապարհի» ժողովածուում: Մասնավորապես, «Մահ-վան տեսիլ» պոեմի «Մուտք»-ից հետո գրված հատվածները բոլորն էլ վեցա-շեշտ են, սակայն հեկզամետրի կիրառությանն այստեղ անդրադառնալը նույնպես տեղին չէ: Նաև դակտիլային շեշտադրություն ունեցող կիսատողե-րի բացակայությունն է մեզ հուշում, որ Չարենցի նպատակն ամեննին էլ՝ հեկզամետրով գրելը չի եղել, այլ համաշեշտ ոտանավորի առավել երկար՝ վեցաշեշտ տարբերակով (ի տարբերություն ավելի վաղ շրջանի նախընտ-րած եռաշեշտ տողերի): Բացի այդ, «Գիրք ճանապարհի» ժողովածուից սկսած՝ ակնհայտ է դառնում, որ Չարենցը նախընտրում էր հեկզամետրը կի-րառել ավելի փոքր ժանրերում՝ դիստիքոսներ, քառյակներ, էպիտաֆիաներ և այլն, այսինքն՝ բանաստեղծական այն ձևերում, որոնք անտիկ և նոր ժա-մանակների եվրոպական ու ռուսական պոեզիայում հաճախ էին կառուց-վում հեկզամետրով: Եվ արդեն կյանքի վերջին շրջանում գրված ավելի փոքր ձևերում՝ մոնոստիքոսներում, հեկզամետրի կիրառությունը դառնում է այս տրամաբանության անմիջական շարունակությունը:

«Գիրք ճանապարհի»-ում հեկզամետրի նմանակմամբ գրված մի շարք բանաստեղծություններ կան. այս հանգամանքը վկայում է, որ այդ չափը դարձել էր Չարենցի բանաստեղծական մտածողության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այդպես են գրված մի շարք քառյակներ («Կարծում են նոքա, թե մի օր...», Հովհ. Թումանյանին, Ալ. Մյասնիկյանին, Մ. Մեծարենցին նվիրված քառյակները), «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին» շարքի որոշ հատվածներ (հատկապես՝ Ա, Դ, Զ մասերը)։

Թո՛ղ հուրիհա իմ գրքում // ձեր ոգու ցոլքը լուսե,

Թո՛ղ երգերում իմ այսօր // խոսքերում իմ – ձեր ջանքը եռա՛՜ -¹:

Սակայն այս ժողովածուում հեկզամետրի նմանակման լավագույն օրինակները առկա են «Դիստիքոսներ» շարքում, որը տաղաչափական հնարքների և կառուցվածքի առումով կարելի է մոնոստիքոսների հետ տեղադրել նույն հարթության վրա:

Անտիկ պոեզիայում *դիստիքոսներ* են կոչվել երկտող անհանգ բանա-ստեղծությունները, որոնց առաջին տողը գրվել է հեկզամետրով, իսկ երկ-րորդը՝ պենտամետրով և եղել է ավելի կարճ: Բանաստեղծության այս տե-սակը սովորաբար կոչել են *էլեգիական դիստիքոս*, քանի որ պարունակել է փիլիսոփայական խոհ և կենսական հարցերի խոր դիտարկումներ: Իբրև բանաստեղծական չափ՝ այն արմատավորվել է նաև մի շարք այլ փոքրա-ծավալ ժանրերում՝ էպիգրամ, մակագրություն, էպիտաֆիա և այլն: Սկզբնա-վորվելով հին հունական գրականության մեջ մ. թ. ա. VIII-VI դարերում՝ դի-ստիքոսը լայն տարածում է գտել նաև հին հռոմեական պոեզիայում, որտեղ

¹ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 394: Այս հատորից արված հետազա մեջբերումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով էջը:

մեծ համբավ ունեին Օվիդիոսի, Տիբուլլոսի, իսկ ավելի ուշ՝ Կատոնի (III-IV դդ.) դիստիքոսները: Նոր ժամանակների եվրոպական պոեզիայում նույնպես դիստիքոսը կիրառվել է, սակայն այնտեղ այդ չափն «օգտագործվում է գրեթե բացառապես թարգմանություններում, նմանակումներում և անտիկ նմուշների ռճավորումներում»¹: Նոր ժամանակների դիստիքոսներից հայտնի են Գյոթեի և Շիլլերի ավելի քան վեց հարյուր էպիգրամները: Ռուսական պոեզիայում նույնպես կիրառվել է բանաստեղծական այս ձևը (Գնյոդիչ, Պուշկին, Դելվիգ, Բրյուսով), հատկապես անտիկ պոեզիայի թարգմանություններում և նմանակումներում: Ինքնին հասկանալի է, որ Չարենցը չէր կարող ծանոթ չլինել Պուշկինի և Բրյուսովի դիստիքոսներին, ինչպես նաև Գյոթեի և Շիլլերի երկերին: Պատահական չէ, որ իր «Դիստիքոսներ» շարքի համար իբրև բնաբան նա ընտրել է հենց Գյոթեի դիստիքոսներից մի կիսատող գերմաներենով, որը բառացի թարգմանությամբ հետևյալն է՝ «Ելե՛ք, դիստիքոսներ, համարձակ...», իսկ 22-րդ դիստիքոսը, որը գրված է էլեգիական դիստիքոսին հատուկ չափով (առաջին տողը՝ հեկզամետր, երկրորդը՝ պենտամետր) նվիրված է հենց մեծն Գյոթեին:

Քո հանճարո՛վ բարձրացար // դու դարից քո, կյանքից, քեզանի՛ց իսկ. -

Ո՞նց քո հոգին չմեռավ- // եղկ ու չնչին Վայմարում:- (419)

«Դիստիքոսներ» շարքում, ակնհայտ է, Չարենցը ստեղծում է անտիկ պոեզիայի բանաստեղծական այդ ձևի նմանակումներ, և բնական է, որ ձգտում է նաև հնարավորինս հավատարիմ լինել հեկզամետրային չափին՝ գրեթե նույնությամբ կրկնելով ռուսական պոեզիայում դակտիլների և դոլնիկների զուգորդմամբ ստեղծված հեկզամետրերը: Բավական է նշել, որ 51 դիստիքոսից 46-ում չորս կիսատողերից առնվազն մեկն ունի դակտիլային շեշտադրություն (առաջին, չորրորդ, յոթերորդ վանկերի շեշտերով), 9-ում միայն առաջին տողի կիսատողն է դակտիլային, իսկ երկրորդն այլ չափով է գրված, 31-ում երկու տողերի առաջին կիսատողերը դակտիլներ են, իսկ 12-ում բոլոր չորս կիսատողերն են գրված դակտիլներով, ինչպես հետևյալ օրինակում:

Ո՞նց իմանար Հոմերոսը, //որ կործանվի երբ Տրոլա՛ դան-

Քե՛զ է ավար մնալու // ողջը, «թշվա՛ռ Թերսիդես»:- (422)

Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ դակտիլներով ստեղծագործելն առհասարակ բարդ է հայկական պոեզիայում, քանի որ բանաստեղծը ստիպված պետք է լինի գրեթե բոլոր տողերն սկսել միավանկ բառերով, ապա ակնհայտ կդառնա այն մեծ ջանքն ու բանաստեղծական վարպետությունը, որ կիրառել է Չարենցը անտիկ պոեզիայից եկող հեկզամետրին հավատարիմ լինելու համար՝ անշուշտ, մեծ չափով հարմարեցնելով այն մեր լեզվի արտասանական սկզբունքներին:

¹ Краткая литературная энциклопедия, т. 8, Москва, 1975, с. 866.

Այն կիսատողերը, որոնք դակտիլային չեն, գերակշիռ մասով գրված են Չարենցի այնքան սիրելի համաշեշտ չափերով՝ եռավանկ, երկվանկ, հազվադեպ՝ քառավանկ անդամներով: Դրանց զգալի մասն ունի երեք-երկու-երեք շեշտադրությունը (անապետ-յամբ-անապետ), որը կարծես մեր բնիկ հայկական հայրենի երկրորդ կիսատողի ճշգրիտ պատճենումն է: Ահա այդպիսի կիսատողերի մի քանի օրինակ (լրացուցիչ դրված շեշտերն ու ընդգծումները մերն են).

Մա՛րդ, բարձրախոհ դու եղի՛ր // պայքարի՛ր՝ դարի՛դ առնե՛թե՛ր... (416)

Բայց ունե՛ս աչքե՛ր սրատե՛ս, // որ մթնո՛ւմ հերկե՛րը տեսնե՛ս:- (418)

Ո՛չ թե սրտի՛ք քնքշություն, // այլ ոգո՛ւ կորո՛ւ վ ու պայքա՛ր:- (416)

Կա Մեծարենց, կա Տերյան,- // և բազո՛ւմ ուրի՛շ պոետնե՛ր կան... (416)

Մի քանի դիստիքոսներ ամբողջովին գրված են համաշեշտ չափերով, սակայն շարքի ընդհանուր տրամադրության և կառուցվածքի համատեքստում հնչում են գրեթե նույնատիպ.

Դու այս մեծ այգում բարձրացար,- // ունեցի՛ր աչքեր սրատես,

Որ աճես այգին առնե՛թե՛ր // և կդառնաս դու անմահ:- (418):

Ժողովածուում տեղ են գտել նաև հեկզամետրային չափով գրված մի շարք թարգմանություններ. այդ շարքում ուշագրավ են հատկապես Գյոթեից կատարված երեք թարգմանություններ՝ բոլորն էլ հունա-հռոմեական թեմատիկայով՝ «Հռոմեական էլեգիաներ» շարքի V բանաստեղծության առաջին չորս տողերը, «Անակրեոնի գերեզմանը» և «Վենետիկյան էպիգրամներ» շարքի V էպիգրամը: Ակնհայտ է, որ Չարենցը ձգտել է հնարավորինս մոտ լինել բնագրի տաղաչափական ձևին, որը, ինչպես նշել ենք, անտիկ հեկզամետրի նմանակումն էր: Իսկ Պուշկինի «Աշխատանք» բանաստեղծության թարգմանության մեջ նա գրեթե նույնությամբ պատճենել է բնագրի չափը: Այստեղ կարելի է կողք կողքի տալ բանաստեղծական բոլոր վեց տողերի կառուցվածքը բնագրում և թարգմանության մեջ.

Пушкин «Труд» Չարենց «Աշխատանք»

1. 3 դակտիլ // 3 ամֆիքրաքս 3 դակտիլ // 3 անապետ

2. 3 դակտիլ // 3 դակտիլ 3 դակտիլ // 3 դակտիլ

3. 3 դակտիլ // 3 անապետ 3 դակտիլ // 3 անապետ

4. 3 դակտիլ // 3 դակտիլ 3 դակտիլ // 3 դակտիլ

5. 1 քորեյ, 2 դակտիլ // 3 անապետ 3 դակտիլ // 3 անապետ

6. 3 դակտիլ // 3 դակտիլ 3 դակտիլ // 3 դակտիլ

Ինչպես տեսնում ենք, վեց տողերից չորսում Չարենցը կարողացել է նույնությամբ պահպանել պուշկինյան հեկզամետրը, իսկ մյուս երկուսում կան փոքրիկ շեղումներ, որոնք ընդհանուր առմամբ չեն խախտում բնագրի տաղաչափական ձևը: Եթե այս ամենին ավելացնենք նաև այն մեծ վարպետությունը, որով Չարենցը կարողացել է պահպանել բանաստեղծության տրամադրությունն ու ոգին, ապա կարող ենք, հիրավի, նշել թարգմանական

գլուխգործոցի մասին: Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանն իրավացիորեն նկատել է. «Նշանակալից է հատկապես այն փաստը, «Գիրք ճանապարհին» ավարտվում է հենց Պուշկինի «Աշխատանքի» թարգմանությամբ: «Եվգենի Օնեգինի» ավարտման առիթով գրված այդ բանաստեղծությունը Չարենցը, անշուշտ, ներկայացնում էր որպես նաև իր «Երկար աշխատանքի»՝ իր «վերջին մատյանի» եզրափակիչ ակորդը և կիսում էր իր մեծ նախորդի թախիծը, որ նա ապրել է սիրելի գործից բաժանվելիս.

Ժամն ըղձական այդ հասավ, ավարտված է երկար աշխատանքը:

Ի՞նչ է թախիծն էլ անհայտ սիրտս կրծում անդադար»:

«Գիրք ճանապարհի»-ից հետո (ենթադրաբար՝ 1936 թ.) գրված բանաստեղծություններից մեկում Չարենցը հատուկ անդրադառնում է դակտիլային չափերի կիրառությանը՝ ակնարկելով իր ստեղծագործական կյանքի վերջին տարիներին տեղի ունեցած տաղաչափական նախասիրությունների որոշակի փոփոխությունը.

Ե՛րբ, արդյոք ե՛րբ դու դարձար, // սի՛րտ այդքան խեղճ ու հլու-

Գուցե այդ դու ես միտում //դուրսը աշնան մորմոքում:-

Մի՞ թե թախիծն է քո ցուրտ -// ցուրտ արցունքով մորմոքում,

Մի՞ թե քո սերն է լալիս // ցուրտ անձրևի դակտիլում...²

Ճիշտ է, այս բանաստեղծության հաջորդ չորս տողերում դակտիլային ռիթմից կտրուկ շեղում կա, բայց վերջին տողում Չարենցը կրկին գրում է դակտիլների մասին.

Եվ արձրեր արցունքի նման // ցուրտ տողեր շարում դակտիլով...

Առավել հետևողականորեն է դակտիլային շեշտադրությունը պահպանված նույն թվականին գրված «Վերադարձած աշուն» բանաստեղծության մեջ, որտեղ վեցաշեշտ տողերը, տողամիջյան դադարներն ու կիսատողերում գերակշռող դակտիլային չափերը կարող են հիմք դառնալ՝ խոսելու հեկզամետրի լիովին գիտակցված կիրառության մասին: Նույնը կարելի է պնդել նաև Կոմիտասի հիշատակին գրված «Էպիտաֆիա»-ի վերաբերյալ, որտեղ առաջին բոլոր կիսատողերում պահպանված է դակտիլային հստակ շեշտադրությունը.

Աստ Կոմիտասն է հանգչում՝ // իբրև հող ու աճյուն առհավետ:

Մի՛րտ մոխրացած, դարձած հող՝ // երբեմնի անոթ ձայնածին:

Ա՛յր մահացու՝ աշխարհում // նա եղել է դպիր, վարդապետ:

Այր մշտատև՝ ձայնապետ - // ձայների արքա - ձայնագիր³:

Դակտիլային հեկզամետր է կիրառված նաև Վ. Տերյանին նվիրված մի բանաստեղծության մեջ՝ գրված 1937 թ.

Լաց է լինում մեղմ, հոգին իմ,- // դարձն է տոնում մորմոքի.-

¹ **Ջրբաշյան Էդ.**, Պոետիկայի հարցեր, Երևան, 1976, էջ 431-432:

² **Չարենց Ե.**, Անտիպ և չհավաքված երկեր, էջ 163:

³ Նույն տեղում, էջ 115:

*Ղարսն եւ հիշում հեռավոր, // միշտ, երբ կարդում եմ Տերյանը...*¹

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև Չարենցից մեզ հասած «Մոնումենտ» վերնագրով երկու բանաստեղծության, որոնցից մեկը գրված է 1929 թ. և իբրև ենթավերնագիր ունի «(Հեկզամետր)» նշումը, մյուսը (1934 թ.) ամփոփված է «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Արվեստ քերթության» բաժնում: Երկուսը, ըստ էության, ունեն վեցաշեշտ տողեր, հետևաբար կարող են դիտարկվել հեկզամետրի տաղաչափական ձևի շրջանակներում: Մ. թ. ա. I դարի հռոմեացի բանաստեղծ Հորացիուսին է պատկանում «Հուշարձան» («Մոնումենտ») վերնագրով հնագույն բանաստեղծությունը. դրանից սկիզբ է առել բանաստեղծական մի նոր ժանր՝ «հուշարձանը», որի հեղինակը, որպես կանոն օգտագործելով Հորացիուսի ներբողի կոմպոզիցիոն կառույցը և դրա առաջին տողը, անդրադառնում է իր բանաստեղծական վաստակին, իր բերած նորություններին, որոնց շնորհիվ կարող է երկար հիշվել ապագա սերունդների կողմից: Ռուսական պոեզիայում Հորացիուսի «Հուշարձանի» նմանողությամբ գրվել է մի քանի բանաստեղծություն. 1795 թ. Դերժավինը գրել է իր «Հուշարձանը», 1836 թ. ստեղծվել է Պուշկինի նշանավոր բանաստեղծությունը, 1912 թ. նույն ժանրին անդրադարձել է նաև Վ. Բրյուսովը, ավելի ուշ՝ 1962 թ., Ի. Բրոդսկին: Ակնհայտ է, որ այս ժանրի նկատմամբ հետաքրքրությունը Չարենցի պոեզիայում պետք է սկիզբ առներ ռուսական ավանդույթից, իսկ Պուշկինի և Բրյուսովի պոեզիայի հանդեպ Չարենցի տածած մեծ ակնածանքի վերաբերյալ կան բազմաթիվ փաստեր և վկայություններ:

Տվյալ դեպքում մեզ առավել հետաքրքրում է տաղաչափական այն ձևը, որը կիրառել են «հուշարձանի» հեղինակները Չարենցից առաջ: Հորացիուսի ներբողը բաղկացած է 16 տողից և գրված է *ասկլեպիադյան ոտանավորով*. այդպես էր կոչվում մ. թ. ա. IV-III դարերի բանաստեղծ Ասկլեպիադ Սամոսացու ստեղծած տաղաչափական այն ձևը, որը, ըստ էության, հնագույն հեկզամետրի որոշ փոփոխությունների արդյունք էր. վեցչափյա (վեցոտնյա) սկզբունքը և տողամիջյան հատածը պահպանվում էին, պարզապես երկու տիպի ոտքերին՝ դակտիլին և սպոնդեյին, ավելանում էր նաև երրորդը՝ քորեյը: Սրա արդյունքում, նախ, տողն էապես կարճանում էր՝ 24-ից հասնելով 17-18 վանկի (մորայի), երկրորդ, ռիթմը դառնում էր ավելի բազմազան ու ճկուն: Սա էոլիական պոեզիայի չափերից էր, և պատահական չէ, որ իր «Հուշարձան»-ում Հորացիուսը հպարտանում է էոլիացի երգիչներին ընդօրինակելու առաջնությամբ: Տաղաչափական այս ձևը բանաստեղծը կիրառել է իր 30-ից ավելի ներբողներում:

Հորացիուսի «Հուշարձանի» առաջին ռուսերեն թարգմանությունը կատարել է Լոմոնոսովը 1747 թ., առավել հանրահայտ է Ա. Ֆետի թարգմա-

¹ Չարենց Ե., Անտիպ և չհավաքված երկեր, էջ 221:

նությունը (1854): Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են տաղաչափական այն ձևերը, որոնք կիրառել են ռուս թարգմանիչներն ու Հորացիուսին նմանակողները: Այսպես, Լոմոնոսովի թարգմանությունն ու Բրոդսկու «Հուշարձանը» գրված են հնգոտնյա յամբով: Դերժավինի, Պուշկինի և Բրյուսովի բանաստեղծությունները վեցոտնյա յամբ են (վերջին երկուսի տների վերջին տողը քառոտնյա յամբ է): Ակնհայտ է, որ բանաստեղծները ձգտել են պահպանել վեցաչափ տողերը՝ մի կողմից՝ ավելի մոտ լինելու այս բանաստեղծության հնագույն նմուշին, մյուս կողմից՝ հարազատ մնալու ռուսական վանկաշեշտական ամենատարածված ձևին՝ յամբական ոտանավորին: Չարենցյան «Մոնումենտ»-ները նույնպես կազմված են վեցաշեշտ տողերից. դրանցից առաջինը, որը գրվել է 1929 թ. և ներառված է «Էպիգրամներ և սատիրական բանաստեղծություններ» շարքում, ինչպես արդեն նշել ենք, ունի «Հեկզամետր» ենթավերնագիրը: Հայտնի է, որ էպիգրամները հաճախ էին գրվում էլեգիական դիստիքոսի ձևով (երկտող բանաստեղծություն, որի առաջին տողը հեկզամետր է, իսկ երկրորդը՝ պենտամետր): Չարենցի՝ սատիրական բովանդակություն ունեցող այս բանաստեղծությունը կոչվել է «հեկզամետր», քանի որ, մեր համոզմամբ, պահպանված է վեցոտնյա չափը: Ընդ որում, եթե ավելի ուշ գրված մոնոստիքոսներում Չարենցն առավելապես կիրառում էր դակտիլային ոտքեր և դրանով իսկ կարծես ավելի հարազատ մնում անտիկ հեկզամետրին, ապա այս բանաստեղծության նախընտրելի չափը ամֆիբրաքոսն է. բավական է նշել, որ ութ տողերից յոթում առաջին կիսատողերն ունեն ամֆիբրաքոսյան շեշտադրություն, իսկ երկրորդ կիսատողերը շատ տարաբնույթ են (մեկը գրված է դակտիլներով, երեքը՝ ամֆիբրաքոսով, երեքը՝ անապեստով, իսկ վերջին տողն առհասարակ շեղվում է կանոնավոր եռավանկ ոտքերից և ավելի մոտենում անհմաշեշտ չափերին): Ահա բանաստեղծության առաջին քառատողը՝ իր արտասանական շեշտերով (շեշտերի հիմնական մասն ու հատածները դրված են մեր կողմից).

Կանգնա՛ծ է ահա՛ մետաղե՛ // ա՛յս մոնումենտը, նայի՛ր. - (3 ամֆիբրաքոս, 3 դակտիլ)

Մի մա՛րդ է՝ աչքե՛րը հառա՛ծ // դեպի՛ հեռունե՛րը. դեմքի՛ն (6 ամֆիբրաքոս)

Նստե՛լ է մի խո՛հ հանճարե՛ղ, // կերպարա՛նքը խոր՛խտ է ու վե՛հ,
(3 ամֆիբրաքոս, 3 անապեստ)

Բայց ի՞նչ է կյանքո՛ւմ նա արե՛լ - // անհա՛յտ է այսօ՛ր ամենքի՛ն: (6 ամֆիբրաքոս) (150):

Արդեն ավելի ուշ գրված «Մոնումենտը», որն ամփոփված է «Գիրք ճանապարհի»-ում, նույնպես վեցաշեշտ է, և տողերի մեծ մասում (ինը տողերից վեցում) Չարենցը ձգտել է պահպանել հեկզամետրին բնորոշ դակտիլային ընկնող ռիթմը, սակայն բանաստեղծությունն առավելապես գտնվում է համաշեշտ ոտանավորի տիրույթում:

Այստեղ բերենք մի հետաքրքիր փաստ ևս. Պուշկինի «Հուշարձան»

բանաստեղծության՝ Չարենցի կատարած թարգմանությունից մեզ է հասել միայն մեկ քառատող, սակայն այն թարգմանված է վանկական ոտանավորի 14/4+3+4+3/ չափով, որը թերևս ավելի մոտ էր պուշկինյան վեցոտնյա յամբական տողաչափերին (12 և 13-վանկանի):

Իբրև ամփոփում՝ կարելի է անել մի հետաքրքիր դիտարկում. չարենցյան հեկզամետրն իր կառուցվածքում կրում է մշակութային տարբեր շերտեր՝ անտիկ-չափական, ռուսական-դոլնիկային և մայակովսկիական-համաշեշտ: Եվ դրանք վարպետորեն միաձուլել կարող էր միայն բացառիկ հանճարեղ բանաստեղծը: 1920-ական թվականներից Չարենցի պոեզիայում արմատավորված համաշեշտ չափերը, որոնք գերակշիռ մասով եռաշեշտ էին, նա կարողացավ զուգակցել վանկաշեշտական ոտանավորի եռավանկ ոտքերի հետ՝ ստեղծելով վեցաշեշտ տողերով գրված բանաստեղծությունների մի բավական մեծ քանակ, որոնց մի մասը, անշուշտ, հեկզամետրի արդիական նմանակում է:

Աշխեն Զրբաշյան – Հեկզամետրային չափերը Եղիշե Չարենցի պոեզիայում

1920-ական թվականներից Եղիշե Չարենցի պոեզիա են մուտք գործում տաղաչափական նոր ձևեր, այդ թվում նաև հեկզամետրային չափերը: Հեկզամետրը անտիկ պոեզիայի ամենալայն կիրառություն ունեցող չափերից էր: Նոր լեզուներում այն կրեց էական փոփոխություններ՝ կապված երկար և կարճ վանկերի միջև եղած տարբերությունների վերացման և բառի մեջ շեշտի դերի ուժեղացման հետ: Իբրև անտիկ հեկզամետրի նմանակում կամ «պսևդո-հեկզամետր»՝ այդ չափը XVIII դարից տարածում գտավ եվրոպական և ռուսական պոեզիայում, հատկապես անտիկ գրական հուշարձանների թարգմանություններում: Վեցաշեշտ տողերը Չարենցի պոեզիայում երևան են գալիս դեռևս 1918-1920-ական թթ., բայց հեկզամետրի գիտակցված կիրառությունը՝ կիսատողերում դակտիլային ոտքերով, մենք տեսնում ենք հատկապես «Գիրք ճանապարհի» ժողովածուում: Հեկզամետրային չափով են գրված նրա դիստիքոսները, մի շարք քառյակներ, Գյոթեի էլեգիաների և Պուշկինի «Աշխատանք» բանաստեղծության թարգմանությունները: Չարենցի մոնոստիքոսները (միատող բանաստեղծությունները) նույնպես գերակշիռ մասով գրված են հեկզամետրով: Հեղինակի դիտարկմամբ՝ Չարենցի պոեզիայում հեկզամետրային չափերն իրենց կառուցվածքում կրում են մշակութային տարբեր շերտեր՝ անտիկ-չափական, ռուսական-դոլնիկային և մայակովսկիական-համաշեշտ: Դրանք վարպետորեն միաձուլել կարող էր միայն հանճարեղ բանաստեղծը:

Ашхен Джрбашян – Гекзаметрические размеры в поэзии Егише Чаренца

Ключевые слова – гекзаметр, моностих, дистих, дактиль, шестиступная строка, тонический стих, дольник, цезура, подражание гекзаметру, «памятник»

С 1920-х годов в поэзию Егише Чаренца вошли новые метрические формы, в том числе гекзаметрические размеры. Гекзаметр был одной из наиболее широко используемых метрических форм в античной поэзии. В новых языках он претерпел значительные изменения в связи с исчезновением различий между долгими и краткими слогами и

усилением в словах роли ударения. Как подражание древнему гекзаметру или как «псевдогекзаметр» этот размер получил распространение в европейской и русской поэзии с XVIII века, особенно в переводах античных литературных памятников. Шестиударные строки в поэзии Чаренца появляются еще с 1918-1920 гг., но сознательное использование гекзаметра с дактилическими стопами в полустихиях мы наблюдаем особенно часто в сборнике «Книга пути». Гекзаметрическим размером написаны его дистихи, ряд четверостиший, переводы элегий Гёте и стихотворения Пушкина «Труд». Моностихи (одностишия) Чаренца также большей частью написаны гекзаметром. По наблюдению автора, в поэзии Чаренца гекзаметрические размеры содержат в своей структуре разные культурные пласты: антично-метрический, русско-дольниковый, принципы тонического стиха Маяковского, и только гениальный поэт мог так мастерски совместить все эти слои.

Ashkhen Jrbashyan – Hexametric Sizes in the Poetry of Yeghishe Charents

Key words – monostych, distych, dactyl, six-strike line, tonic verse, dolnik, caesura, imitation of hexameter, “monument”

Since the 1920s, new metric forms, including hexametric sizes, appeared in the poetry of Yeghishe Charents. The hexameter was one of the most widely used metrical forms in ancient poetry. In new languages, it has undergone significant changes due to the disappearance of the differences between long and short syllables and the strengthening of the role of stress in words. As an imitation of the ancient hexameter or as a “pseudo-hexameter”, this size has become widespread in European and Russian poetry since the XVIII century, especially in translations of ancient literary monuments. Six-strike lines in the poetry of Charents appeared as early as in 1918-1920, but we observe the conscious use of hexameter with dactylic feet in half lines especially in the collection “The Book of the Way”. His distichs, a number of quatrains, translations of Goethe’s elegies and Pushkin’s poem “Labor” are written in hexametric size. The monostichs (one-liners) of Charents are also mostly written in hexameter. According to observation author’s, in the poetry of Charents, hexametric meters carry different cultural layers in their structure: antique-metrical, Russian dolniks, the principles of Mayakovsky’s tonic verse, and only a genius poet could so skillfully combine all those layers.

Ներկայացվել է 08.04.2022

Գրախոսվել է 05.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Աշխեն Զրբաշյան – ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (ashjrbashyan@gmail.com)

ԵՐԲ ԵՂԵԳՆԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԵՆ

Բանալի բառեր – Փառեն, Արամ, Գարո, Ջեյթուն, կիլիկիահայեր, եղեգներ, արդիականություն, ազգային-ազատագրական պայքար, եղեն, զինադադար, հայրենի եզերք, պետականություն, հոգևոր, պատմական և մշակութային արժեքներ

Տաղանդավոր գրող Ստեփան Ալաջաջյանի (1924-2010) «Եղեգները չխոնարհվեցին» վեպը հայ գրականության այն գործերից է, որոնցում արծարծված խնդիրները հրատապ են նաև մեր օրերում, քանի որ վերջին տարիների ազգային ու քաղաքական իրադարձությունները ստիպում են ճշտել հայ մարդու առջև ծառացած կենսական ամենակարևոր հարցերից մեկը՝ շարունակել պայքարելով ապրել, թե՞ ընկնելով գոյատևել:

Ալաջաջյանի վեպը յուրովի արձագանքն էր 1960-ական թթ. խորհրդահայ հասարակության մեջ առ իր ոչ վաղ անցյալն առաջացած վերազարթոնքի: Վեպն առաջին անգամ լույս է տեսել երկու գրքով¹ մի քանի տասնյակ հազար տպաքանակով՝ դառնալով այն որոնված հրատարակումներից մեկը, որի համար մարդիկ գրախանութների առջև զիջերները հերթ էին կանգնում:

Գրականագետ Սևակ Արզումանյանը այս վեպի մասին իրավացիորեն գրել է. «Ստ. Ալաջաջյանն արտացոլում է մեր պատմության ամենադրամատիկ փուլերից մեկի ազգային-քաղաքական կյանքը»²: Նա կարևորել է վեպի բարձրացրած հանգուցային հարցերը, ընդգծել մանավանդ այն «անալի սերն ու կարոտը», որ տածել է հեղինակը հայրենի եզերքի ու նրա նկատմամբ³:

Ասվածին եթե հավելենք հեղինակային խոսքի նպատակամետությունն ու հուզականությունը, ազգային մտածողության խորին դրսևորումները, գեղարվեստական պատկերավորման հարստությունն ու վարպետությունը, վեպն իրոք աննախադեպ երևույթ էր ինչպես Ալաջաջյանի ստեղծագործական շրջայում ունեցած իր բարձր դերով, այնպես էլ ժամանակաշրջանի հայ գրականության մեջ շոշափված թեմատիկայի առումով:

Վեպը ջերմությամբ է ընդունվել նաև սփյուռքահայության կողմից: Ալաջաջյանի այդ գրքի մասին Բոստոնի «Հայրենիքում» Արամ Հայկազը գրել է, որ վեպը կարդացվում է «աճող խանդավառությամբ», պատմում այն

¹ Ալաջաջյան Ս., Եղեգները չխոնարհվեցին, գիրք Ա-Բ, Երևան, 1966-1967:

² Տե՛ս Արզումանյան Ս., Ստեփան Ալաջաջյան, Երևան, 2008, էջ 103:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

մարդկանց մասին, որոնք մեր «անկախության երազին պահպանողներն են»¹: Իսկ սփյուռքահայ գրականագետ Օննիկ Սարգիսեանը, Բեյրութի՝ իր խմբագրած «Շիրակ» ամսագրում հատկապես արժևորելով վեպում տեղ գտած հերոսներին, որոնց «լեռնորդիներ» է անվանում, ընդգծել է նրանց «հայո բնորոշ յատկանիշներով» լեցուն ներաշխարհը, «հայ մարդու մտածումներով՝ կյանքի, մահուան, պետականության, եկեղեցիի ու մշակույթի մասին» մտահոգություններն ու նվիրումները²:

Ալաջաջյանի վեպը հետագայում մի քանի անգամ վերահրատարակվել է միասնական հատորով. վերջինը տպագրվել է 2004 թ. մեր գրականության նվիրյալ մշակներից մեկի՝ Գոհար Աճեմյանի խմբագրությամբ:

Միշտ մնալով ընթերցողների ուշադրության կենտրոնում՝ վեպը զարմանալիորեն քիչ է արժանացել գրականագիտության ուշադրությանը:

Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի ու նրա հետևանքների թեման նոր չէր մեր գրականության համար: Կոստան Չարյանի «Տատրագոմի հարսը», Ակսել Բակունցի «Լառ Մարգար» և «Ծիրանի փողը», Խաչիկ Դաշտենցի «Խողեղան», Հրաչյա Քոչարի «Կարոտ» և «Նահապետ», Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» գործերը, Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ հեղափոխականի մը հիշողությունները» և մի շարք այլ ստեղծագործություններ բավականին խորությամբ էին անդրադարձել հարցին, բայց ասելիք դեռ շատ կար, ու քիչ չէին չպեղված ու գեղարվեստական խոսքի մակարդակի չբարձրացված խնդիրները:

Ալաջաջյանի վեպի նորություններից էր մեր ժողովրդի արևմտահայ հատվածի բեկորներից մեկի՝ կիլիկիահայության ողբերգական կյանքի վերջին շրջանի՝ հետեղեռնյան մի քանի տարիների իրադարձությունների արտացոլումը, որոնց մասին ըստ ամենայնի ու համակողմանի գրված չէր մեզանում:

Վեպի լույսընծայման 55-ամյակը լրանում է այս տարի, որն առիթ է ընձեռում մեզ մեկ անգամ ևս ընթերցողի ուշադրությունը բևեռելու վեպի հարցադրումների ու գաղափարադրույթների վրա և, մանավանդ, նրա հայացքը շրջելու դեպի մեր ոչ վաղ անցյալի՝ որքան ողբերգական, նույնքան հերոսական այն իրադարձությունները, որոնց մեջ ապրեց հայեցի անանց գաղափարներ ու անմնացորդ նվիրումներ ունեցող մի ամբողջ սերունդ՝ հատկապես ընդգծելով, թե որքան կարևոր է անցյալը՝ ներկայի ու գալիքի ուղիները հստակեցնելու համար:

Թուրքիայի վարած քաղաքականությունը եղել և մնում է Հայոց եղեռնը ցանկացած գնով ժխտելն ու մոռացության տալը: Ալաջաջյանի վեպը մեկ անգամ ևս վավերացնում է պատմական անժխտելի ճշմարտությունը, գե-

¹ Տե՛ս «Հայրենիք», 1967, 1 օգոստոսի:

² Տե՛ս «Շիրակ», 1968, թիվ 6-7:

դարվեստական խոսքի միջոցով ցույց տալիս այն ավերածություններն ու նախաճիւրները, որոնք կատարել էին թուրքերը Կիլիկիայում դարերի ընթացքում՝ եղեռնից առաջ, եղեռնի ժամանակ և հետեղեռնյան այն մի քանի տարիների ընթացքում, երբ ապրեցին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձած վերապրող հայերը:

Վեպն այն սակավաթիվ գործերից է, որ մղում է խորհրդածությունների, մեկ անգամ ևս մտածել տալիս մեր ոչ վաղ անցյալի ողբերգական դեպքերի մասին, եզրահանգումների դուռ բացում հայ մարդու համար մանավանդ մեր օրերում, երբ շատ բան, որ ազգային է ու հայեցի, առնվազն մոռացության է մղվում՝ մշուշելով **ազգային միասնության գերագույն իդեալ-նպատակը**: Ու եթե այսպես շարունակվի, հայ պատմության պանծալի շատ դրվագներ անդամալիորեն մատնվելու են կորստյան:

Վեպն ունի «Հորս հիշատակին» ընծայականը, որը 1966-1967 թթ. հրատարակությունում չկա և ավելացվել է միայն 1970 թ. միասնական տպագրությունում, մի հավելում, որ խոր ընդգրկում ունի: Հոր պատկերի կերպավորումն ու նրանից բխող ներշնչանքը նոր բան չէին մեր գրականության մեջ: Չարենցյան հիշատակումներն իր հոր մասին պարզապես Արգար աղային տրվելիք տուրք էին, որն ընդամենը գորգավաճառ էր և որպես կերպար ու ասելիք գրեթե բացակա է գրողի գործերում: Ալաջաջանի համար հայրը մարմնացումն է պատմության շատ որոշակի շրջանի, հայոց ողբերգության հետևանքների անմիջական կրողը:

Հովհաննես Շիրազի հայրը, որ նույնպես հայկական կոտորածների ականատեսներից էր և իր *«մոլոր»* աչքերում պահում էր բազում գերեզմաններ՝ որպես «խաչեր»՝ խրված իր սրտում, շիրազյան պոեզիայում, այդուհանդերձ, հանդես է բերվում որպես եղեռնի **անհատական** կրող, մինչդեռ Ալաջաջանի համար իր հայրը այդ նույն եղեռնի **ընդհանրացված** մարմնացումն է, նրա **խտացված արտահայտիչը**:

Ալաջաջանը խորին սիրով է կապված եղել հոր հետ՝ ոչ միայն որպես որդի ու արյան կրող: Նրան կապել է նաև հոր գերդաստանի պատմությունը՝ որպես **ցեղի ու ժողովրդի տառապանքների ու ճակատագրի անմիջական գոհի**: Ավելին, Ալաջաջանի գրական ստեղծագործությունների մի մեծ մասն ուղղակի արտացոլանքն է իր հայրական սերնդի ու հայրական գերդաստանի ունեցած այդ տառապալից կյանքի:

Ավելի ուշ գրված «Չափացած վերք» եռահատոր վեպում (1989, 1990, 1993) ընթերցողին ուղղված «Այս վեպը...» վերնագրով իր խոսքում Ալաջաջանը շատ ավելի տպավորիչ է հիմնավորում այդ հանգամանքը. «1939 թվականին հայրս ինձ տարել է Դեր-Էլ-գոր (Դեր-Էլ գոր, Դերգոր), որպեսզի ցույց տա, թե որտեղ են թաղվել պապս, տատս, հինգ եղբայրներս, մեր գերդաստանի հարսները, հորեղբայրներիս զավակները, թվով քառասուններկու

հոգի, բայց չի գտել նրանց շիրիմները...

Անհողակույտ մեռելներ...»¹:

Ալաջաջյանի համար հոր մտապատկերը նաև ազգային արժանապատվության խորհրդով է լեցուն, և եթե մի կողմից այն հիմք է իր ժողովրդի ապրած ողբերգական դեպքերի բացահայտման համար, ապա մյուս կողմից արտացոլումն է իր՝ որպես գրողի գաղափարական ու գեղարվեստական մտածողության անմիջական դրսևորումների: Կարելի է ասել, որ Ալաջաջյանի հայրը՝ որպես հույզ, զգայնություն ու գաղափարադրույթ, ներկա է այս վեպի ամբողջ շարադրանքում և ներառված է որոշ կերպարակերտումներում (Արամի հոր, Թումասի և այլոց):

Վեպում հառնում է կրկնակի արծվաբերդ Զեյթունը՝ իր հող ու ջրով, թավուտ անտառներով ու խորխորատ ձորերով, կապույտ երկնքով ու մինչև այդ երկինքը բարձրացող լեռնաշղթաներով և մանավանդ իր հերոսածին մարդկանցով, այն ամենով, որ կոչվում է ծննդավայր ու հայրենիք, հայ ու Հայաստան:

Հենց այդ ամենի սերն է, որ նորից դեպի հայրենի եզերք է բերել գաղթի ու տարագրման ճամփեքով անցած հայ մարդկանց, որոնք տեսել էին Դեր-Ձորի անապատները, կորցրել հարազատներին, բայց անմար էին պահել հայրենի հողի կարոտը, խաղաղ կյանքի ու արարման երազանքները: Նրանք բոլորը եկել էին խաղաղ ու ստեղծարար աշխատանքի նվիրվելու համար, բայց ստիպված եղան ոչ թե մահ ու մուրճ, այլ զենք վերցնելու:

Վեպն արտացոլում է այդ մարդկանց կյանքի մի կարճ ժամանակաշրջան՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Կիլիկիա վերադարձած հայերի օրհասական կյանքը 1919-1921 թթ., որն ընդհատվեց ֆրանսիացիների ու քեմալականների միջև կնքված՝ Կիլիկիան թուրքերին հանձնելու գաղտնի պայմանագրի գործադրման պատճառով՝ դրանով իսկ խափանելով Կիլիկիայի հայկական ինքնավար պետություն կազմավորելու ֆրանսիացիների «խոստումը», մեկ անգամ ևս հաստատելով, որ մեծ տերությունները երբեք և ոչ մի պարագայում իրենց խոստումների տերը չեն մնում:

Այդ մարդկանց կյանքը լեցուն է անդառնալի ու անչափելի կորուստներով, շուրջբոլորը ողբ է ու կործանում, գետերից ելնող ողբ, ավերակներից ելնող ողբ, հողերի տակից լսվող ողբ, բայց կան նաև ցորենի հատիկի չափ ուրախություններ՝ հայրենի հողը, հրաշքով փրկված հարազատների վերագտնումը, խաղաղ կյանք վերակերտելու հավատը, նախնիների գործը շարունակելու նվիրումը:

Հայրենի եզերք վերադարձի բաղձանքը հայ մարդու ամենակայուն ու տևական հատկանիշներից մեկն է եղել ու մնում դարեր շարունակ, նրա մտածողությունն ու գործունեությունը ձևավորող ուժերից մեկը, ոչ թե

¹ Ալաջաջյան Ս., Չսպիացած վերք, Երևան, 2019, էջ 47:

հոգևոր, այլ իրական հայրենիքի գոյության պայմանը: Վերադառնալ նշանակում է հավատարիմ մնալ ինքդ քեզ, նշանակում է մասնակից լինել կառուցման, նշանակում է շարունակել մնալ հայ, նշանակում է... վրեժ լուծել նահատակվածների համար:

Ամերիկայում հայտնված Համաստեղն իր պատմվածքներից մեկի հերոսի՝ Օվանի տղայի շուրթերով հայ մարդուն պատած հենց այդ հոգեմաշ ու կսկծալի բաղձանքի մասին էր խոսում, հեքիաթ այն գյուղի, որ Չայի կամուրջ ուներ, դեպի վանք տանող Հողդար ճամփա... ռանչպար Թորո ու երեցփոխ Վարդան...

Ալաջաջյանի հերոսների համար այդ երազ-երկիրը Պաղ-Աղբյուրն է, Սուրենյանց վանքը, Այրածոյի լեռները, Ձորագետը, Շուղը, Բերդաջիղը, Ցլաքարը, Ստեփան Ուլնեցին* իր գրություններով ու օրհնություններով:

Վերադարձի այդ տենչը երկու հեղինակների գործերում հնչում է որպես հարատևության երաշխիք, ազգային գոյության կարևոր հիմք, կյանքի կովան:

Ալաջաջյանի այս վեպը, որքան էլ շարադրված է գեղարվեստական խոսքի բարձր մակարդակով, իր բուն խորքի մեջ *պատմական վկայախոսություն* է, հայ ժողովրդի մի կարևոր հատվածի իրական պատմությունը կոնկրետ ժամանակամիջոցի ընթացքում: Բայց այն լոկ անցյալի պատմությունն չէ, այլև միջոց թափանցելու ներկայում ընթացող մի շարք իրադարձությունների խորքը, անցյալի օրհնակներից դասեր քաղելու հնարավորություն:

Ալաջաջյանի վեպի հերոսը անհատ մարդը չէ: Այն արտահայտում է հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ամբողջական կեցվածքը և ընդհանրացնում այն հերոսական դիրքորոշումը, որն ուղեկցել է նրան այս աշխարհում իր արդարացի իրավունքները պաշտպանելու գործում:

Վեպում կա այսպիսի հատված. գլխավոր հերոսներից մեկը՝ Արամը, այցելում է քայմաքամ** Շեբեբին և լսում մի թուրք սպայի խոսքերը. «...*հայերը եղեգներ են, մենք՝ նրանց քամին, որ կողմ փչենք, այն կողմ էլ կխոնարհվեն*»¹:

Հայերը եղեգներ են... Ձեյթունցիներն իրենց մղած վերջին հերոսամարտով եկան հաստատելու, որ իրենք, Խաչիկ Դաշտենցի խոսքերով ասած, «*չաթալ օսկոր*» ու «*չորս պլոճիկ*» ունեցող² մարդիկ են, և եթե եղեգներ են, չճկվող եղեգներ են, ու եթե ընկնում են, նաև կանգնել ու խոյանալ գիտեն:

Հենց այդ չճկվող եղեգների մասին է Ալաջաջյանը հյուսել իր վեպը, որ

* Ձեյթունի պատմական անունը Ուլնիա է:

** Գավառապետ, խոսակցական տեղապահ, փոխգնդապետ:

¹ Ալաջաջյան Ս., Եղեգները չխոնարհվեցին, Երևան, 2004, էջ 173: (Այսուհետև այս գրքից հղումները տրվելու են շարադրանքում՝ փակագծում նշելով միայն էջը. տողատակի ծանոթագրությունները մերն են – Ա. Ա.):

² Տե՛ս Դաշտենց Խ., Ռանչպարների կանչը, Երևան, 1984, էջ 9:

ասք է հերոսության, պայքարի ու մահվան պատմության, աննկուն այն սերնդի կյանքի արտացոլանքը, որին ջանացին խոնարհեցնել թշնամիները, բայց չհաջողեցին՝ անկախ նրանից՝ գոյամարտի ելածները հաղթեցին, թե պարտվեցին:

Վեպում հեղինակային խոսքը հայրենասիրական խոր բովանդակություն է ստանում նաև մախրենու առթիվ՝ հաստաբուն, հաստակոճղ ու սաղարթախիտ այն ծառի, որ խորհրդանշական իմաստով է ներկայացվում, հանդես բերվում որպես քամիների դեմ կանգնած անհնազանդության մարմնացում, դեպի հողը խորացող հաստաբետ արմատների վրա հենված գոյ, նման այն ժողովրդին, որը դարեր շարունակ ապրել է իր շուրջօրուրը, հանգստացել սաղարթախիտ ճյուղերի ստվերի ներքո, անտառի խորքերից եկող մշկենու հոտն առել, ջերմացել ու սիրել հայրենի հողը:

Վերադարձի, կյանքի սիրո, պայքարի ու ինքնագոհման հեղինակային այդ խոսքը վեպում հնչում է որպես հայ մարդուն ուղեկցող հավերժական երգ, համախմբման ու միասնության անկանգ մեղեդի:

Ալաջաջյանի վեպը նաև դատապարտման վճիռ է իրենց որջերից ու մզկիթներից ելած և ամբոխ դարձած, բիր ու զենք առած թուրք խուժանի դեմ, որ միայն քանդել ու սպանել գիտի, որ մերժում է այն ամենը, որ գեղեցիկ է ու արարող կյանք:

Վեպն իր ամբողջության մեջ հեղինակի հոգուց պոռթկացած պատգամ է ու նաև կանչ, սրտի ճիչ ու մորմոք:

Խորհրդանշական է վեպի սկիզբը. տաք լուսաբացի իրողությունը կտրուկ փոխվում է. աղբյուրից ջուր կրող կանայք իրենց սափորները դատարկում են որպես հարգանքի տուրք ու նշան՝ թշնամու կողմից նենգորեն խփված, գաղթ ու անապատ տեսած Բաշալենց Սեթի հիշատակին: Եղեռնից ողջ մնացած ու հայրենի տուն վերադարձած զեյթունցիները համոզված են, որ Սեթը *«վերջին գոհը չէ»*, ու սարսուռով մտածում են. *«Միսալ է մեր վերադարձը, պետք է հեռանալ»* (էջ 4):

Ամբողջ վեպի ընթացքում ծավալվում է կարևոր հենց այդ՝ մնալու կամ հեռանալու հարցը. վերադարձողների համար Կիլիկիան հայրենիք է մնալու, թե՞ ոչ: Ալաջաջյանի վեպը հաստատում է, որ դա սոսկ վերադարձ չէ հայրենի բնաշխարհ, այլև վերադարձ է դեպի կյանք, ինքնահաստատման վճիռ, ազգային գոյատևման խարսխի կայացում:

Համաշխարհային պատերազմը հայ զանգվածների վրա թողել էր ցնցոտիներ, իսկ եղեռնը՝ մերկություն: Մերկություն մարմնի և հոգու, հավատի ու մանավանդ՝ հույսի:

Գրողը մանրամասնորեն է պատկերում շրջանի ողբերգական կացությունը, մարդկանց պատած անանց վշտի դրսևորումները, հույսի ու անհուսության՝ իրար հաջորդող այն հոգեվիճակները, որ որքան ուրախություններով էին լեցուն, նույնքան էլ կորստաբեր էին ու կործանարար:

Հարազատ բնօրրանից դուրս քշված զեյթունցիները ամբողջ չորս տարի

բռնագաղթի էին ենթարկվել, ու հիմա նրանց բեկորները ձեռնարկել էին հայրենի օջախի վերականգնումը՝ կարծրացած հոգիներում պահելով իրենց հարազատների, ծնողների ու որդիների կորստի վիշտը: Այդ է պատճառը, որ Մեթի աճյունի առջև չեն արտասվում, ու նաև այն, որ նահատակ հերոսների դիակների վրա արտասուքը նախատինք էր համարվում այդ աշխարհի մարդկանց համար:

Քարաշատ, կարծր, «*ուս-ուսի*» կառուցված Ջեյթունի, «...որի մեջքին Այրածո սարն էր, ապա սարի ուսին մի ուրիշ սար, սարը սարին թիկնած, սարից ծնվող մի այլ սար, սարը սարին կամո ւրջ» (էջ 33), իսկական խորհրդանիշն է Փառենը՝ ձիգ, մռայլ, մախրենու նման կանգուն, ծառակեղևի պես խանձված դեմքով ու խանձված ճակատագրով:

Ալաջաջանը հանձին նախկին վարժապետ Փառենի կերտում է հայ մարդու, հայաշխարհը մարմնավորող հայրենասեր մտավորականի ու նվիրյալ զինվորի կերպար, ում վերաբերյալ ստեղծում է իմաստալից ու ազդեցիկ ևս մի պատկեր. «*Փառենն անջատվեց մախրենուց, և կանանց թվաց, թե ծառի բունը կիսվեց*» (էջ 3): Ծառի բուն, ծառի կոճղ ու արմատ՝ կանգնած հայրենի հողի վրա, ինչպես ամեն մի զեյթունցի, ինչպես «*նվազավոր հայրենի*» Մկրտիչ Պեշկեթաշյանի պատկերած զեյթունցի իր նախորդները, «*որոնք ի բյուր պատերազմաց թեպետ խոց՝ // Մեջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր*»¹:

Գրողը միազիժ հերոսներ չի ստեղծել, և ոչ էլ նրանք բևեռացված են՝ միայն դրական կամ միայն բացասական: Վեպում գործող գլխավոր թե երկրորդական այդ մարդկանցից և ոչ մեկը չի եկել Ջեյթուն՝ հերոսություններ կատարելու: Նրանք վերադարձել են՝ իրենց հողն ու երկիրը վերաշինելու, այնտեղ ապրելու համար, բայց նրանց ստիպում են կռվի ելնել՝ մեկ անգամ ևս գաղթի ճամփեքով չքայլելու, նախնիների մասունքներն ու սրբությունները պաշտպանելու համար:

Այդ սրբությունները շատ էին, որոնց մի մասին անդրադառնում է գրողը, վերակոչում նյութական ու հոգևոր այն արժեքները, որոնք դարեր շարունակ ապրեցրել են Ջեյթունի քաջասիրտ սերունդներին, պայմանավորել նրանց հավատալիքներն ու ներաշխարհը:

Ալաջաջանը լավատեղյակ է ոչ միայն Ուլնիա աշխարհի պատմական անցյալին, այլև կիլիկիահայության կենցաղին ու բարքերին, ավելին, իր գերդաստանի բերումով լինելով այդ ամենի կրողներից մեկը՝ իր անդրադարձումներով մոռացության գրկից փրկում է շատ սովորություններ: Այդ էջերը ոչ միայն ճանաչողական արժեք ունեն, այլև վիպական գործողություններին հաղորդում են բնականություն, պատումը համեմուն հայեցի գունեղանքներով, կենդանի ու բաբախող կյանքի տպավորություն ստեղծում:

Այդ ամենին հավելվում են գրողի տեղեկատվությունները Ջեյթուն աշ-

¹ Պեշկեթաշյան Մ., Տաղեր, Երևան, 1961, էջ 54:

խարհի ծառ ու ծաղկի մասին: Բնաշխարհի վերաբերյալ հեղինակի ունեցած համակողմանի գիտելիքները, մանավանդ ծառերի տեսակների ճանաչողությունը, բնակլիմայական երևույթների խորագիտությունը պատկեր առ պատկեր ի հայտ են գալիս վեպում և ընդհանրացնում այն անքակտելի կապը, որ կա մարդկանց ու իրենց հարազատ եզերքի, հող ու ջրի միջև: Հեղինակային գաղափարադրույթն էլ հենց այդ է. դարերի ընթացքում ստեղծված հոգևոր ու նյութական արժեքները՝ ազգային բարքերը, հայրենի բերդերը, վանքերը, գրքերը, մատյաններն ու մանավանդ իրենց լեզուն ու հավատքը պահպանելու համար են վերադարձել զեյթունցիները: ***Վերադարձել են կիլիկիահայության ազատագրական պայքարի պատմությունը շարունակելու համար:***

Ալաջաջյանը հաճախ է անդրադառնում նաև պատմական աղբյուրներին, որոնք վեր են հանում Ուլնիա աշխարհի անցյալը, օգտագործում վկայություններ, օրագրություններ, որոնք առհավատյաներ են երկրի պատկանելության, նրա անցած դժվարին, բայց և հերոսական ճանապարհի, որոնցից են նաև «Թռչնոց գրքի»՝ ռազմագիտական ծածկագիր այն կանոնագրքի հիշատակումները, որոնցից օգտվել են կիլիկիացիները թշնամիների դեմ մղած իրենց երկարատև կռիվների ընթացքում: Ի դեպ, վեպի արժանիքներից է նաև այն, որ հեղինակը ցուցաբերում է ռազմական գործողությունները պատկերելու մեծ վարպետություն՝ լինեն դրանք փոքր ընդհարումներ, թե հուսահատիչ կռիվներ (Մարաշի անկումը, Սաքիի լեռնանցքի, եղեգնուտի գոյամարտերը և այլն):

Կիլիկիահայությանը պատուհասած ցրոնքի, ավերումների ու կորուստների այդ օրերին գրողը վեր է հանում մանավանդ հայ ընտանիքի ստեղծման ու կայացման հարցը, որը նշանակում էր ամուր կապի ստեղծում ու հոգատարություն մարդկանց միջև և ոչ միայն այդ, այլև հողին կառչելու վճիռ, սերունդների շարունակության երաշխիք:

Վեպում այդ ամենը մատուցվում է մարդկային կյանքի փոխհարաբերությունների բնական ընթացքով, որտեղ առանձնանում են մանավանդ հերոսների միջև ծավալվող երկխոսությունները, որոնք վերաբերում են կյանքի բազում խնդիրների և հատկապես ներաշխարհային ու ազգային հարցերին:

Այս մարդկանց կյանքի հակառակ կողմում ցցված է թուրքը՝ իր նախնական բնագոյային պահվածքով ու նոր չարիքներ կատարելու պատրաստակամությամբ: Կիլիկիահայության նկատմամբ թուրք խուժանի ու գորքի գործելակերպը կրկնակի դաժան էր նաև այն պատճառով, որ նրանց մի մասը բալկանյան երկրներից այստեղ բերված մարդիկ էին, որոնք, պարտություն կրելով մեծ տերություններից, իրենց վրեժը լուծում էին քրիստոնյա հայերից: Բայց թուրքը միայն մարդասպան չէր: Նրա նպատակը թալանելն էր ու մանավանդ քանդելը: Ալաջաջյանի վեպը փաստում է, որ նա մշակութաբանական առումով ևս չարիք է. ավերում է այն ամենը, ինչը գիր է ու քանդակ,

արձանագրություն է ու կառույց, միտք ու շինություն: Արդեն քանի՞ դար թուրքը դուրս էր եկել աշխարհը նվաճելու: Եվ նրա արշավը նման չէր և ոչ մի գորականի կովի, որ մղվում է գորքի միջոցով: Իր գորագնդերի հետևից նա տանում էր ամեն բան ոչնչացնող իր վաչկատուն բնակիչներին, որոնք չէին թողնում քար քարի վրա ու բնակալում էին գրավված հողերի վրա, ոչնչացնում տեղաբնիկներին, ստեղծում «*հայրենիք*», որ իրենցը չէր, և որին չգոյ «*վայթան*» անվանումն էին տալիս՝ ապրելու միակ կենսաձև ընտրելով այն ամենի ոչնչացումը, որը թուրքական չէր:

Ծանոթ, շատ ծանոթ մի պատմություն, որ լավ գիտեին գեթունցիները, բայց նորից (արդյո՞ք վերջին անգամ) հավատացին եվրոպացիների խոստումներին, հավատացին նրանց մարդասիրական «*որոշումներին*» ու մոռացան, որ թուրքը նույն թուրքն է եղել դարեր շարունակ ու միշտ մնալու է նույնը:

Մեզանում շատ է գրվել, որ աշխարհը անհոգ ու անտարբեր մնաց հայոց եղեռնի նկատմամբ: Ալաջաջանն իր վեպում յուրովի է շոշափում այդ հարցը: Գրողը չի անդրադառնում աշխարհի՝ նախկինում ցուցաբերած այդ ստոր վերաբերմունքին: Նա գրում ու խոսում է նոր դրսևորումների մասին: «*Մարդասեր*» Ֆրանսիայի անգործության, 1916 թ. Անգլիայի ու Ֆրանսիայի միջև կնքված «Մայքս-Պիկո» համաձայնագրի սնանկության օրինակով, ըստ որի՝ պետք է ստեղծվեր Կիլիկիայի հայկական ինքնավարությունը, Ալաջաջանը ցույց է տալիս նաև նոր ժամանակներում հյուսվող նենգ շահագրգռությունները՝ միշտ նույն դերակատարներով՝ Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Իտալիա..., միշտ նույն խարդավանքներով, միշտ նույն նպատակներով՝ ձեռքը զցել այն «*համեղ*» պատառը, որը Թուրքիան էր:

Ալաջաջանի աշխարհաճանաչողությունն ու խորաթափանցությունը այդ ամենի մեջ առանձնացնում են մանավանդ Անգլիայի բացասական դերը հայկական հարցում: Այդ ամենի հետևանքով էր նաև, որ հայ մարդը գաղթական ու աքսորյալ էր դարձել իր երկրում, իր հողի վրա, ու հարազատ արևը կրակի էր վերածվել, ավագուտները՝ շիրիմի, և աստվածապաշտ ու խաղաղասեր հայ աշխատավորը ստիպված էր ի վերջո գալ այն համոզման, որ իրեն սպանողին պետք է սպանությամբ պատասխանել:

Ապրելու, հարատևելու ու նաև չարին պատժելու վճռականությունը Ալաջաջանը հատկապես մարմնավորել է իր կերտած գլխավոր հերոսների՝ Փառենի, Արամի, Կարոյի, Միմոնյանի կերպարներում:

«Նավը լերան վրա» վեպում Կոստան Զարյանը մի այսպիսի միտք է արտահայտում՝ կան «*ամեհի*» կովոդներ և կան «*գաղափարի*» մարդիկ:

Ալաջաջանն իր վեպում կերտում է միևնույն ժամանակ և՛ կովոդ, և՛ գաղափարակիր մարդկանց տիպարներ, որոնցից հատկապես առանձնանում է Փառենը:

Որքան էլ Արամը ավելի մեծ լիազորություններով է օժտված և բարձր

պաշտոն ունի, վեպի կենտրոնական հերոսը մնում է Փառենը հանձին որի գրողը արտահայտում է վեպի գաղափարական իր իդեալը՝ վերադարձի փաստ, հոգևոր ու ազգային արժանիքների պահպանում, գոյակովի իրականացում, փրկվելու հնարավորություն (նա միակն է վեպի գլխավոր հերոսներից, որ չի մահանում):

Փառենը, կյանքի մեծ փորձառություն ունենալով, միանշանակ չի ընդունում կատարվող դեպքերը, կասկածով է վերաբերվում Արամի կողմից կատարվող քայլերին, այն համոզումն ունի, որ մեծ տերությունները կարող են ամեն բոլոր լքել իր ժողովրդին, ու կարող են կրկնվել աքսորն ու ջարդը: Մտածումների երկվությունը, որն անընդհատ տանջում է նրան, թեև մի կողմից միջոց է հեղինակի համար իր հերոսի կերպարի հարստացման (հոգեկան հույզեր, իրականացվող գործողությունների բազմազանությունն ու բազմադիմությունն և այլն), սակայն մյուս կողմից արտացոլում է այն բարդ ու հակասական իրավիճակը, որի մեջ հայտնվել էր ամբողջ կիլիկիահայությունը:

Փառենը լավ գիտի իր ժողովրդի պատմությունը, այն բնաշխարհը, որի մեջ հասակ է նետել հայ մարդը: Նա հոգով ու էությամբ կապված է հայրենի եզերքին, հաճախ է զրույցի բռնվում ոչ միայն մարդկանց, այլև դաշտ ու լեռան, քար ու ծաղկի հետ. չէ՞ որ նրանք իր հարազատներն են, իր կյանքի հենասյուները: Նա գիտե, որ թշնամին նույն նպատակներն է հետապնդում, ինչ մինչ եղեռնը, պարզապես առայժմ նա գործում է դարանից, մինչ կզինվի ու կկազմակերպվի: Փառենը հասկանում է նաև, որ օգնող ուժ չկա Ձեյթուն վերադարձած հայերի համար, ու նաև՝ տեղ չկա գնալու, քանի որ նախնիները այս քարալեռներն ու հովիտներն են ավանդել իրենց, և որ պետք է ամեն ինչ անել ապրելու ու գոյատևելու համար մինչ նահատակվելը:

Նրա նման է մտածում նաև Կարոն, որը, սակայն, ունի անբեկանելի այն համոզումը, որ գոյատևելու առաջին երաշխիքը թշնամուց վրեժ լուծելն է: Կարոն շրջում ու տեսնում է, թե ինչպես են նոր վայրագությունների նախապատրաստվում թուրքական բնակավայրերում: Կարոն զենքի հավատալիք է, ամեն բանից առաջ նա ապավինում է զենքին և այդ զենքը հաճախ է օգտագործում որպես արդարության վերականգնման միակ միջոց: Հենց այդ համոզմամբ է նա պատժում թեջիրլեցի Օսմանին, չոփուր Ալիին, օվաջի Քյոսեին ու մյուս մարդասպաններին: Կարոն վրեժ ունի, վրեժ իր երկրի կորստի համար, վրեժ անապատներում անթաղ մնացածների, իր մարտական ընկերների կորստի, թշնամու ցուցաբերած անգթությունների ու հայատյացության, կրկնվող նորանոր սպանությունների համար:

Ինչպես բնութագրում է նրան Միքայելը, *«երկու մարդ կա նրա մեջ»*, ու նրան հասկանալը դժվար է. այդ մարդը *«և վրեժ է գործում, և շարականներ է սիրում»*: Եվ իրոք, լինելով զենքի մարդ՝ Կարոն չի կորցրել այն ամենը, որ մարդկային է ու զեղեցիկ: Նա էլ շատերի նման ձգտում է իր ընտանիքն ունենալ ու խաղաղ կյանքով ապրել: Խոնարհված վանքից եկող պատարագի մեղեդին նրան մոռանալ է տալիս զենք ու թշնամի, հոգեպես նա վերանում է

թշվառ իրականությունից, մեղեդու թներով սավառնում գեղեցիկի աշխարհում:

Կարոյի այս էության մեկ այլ դրսևորում է մարմնավորված Տրդատի մտածումներում ու գործողություններում, որին թվում է, թե իր նորածին զավակով ու նրա առաջին ճիշով վերսկսվում է նոր կյանք, և այդ նոր կյանքը ջանում է պահպանել թշնամու դեմ կռվելով՝ համոզված լինելով, որ այն մեռնելու կռիվ է և ոչ՝ հաղթանակի:

Ալաջաջյանը ստեղծել է Արամի բազմադիմի և անգամ հակասական կերպարը, որն ավելի ճշգրիտ է արտահայտում այն բարդ կացությունը, որի մեջ հայտնվել էին Ձեյթուն վերադարձածները: Հոգեխռով կասկածներն ու մտորումները անընդհատ տանջում են Արամին՝ զինվել և թշնամուն առիթ տալ հարձակվելու, թե՞ մնալ անզեն ու հույսը դնել ուրիշների վրա՝ լինեն դրանք օտար, թե Մարաշում ու Ադանայում գտնվող յուրային: Այդուհանդերձ, Արամի մտածողության ու գործունեության նշանակալի մասը էականորեն տարբերվում է վերոհիշյալ հերոսների տրամադրվածությունից ու դիրքորոշումից: Արամը, որ կռվել է Ֆեդիաքում, Արմենասարում և վաստակել «Ամանոսի առյուծ» մականունը, հանդես է գալիս որպես *ամեն զնով* խաղաղ կյանք պահպանելու գաղափարի ջատագով: Այդ փխրուն խաղաղությունը պահպանելու համար նա փորձում է տնտեսական հարաբերությունների մեջ մտնել այլազգի շրջանակների հետ, անգամ հանդուրժում ինչ-ինչ ոտնձգություններ, փորձում բանակցել թշնամու զինվորական ղեկավարության հետ:

Արամը մեծ հույսեր է կապում մանավանդ ֆրանսիացիների հետ, որոնք, իրականում, հազիվ էին իրենց պաշտպանում պատերազմի պարտությունից կրկնակի գազազած թուրքերից:

Վեպի մի շարք հատվածներում պատկերվում է Արամ-Կարո հակադրությունը, որը երբեմն վերածվում է անզիջողականության, քանի որ երկուսի բևեռացված տեսակետները ճիշտ էին այնքանով, որքանով որ ճիշտ չէին: Ունենալով միևնույն նպատակը՝ փրկել ժողովրդին թուրքական հարձակումներից, նրանք խնդրի լուծման տարբեր ուղիներ են տեսնում: Կարոն շատ ավելի գործնական միջոցների է դիմում՝ հասկանալով, որ թուրքը չի հանդուրժելու հայկական պետականության ստեղծումը, Արամը ջանում է ժամանակ շահել, սպասել դեպքերի զարգացմանը, չհրահրել թշնամուն...

Շատ ավելի իրատեսական հայացքների տեր է Սիմոնյանը: Խոհուն, համարձակ, քչախոս ու գործունյա այդ հերոսը սթափ հայացք ունի կյանքի նկատմամբ և ճիշտ է կողմնորոշվում բարդ իրավիճակներում: Մյուս բոլոր գլխավոր հերոսների համեմատությամբ՝ Ալաջաջյանը քիչ է խոսում Սիմոնյանի մասին: Սակայն այն, ինչ ասվում է, համակողմանիորեն բացահայտում է նրա հայրենասեր նկարագիրը, վեր հանում մանավանդ կազմակերպչական ունակությունները:

Ալաջաջյանը նախընտրում է վեպում գործող անձանց բնութագրել ոչ այնքան հեղինակային խոսքով, որքան նրանց կատարած գործերով, իսկ

երբեմն՝ համեմատությունների ու համադրությունների կիրառմամբ՝ միշտ պահպանելով բառի կամ պատկերի սեղմությունը: Իր հերոսների բնութագրման այդպիսի հակիրճ օրինակ է ներքոհիշյալ հատվածը, որտեղ գրողը բնության երևույթների զուգադրմամբ ընդգծում է այս կամ այն հերոսին բնորոշ էական հատկանիշներ. *«Անձրև... և մռայլ, ամպոտված մի դեմք, որ անձրևն էլ չգիտե: Արամը...»*

Հեռագրատան վերնահարկի սենյակում՝ տամուկ լռություն, դրսի խոնավությունից ներս նետվող թաց հողի բուրմունք, և անսմայ աչքեր, լայն բացված. սևեռուն: Կարոն...

Անձրևի թելերի պես թափվող վարսերի երազանք. կաթիլների պես շոյիչ ու հով մատներ, տաք սրտի վրա իջնող թացություն, և դեռ ինչ-որ տեղ երեխայի լացի պես միալար ու սրտակեղեք անձրև... Միմոնյանը...

... Ամպ, շանթալից, շարժվող ամպ: Վարդապետը...» (Էջ 192):

Հակիրճ, բայց խիստ տիպական բնութագրումներ, որ բացահայտում են յուրաքանչյուրին առանձին-առանձին և բոլորին միասին: Եվ ամենակարևորը՝ անձրևի մշտական ներկայություն, որ երկնքից թափվող սովորական անձրև չէ, այլ թշնամուց եկող երկաթե անձրև:

Վեպում գործող հերոսներից ամեն մեկն իր *«Ճշմարտությունն»* ունի և գոյատևման իր ճանապարհն է դավանում: Ալաջաջյանի հեղինակային հայացքը իհարկե շատ ավելի լայն է և հանգում է այդ ամենի կշռադատված համադրման գաղափարին:

Արամի ցանկացածը, որ նոր կյանք սկսելն է, Զեյթունը հայերով վերաբնակեցնելը, որը կնշանակեր պետականության սաղմերի հիմնում, իրատեսական չէր, և այդ մտքին ի վերջո հանգում է նաև ինքը՝ Արամը՝ հասկանալով, որ թշնամու կողմից գրավված հողերի վրա, թյուրքալեզու շրջապատում հնարավոր չէ պետականություն ստեղծել, որ այդ հողը քոնը պիտի դարձնես և նոր մտածես պետականության մասին, որ անհող և անժողովուրդ պետականություն չի լինում: Արամի պատկերացումներում այդպես էլ չի որոշակիանում այդ պետականության հնարավոր նկարագիրը: Այդ մասին չի գրում նաև Ալաջաջյանը, ինչպես որ առհասարակ չի գրել մեր քաղաքական գործիչներից ու գրողներից* և ոչ մեկը: Ցավոք այն մեզանում գրեթե միշտ պատկերվել է որպես երկնքում թևածող մի կապույտ թռչուն, և կարծվել է, թե դրա *«իջեցումը»* բավական է, որ ստեղծվի ցանկալի դրախտային կյանքը, և կամ այն իրականությունը, որը պատկերված է Հովհ. Թումանյանի *«Ոսկի քաղաքը»* հեքիաթում:

Ասենք, որ իրականությունն այն է, որ ինչպես նախկինում, այնպես էլ հետագայում, երբ ստեղծվել են այդ պետականություն ասվածները, այն

* Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպում ևս չի ներկայացվում ցանկացված պետականության ինչպիսին լինելը:

«ամենքինը չէ եղել հավասար» և ծառայել է միայն «յուրայիններին» (շահնուրյան խոսքով՝ «քեռի, որդի, փեսա») համար բարեկեցիկ ու շահավետ կյանք ստեղծելուն:

Հայ իրականության մեջ կրկնվող ողբերգական, բայց մանավանդ պետականաբանդիչ այս իրողությանը ժամանակին անդրադարձել է նաև Շահան Շահնուրը և կատարել շատ բնորոշ ընդհանրացումներ: Իր «Ազատն Կոմիտաս» հոդվածում նա գրում է. «Հայ պետականության կործանումը նման է ջերմաչափի ջախջախումին, որով նաեւ սնդիկի կոտորակումին: Հայ ընտանիքը սնդիկի այն ամրակուռ մետաղեայ գնդիկն է, որ կը ցրուի խօլաբար: ...Ընտանիքի գաղափարին միսթիքը չի կրնար սակայն փոխարինել ազգային զգացումին միսթիքը: Որպեսզի կատարուի տարտղնուած գնդիկներու այնքան ցանկալի միացումը, ոմանք պահանջը զգացին բարձրաստիճան ջերմութեան...»^{*} Եվ եթէ աչքի առջեւ ունենանք սա յառաջատուութիւնը – անհատ, ընտանիք, ազգ եւ մարդկութիւն, կը տեսնինք, որ **Հայը անշարժացած է երկրորդ հանգրուանի վրա ու չէ հասած ազգութեան աստիճանին:** Այսօր կան տարանջատ ընտանիքներ, բայց չկայ Ազգն Հայոց»¹ (ընդգծումները մերն են – Ա. Ա.):

Պետականությունը նաև երկսայրի սուր է. կարող է փրկություն ու միության ուժ լինել, կարող է նաև բաժանման ու կործանման փանաքի որդ դառնալ՝ նայած թե պետականությունը մարմնավորող կառույցները՝ բանակ, ոստիկանություն, դատարան..., ծառայում են ժողովրդի՞ն, թե՞ իշխանություններին, որոնք այդ պետականությունը հաճախ դարձնում են շահագործման գործիք: Չէ՞ որ այդ պետականություն ասվածը զանազան դրսևորումներ ունի՝ միապետություն, ժողովրդապետություն, հանրապետություն, կայսերապետություն, բռնապետություն ... Չէ՞ որ աշխարհում քիչ չեն դեպքերը, երբ սեփական պետության լուծը ավելի ծանր է լինում: Չէ՞ որ պետականությունը չի նշանակում գոյության պահպանում: Այն ամենից առաջ արդարության մեջ ազատ ապրելն է և ուրեմն՝ ՕՐԻՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ է, որ պիտի ստեղծել աշխարհում:

Բայց դառնանք կերպարներին:

Դեպքերի զարգացումները աստիճանաբար փոխում են Արամի դիրքորոշումը: Ժողովրդին «ապրել տվորեցնել» ու «խաղաղ կյանք» ապահովել ցանկացող Արամը համոզվում է, որ թշնամին միշտ էլ գալու է և այրելու ու ավերելու է կառուցվածը՝ լինի դա տուն, թե եկեղեցի: Այդ համոզման արտահայտություններից մեկն այն պատասխանն է, որ Արամը տալիս է թուրք փոխգնդապետի վերջնագրին. «Շինեցե՛ք մեր տները, և մենք կհանձնենք գորանոցը: Ձենքերը չենք տա. եկե՛ք, առե՛ք: Ձինվորացու չունենք: Սպանվա-

^{*} Նկատի է առնվում հեղափոխությունը:

¹ **Շահնուր Շ.**, Ազատն Կոմիտաս, Երևան, 2003, էջ 13-14:

ծին¹ ծառայության չեն կանչում» (էջ 207): Ի դեպ, թուրքերի կողմից ներկայացված վերջնագիրը, ըստ որի՝ զեյթունցիները պետք է դատարկեին իրենց զբաղեցրած գորանոցը, հանձնեին զենքերը և զինվորագրվեին միլիական բանակին, եթե մի կողմից ապացույցն է այն բանի, որ Արամի ծրագրերն անիրագործելի մի բան էին, մյուս կողմից հաստատումն է այն ճշմարտության, որ օսմանցին բոլոր ժամանակներում հետամուտ է մի նպատակի՝ Թուրքիան տեսնել առանց այլազգիների, մանավանդ՝ առանց քրիստոնյաների:

Այդ նույն ողբերգական իրադարձությունները սկսում են փոխել նաև Փառենի նման «ամուր կոճղին», նաև ֆիզիկապես. «Այն, որ մախրենու վրա փոսիկներ են առաջանում, և կեղևը փորձում է ծածկել փոսիկները, այն, որ արցունքի պես կաթում է խեժը և գնդիկի պես չորանում, այն, որ շերտավորվում է բնի վրա և դյուրավատ ճյուղ է դառնում, Փառենն է, հին կոճղը, հին մախրենին, որ մի ժամանակ շարժվում էր, տեղափոխվում հողի վրայով, ժայռից ժայռ, բարձունքից բարձունք: Այտերը փոս էին ընկել, աչքատակին առաջացել էին տուպրակիկներ. ծնոտը մազակալվել էր, ու մորուք էր աճում, շորերը պատառոտված էին, հնամաշ: ...Փարթամ ուսերի վրա ո՞վ էր դրել այն անտեսանելի ծանրությունը, որ ստիպում էր կքվել: ...Կարծես կայծակ էր խփել մախրենու կատարին» (էջ 209):

Վերադարձի վճիռը ճիշտ համարել, մնալ ու շարունակել սերունդների կյանքը, թե՞ թողնել երկիրն ու հեռանալ՝ փրկելով այդ նույն սերունդների վաղվա կյանքի ընթացքը: Այս հարցը տարբեր ձևակերպումներով վերադառնում է արժարժվում: Ալաջաջանի պատասխանը հստակ է. իրականությունն այն է, որ վերադարձել է կիլիկիահայության մի հատված, ուրեմն ճշմարիտը նրանք են: Խնդիրն այն է, թե ինչպես են նրանք շարունակելու գոյատևել. Ալաջաջանի պատասխանը այստեղ ևս հստակ է՝ **ձգտել խաղաղության և պատրաստ լինել անհավասար կռվի:**

Որտե՞ղ է ճշմարտությունը, և ո՞վ է իրավացի: Հարց, որ հաճախ է ծագում վեպի ընթերցելիս:

Կարող է թվալ, թե վերոհիշյալ ուղիները տարբեր են, անգամ՝ իրար հակասող: Իրականում դրանք նույն ժողովրդի դառը ճակատագրի հնարավոր երկու ընթացքներն են՝ մեկը մյուսով պայմանավորված, մեկը մյուսից բխող:

Հեղինակային ասելիքն էլ հենց այդ է. չկա ու չի կարող լինել խաղաղ կյանք, եթե պատրաստ չես զենքով այն պաշտպանել. զենքը խաղաղության երաշխիքն է, խաղաղությունը՝ զենք ունենալու հնարավորություն:

Զենքի հարկը ճիշտ է պատկերացնում նաև Թագաճյան վարդապետը, որը երիտասարդության տարիներին քիչ կռիվներ չի մղել և այժմ, երբ տարիքն առել է, շարունակում է հավասարապես ծնրադրել իր հոգուց անբա-

¹ Հասկանալ՝ եղենի գոհերին:

ժան երկու աստվածների՝ Քրիստոսին և Փրկիչ զենքին: Նրա մասին հեղինակը գրում է. «...ճակատագրի ու աստծո դեմ սև մի ուրվական, որ գնում էր չգիտես ուր, մարդկանց հոգու սևությունը պախարակելու» (էջ 43):

Հանձին վարդապետի՝ Ալաջաջյանը կերտել է ազատ, արդար ու հավատավոր մարդու առիւնքնող մի կերպար: Վարդապետը մեծ նվիրում ունի առ քրիստոնեական հավատքը և նույնքան էլ «արի արանց» հայ մարդ է՝ փառավոր անցյալով. «Սա այն վեղարավոր հերոսն է, որ ձի նստած արշավել է Բերդուս-չայի թշնամիների վրա, սա այն հերոսն է, որ այս գորանոցում ապաստանած թշնամի գորքերին գերեվարեց...» (էջ 137):

Միևնույն ժամանակ, նա ժողովրդական ավանդույթների, ծեսերի ու տոների պահապանն է, որոնք նույնպես գոյատևման կոլաններ են, ժողովրդին **ժողովուրդ** պահելու հզոր ուժ:

Համատարած անելանելիության ու դատապարտվածության մեջ Ձեյթունի գորանոցում ու նրա շրջակա տներում ծվարած հազար չորս հարյուր հայերը ջանում են մոխրակույտերի մեջ կյանքի նշաններ դրսևորել, սիրել ու սիրվել, ինչպես, օրինակ, Միքայելն ու Օսանը, Փոփոն ու Կատարինեն, ինչպես Տրդատը՝ իր նորածին մանկանը, ուրախանալ, ինչպես Թումասն իր թոռներով, ինչպես վարդապետը՝ ամենօրյա իրենց աղոթքը հնչեցնել, ունենալ իրենց տունը, իրենց հողում ծնվել ու այդ հարազատ հողում էլ թաղվել: Չէ՞ որ իրենցն էր Ձեյթունը, ու իրենք էլ պատկանում էին Ձեյթունին:

Ալաջաջյանն այդ ամենը խտացրել է բազում կոիվների բովով անցած Միքայելի կերպարում: Հոգով ու մարմնով վիրավոր Միքայելի՝ այս աշխարհում մեն-մենակ մնացած այդ մարդու, որը «ծնողներ չունեն, սպանել էին: Քույր ու եղբայր չունեն, սպանել էին, ազգական ու բարեկամ չունեն, սպանել էին» (էջ 63), և նրան խնամող այրի Օսանի միջև հյուսված սիրո մի պահի պատկերը վեպում հնչում է որպես խաղաղ կյանքի հիմն, արևազալի ծնրադրում, սիրո նշխարի հավերժացում, գեղեցկության փառաբանում, բնական կյանքի շարունակում. «Արևը ներս ընկավ գորանոցի բակից, Օսանը՝ դռնից: Միքայելի վիրավոր ուսն այլևս չէր ցավում...»

Օսանը մոտեցավ, նշխարի մի մասունք տվեց:

... – Գրկիր ինձ, Օսա՛ն, նստեմ, կանգնեմ, դիտեմ արևազալը:

Օսանը կռացավ, թևը նետեց Միքայելի մեջքին և ինչ-որ ուժ այն մագնիսեց տեղում: Վզի տակ, այտերի վրա, մազերի մեջ Միքայելի շուրթերն էին, շրշող շուրթերը: ...Հետո չիմացավ, թե ինչու ինքը կիսամերկ պառկած է Միքայելի կողքին ու փափլիկ, ճերմակ ուսերը դուրս են մնացել վերմակից, և Միքայելը ավելի ու ավելի է սեղմվում իրեն, և ինքը՝ Միքայելին: Բայց ինքը սեղմվում էր վախից, աշխարհն է ներշնչել, մենակությունից, որ կյանքն է պարտադրել, և առնական թների կարոտից, որ այրիությունն է պատճառել: ...Գեղեցիկ էր Օսանը, շա՛տ գեղեցիկ...» (էջ 55-56):

Միքայելի և Օսանի հարաբերություններով թեև «անտեսվում» է Ձեյթունում ընդունված «պատվո օրենքը», բայց դա հենց ինքը՝ «կյանքի օրենքն» է,

որ կյանքի հաստատումն է դառնում, սիրո ու մարդու մեծարումը: Նաև այդ ամեն բնականի ու մարդկայինի դեմ էին գործում թուրք մարդասպանները: Արևախում այդ ցեղի բուն էությունը գրողը բացահայտում է թուրք սպայի՝ հղի Օսանին ասված խոսքերով. «– Մենք հայի դեմ ենք կռվում և նշանակություն չունի, թե այդ հայը կին է կամ երեխա, ծերունի է կամ պառաւ, ծնվում է կամ ծնվելու վրա է» (էջ 223):

Ձենք պահանջող թշնամուց մշակման համար փոքրիկ հողակտոր խնդրելու գնացած Միքայելը նենգորեն սպանվում է: Նրա մահը ազդակ է դառնում զեյթունցիների համար մեկ անգամ ևս համոզվելու, որ իրենց մահը ևս անխուսափելի է, և ոչ մի պարագայում չի կարելի վստահել թշնամուն, որ պիտի հնչեցնել վրեժի փրկարար երգը. «Երգը փրփրաց, ծավալվեց... Դա մի դղիրդ էր, որոտ: ... Հեղեղվում էր շառաչող գետը... Շարժվում էր հողը...» (էջ 191):

Վեպում առկա են նաև մի շարք այլ հաջողված կերպարներ՝ Բու Մանուկը, Նազարեթը, Ժանգ Սեդրակը, պատանի Փոփոն, ծերունի Թումասը, որը մարմնավորում է հայ մարդու ու բնության հավերժական կապն ու միաձուլումը, որոնք թեև հանդես են գալիս առանձին դրվագներում ու դեպքերում, սակայն իրենցով տիպականացնում ու ամբողջացնում են շրջանի համապատկերը, արտացոլում ժողովրդական զանգվածների մտածողությունն ու զգացողությունը, դրսևորում համարձակության ու քաջության օրինակներ:

Ժողովրդական կամքի ու իմաստության արտահայտիչ է Արամի հայրը, որն իր պատրաստած վերջին գենքը տալիս է Փառենին՝ նրան ու մյուսներին ուղղելով իր ծերունական պատգամը. «Կռվեցե՛ք մինչև վերջին շունչը: Եթե փամփուշտը վերջանա, կռվեցե՛ք քարերով, քարը վերջանա՝ փայտերով, փայտը ջարդվի՝ ձեռքով ու եղունգներով. կռվեցե՛ք մինչև արյուն չմնա երակների մեջ» (էջ 211-212):

Դարերի խորքից եկող այդ պատգամը ապրեցնող այն ուժն էր, որ հնչել էր ու հար հնչելու է հայ մարդու համար, նրա գոյատևելու երաշխիքներից մեկը նաև գալիքի քառուղիներում: «Ա՛զգ,– գրել է Շահնուրն իր «Թերթիս կիրակնօրեայ թիւը» գրքում՝ խոսքն ուղղելով ողջ հայությանը,– Կռուէ՛ ամբողջութեամբը քու միսերուդ: Եթէ՛ միսերդ ինկան պատառ-պատառ, կռուէ՛ դնդերներդ՝ վդ, ջիդերդ՝ վդ, երակներդ՝ վդ:

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ՛ ոսկորներդ՝ վդ:

Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ՛ ծուծդ՝ վդ:

Եթէ ծուծ չմնաց, կռուէ՛ աճիւններդ՝ վդ:

Եթէ ասոնք ալ տարտոնուեցան, կորուսուեցան, չքացան, այն ատեն կռուէ՛, ազգ, Հերոսդ՝ վդ»¹:

Ալաջաջյանը վեպում կերտել է թշնամու, հատկապես ջարդարար թուրքի տարաբնույթ տիպեր՝ խարդախ, նենգ, անարդար և մանավանդ՝ դաժան՝

¹ Շահնուր Շ., Թերթիս կիրակնօրեայ թիւը, Պէրուք, 1958, էջ 9:

Շնքեթ, Շեքեբ և այլք՝ բոլորն էլ օժտված ընդհանուր նույն վարքով՝ թալանչի (Հակոբ Մնձուրին ասում է՝ թուրքը «խառնուածքով սպառող է, արտադրող չէ»), մարդասպան ու հայատյաց: Այդպիսի մեկն է Ալի Քեհյան. վանք անարգող, ամբարտավան, Աստծո տուն տրորող հոխորտ այդ արարածին երբ Տրդատը շանսատակ է անում, Ժանգ Մեղրակը հարկ է համարում քաշել նրա ականջը և ասել մի քանի բառ, սովորական մարդկային բառեր. *«Լավ բան չէ խաղաղ հողագործին սպանելը, հասկացա՞ր»* (էջ 54):

Սակայն թուրքը ինչպես կենդանության ժամանակ այդ չէր հասկացել, այնպես էլ մեռած ժամանակ այն չի հասկանում: Իսկ առհասարակ քանի՞ թուրք կարելի է գտնել, որ հասկանա սովորական մարդկային այդ խոսքը: Եվ կա՞ր որևէ արդար գործ, որ կատարվեր այդ երկրում, երկիր, որտեղ միշտ էլ տիրել են ավերն ու սպանողը, երկիր, որի ողջ պատմությունը ամփոփվել է արյան հեղումների ու այլոց հայրենիքների գրավման մեջ:

Վեպի երկրորդ մասի սկզբում ներկայացնելով Մարաշ քաղաքի ողբերգական վիճակը՝ գրողն այն նմանեցնում է բանտի: Թուրքերը գրավել էին քաղաքը, ոչնչացրել ֆրանսիական զորագունդը:

Այսպես կոչված *«ղաշնակից»* պետությունները այդպես էլ չզինաթափեցին Անատոլիայում հավաքված քեմալական բանակը, որը, օգտվելով այդ *«ղաշնակիցների»* միջև առկա անհաշտելի հակասություններից, զինվեց նրանց իսկ օգնությամբ և օրեցօր է՛լ ավելի հզորացավ:

Մարաշի անկումից հետո Զեյթունը կորցնում է իր կապը նաև Հաճընի ու հայաբնակ այլ վայրերի հետ՝ դառնալով աշխարհից կտրված մի օազիս՝ շրջապատված թուրքական բնակավայրերով:

Հակիրճ, սակայն սպառնիչ է Ալաջաջանի կողմից ծովերից այն կողմ գտնվող Ալբիոնին՝ տրված բնութագիրը, որը հավասարապես վերաբերում է մյուս բոլոր մեծ տերություններին. *«Անգլիան իր շահերի շունն է»* (էջ 70): Ողբերգական դեպքերի զարգացումներին զուգընթաց՝ այդ ճշմարտությունը ամրակայվում է վեպի նաև այն հերոսների մտորումներում, որոնք իրենց հույսերը դեռ կապում էին եվրոպական տերությունների հետ: Ֆրանսիացի ենթասպա Դյուրեի հետ (ով միակ ազնիվ ֆրանսիացի զինվորականն է ու լավ գիտի իր պետության խարդավանքների դրդապատճառները) գրույցից, հայ լեգեռնական ուժերի զինաթափվելուց ու, մանավանդ, այրված Մարաշից դեպի Սիրիա փախչող հայ գաղթականներին տեսնելուց հետո Փառենը ևս հանգում է այն վերջնական մտքին, որ ամեն գնով պետք է զինել Զեյթուն վերադարձած ժողովրդին, որպեսզի մարաշցիների ճակատագիրը չուներնան, որ Արամի՝ *«բնական կյանք»* ստեղծելու ձգտումը ոչ մի հենարան չունի, որ զենքը պաշտպանվելու միակ միջոցն է՝ փրկելու ոչ միայն մարդկանց, այլև

* Բրիտանական կղզիների հնագույն անվանումն է, որն օգտագործվել է թե՛ հին հունական և թե՛ հին հռոմեական գրականության մեջ:

հողը, տունը, ունեցվածքը, հոգևոր արժեքները, ամեն հայկականը, և որ այդ փրկությունը կարող է լինել երկու ձևով՝ փրկվել կովելով ու զոհվելով և փրկվել կովելով ու ազատվելով՝ երկու դեպքում էլ էլքը զենքի հետ կապելով:

Ընտրությունը միակն էր, և այն հաստատվել էր դարերի փորձառության, որի վերաբերյալ հստակ եզրահանգումներ ունի նաև Փառենը. «*Հենց որ զեյթունցին վայր չի դրել զենքը, ստեղծվել է մի պետություն, որ գրի է առել, ասենք, Պապուկ քահանան ս. Հրեշտակապետ եկեղեցու ձեռագիր «Հայսմավուրքի» վերջում: Եվ ի՞նչ է Զեյթունից մինչև Վերջնասար հասնող հողակտորը, եթե ոչ ննջարան՝ հերոսների դամբարան, ռազմադաշտ ու խեղդվող ազատության կյանքի վերակոչը: Քանի-քանի դար վայր չդրվեց զեյթունցու զենքը, և քանի-քանի դար սրբազան հուշարձաններ կանգնեցրինք: Միայն մեկ անգամ, լոկ մեկ անգամ զենք չվերցրեց Զեյթունը, 1915-ին... Անեծք, անիծյալ թվական... Եվ հերոսական դամբարաններ չերևացին, մեր շիրիմները մնացին անհայտ» (էջ 152):*

Փառենը, ի տես փլուզումների ու ավերների, իր օրագրություններում նշումներ է կատարում, որոնք յուրատեսակ **նամակներ** են՝ ուղղված հայ սերունդներին: Այդ գրությունները դրսևորում են ոչ միայն Փառենի հոգում տիրող փոթորկումները, այլև մատնանշում են այն կորուստները, որոնք սպասվում էին Կիլիկիայի հայաթափությամբ՝ հավատափոխություն, հիշողությունների վերացում և այլն. «*Հրաժեշտի երգ եմ գրում, և հայ ժողովուրդը Կիլիկիայի համար կդառնա պատմություն, երգ, հառաչանք. Կիլիկիան էլ հայ ժողովրդի համար կդառնա պատմագիրք. քարտեզ...*» (էջ 177): Նմանություն պետք չէ՝ տեսնել վերոհիշյալ տողերի արտահայտած մտքի և Արարատ լեռը լոկ որպես նկար մեզ տրված իրողության միջև...

Այս առումով վեպում շոշափվում են ոչ միայն վերը նշված մի շարք կարևոր հարցեր, այլև մերօրյա տարաբնույթ արդիական այլ խնդիրներ, որոնցից մեկն էլ տեղաբնիկների ու այլազգիների օսմանացումն է ու ազգուրացումը: Մուսուլմանացման այդպիսի օրինակներով՝ բերդուցիներ, կարամանցիներ, որոնց նախնիները հայեր են եղել, Ալաջաջանը ցույց է տալիս հավատքի, մշակույթի ու ինքնության այն կործանարար վախճանը, որ սահմանված է Թուրքիայի տիրապետության մեջ մտնող բոլոր ազգությունների համար (պատմական այդ իրողության հաստատումը չէ՞ այն, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 16-17 միլիոն հաշվվող թուրքերը այսօր 80 միլիոնն անց են):

Փլուզման ու կործանման գիտակցումը Փառենի աչքերից ցավի ու զայրույթի արցունքներ է հոսեցնում. «*Այդ արցունքները բխում էին բիրբերից և բիրբերի մեջ ավերակված Ծամնդավն էր, մոխրացած մի հայսմավուրք, կիսափուլ Կարմիր բերդը, պատառոտված մի սաղմոս, մզլոտած մագաղաթներ,*

Կապանի բերդի մերկ սյուները, Շողականը... Շիրմաքարը գողացված՝ Օշին իշխանի հողաթումբը, տապալված խաչքարեր... և այս բոլորին հաջորդող ս. Գևորգ և ս. Աստվածածին եկեղեցիների անմարելի հրդեհները: Էլ ինչպե՞ս լաց չլինեի հսկան: Վեց հարյուր տարվա մի լաց էր, և արցունքները վեց հարյուր տարիների թացություն ունեին» (էջ 82-83):*

Թուրքերի և ֆրանսիացիների կողմից հայաբնակ Մարաշի երեքօրյա ուժակոծության վերաբերյալ շատ ուշագրավ դիտարկում ունի գրողը, որն իր մեջ խտացնում է բոլոր ժամանակների նվաճողների վարկը. «...ավերում են նրանք, որոնք ոչինչ չեն ունեցել այս երկրի վրա, այս հողում, չեն տվել ոչ մի բարիք... ավերում են, որովհետև երկիրը իրենցը չէ, եկել են տիրապետելու. և՛ փախչողն է այդպես եկել, և՛ հաղթողը...» (էջ 86):

Այդպես էլ ֆրանսիացիներին հավատացող հայերը փլատակներ ստացան. թուրքերի հետ խաղաղ ապրելու՝ Արամի և նրա նման մտածողների հույսերը ավերակների տակ մնացին:

Ֆրանսիայի վարած ուխտադրուժ քաղաքականությունը սպառիչ է բնութագրում հեղինակը վեպում ներկայացված հենց ֆրանսիացի Դյուրեի նկարագիրը գնահատելիս. «...արդարամտության այդ զինվորը ֆրանսիացի է, բայց ֆրանսիացին Դյուրե չէ»: Ու այդ «չէ»-ն զինաթափել տվեց տասը հազարանոց հայկական լեգեոնը, ձերբակալեց ու աքսորեց Կիլիկիայի ինքնավարությունը հռչակած հայկական կառավարության անդամներին, որի հետևանքով այդ «անկախությունը» ընդամենը մեկօրյա կյանք ունեցավ:

Ամերիկացիների վերաբերյալ ևս վեպում առկա են իրականությունից բխած եզրահանգումներ: «Որքացնել են տալիս ժողովրդին,– գրում է Ալաջաջանը,– որպեսզի հետո հավաքեն նրա որբերին» (էջ 89):

1919 թվականը ոչինչ չէր տվել զեյթունցուն, 1920 թվականը ևս կորստաբեր էր եղել նրա համար՝ «անձին ու անպտուղ» (հայոց պատմության դառնադետ շղթայում կրկնված ի՛նչ օրինաչափություն): Եվ հիմա 1921 թվականն էր, Նոր տարի, իսկ իրականում ամեն ինչ հինն էր, ու այդ հինը 1915 թվականն էր՝ իր թողած անապաքինելի վերքերով:

Համատարած այդ հուսախաբությունների մեջ զեյթունցին այլևս պիտի կռվեր ոչ թե հաղթելու, այլ, ինչպես Ալաջաջանն է գրում, «...կռվում էին... որպեսզի ոչնչանան» (էջ 90), ու պատահական չէ, որ այդ կռվողներն իրենց ճանապարհի երկարությամբ ձգվող քարայր-մենաստաններին յուրահատուկ նոր անվանումներ են տալիս՝ Նահատակության քարայր, Սուրբ նպատակի քարայր, Մարտիրոսության քարայր, Վրեժի քարայր: Այն վրեժի, որ միայն իրենցը չէր, այլև անապատներում մնացածների, անթաղ մնացածների, գաղթի ճամփաներում խողխողվածների:

* Թուրքիան, նվաճելով տեղաբնիկ ժողովուրդների հայրենիքները, սեփականացրել է նաև այնտեղ առկա պատմական ու մշակութային արժեքները և դրանք վերագրելով իրեն՝ զբոսաշրջության միջոցով ապահովում է իր տնտեսության զարգացումը:

Ամբողջ վեպի ընթացքում ծավալվող այս դիրքորոշումը ազգային այն արժեքներից մեկն է դառնում, որն արտացոլում է հայ մարդու դիմադրողական ոգու ուժը, որը հակադրվում է ու հակակշիռ է այն սնանկ տեսակետի, թե համակերպությամբ ու հաշտվողականությամբ կարելի է գոյատևել և առաջադիմել:

Համաժողովրդական ընդվզումը, անխորտակելի ու անհողորդող կամքի դրսևորումը վեպում այլաբանորեն է արտահայտված Ձորագետի նկարագրությամբ. *«Ձորագետի ահեղ հոսանքը զարնվում է ապառաժյա բնաթմբին... Ապառաժները ետ են մղում հոսանքը, ստիպում են ջրերին պտտվել, խառնվել իրար, ռոնալ ու ինքնապտույտով գտնել նոր հուն, այսինքն՝ թեքվել դեպի արևմուտք: Աղմուկը ահավոր է, գորգոռում են ժայռերը, ջրերը, խճաքարերը, աղաղակում է գետի անհայտ հատակը, անդնդանում, կտրվածքից կաղկանձում է ջրապտույտը, քարերը զարնվում են իրար, ալիքները խոյանում են վեր...»* (էջ 112):

Այդպես գրում էր Խ. Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպի «Զանգի» գլխում, այդպես գրում են միայն կրակված հոգիները: Պատկերն իրոք ուժեղ է ու խոր և վկայում է, թե Ալաջաջյանի ստեղծագործական երևակայությունը ինչպիսի՝ բարձունքների կարող է հասնել:

Ձորագետի ջրերի նման ալեկոծ է Փառենի հոգին, ու նա իրոք նման է հայրենի այրված մախրենուն: Փառենից չեն տարբերվում Կարոն, որի ներաշխարհը դատարկվել է վանքում լսած մեղեդիներից, Արամը՝ այլևս հուսաթափ պետականությունն ունենալու երազանքներից, Սիմոնյանը, մյուս զեյթունցիները՝ բոլորն էլ լեցուն հարազատների հին, նոր ու սպասվող մահերի վշտերով:

Անխուսափելի մահվան այդ նույն ճանապարհին են հայտնվել ամենքը: Այդ դատապարտվածությունից ազատվողների կյանքը հավասար էր լինելու մի ուրիշ մահվան, որի համար էլ ողբում ու լաց են լինում Փառենն ու Սիմոնյանը. *«... լքում ենք մեր հայրենիքը... Մեր հայրերի գերեզմանները այցելու չեն ունենա... Ետ դարձ չկա...»*

– *Էլ չենք տեսնի մեր ծննդավայրը...*» (էջ 281):

Զեյթունցիներն իրենց հարազատների գերեզմանները թողել էին Դեր-Ձորում, այժմ հոգևոր ու ազգային սրբությունները թողնելու էին թշնամուն, և իրենք մնում էին իրենց գենքերի հետ միայն:

Իրենց վերջին կոիվը զեյթունցիները մղում են եղեգնուտում: Անգիջում մի կոիվ, որ մղվում է ոչ թե ապրելու համար, այլ մեռնելու՝ իրենց մահով հավերժացնելու համար այն ամենը, ինչը որ Ուլնիա աշխարհին էր ու նրա մարդիկ: Մի ամբողջ եղեգնուտ էր ինքը՝ Զեյթունը, և առանձին-առանձին մի-մի հավերժական եղեգներ էին իրենք՝ զեյթունցիները, որոնց նախորդների մասին, ինչպես արդեն նշել ենք, այնքան հուզաթով գրել էր Զեյթունի 1860-ականների երգիչ Մկրտիչ Պեշկյաշյանը, և ում տողերը այնքան հարիր պիտի գային նաև Ալաջաջյանի վեպի նահատակ հերոսների համար՝

«ոչ փող զարկեին» և «ոչ արձագանք լեռնասոյգ»։ Նրանց համար չհնչեցին նաև «ողորոց երգեր սրտայոյզ»։ Նրանք մնացին իրենց փառքի հետ միայն և հենց դրա համար էլ պիտի «շա՛տ ապրեին»։

Հաղթեցի՞ն, պարտվեցի՞ն զեյթունցիները... ոչ ոք չի կարող ասել։ Գուցե և չհաղթեցին, բայց և չխոնարհվեցին ու մնացին կանգուն՝ բարձր, սլացիկ, հպարտ, անկոր, ասել է՝ անմահ։ Բայց դա անիմաստ նահատակություն չէր, այլ մահ հանուն ազատության ու ազգային սրբազան ուխտի։ **«Ինչպիսի՞ ժողովուրդ։ Մի տասնամյակ էլ չկա, և՛ երկու եղեռն տեսավ։ Միայնակ թողեցին նրան և՛ աստված, և՛ մշակույթի պաշտպանները, և՛ քաղաքակրթություն քարոզող Եվրոպան, և՛ մենք։ Մենք մեզ միայնակ թողեցինք»**,- իրավացիորեն ընդհանրացրել է Ալաջաջյանը (էջ 289) (ընդգծումը մերն է – Մ. Մ.)։

Եվ ուրեմն, նրանք բոլորն իրենց կյանքով ու պայքարելու անհողորդող կամքով գրեցին մեր պատմության ոսկե էջերից մեկը՝ զեյթունցիների հերթական հերոսամարտը, որի մասին վկայում են նաև Զեյթուն աշխարհի ժայռերի ցցվածքներին ու հաստաբուն ծառերին փորագրված գրությունները՝ 1919, սեպտեմբեր..., 1920, մայիս, հունիս..., կովում է Հաճընը, կովում է Այնթապը, «1921, հունիս..., 1921, սեպտեմբեր, 1921՝ կոիվը դեռ շարունակվում է...»։

Ինչպես Փառենը, այնպես էլ ամեն մի զեյթունցի եղավ հենց այն մարդը, որ Երեմիա մարգարեի բերանով արտահայտտում էր Տիրոջ միտքը, որ «*Ես այն մարդն եմ, որ տառապա՛նք տեսա*»։

Եվ պատահական չէ, որ վեպի ավարտին Փառենը գնում է աշխարհին վկայելու, որ չի վերջացել Զեյթունի հերոսամարտը, հաղորդելու, որ «դեռ իննսունինը մարդ կա մեռնելու» պատրաստ և հաստատելու, որ թեև թշնամին ժխտում է հայության իրավունքները, բայց չի կարող ուրանալ նրա աճյունները, նրա հին ու նոր զոհողությունները, և որ այս վեպն էլ այլ բան չէ, քան այդ իննսունինը ապրող մարդկանց, այն հազար երեք հարյուր զոհվածների ու նաև մի ամբողջ ժողովրդի **ցած չորվող զենքի պատմություն**, ձեռքերին զենք ու հոգում վրեժ ունենալու պատմություն։

Մանրագինն դիտարկելու դեպքում վեպում կարելի է նաև վիճելի հատվածներ տեսնել, օրինակ՝ համոզիչ չէ, որ թուրքերի դեմ կռիվների բովով անցած և պետականություն ստեղծելու երազանքով տարված Արամը Մարաշի գործերի հրամանատար Շևքեթի հետ կնքեր մի համաձայնագիր, ըստ որի հենց պետական գործառույթները՝ հայերի ազատ երթևեկության երաշխավորում, քայմաքամի կողմից իրավունքների թույլտվություն, պարենով ապահովելու խոստում և այլն, պետք է հանձնվեին թուրքերի տնօրինությանը։ Կամ, ինչպե՞ս կարող էր Մարաշի թեժ պաշտպանության ժամանակ Փառենը նստեր ու լաց լիներ՝ փոխանակ կռվելու։

Քիչ են համոզիչ նաև Տրդատի վարմունքն իր կնոջ նկատմամբ ու մանավանդ նորածին որդուց՝ այդ «ծանր» բեռից, անմարդկայնորեն ազատվելու արարքը։

Վեպում չի հիմնավորվում նաև ութ «դասալիքների» հեռանալը մի քանի ժամ հետո սպասվելիք կովից առաջ, և այդ այն դեպքում, երբ Արամը կատարել էր նրանց պահանջը: Անհիմն են հնչում նաև Սիմոնյանի այն խոսքերը, որ իբր թե Հաճընի շրջակա թուրքերը հայ իշխանավորներից ավելի գոհ են, «քան էին իրենց սեփական իշխանության օրոք»:

Մանավանդ անընդունելի է հեղինակային այն միտքը, թե թող լինեն քրիստոնյա և մուսուլման հայեր...

Բայց, ինչպես ասում են, նման դրվագները բացառություններ են և չեն ազդում վեպի բազմընդհանուր արժանիքների վրա:

Արծրուն Ավագյան – Երբ եղեգները կանգուն են

Հոդվածում ներկայացվում է հայ գրականության տաղանդավոր գրողներից մեկի՝ Ստեփան Ալաջաջյանի լավագույն գործերից մեկը՝ «Եղեգները չխոնարհվեցին» վեպը, որի առաջին հրատարակությունից թեև անցել են տասնամյակներ, սակայն այն մեզանում ըստ էության և համակողմանի մինչև այժմ չի ուսումնասիրվել ու արժևորվել: Վեպում պատկերվում է դերգոռյան անապատներից հրաշքով փրկված և Առաջին համաշխարհային պատերազմից հետո Զեյթուն վերադարձած կիլիկիահայության կյանքը, որը տևեց ընդամենը երկու-երեք տարի, և այդ՝ ոչ միայն թուրք մարդասպանների գործունեության հետևանքով, այլև մեծ տերությունների վարած շահադիտական քաղաքականության ու մանավանդ Ֆրանսիայի ուխտադրուժ վարքագծի պատճառով: Բարձր գնահատելով վեպի գաղափարական ու գեղարվեստական արժանիքները, մեկնաբանելով կերպարակերտման համակարգը՝ հեղինակը հատկապես շեշտադրում է վեպում արծարծված խնդիրների արդիականությունը: Հոդվածում առաջ է քաշվում այն միտքը, որ Ալաջաջյանի վեպը, գեղարվեստական պատում լինելուց գատ, նաև պատմական արժեք ունեցող *վկայախոսություն* է, Ուլնիա աշխարհի պատմամշակութային արժեքների վկայաբանություն, ժողովրդական ավանդույթների, ծեսերի ու հոգևոր այլ արժեքների գնահատում, որոնք ժողովրդին ժողովուրդ պահելու հզոր ուժ են: Վեպում առաջադրված գլխավոր խնդիրը՝ գոյատևել՝ հիմք ունենալով պայքարը, կարևոր է ոչ միայն մեր ոչ վաղ անցյալի հերոսական էջերը չմոռանալու, այլև գալիքի ուղիները ճշտելու առումով: Զեյթունցիները մեկ անգամ ևս հաստատեցին, որ հայրենի եզերքում ապրելու միակ երաշխիքը թշնամու դեմ պայքարն է: Ալաջաջյանի վեպն այլ բան չէ, քան մի ամբողջ ժողովրդի ցած չորվող գենքի պատմություն ու ասք:

Арцрун Авагян – Несгибаемые тростники

Ключевые слова – Степан Аладжаджян, Франция, Зейтун, роман, мировая война, турецкие убийцы, историческая ценность, народные традиции, обряды, борьба, художественные повествования, свидетельство, родные края

В статье рассматривается одно из лучших произведений талантливого армянского писателя Степана Аладжаджяна – роман “Тростники не согнулись”. Несмотря на то, что со времени первой публикации романа прошли десятилетия, тем не менее, по сути он до

сих пор не изучен всесторонне и не оценен. Роман изображает жизнь киликийских армян, чудом спасшихся в дерзорских пустынях и вернувшихся после мировой войны в Зейтун. Такая жизнь продлилась всего два-три года не только вследствие деятельности турецких убийц, но и ввиду корыстной политики крупных государств, в особенности вероломного поведения Франции. Высоко оценивая идейно-художественные ценности романа, рассматривая систему изображения персонажей, автор подчеркивает актуальность проблем, отраженных в романе. Он выдвигает мысль о том, что роман Аладжаджяна не только является художественным повествованием, но и свидетельством, имеющим историческую ценность, свидетельством историко-культурных ценностей Улнии, оценкой народных традиций, обрядов, духовных ценностей, которые выступают огромной силой и опорой для того, чтобы народ ощущал себя народом. Выдвинутая в романе основная проблема – выживание, борьба – важна не только в аспекте незабывания героических страниц нашей недавней истории, но и поиска путей в будущем. Зейтунцы в очередной раз подтвердили, что единственной гарантией проживания в родных краях является борьба с врагом. Роман Аладжаджяна есть не что иное, как история о том, как целый народ не сложил оружие.

Artsrun Avagyan – *When the Reeds are Upright*

Key words – Stepan Alajajyan, Zeytun, Deir ez-Zor, Armenian literature, novel, powers, literary merits, cultural values, murderers, survive, heroic pages, homeland

The article presents one of the best works by a talented writer of Armenian literature, Stepan Alajajyan, the novel “The Reeds did not Bend”, the first edition of which although published decades ago has not been comprehensively studied and evaluated so far. The novel depicts the life of Cilician Armenians who had miraculously escaped from the Desert of Deir ez-Zor and returned to Zeytun after the First World War, which lasted only two or three years not only because of the activities of Turkish murderers, but also because of the mercenary policies of great powers and especially the treacherous behavior of France. Highly appreciating the ideological and literary merits of the novel, commenting on the system of creating characters, the author especially emphasizes the relevance of the problems raised in the novel. He puts forward the idea that Alajajyan’s novel, in addition to being a fictional story, is also a testimony of historical value, a testimony of the historical and cultural values of Ulnia, an appreciation of folk traditions, rituals and other values that are a powerful force for the people to survive. The main idea set forth in the novel is to survive by struggling, which is important not only in terms of not forgetting the heroic pages of our recent past, but also in terms of finding out future ways. The people of Zeytun once again confirmed that the only guarantee of living in the homeland is to fight against the enemy. Alajajyan's novel is nothing but a story and a saga of an entire nation that does not put down its weapons.

Ներկայացվել է 04.02.2022

Գրախոսվել է 10.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022.2022

Արծրուն Ավագյան – ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (a.avagyan@ysu.am)

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

ՄՐՑԱԿԻՑ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇ ԶԵՎԱՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՑԹՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՄԱՆ ՓՈՐՁ

Բանալի բառեր – մրցակից լեզվական միտումներ, դրդապատճառային գործոններ, տարածամանակյա փոփոխության ուղղվածություն, համաժամանակյա ձևաշարահյուսական օրինաչափություն, արգելական հրամայականի զուգաձևություններ, արդի արևելահայերեն, լեզվագործածություն, համատեղ ազդեցություն, հայ լեզվաբանություն

Հայտնի է, որ լեզվի թե՛ համաժամանակյա գործառնության և թե՛ տարածամանակյա փոփոխությունների դեպքում կարևոր պայմանավորիչ դեր են խաղում հոգելեզվաբանական բնույթի մի շարք գործոններ և լեզվական միտումներ, որոնք անմիջականորեն բխում են առավել արդյունավետ հաղորդակցման պահանջից¹: Հատկապես կարևոր են լեզվական ձևերի կիրառահաճախականությունը կամ կիրառահաճախությունը (frequency of use) և կռահելիությունը (predictability), խնայողության (economy), պատկերագրայնության (iconicity), համաբանական համահարթեցման (analogical levelling) և համաբանական ընդլայնման (analogical extension) միտումները: Կիրառահաճախությունը լեզվական համաժամանակյա օրինաչափությունների և տարածամանակյա փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն է², և ինչպես ստորև կտեսնենք, վերոնշյալ մյուս գործոններն ու միտումներն այս կամ այն չափով կախված են դրանից: Այսպես, խնայողության միտումը ենթադրում է խոսողության գործընթացում էներգիայի հնարավորինս տնտեսում, այն է՝ գործածել ոչ ավելի լեզվանյութ և լեզվական միջոցներ, քան անհրաժեշտ է ասելիքը հստակ (ոչ երկիմաստ) կերպով հասկանալի դարձնելու համար: Ըստ այդմ՝ համեմատաբար դժվար կռահելի իմաստները սովորաբար լեզվական հատուկ ձևավորում (ձևային արտահայտություն) են ստանում, իսկ դյուրինորեն կռահելի և ակնհայտ իմաստները հնարավորինս կարճ ձևերով դրսևորվելու կամ զրոյական ձևաբանական արտահայտության միտում են ցուցաբերում: Բայց կռահելիության աստիճանն էլ իր հերթին պայմանավորված է տվյալ լեզվական միավորի

¹ St' u **Moravcsik E. D.**, *Introducing Language Typology*, Cambridge University Press, 2013, p. 243-274, **Hawkins J. A.**, *Cross-Linguistic Variation and Efficiency*, Oxford University Press, 2014:

² St' u **Bybee J.**, *Markedness: Iconicity, Economy, and Frequency* // **Song J. J.** (ed.), *The Oxford Handbook of Linguistic Typology*, Oxford University Press, Online Publication 2012 (Print Publication 2010), p. [110-120], **Bybee J., Beckner C.**, *Language Use, Cognitive Processes and Linguistic Change* // **Bowern C., Evans B.** (eds.), *The Routledge Handbook of Historical Linguistics*, London and New York, 2015, p. 503-518, *հսկ*՝ **Haspelmath M.**, *Explaining Grammatical Coding Asymmetries: Form-Frequency Correspondences and Predictability* // "Journal of Linguistics", 2021, 57, p. 605-633:

կիրառահաճախությամբ. առավել հաճախագործածական ձևերը ավելի հեշտ կռահելի ու հասկանալի են լինում, քանի որ դրանց հիշողական մտապատկերները տվյալ ձևերի անընդհատ գործածվելու շնորհիվ միշտ վառ ու ակտիվ են լինում խոսողների գիտակցության մեջ¹: Ուստի մենք առանց դժվարության հիշում ենք և խոսելիս արագ մտաբերում հաճախագործածական հասկացությունների բառ-անվանումները, մինչդեռ համեմատաբար սակավագործածական հասկացությունների բառ-անվանումները հաճախ մոռացվում կամ դժվարությամբ են մտաբերվում (հոգելեզվական հենց այդ դրությունն է արտացոլված «*Լեզվիս ծայրին է, բայց չեն կարողանում ասել*» բնորոշ արտահայտությամբ): Ըստ այդմ՝ լեզվում սովորաբար գործում է հետևյալ պատճառահետևանքային շղթան՝ *կիրառահաճախություն > կռահելիություն > լեզվական համեմատաբար կարճ, սեղմ ձև կամ պարզապես զրոյական ձևաբանական արտահայտություն*²: Այսինքն՝ բարձր կիրառահաճախությունը նպաստում է տվյալ լեզվական միավորի դյուրակռահելիությանը, և համապատասխան իմաստը հատուկ լեզվական միջոցով արտահայտելը դառնում է ավելորդ կամ առնվազն ոչ խիստ անհրաժեշտ: Հետևաբար այդպիսի քերականական իմաստները, խնայողության միտումի պահանջից ելնելով, հաճախ կա՛մ արտահայտվում են համեմատաբար կարճ ձևերով, կա՛մ առհասարակ ձևային արտահայտություն չեն ստանում: Այսպես, հայտնի է, որ. **ա)** եզակի թվի ձևը սովորաբար ավելի հաճախագործածական է, քան հոգնակին, **բ)** սահմանական եղանակի դեպքում առավել հաճախագործածական է եզ. 3-րդ դ. ձևը, իսկ հրամայականի դեպքում՝ եզ. 2-րդ դ. ձևը և այլն³: Արդ, պատահական չէ, որ լեզուներում եզակի թվի ձևը հաճախ ունենում է զրոյական ձևաբանական արտահայտություն, մինչդեռ հոգնակին սովորաբար քերականական ցուցիչ է ստանում: Այդպես էլ սահմանական եղանակի եզ. 3-րդ դ. ձևը և հրամայականի եզ. 2-րդ դ. ձևը հարացույցի մյուս ձևերի համեմատությամբ հաճախ ամենակարճն են լինում⁴: Աշխարհի լեզուների մոտ մեկ երրորդում հրամ. եզ. 2-րդ դ. ձևը համընկնում է բայարմատին/բայահիմքին, իսկ մյուս ձևերը, այդ թվում՝ հրամ. հոգ. 2-րդ դ. ձևը, մեծ մասամբ ձևաբանական ցուցիչ են ստանում: Հրամ. եզ. 2-րդ դ. ձևը կարող է նույնիսկ ավելի կարճ լինել, քան բայահիմքը, քանի որ հրամայականի վերջահանգ հնչյունը հաճախ ընկնում է⁵:

¹ Տե՛ս **Haspelmath M.**, նշվ. աշխ., էջ 605-633: Հմմտ. նաև **Ավետյան Ս.**, Արդի հայերենի ընթացիկ փոփոխություններից մեկը կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո // «ԲԵՇ. Բանասիրություն», 2019, թիվ 2, էջ 48-62:

² Տե՛ս **Haspelmath M.**, նշվ. աշխ., էջ 606-611, 623-630:

³ Տե՛ս **Greenberg J. H.**, Language Universals: With Special Reference to Feature Hierarchies, reprinted ed., Berlin/New York, 2005 [1966]), p. 31-51:

⁴ Տե՛ս **Haspelmath M.**, նշվ. աշխ., էջ 608-611, 619:

⁵ Տե՛ս **Aikhenvald A. Y.**, Imperatives and Commands, Oxford University Press, 2010, p. 18-19, 21, 44-47, **Ավետյան Ս.**, Հրամայական եղանակը դասական հայերենում տիպաբանական և պատմական տեսանկյունից // «ԲԵՇ. Բանասիրություն», 2021, թիվ 3, էջ 40-55:

Իհարկե, ինչպես մյուս լեզվական միտումները, խնայողության միտումը ևս ոչ թե պարտադիր անհրաժեշտություն է, այլ ընդհանուր հակվածություն, այլընտրանքային հնարավորություն, որից մի լեզու տվյալ դեպքում կարող է օգտվել, իսկ մեկ այլ լեզու՝ ոչ, մանավանդ որ լեզվում հակադիր միտումներ են գործում, որոնք կարող են սահմանափակել միմյանց գործողությունները: Այսպես, ստացական դերանվան առկայությունը վիճակագրական շատ մեծ հավանականությամբ որոշյալություն է ենթադրում, քանի որ վերջինիս հետ գործածվող գոյականները տիպաբանորեն առավել հաճախ որոշյալ առման իմաստ են արտահայտում: Ուստի տվյալ դեպքում որոշիչ հոդի կիրառությունը դառնում է հավելուրդային (redundant): Ըստ այդմ՝ մի շարք լեզուներ ստացական դերանվան հետ որոշիչ հոդ չեն գործածում, մինչդեռ այլ լեզուներում որոշյալության կրկնակի (հավելուրդային) արտահայտությունը՝ ստացական դերանվան և որոշիչ հոդի միաժամանակյա գործածությամբ, կանոնիկ և պարտադիր է¹. հմմտ. մի կողմից անգլ. **my** friend, ֆր. **mon** ami, գերմ. **mein** Freund, իսպ. **mi** amigo «իմ ընկերը» ևն, մյուս կողմից՝ ժ. արևելահայ. **իմ** ընկերը, իտալ. **il mio** amico, հ. հուն. **ho** philos **mou** «իմ ընկերը» ևն²: Իհարկե ստացական դերանունը նախևառաջ պատկանելիության իմաստ է արտահայտում, բայց վերջինս էլ իր հերթին սովորաբար որոշյալություն է ենթադրում: Հետևաբար, ասենք, ժամանակակից արևելահայերենը ևս, խնայողության միտումի պահանջից ելնելով, սկզբունքորեն կարող էր բավարարվել միայն ստացական դերանվան գործածությամբ և որոշիչ հոդ չկիրառել: Սակայն, ի տարբերություն վերը նշված լեզուների, որոնցում նախապատվություն է տրվել խնայողության միտումին, արդի արևելահայերենում (ինչպես և իտալերենում, հին հունարենում ևն) բացարտահայտողության (explicitness) կամ առավել արտահայտչականության (այն է՝ որոշյալության իմաստը հատուկ միջոցով արտահայտելու) միտումը ճնշել և սահմանափակել է խնայողության միտումի գործողությունը՝ հանգեցնելով հավելուրդայնության: Մինչդեռ հին հայերենում ստացական դերանվան հետ գոյականը կարող էր գործածվել թե՛ հոդով և թե՛ առանց հոդի (օր.՝ եղբայրն քո, հարքն մեր, հայր քո, վարձք ձեր ևն³): Հ. Աճառյանը նկատում է, որ տվյալ դեպքում «գոյականի

¹ St' u **Haspelmath M.**, Explaining Article-Possessor Complementarity: Economic Motivation in Noun Phrase Syntax // "Language", 1999, Vol. 75, № 2, p. 227-243:

² Որոշյալությունը լեզուներում ոչ հավելուրդային կամ հավելուրդային ձևային արտահայտություն է ստանում նաև ցուցական դերանուն-որոշիչ և գոյական-որոշյալի կապակցության դեպքում: Հմմտ. մի կողմից անգլերեն *this house*, գերմաներեն *dieses Haus*, ֆրանսերեն *cette maison* «այս տունը», մյուս կողմից՝ հին հունարեն **houtos ho** oikos // **ho** oikos **houtos** «այս տունը», ժամանակակից արևելահայերեն **այս տունը** ևն:

³ Հմմտ. **Jensen H.**, Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, S. 166: Բնականաբար տվյալ դեպքում նկատի ունենք **և** հոդի՝ միայն որոշիչ հոդի նշանակությամբ գործածությունները, քանի որ դասական հայերենում **և** հոդը, ինչպես հայտնի է, արտահայտում է նաև ցուցական, ստացական և դիմորոշ դերանվանական իմաստներ:

վրա որոշիչ հոդ դնելը ավելորդ է»¹, բայց փաստն այն է, որ որոշյալության հավելյորդային դրսևորումը ևս խորթ չէ գրաբարին: Ուստի Հ. Աճառյանի հիշյալ դիտարկումից թերևս կարելի էր ենթադրել, որ թեև հին հայերենում գոյականը կարող է ստացական դերանվան հետ նաև որոշիչ հոդ ստանալ, այդուհանդերձ առավել կանոնիկ է որոշյալության ոչ հավելյորդային արտահայտությունը ստացական դերանվան միջոցով: Մակայն Նոր Կտակարանի չորս ավետարանների լեզվական քննությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ դասական հայերենի համար այդպիսի ենթադրությունը առնվազն ոչ զգուշավոր ձևակերպում կլիներ, եթե հաշվի առնենք, որ հունարենն բնագրում որոշիչ հոդի առկայության պարագայում հայերեն տարբերակում շարահյուսական գրեթե միանման համատեքստերում ունենք թե՛ որոշիչ հոդով և թե՛ առանց հոդի ձևեր: Բերենք միայն որոշ օրինակներ. մատեան առ նա *աշակերտքն նորա* // Ոմանք. ...*աշակերտք նորա* (Մատթեոս, 5:1), *զի վարձք ձեր* բազում են յերկինս (Մատթեոս, 5:12), *դուստր նորա* մե՛րձ է ի մահ (Մարկոս, 5:23), *Գա՛ն եղբարքն և մայր նորա* (Մարկոս, 3:31), *զինչ գործեն աշակե՛րտքն քո...* (Մարկոս, 2:24), *Ահաւասիկ մայր քո և եղբարք քո՛* կա՛ն արտաքոյ, և խնդրեն զքեզ (Մարկոս, 3:32), *հաւատք քո* կեցուցին զքեզ (Մարկոս, 5:34), *դուստրն քո* մեռա՛ւ (Մարկոս, 5:35), և չիցե՛ն *քորքն դորա* ա՛ստ առ մեզ (Մարկոս, 6:3) և այլն:

Ի դեպ, հին հայերենում որոշյալության իմաստը երկակի՝ հավելյորդային և ոչ հավելյորդային ձևային արտահայտություն է ստանում նաև ուղիղ խնդրի դեպքում: Բանն այն է, որ հայերենին (ոչ միայն հին հայերենին, այլև արդի արևելահայերենին) բնորոշ է տիպաբանական մի ուշագրավ երևույթ, որը հայտնի է differential object marking անվանմամբ, և որը հայերեն կարելի է թարգմանել *տարբերակված խնդրանշում*՝ եզրույթով²: Ըստ այդմ՝ ուղիղ խնդիրը, բառաիմաստային և քերականական որոշակի առանձնահատկություններով պայմանավորված, երկակի (տարբերակված) ձևային արտահայտություն է ստանում աշխարհի շատ լեզուներում: Տարբերակված խնդրանշումը տիպաբանորեն հենվում է հիմնականում երեք՝ **ա**) շնչավորության – անշունչության, **բ**) որոշյալության – անորոշության, **գ**) ընդհանրականության – մասնավորականության, կոնկրետության (specificity, referentiality)

¹ Աճառյան Հր., Գրաբարի ուսուցիչ, Երևան, 1954, էջ 34:

² Իսկ դրան առնչակից differential subject marking եզրույթը համապատասխանաբար կարելի է թարգմանել որպես *տարբերակված ենթականշում*: Նկատենք նաև, որ *տարբերակված խնդրանշման* (և *տարբերակված ենթականշման*) երևույթը նույնպես բացատրելի է լեզվական ձևերի կիրառահաճախության և կոռելիության տեսանկյունից: Տե՛ս Haspelmath M., Role-Reference Associations and the Explanation of Argument Coding Splits // “Linguistics”, 2021, 59 (1), p. 123-174: Հմմտ. Naess A., Prototypical transitivity, Amsterdam/Philadelphia, 2007, Ch. 2, p. 17-20, Ch. 7, p. 153-168):

իմաստային հակադրությունների վրա¹: Արդի գրական արևելահայերենում այն գործում է, մի կողմից, *շնչավորության – անշունչության* և/կամ *անձի – իրի*, մյուս կողմից՝ *մասնավորականության (կոնկրետության) – ընդհանրականության* հակադրության սկզբունքով: Թեև ըստ ընդունված տեսակետի՝ արդի գրական լեզվում ուղիղ խնդրի երկակի՝ տրականաձև և ուղղականաձև արտահայտությունը պայմանավորված է միայն *շնչավորի – անշունչի* և/կամ *անձի – իրի* իմաստային հակադրությամբ, բայց այդ կերպ անբացատրելի է մնում շնչավոր ուղիղ խնդրի տարբերակված խնդրանշումը անորոշ առման դեպքում². հմմտ. Ես *մի աղջկա եմ փնտրում* և Ես *մի աղջիկ եմ փնտրում*: Մեր կարծիքով, այս վերջին դեպքում տարբերակված խնդրանշումը պայմանավորված է *մասնավորականության (կոնկրետության) – ընդհանրականության* իմաստային հակադրությամբ: Այն է՝ Ես *մի աղջկա եմ փնտրում* նախադասության մեջ *մի աղջկա* ուղիղ խնդիրը առարկայական վերաբերություն ունի, քանի որ նկատի է առնվում մի որոշակի, կոնկրետ աղջիկ, թեև, իհարկե, վերջինիս ինքնությունը հայտնի է միայն խոսողին, բայց ոչ խոսակցին (ի տարբերություն՝ Ես *փնտրում եմ այն աղջկան* նախադասության, որում՝ *աղջկա* ինքնությունը հայտնի է թե՛ խոսողին և թե՛ խոսակցին): Մինչդեռ Ես *մի աղջիկ եմ փնտրում* նախադասության մեջ *մի աղջիկ* ուղիղ խնդիրը կոնկրետ առարկայական վերաբերություն չունի, հետևաբար խոսողը նկատի ունի ոչ թե մի որոշակի աղջկա, այլ որևէ, ցանկացած աղջիկ: Իսկ միայն որոշյալության – անորոշության հակադրությունը (մյուս երկու հակադրությունների բացառման դեպքում) էական դեր չի խաղում արդի արևելահայերենի տարբերակված խնդրանշման հարցում, ուստի ուղիղ խնդիրը մնում է նույն հոլովով. հմմտ. Ես *փնտրում եմ այն տունը* և Ես *մի տուն եմ փնտրում*: Ընդհակառակը, հին հայերենում տարբերակված խնդրանշումը գործում էր որոշյալության – անորոշության հակադրության հենքի վրա. որոշյալ ուղիղ խնդիրը բոլոր դեպքերում *զ* նախդիր էր ստանում, մինչդեռ անորոշ առման դեպքում ուղիղ խնդիրը հիմնականում մնում էր ոչ նշույթավորված: Իսկ հավելորդայնությունն արտահայտվում էր նրանով, որ որոշյալ ուղիղ խնդիրը *զ* նախդրի հետ կարող էր նաև *ն* որոշիչ հոդ ստանալ. Հմմտ. և իշխանա՛ւ դիւացն հանէ դա *զղևս* (Մարկոս, 3:22), ... թողեալ *զուռկանսն*, գնացին զհետ նորա (Մարկոս, 1:18), Էտես... զնոսա ի նաւին

¹ Հմմտ. **Kagan O.**, Differential Object Marking // **Kagan O.**, The Semantics of Case, Cambridge University Press, 2020, p. 147-188, **Næss A.**, նշվ. աշխ., էջ 153-168, նաև՝ **Seržant Ilja A. & Witzlack-Makarevich Alena** (eds.), Diachrony of Differential Argument Marking, Berlin, 2018:

² Այն տեսակետը, ըստ որի՝ տվյալ դեպքում շնչավոր առարկան որպես անշունչ է դիտարկվում, այսինքն՝ անշունչի (իրի) առում է արտահայտում (տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, 1989, էջ 102-111), մեզ անհամոզիչ է թվում, և անպատասխան է մնում այն հարցը, թե ինչո՞ւ այդ նույն շնչավոր առարկան ոչ մի դեպքում «անշունչի (իրի) առում» չի կարող արտահայտել նաև որոշյալ առմամբ գործածվելիս:

մինչ կազմելին *զուռկանս* (Մարկոս, 1:19), բերին առ նա *զամենայն հիւանդս և զղիւահարս* (Մարկոս, 1:32), և զիա՞րդ *զամենայն առակսն* գիտիցէք (Մարկոս, 4:13), Եւ ժողովեալ *զամենայն զքահանայապետսն...// Ոմանք. Զամենայն քահանայապետս...* (Մատթեոս, 2: 4), և առաքեաց կոտորեալ *զամենայն մանկունս* (Մատթեոս, 2:16) ևն:

Հավելորդայնության առիթով կուզենայինք նշել նաև, որ արդի խոսակցական արևելահայերենում ստացականության իմաստը հաճախ հավելորդային դրսևորում է ունենում՝ դարձյալ առավել արտահայտչականության (տվյալ իմաստը ընդգծելու) միտումով պայմանավորված, օր՝ **իմ** ընկերս, **քո** ընկերդ ևն: Իհարկե գրական արևելահայերենի նորմը չի թույլատրում ստացական դերանվան և ստացական հոդի միաժամանակյա գործածություն (գրական նորմի տեսանկյունից ճիշտ են համարվում ստացականության մեկանգամյա արտահայտությամբ ձևերը՝ **իմ** ընկերը կամ ընկերս, **քո** ընկերը կամ ընկերդ ևն): Բայց, օրինակ, արդի գրական արևմտահայերենում կրկնակի ստացականությունը միանգամայն կանոնիկ է, ինչպես՝ *իմ հրացանս, քու հրացանդ* և այլն¹: Ասվածից հետևում է նաև, որ լեզվի համաժամանակյա փուլում նորմից շեղումներն ու այսպես կոչված՝ «սխալ ձևերը» ոչ թե կամայական կազմություններ են, այլ լեզվական որոշակի միտումների դրսևորումներ, որոնք ժամանակի ընթացքում կարող են դառնալ գրական նորմի ձևեր: Ի դեպ, հայտնի է, որ լեզվական փոփոխությունները սովորաբար սկիզբ են առնում կենդանի, անկաշկանդ խոսքում՝ սկզբնապես ըմբռնվելով իբրև «մերժելի, սխալ» ձևեր, բայց հաճախագործածության շնորհիվ հետզհետե ամրապնդում են իրենց դիրքերը, ներթափանցում գրական լեզու և դառնում կանոնիկ: Ընդ որում՝ նոր համաբանական ձևը և հին ձևը սովորաբար մի որոշ ժամանակ զոյակցում են կողք կողքի որպես տարբերակներ: Այն է՝ հին ձևի համաբանական փոխարինումը նոր ձևով անխուսափելիորեն անցնում է գուգաձևության միջակա փուլ²:

Համաբանությունը մարդկային մտածողության հիմնական տիպերից է, որն ընկած է կարգադասման (categorization) ճանաչողական գործընթացի հիմքում: Իսկ համաբանական-ձևաբանական փոփոխությունները լեզվական երևույթների մտածական արտացոլումների կարգադասման մեջ կատարվող տեղաշարժեր են³: Անշուշտ, ձևահնչությային հերթագայությունները որոշակիորեն մթազնում են ձևային ձևաբանական նույնականությունը, ուստի համաբանական համահարթեցման միտումը ձգտում է վերականգնել ձևային միասնականությունը և դրանով իսկ ավելի անմիջական

¹ Տե՛ս **Տասնապետեան Ե.**, Քերականություն, Անթիլիաս, 1990, էջ 32, նաև՝ **Չոլաքեան Յ.**, Արևմտահայերենի քերականություն, գիրք Ա, Երևան, 2017, էջ 104:

² Տե՛ս **Bybee J.**, Diachronic Linguistics // **Geeraerts D. and Cuyckens H.** (eds.), The Oxford Handbook of Cognitive Linguistics, Oxford University Press, 2007, Ch. 36, p. 958-959:

³ Տե՛ս **Bybee J., Beckner C.**, նշվ. աշխ., էջ 505-507:

փոխհարաբերություն հաստատել իմաստի և ձևի միջև¹: Բնչպես նկատում է Վ. Մայերթալերը, համահարթեցման միտումը հենվում է մարդկային ուղեղի կենսաբանորեն տրված նախապատվությունների վրա, քանի որ օբյեկտի կայունությունը (object constancy) դյուրացնում է ընկալման գործընթացը: Այդպես է նաև լեզվական կայուն (ոչ տարբերակային) արտահայտության դեպքում²: Ուստի ձևահնչւյթային հերթագայությունները, որոնք սովորաբար առաջանում են սկզբնական հնչյունափոխական հերթագայությունների հետագա քերականացմամբ ու բառայնացմամբ³, ընդհանուր առմամբ համաբանական համահարթեցման միտում են ցուցաբերում, մանավանդ եթե դրանք չեն ծառայում կարևոր քերականական հակադրությունների արտահայտմանը⁴: Նշենք նաև, որ ըստ դիագրամային պատկերագրայնության (diagrammatic iconicity) միտումի՝ որքան մեծ (էական) է լեզվական ձևերի միջև իմաստային հակադրությունը, այնքան սովորաբար մեծ է լինում նաև նրանց ձևային-ձևաբանական տարբերությունը և հակառակը⁵: Արդ, պատահական չէ, որ համաբանական համահարթեցումը ավելի հաճախ և ավելի մեծ չափով տեղի է ունենում ձևաբանական հարացույցի ներսում (այսինքն՝ իմաստով ավելի սերտորեն միմյանց հետ կապված ձևերի դեպքում), քան բառակազմական մակարդակում. հմմտ. Ժ. արևելահայ. եզ. ուղղ. *լույս*, եզ. սեռ. *լույս-ի*, եզ. բաց. *լույս-ից*, հոգ. ուղղ. *լույս-եր* (որտեղ *ույ/ու* հերթագայությունը վերացել է՝ *ույ*-ով ձևահնչւյթային տարբերակի համաբանական ընդհանրացմամբ), մյուս կողմից՝ *լույս* – *լուսավոր* (որտեղ նույն հերթագայությունը դեռ պահպանվում է): Արդի գրական արևելահայերենում շեշտափոխական հնչյունափոխությունների կանոնից շեղվող բազմաթիվ անհնչյունափոխ ձևերը և զուգաձևությունները⁶ ակնհայտորեն վկայում են, որ այդ հնչյունափոխական օրենքը գրական լեզվում այլևս չի գործում, և որ երբեմնի հնչյունափոխական հերթագայությունները, արդեն զգալիորեն քերականացված ու բառայնացված, շարունակաբար ենթարկվում են համաբանական համահարթեցման ընթացիկ (ongoing) միտումի ազդեցությանը: Ընդ որում՝ ձևահնչւյթային հերթագայությունները համեմատաբար լավ պահպանվել

¹ Տե՛ս **Hans Hock H.**, Principles of Historical Linguistics, 2nd ed., Berlin/New York, 1991, p. 235-237:

² Տե՛ս **Mayerthaler W.**, System-Independent Morphological Naturalness // **Dressler W. U., Mayerthaler W., Panagl O., Wurzel W. U.**, Leitmotifs in Natural Morphology, Amsterdam/Philadelphia, 1987, p. 49:

³ Տե՛ս **Bybee J.**, Formal Universals as Emergent Phenomena: the Origins of Structure Preservation // **Good J.** (ed.), Linguistic Universals and Language Change, Oxford University Press, 2008, p. 108-121:

⁴ Տե՛ս **Hans Hock H.**, նշվ. աշխ., էջ 168-169:

⁵ Տե՛ս **Bybee J.**, Frequency of Use and the Organization of Language, Oxford, 2007, Ch. 3, p. 41-44:

⁶ Հմմտ. **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1997, էջ 90-113, **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էդյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Երևան, 1979, էջ 129-144, **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում // «Վեմ», 2017, թիվ 1, էջ 132-145:

են բարձր կիրառահաճախություն ունեցող բառերի ձևաբանական հարացույցում, մինչդեռ ցածր կիրառահաճախությամբ բառերի ուղիղ ձևին բնորոշ ձևահնչությային տարբերակը (անհնչյունափոխ հիմքը) կա՛մ լիովին ընդհանրացել է հարացույցում, կա՛մ դեռևս շարունակվող զուգաձևության պարագայում արդեն ընկալվում է իբրև ավելի նախընտրելի ու կանոնիկ¹:

Իսկ արդի խոսակցական արևելահայերենում իբրև կապական խնդիր գործածվող անձնական դերանունների տրական հոլով/սեռական հոլով զուգաձևության առկայությունը (հմմտ. *մեզ մոտ/մեր մոտ, մեզ հետ/մեր հետ* են) պայմանավորված է համաբանական համահարթեցման և համաբանական ընդլայնման միտումների համատեղ գործողությամբ: Բնչպես հայտնի է, արդի հայերենում մի շարք կապեր (և կապական բառեր) պահանջում են սեռական հոլովով կապի խնդիր. հմմտ. *մեր մասին, իմ մասին, քո մասին, իմ նկատմամբ, մեր նկատմամբ, ձեր նկատմամբ* են: Իսկ այլ կապեր (և կապական բառեր) պահանջում են տրական հոլովով կապի խնդիր, ինչպես՝ *մեզ նման, ինձ նման, ձեզ նման, ինձ պես, քեզ պես, ձեզ պես, ինձ հետ, քեզ հետ, մեզ հետ* են: Մյուս կողմից՝ որոշ կապեր և կապական բառեր, որոնք հոլովվում են, ուղիղ ձևով գործածվելիս ստանում են տրական հոլովով, իսկ թեք հոլովաձևերով գործածվելիս՝ սեռական հոլովով կապի խնդիր. հմմտ. *մեզ մոտ, քեզ մոտ, բայց՝ մեր մոտից, մեր մոտով, քո մոտից, քո մոտով, ինձ վրա, քեզ վրա, բայց՝ իմ վրայից, քո վրայից, իմ վրայով, քո վրայով* են: Վերջապես կան նաև այնպիսի կապեր ու կապական բառեր, որոնք թեն հոլովվում են, այդուհանդերձ միշտ ստանում են սեռական հոլովով կապի խնդիր. հմմտ. *մեր մեջ, քո մեջ, իմ մեջ, մեր միջից, քո միջից, իմ միջից, մեր տակ, քո տակ, ձեր տակ, մեր տակից, քո տակից, ձեր տակից, մեր տակով, քո տակով, ձեր տակով* են: Եվ քանի որ լեզվական ձևի ոչ տարբերակային արտահայտությունը, ինչպես նշվեց, դյուրացնում է ընկալման գործընթացը, իսկ տարբերակայնությունը՝ դժվարացնում այն, ուստի լեզուն փորձում է համաբանական համահարթեցման միտումի օգնությամբ ազատվել կապական խնդրի հոլովահիմքային տարբերակայնությունից: Մանավանդ որ տվյալ տարածական հարաբերության արտահայտման հարցում այդ տարբերակայնությունը որևէ դեր չի խաղում, այլ համապատասխան իմաստը դրսևորվում է միայն առկա կապի կամ կապական բառի միջոցով: Ընդ որում՝ թեն *մեզ մոտ, քեզ մոտ - մեր մոտից, մեր մոտով, քո մոտից, քո մոտով, քեզ վրա - քո վրայից, քո վրայով* և նման ձևերի պարագայում ներհարացույցային համաբանական համահարթեցումը սկզբունքորեն կարող է ընթանալ երկու ուղղությամբ (հմմտ. մի կողմից՝ *մեր մոտ, քո մոտ, քո վրա, ձեր վրա* և այլն սեռականի հիմքի ընդհանրացմամբ, մյուս կողմից՝ ավելի սակավադեպ *մեզ մոտից, մեզ մոտով* տրականի հիմքի ընդհանրացմամբ ձևերը), այդուհանդերձ համաբանական ընդլայնման միտումը

¹ Տե՛ս **Ավետյան Ս.**, Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն) // «ՀՀ», 2020, թիվ 2, էջ 206-219:

վճռորոշ դեր է խաղում այդ համաբանական փոփոխության հիմնական ուղղվածության (այն է՝ սեռականի հիմքի ընդհանրացման) հարցում: Մասնավորապես՝ հոլովվող և միշտ սեռական հոլովով խնդիր պահանջող կապերին և կապական բառերին բնորոշ ձևաբանական օրինաչափությունը (*մեր մեջ, քո մեջ – մեր միջից, քո միջից* են) համաբանական ընդլայնմամբ տարածվում է տրական/սեռական գուգաձև խնդիր պահանջող կապերի ու կապական բառերի վրա (այսինքն՝ *մեզ մոտ, քեզ մոտ – մեր մոտից, մեր մոտով, քո մոտից, քո մոտով* >> *մեր մոտ, քո մոտ – մեր մոտից, մեր մոտով, քո մոտից, քո մոտով* են): Ինչ խոսք, այդ համաբանական փոփոխության շնորհիվ սեռականաձև կապական խնդրի տիպային հաճախականությունը նկատելիորեն մեծանում է տրականի նկատմամբ, և սեռականաձև խնդիրը դառնում է առավել կենսունակ օրինաչափություն: Այս հանգամանքն էլ իր հերթին նպաստում է սեռական հոլովի հետագա ընդհանրացմանը նաև չհոլովվող և տրականաձև խնդիր պահանջող կապերի դեպքում (*մեզ հետ, ձեզ հետ, ինձ նման, քեզ նման* >> *մեր հետ, ձեր հետ, իմ նման, քո նման* են): Եվ քանի որ համաբանական փոփոխությունները լեզվական երևույթների մտածական արտացոլումների կարգադասման մեջ կատարվող տեղաշարժեր են, որոնք լեզվական մակարդակում դրսևորվում են տվյալ կենսունակ օրինաչափության համաբանական ընդհանրացմամբ¹, ապա սեռականաձև կապական խնդրի համաբանական ընդլայնման միտումը ևս բացատրելի է իբրև խոսողների գիտակցության մեջ կապերի խնդրառության օրինաչափությունների մտածական կարգերի միջև ընթացիկ տեղաշարժ (որի արդյունքում սեռականաձև խնդրառության տիրույթն ընդլայնվում է տրականաձև խնդրառության հաշվին և վերջինիս դուրսնումամբ):

Արդի արևելահայերենում համաբանական ընդլայնման միտումի և կիրառահաճախության հետևանքային ազդեցությունը կարելի է տեսնել նաև արգելական հրամայականի համաբանական-ձևաբանական փոփոխության մեջ, որի արդյունքում բուն հրամայականի բայահիմքը (այն է՝ աորիստի հիմքը) տարածվել է սկզբնապես ներկայի հիմքից կազմվող արգելական հրամայականի ձևերի վրա: Բայց եթե մինչև այժմ վերը դիտարկված համաբանական տեղաշարժերը ընթացքի մեջ գտնվող ինտենսիվ փոփոխություններ են (մեծաթիվ և հաճախ դեռևս շատ թե քիչ միմյանց համագորգ գուգաձևությունները դրա վառ ապացույցն են), ապա արգելական հրամայականի համաբանական փոփոխության գործընթացն արդեն գրեթե ավարտական փուլին է հասել: Ըստ խոսողների հետ մեր անցկացրած հարցումների և դիտարկումների՝ ներկայի հիմքից կազմված արգելականի ձևերը նոր համաբանական ձևերին գուգահետ դեռ գործածվում են և խորթ չեն հնչում հիմնականում միայն *ա* խոնարհման *-են-* և *-ան-* ածանցավոր բայերի դեպքում². հմմտ. *հեռանալ –*

¹ Տե՛ս **Bybee J., Beckner C.**, նշվ. աշխ., էջ 506-507:

² Հետազոտողները սովորաբար չեն անդրադառնում արդի արևելահայերենում *-են-* և *-ան-* ածանցավոր բայերի այդ առանձնահատուկ կարգավիճակին. կա մ նշվում են հիմնականում միայն բուն հրամայականի հետ նույնական հիմքից կազմված արգելականի ձևերը (տե՛ս,

մի՛ հեռացիր/մի՛ հեռանա, բարկանալ – մի՛ բարկացիր/մի՛ բարկանա, վախենալ – մի՛ վախեցիր/մի՛ վախենա, մոտենալ – մի՛ մոտեցիր/մի՛ մոտենա են: Մինչդեռ, ասենք, *-ն-* և *-չ-* ածանցավոր բայերի ներկայի հիմքից կազմված արգելականի ձևերը (հմմտ. *փախչել – մի՛ փախչիր, հասնել – մի՛ հասնիր* են) այսօր բավական խորթ են հնչում մեր ականջին և գրեթե չեն գործածվում այժմյան կանոնիկ *մի՛ փախիր, մի՛ հասիր* և այլն ձևերին զուգահեռ: Բայց առավել ուշագրավ է այն, որ հոգնակի թվում ներկայի հիմքից կազմված արգելականի ձևեր այժմ ընդհանրապես չեն գործածվում ոչ մի բայի (այդ թվում՝ *-են-* և *-ան-* ածանցավոր, ասենք՝ *հեռանալ – *մի՛ հեռանաք, բարկանալ – *մի՛ բարկանաք, մոտենալ – *մի՛ մոտենաք, վախենալ – *մի՛ վախենաք*) դեպքում: Կարծում ենք՝ դա բացատրելի է եզակիի և հոգնակիի կիրառահաճախության տեսանկյունից. բուն և արգելական հրամայականների բայահիմքային միասնականացման ընդհանուր միտումի պարագայում *-ան-* և *-են-* ածանցավոր բայերի ներկայի հիմքից կազմված արգելականի եզակի թվի ձևերը համեմատաբար բարձր կիրառահաճախության շնորհիվ դեռ պահպանվում են իբրև զուգաձևեր, մինչդեռ այդ նույն բայերի արգելականի հոգնակի թվի ձևերը, որոնք, անշուշտ, ավելի ցածր կիրառահաճախություն ունեն, արդեն լիովին փոխարինվել են համաբանական նոր ձևերով: Նկատենք նաև, որ *-ան-* ածանցավոր բայերը մեծաթիվ են, այսինքն՝ աչքի են ընկնում բարձր տիպային հաճախականությամբ, որը նույնպես սկզբունքորեն կարող էր նպաստել *-ան-* (և վերջինիս հետևողությամբ նաև *-են-*) ածանցավոր բայերի արգելականի եզակիում հնատիպ ձևերի պահպանմանը: Մինչդեռ, ասենք, *-ն-* և մանավանդ *-չ-* ածանցավոր բայերի տիպային հաճախականությունը բավական ցածր է¹: Մակայն կարծում ենք՝ ճիշտ չէր լինի տիպային հաճախականությանն այս դեպքում վճռորոշ դեր վերագրել, եթե հաշվի առնենք, որ թեև պատճառական բայերը դարձյալ բավական բարձր տիպային հաճախականություն ունեն, այդուհանդերձ դրանց արգելականի հնատիպ ձևերը (հմմտ. *հեռացնել – մի՛ հեռացնիր, զայրացնել – մի՛ զայրացնիր* են) այսօր նույնքան խորթ են հնչում և գրեթե չեն գործածվում, որքան *-ն-* և *-չ-* ածանցավոր բայերի համապատասխան ձևերը (հմմտ. *մի՛ հասնիր, մի՛ փախչիր* են):

Հետևաբար, արդի գրական արևելահայերենում բոլոր (այդ թվում՝ *-ան-* և

օրինակ, **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր արդի գրական արևելահայերենի ժխտական խոնարհման մի քանի կազմություններում // «ՀՀ», 2021, թիվ 3, էջ 200), կա՛մ ներկայի հիմքից արգելականի ձևեր են ներկայացվում նաև այլ կազմությամբ բայերի համար (հմմտ. **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011, էջ 29-35), կա՛մ էլ ներկայի հիմքից կազմված արգելականի բոլոր ձևերն անխտիր բնորոշվում են իբրև հնաբանություններ կամ հնաբանություններ դառնալու ճանապարհին գտնվող ձևեր (տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 329-330: Հմմտ. նաև **Ավետիսյան Յ., Դավթյան Մ.**, Արդի գրական արևելահայերենի ձևաբանական-բայական նորմը և գործող բուհական ձեռնարկները // «ՀՀ», 2021, թիվ 2, էջ 165-166):

¹ Տե՛ս **Ավետյան Մ.**, Արդի հայերենի ընթացիկ փոփոխություններից մեկը կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո, էջ 57-62:

-են- ածանցավոր) բայերի արգելականի հոգնակի թվում հնատիպ ձևերի՝ գործածությունից ընդհանրապես դուրս գալը բացատրելի է հոգնակիի ձևերի համեմատաբար ցածր կիրառահաճախության տեսանկյունից: Մնում է պարզել, թե ինչու հենց միայն *ա* խոնարհման -ան- և -են- ածանցավոր բայերն են եզակի թվում պահպանել ներկայի հիմքից կազմված արգելականի հնատիպ ձևերը՝ աորիստի հիմքից կազմված նոր համաբանական ձևերին զուգահեռ: Մենք հակված ենք կարծելու, որ տվյալ դեպքում վճռորոշ դեր է խաղացել *ա* խոնարհման պարզ բայերի համաբանական ազդեցությունը, որոնց արգելականի եզակի թվի ձևերը համաժամանակյա տեսանկյունից խոսողներին երկակի ձևաբանական վերլուծության հնարավորություն են ընձեռել. մի կողմից դրանք կարող էին ըմբռնվել իբրև անորոշ դերբայից -չ վերջավորության հեռացմամբ (այլ կերպ ասած՝ ներկայի հիմքից) կազմված ձևեր (հմմտ. *գնալ* – *մի՛ գնա*, *մնալ* – *մի՛ մնա*, *խաղալ* – *մի՛ խաղա* ևն), մյուս կողմից՝ արգելականի այդ ձևերը, համընկնելով բուն հրամայականի համապատասխան ձևերին, նաև կարող էին գիտակցվել իբրև վերջիններիս և *մի՛* ժխտական մասնիկի հարադրություն. հմմտ. *գնա՛* – *մի՛ գնա*, *մնա՛* – *մի՛ մնա*, *խաղա՛* – *մի՛ խաղա* ևն: Ի դեպ, համաբանական-ձևաբանական փոփոխությունների ուղղվածության հարցում կարևոր դեր ունի այն հանգամանքը, թե խոսողների գիտակցության մեջ քերականական ձևերն ինչպես են վերլուծության ենթարկվում, և նրանք ինչպես են ըմբռնում հարացույցի անդամների ձևաբանական փոխհարաբերությունը¹: Արդ, խոսողների գիտակցության մեջ *ա* խոնարհման պարզ բայերի արգելականի եզակի թվի ձևերի վերը նշված առաջին տիպի վերլուծությունը պետք է նպաստեր *ա* խոնարհման ածանցավոր բայերի ներկայի հիմքից նույն սկզբունքով (այն է՝ անորոշ դերբայից -չ վերջավորության հեռացմամբ) կազմված և նույնպիսի -*ա* հանգով արգելականի եզակի թվի ձևերի պահպանմանը (հմմտ. *հեռանալ* – *մի՛ հեռանա*, *բարկանալ* – *մի՛ բարկանա*, *մոտենալ* – *մի՛ մոտենա* ևն): Մյուս կողմից՝ խոսողների գիտակցության մեջ նույն *ա* խոնարհման պարզ բայերի վերոնշյալ երկրորդ տիպի վերլուծությունը պետք է նպաստեր *ա* խոնարհման ածանցավոր բայերի դեպքում ևս բուն հրամայականի հետ նույնական հիմքից կազմված արգելականի նոր համաբանական ձևերի առաջացմանը (հմմտ. *հեռանալ* – *հեռացի՛ր* – *մի՛ հեռացիր*, *բարկանալ* – *բարկացի՛ր* – *մի՛ բարկացիր*, *մոտենալ* – *մոտեցի՛ր* – *մի՛ մոտեցիր* ևն): Ըստ այդմ *ա* խոնարհման -ան- և -են- ածանցավոր բայերի արգելականի եզակի թվում թե՛ հնատիպ ձևերի պահպանվելը և թե՛ աորիստի հիմքից կազմված նոր ձևերի ի հայտ գալը համաբանական պայմանավորվածություն ունեն, մինչդեռ այդ նույն բայերի արգելականի հոգնակի թվում ներկայի հիմքից կազմված ձևերի՝ վերջնականա-

¹ Տե՛ս **Bybee J.**, Frequency of..., Ch. 3, p. 41-69, **Ավետյան Մ.**, Համաբանական փոփոխությունների երկու միտում արդի արևելահայերենի աորիստի հարացույցում (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն) // «ԲԵՀ. Բանասիրություն», 2020, թիվ 1, էջ 34-38:

պես գործածությունից դուրս գալը և հեշտությամբ փոխարինվելը առօրինակ հիմքից կազմված համաբանական նոր ձևերով պետք է բացատրել առհասարակ հոգնակիի ձևերի համեմատաբար ցածր կիրառահաճախությամբ:

Այսպիսով՝ վերը դիտարկված ձևաշարահյուսական երևույթների բուն էությունը բացատրվում և լիովին հասկանալի է դառնում մի շարք հոգեբանական դրդապատճառային գործոնների և մրցակից լեզվական միտումների լույսի ներքո, որոնք բոլորը բխում են առավել արդյունավետ հաղորդակցման պահանջից: Ընդ որում՝ տարբեր մրցակից միտումները կարող են ճնշել և սահմանափակել միմյանց գործողությունները: Արդ, կախված այն բանից, թե ո՞ր լեզվում կոնկրետ ո՞ր միտումին կամ ո՞ր գործոնին է տվյալ դեպքում նախապատվություն տրվում (հմմտ. խնայողության և բացարտահայտողության, արտահայտչականության միտումները որոշյալության ոչ հավելյալության և հավելյալության դրսևորման հարցում), ըստ այդմ՝ տարածամանակյա փոփոխությունների ուղղվածությունը և արդյունքում ձևավորվող համաժամանակյա լեզվական օրինաչափությունները կարող են տարբեր լինել ոչ միայն տարբեր լեզուներում, այլև նույն լեզվի տարածամանակային տարբեր դրսևորումներում (հմմտ. տարբերակված խնդրանշումը հին հայերենում և արդի արևելահայերենում): Իսկ երբեմն էլ տվյալ համաժամանակյա օրինաչափությունը ձևավորվում է տարբեր դրդապատճառային գործոնների և լեզվական միտումների համատեղ գործողության արդյունքում (հմմտ. կիրառահաճախության, համաբանական ընդլայնման միտումի և խոսողների գիտակցության մեջ համապատասխան ձևաբանական վերլուծության դերը արդի արևելահայերենում արգելական հրամայականի գործող օրինաչափությունների ձևավորման հարցում):

Սարգիս Ավետյան – Մրցակից լեզվական միտումների լույսի ներքո հայերենի որոշ ձևաշարահյուսական երևույթների բացատրման փորձ

Փաստարկվում է, որ հայերենի մի շարք ձևաշարահյուսական երևույթներ, որոնք դեռևս պատշաճ բացատրություն չեն ստացել ավանդական հայ լեզվաբանության շրջանակներում, բացատրվում են ճանաչողականորեն պայմանավորված մրցակից լեզվական միտումների և որոշակի հոգեբանական դրդապատճառային գործոնների լույսի ներքո: Ինչպես հայտնի է, քերականության և լեզվագործածության մեջ մրցակից դրադապատճառային գործոնների առկայության շնորհիվ այս կամ այն կոնկրետ տարածամանակյա փոփոխության ուղղվածությունը և դրա արդյունքում ձևավորվող համաժամանակյա ձևաշարահյուսական օրինաչափության հնարավոր ընտրությունը լեզվից լեզու կարող են տարբեր լինել: Ըստ այդմ՝ հայերենի համաժամանակյա և տարածամանակյա համապատասխան փաստերը թույլ են տալիս ավելի կամ պակաս չափով պարզել, թե մրցակից լեզվական միտումներից (և/կամ դրդապատճառային գործոններից) ո՞ր մեկն է վճռորոշ դեր խաղացել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Իսկ երբեմն էլ տվյալ համաժամանակյա օրինաչափությունը ձևավորվել է մի շարք դրադապատճառային գործոնների համատեղ ազդեցության արդյունքում, ինչպես, օրինակ, արդի արևելահայերենում որոշակի բայերի եզակի թվի արգելական հրամայականի գուգաձևությունների դեպքում:

Саргис Аветян – Попытка объяснения некоторых морфосинтаксических явлений армянского языка в свете конкурирующих языковых тенденций

Ключевые слова – конкурирующие языковые тенденции, мотивирующие факторы, направленность диахронического изменения, синхронная морфосинтаксическая закономерность, дублетные формы запрительно-повелительного, современный восточноармянский язык, языковое употребление, совместное воздействие, армянское языкознание.

В статье аргументируется, что некоторые морфосинтаксические явления армянского языка, которые пока не получили надлежащего объяснения в рамках традиционного армянского языкознания, объясняются в свете когнитивно-мотивированных конкурирующих языковых тенденций и определенных психологических мотивирующих факторов. Как известно, ввиду присутствия конкурирующих тенденций в грамматике и в языковом употреблении, направленность конкретного диахронического изменения и возможный выбор результирующей синхронной морфосинтаксической закономерности могут отличаться в разных языках. Поэтому соответствующие синхронные и диахронические данные армянского языка позволяют нам в большей или меньшей степени определить, которая из конкурирующих языковых тенденций (и/или который из мотивирующих факторов) сыграла определяющую роль в каждом конкретном случае. Иногда совместное воздействие ряда мотивирующих факторов обуславливало появление данной синхронной закономерности, как, например, в случае с дублетными формами запрительно-повелительного наклонения некоторых глаголов единственного числа в современном восточноармянском языке.

Sargis Avetyan – An Attempt at Explaining Some Morphosyntactic Phenomena of the Armenian Language in the Light of Competing Linguistic Tendencies

Key words – competing linguistic tendencies, motivating factors, the directionality of a diachronic change, a synchronic morphosyntactic pattern, doublet forms of the Prohibitive, Modern Eastern Armenian, usage, joint effect, Armenian linguistics.

It is argued that some morphosyntactic phenomena of the Armenian language, which have not yet received due explanation within the frameworks of the traditional Armenian linguistics, are accounted for in the light of cognitively motivated competing linguistic tendencies and certain psychological motivating factors. As it is well-known, due to the presence of the competing motivations in grammar and usage, the directionality of a particular diachronic change and the eventual choice of the resulting synchronic morphosyntactic pattern may vary across languages. Accordingly, the relevant synchronic and diachronic evidence of the Armenian language allows us to determine to a greater or lesser extent which of the competing linguistic tendencies (and/or of the motivating factors) has been decisive in each particular case. Sometimes, the joint effect of a number of motivating factors is responsible for the appearance of the given synchronic pattern as is the case, for example, with the doublet forms of the Prohibitive singular of certain verbs in Modern Eastern Armenian.

Ներկայացվել է 03.05.2022

Գրախոսվել է 10.05.2022

Հաստատվել է տպագրության 24.06.2022

Սարգիս Ավետյան – ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ, քանասիրական գիտությունների թեկնածու (sargisavetyan@ysu.am)

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ
ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Բանալի բառեր – Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Մկրտիչ Խերան-
յան, Վազգեն Գևորգյան, բառապաշար, նորաբանություն, աշխարհաբար, բնագիր,
մեկնություն, համատեքստ, թարգմանական խնդիրներ*

Գրիգոր Նարեկացուց առաջ բանաստեղծության լեզուն շատ ավելի պա-
կաս բանաստեղծական էր, քան մեր պատմիչների լեզուն, և նա մեր բանաս-
տեղծներից առաջինն էր, որ ճոխ, փայլուն լեզվով գրելու գերազանցությունն
ընդօրինակեց պատմիչներից¹: Դժվար չէ նկատել, որ նաև հեղինակի բանաս-
տեղծական խոսքի վարպետության հետ են կապվել նրա պաշտամունքն ու
ժողովրդականությունը²: Նրա լեզուն կանոն ու կաղապար չի ընդունում.
ներքին տարերքով հեղինակը հաղթահարել է ավանդական բառաշերտերը և
ինքնարարիչ հղացմամբ գոյավորել իր «խորին խոսքը» բոլորովին նոր հո-
գևոր տարածքներում³: Արդեն գոյություն ունեցող բառերն ու արտահայտու-
թյունները կարծես չեն բավարարել նրան՝ իր խոսքն առավել զգայական ու
խորքային արտահայտելու համար, և նա ստեղծել է բոլորովին նոր բանար-
վեստ՝ **նորաբանություններ**՝ բառային գյուտեր, նորակազմություններ, բա-
ռաբարդումներ, բառ-պատկերներ:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության այս առանձնահատկությանն
են անդրադարձել նարեկացիագիտության երախտավորները⁴: Երեքուկես
հարյուրամյակ բոլոր հայ մատենագիրներն այս կամ այն չափով կրել են
Գրիգոր Նարեկացու լեզվի ազդեցությունը՝ օգտվելով ոչ միայն նրա կերտած
բառերից, այլև բառաստեղծման արվեստից⁵: Այդ բառաշխարհն իրենց
ստեղծագործության հոգևոր խորքին են ներհյուսել Ներսես Լամբրոնացին,
Ներսես Շնորհալին, Գրիգոր Մագիստրոսը և ոչ թե նրան կրկնելու համար,

¹ Տե՛ս Մկրյան Մ., Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 239-240:

² Տե՛ս Առաքելյան Վ., Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 231:

³ Տե՛ս Թամրազյան Հ. Հ., Նարեկյան դպրոցը, Երևան, 1999, էջ 108:

⁴ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., **Ղազինեան Ա.**, Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական
արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, **Թամրազյան Հ. Հ.**, նշվ. աշխ., **Միրզոյան Հ.**, Նարեկա-
ցիագիտական հետազոտություններ, Երևան, 2010:

⁵ Տե՛ս Միրզոյան Հ., նշվ. աշխ., էջ 272:

այլ պահպանելու նրանից սկզբնավորված բանաստեղծական արվեստի այդ էական հատկանիշը: Նրա նորաստեղծ բառերով են հարստացել հայ գրականության տողերը (*«Քո խենթ մարմնի սարսուռները երջանկության / Ախտաբորբոք արևներ են բոցավառում»* (Վ. Տերյան), *«Տոսախ սանտրով կը սանրեմ բուրդ աղվական»* (Դ. Վարուժան), *«Երբ ճամփաները դիակների տեղ / Բուրջան ծաղիկներ կփռեն շքեղ»* (Հովհ. Թումանյան)):

Նորաբանություններ կարելի է գտնել Գրիգոր Նարեկացու բոլոր ստեղծագործություններում, սակայն դրանք ճյուղավորվել ու տարածվել իրենց խտացումն ու թանձրացումն են գտել «Մատենանոց գրքերգութեան» եզակի երկում: Վ. Առաքելյանի վկայակոչմամբ՝ սույն երկում, ըստ «Նոր բառգիրք հայկազյան լեզուի» բառարանի տվյալների, Գրիգոր Նարեկացին գործածել է 700-750 նորաբանություն¹, Հ. Միրզոյանի քննությամբ՝ 820², Գ. Մանուկյանի համոզմամբ դրանց թիվը 37-ով ավելի է³: Կարծում ենք, որ այս բառացանկը կարիք ունի ճշգրտման: Այդ բառերի մի մասը ժամանակի ընթացքում դուրս է եկել գործածությունից՝ պայմանավորված լեզվի զարգացման պատմական օրինաչափությամբ, այլ բառերի հետ ընդհանրությամբ, միջնադարյան մտածողությամբ ու կրոնական բնույթով (*անձնանէծ, բազմաւաղելի, աղերսաբանել, տիրանուէր, ազատագնեայ, արջնաթոյր, այսական, յայրատատես, մոլորապատիր, ընդունայնաթոպ*): Իսկ մյուսներն այնքան կիրառելի են դարձել, որ դժվար է անգամ պատկերացնել, որ դրանք Գրիգոր Նարեկացուն են պատկանում (*բազմաբուրեան, համաճարակ, գիսախորի, ոգեկործան, պչրութիւն, մշտաբորբոք, բանահիւս, բարեխնամ, բանաստեղծութիւն*):

Որքան հարուստ ու բազմաձև է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության բառապաշարը, այնքան դժվար է այն թարգմանելը: Հեղինակի բառապաշարի հարստության, ինչպես նաև դրանից բխող թարգմանական դժվարություններին են անդրադարձել անգամ օտար թարգմանիչները: Նրանցից ֆրանսիացի բանաստեղծ և թարգմանիչ Լյուկ-Անդրե Մարսելը «Մատենանի» մի քանի հատվածի թարգմանությունից հետո նկատել է՝ ֆրանսերենը մնում է ապշահար Գրիգոր Նարեկացու բառապաշարի ճոխության հարաբերությամբ⁴: Ոչ միայն օտար թարգմանիչների համար էր դժվար գտնել նրա բառերի, արտահայտությունների համարժեքները ֆրանսերենում, ռուսերենում, անգլերենում, իտալերենում և այլ լեզուներում, այլ նաև՝ գրաբարից աշխարհաբար թարգմանողների: Աշխարհաբարի թարգմանիչներ Մկրտիչ Խերանյանն ու Վազգեն Գևորգյանը «Մատենանը» թարգմանելիս նույնպես բազմաթիվ բարդությունների առջև են կանգնել: Սա բացատրվում է նրանով, որ թարգմանության ժամանակ նույն լեզվի երկու տարբերակների միջև իմաս-

¹ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 42:

² Տե՛ս Միրզոյան Հ., նշվ. աշխ., էջ 165:

³ Այս հարցի մասին մանրամասն տե՛ս http://ysu.am/files/08G_Manukyan.pdf:

⁴ Տե՛ս Marcel L.-A., Grégoire de Narek et l'ancienne poésie arménienne, Paris, 1953, p. 19-36:

տային, նրբերանգային ու ոճական տարբերությունները ոչ պակաս դժվարությամբ են հաղթահարվում, քան տարբեր լեզուներում եղածները: Այս հարցին են անդրադարձել թարգմանության տեսաբանները. նրանցից Յու. Նայդայի իրավացի դիտարկմամբ՝ ցեղակից կամ մոտ լեզուներում բնագրի և թարգմանվող լեզվի քերականական ու մշակութային տարբերությունների աննկատ լինելն ամեննին չի նշանակում, թե թարգմանության ժամանակ քիչ խնդիրներ են առաջանում¹:

Նորաբանություններով են հարուստ «Մատեանի» բոլոր հատվածները, սակայն դրանցով առավել հագեցած են ԽԸ, ՂԲ, ՂԳ գլուխները: Հ. Միրզոյանի ուսումնասիրությամբ՝ ՂԲ գլխի նորաստեղծ բառերի թիվն անցնում է 50-ից, իսկ ՂԳ գլխինը՝ 100-ից²: Այդ գլուխները Խերանյանն ու Գևորգյանը չեն ընդգրկել իրենց թարգմանություններում: Հետևաբար բնագրում և թարգմանություններում դիտարկել ենք հատկապես ԽԸ գլխի նորաբանությունները:

«Մատեանի» նորաբանությունները նոր էին ոչ միայն ձևով, այլև իմաստով, և հաճախ դրանց իմաստից է կախված ամբողջ հատվածի բովանդակությունը: Նշանակում է՝ դրանց ճիշտ թարգմանությունը կարևոր է ոչ միայն բնագիրը գեղագիտորեն արտահայտելու, այլև բովանդակությունը փոխանցելու առումով: Այսպիսին է «Մատեանի» Է գլխի «*մահողկուզեան*» նորակազմությունը, որ գործածվել է՝ «*թունավոր պտուղ տվող ծառերի*»³ իմաստով («*Բարունակս ապականաբեր է մահողկուզեան*»⁴): «Մատեանի» թարգմանությունների քննությունից, ինչպես նաև թարգմանիչների վկայություններից ակնհայտ է, որ իրենք անդրադարձել են մեկնություններին, ինչպես նաև ինքնուրույն, հենց թարգմանության ընթացքում յուրովի մեկնություններ կատարել: «Մատեանի» թե՛ միջնադարյան մեկնիչները և թե՛ XVIII-XIX դարերի հեղինակներ Հ. Նալյանն ու Գ. Ավետիքյանը իրենց մեկնություններում անդրադարձել են նաև Գրիգոր Նարեկացու բառակերտումներին:

«*Մահողկուզեան*» բառի համար միջնադարյան մեկնիչը տալիս է հետևյալ բացատրությունը՝ «...այլ էս խաղող մահաբեր, զոր ասեն, թե յԵկպատան, որ է Ամեդի, հայնց խաղող կայ, որ թե մարդ ուտէ, մեռանի»⁵: Թարգմանիչներն այն նույնությամբ պահպանել են:

Այսպիսին է նաև ԻԸ գլխի «*քստմնավուշ*» բառը («*Եւ յիշատակաւ հար-*

¹ Տե՛ս **Найда Ю.**, «К науке переводит» // Лингвистические аспекты теории перевода (хрестоматия), Ереван, 2007, с. 12:

² **Միրզոյան Հ.**, նշվ. աշխ., էջ 166:

³ Տե՛ս **Խաչատրյան Պ.**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1995, էջ 341:

⁴ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Խաչատրյան Պ. և Ղազինյան Ա., Երևան, 1985, էջ 272: «Մատեանի» բնագրի հատվածները մեջբերել ենք այս հրատարակությունից (այսուհետև՝ «Մատեան» և էջը):

⁵ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հ^մ 5650, 339ա: Հմմտ. **Նալեան Յ.**, Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 72:

ման հեղուսիցն / **Քստմնափուշ**, տաժանատեսիլ ողեսպահանջից, / Որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին», «Մատենան», 358): Դրանով, ըստ Հ. Նալբանի, հեղինակն ակնարկել է այն բնեռները, որոնցով Միածինն գամել են «յաշտարակ խաչին», այն է՝ խաչափայտին¹: Գ. Ավետիքյանը «քստմնափուշ»-ը հասկացել է «քստմնեցուցիչ, փուշ-փուշ ընող» իմաստով², միջնադարյան մեկնիչն այն բացատրել է «սոսկալի փուշ. զբնեռքն ասէ հոգեկան»³: Խերանյանը, այն նույնությամբ արտահայտելով, չի փոխանցել բառի բնագրային իմաստը («Հիշելով հարվածները **քստմնափուշ**, ժանտատեսիլ և մահառիթ այն բնեռների, / Որոնցով գամվեց միածինը քո խաչի աշտարակի վրա՝ թող չարը ցավի գա»⁴): Գևորգյանը թարգմանել է առավել հասկանալի՝ «սահմոկեցուցիչ», «դժխեմ» իմաստով («Հիշատակելով այն տաժանատեսիլ, / **Սահմոկեցուցիչ, դժխեմ, մահառիթ** / Հեղուսահարման, որով բնեռվեց / Խաչաշտարակին միածինը քո»⁵): Այս հատվածի թարգմանության համար կարևոր է նաև «ողեսպահանջ» բառի ճիշտ ընկալումը («Որ պահանջէ զհոգին կամ բաժանէ ի մարմնոյ և մահառիթ, հոգին ուզող առնող՝ հանող»⁶), որը թարգմանություններում փոխարինվել է աշխարհաբարում ավելի հասկանալի «մահառիթ» համարժեքով:

Նկատելի է, որ նույնանման թարգմանությունները հնարավորություն չեն ընձեռել ընթերցողին հասկանալ դրանց իմաստը, քանի որ «յուրաքանչյուր լեզվում կան բազմաթիվ յուրահատուկ դարձվածքներ, որոնք իրենց տեղում թեև գեղեցիկ, պարզ, արտահայտիչ և պատշաճ են թվում դրանք գործածողների համար, բայց երբ նույն բառերով այլ լեզու են փոխադրվում, չեն արտահայտում մտքի բովանդակությունը»⁷: Թարգմանիչները, անշուշտ, կանգնել են բարդ խնդրի առջև՝ ինչպես թարգմանել կամ հասկանալի ձևով ներկայացնել դրանք: Այսպիսի օրինակների թարգմանությանը վերաբերող տարբեր տեսությունների է անդրադարձել Մ. Ջանփոլադյանը՝ նշելով, որ մի

¹ Տե՛ս **Նալեան Թ.**, նշվ. աշխ., էջ 208:

² Տե՛ս **Աւետիքեան Գ.**, Նարեկ աղօթից, համառոտ եւ զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ մի անգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելլուածով, Վենետիկ, 1827, էջ 141, ծնթ. 26:

³ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հ⁴ 5650, 366ա:

⁴ **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Խերանյան Մ., Երևան, 1960, էջ 123: Խերանյանի թարգմանության հատվածները մեջբերել ենք այս հրատարակությունից (այսուհետև՝ Խերանյան և էջը):

⁵ **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության. Տաղեր, թարգմանություն Գևորգյան Վ., Երևան, 1979, էջ 172: Գևորգյանի թարգմանության հատվածները մեջբերել ենք այս հրատարակությունից (այսուհետև՝ Գևորգյան և էջը):

⁶ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբաօր, Աւետիքեան Հ. Գ., Սիւրմէլեան Հ. Խ., Աւգերեան Հ. Ս., հ. երկրորդ, 2-Ֆ, ի Վենետիկ, 1837, էջ 50:

⁷ **Տեր-Պետրոսյան Լ.Հ.**, Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնությունը» և թարգմանության տեսության հարցերը V դարի հայ մատենագրության մեջ // «ՊԲՀ», 1982, թիվ 4, էջ 65:

մասի կարծիքով հնության ոգին պետք է պահպանել բառերի և շարահյուսական ձևերի միջոցով, որի հետևանքով չնայած կմթագնի ասածի իմաստը, սակայն հնարավորություն կտրվի ընթերցողին զգալ ժամանակային կտրվածքով հեռու գտնվող ստեղծագործությունը: Եվ հակառակը՝ ստեղծագործությունը պետք է լինի ընթերցողին հասկանալի լեզվով, իսկ հնության միջավայրի ստեղծման համար կարելի է օգտագործել այլ արտահայտչամիջոցներ¹:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության թարգմանական խնդիրներին է անդրադարձել նաև Խերանյանը՝ նշելով, որ ինքն իր թարգմանության մեջ ջանացել է պահպանել թե՛ գրաբարյան հոլովաձևերն ու դարձվածքները, թե՛ հեղինակին յուրահատուկ բառակազմություններն ու բառաբարդումները, որոնք ստեղծում են անհրաժեշտ կոլորիտ, համապատասխան համ ու հոտ²: Գրեթե նույն սկզբունքով է առաջնորդվել նաև Գևորգյանը: Եվ մեր դիտարկած նորաբանությունների մեծ մասը թարգմանիչները նույնությամբ են արտահայտել, քանի որ հնարավորություն չեն ունեցել դրանց իմաստն ամբողջությամբ ընկալելի դարձնել մեկ այլ բառով (*սահագնատեսիլ, անձնանէծ, դժուարակութ, երկայնամիտ, մարգարեաճառ, քարաձգութիւն, հայրատյաց, մոլորապատիր, դժնէատեսիլ*):

Այսպիսի բառերի՝ տվյալ համատեքստում ունեցած նշանակությունը երբեմն կախված է լինում լայն համատեքստից, այն է՝ նախորդող և հաջորդող նախադասություններից կամ նույնիսկ մի ամբողջ պարբերությունից: Այդ կախվածությունն ակնհայտ է դառնում, երբ հարևան տողերում կամ նախադասություններում հանդիպում են տվյալ բառին կամ բառակապակցությանը մոտ հոմանիշներ, և թարգմանիչը խնդիրը լուծում է՝ թարգմանվող լեզվում նմանատիպ հոմանիշներ գտնելով³: «Մատենաի» թարգմանիչները նույնպես որոշ հատվածներում առաջնորդվել են այս սկզբունքով և թարգմանել են.

ա) *Հոմանիշով, որը մոտ էր բառի հիմնական իմաստին՝ առանձին վերցրած («Հանապազասխալ», «Մատենան», 435-«մշտասխալ», Խերանյան, 203, «ակնայայրատ», «Մատենան», 435-«հայրատահայաց», Գևորգյան, 281, «տիրանուէր», «Մատենան», 256-«նվիրյալ», Գևորգյան, 22, «անձնավաճառ», «Մատենան», 246-«ինքնավաճառ», Գևորգյան, 281, «ապաջան», «Մատենան», 251-«իզուր, ապարդյուն», Խերանյան, 7-«զրաջան», Գևորգյան, 14, «զգայազիրկ», «Մատենան», 329-«զգայազուրկ», Խերանյան, 91-«անզգա», Գևորգյան,*

¹ Տե՛ս **Джанполадян М.,** Н. Гребнев-Переводчик «Книги Скорби» Григора Нарекаци // «Когда строку диктует чувство...», Ереван, 2006, с. 144:

² **Գրիգոր Նարեկացի,** Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Խերանյան Մ., էջ XXXIV:

³ Տե՛ս **Рецкер Я.,** «Основы теории закономерных соответствий» // Лингвистические аспекты теории перевода (хрестоматия), Ереван, 2007, с. 84:

129, «**յոզնատիտ**», «Մատեան», 435-«**բազմատիտ**», Գևորգյան, 281, «**մշտագիշեր**», «Մատեան», 308-«**հավերժագիշեր**», Գևորգյան, 98, «**զայրացուցանող**», «Մատեան», 435-«**վրդովիշ**», Գևորգյան, 281, «**հեղագեղոց**», «Մատեան», 435-«**ծուլլերի**», Խերանյան, 203):

բ) *Օգտագործել են տվյալ համատեքստում ունեցած իմաստին մոտ բառեր* («**սաստկակսկիծ**», «Մատեան», 436-«**դառնակսկիծ**», Գևորգյան, 285, «**սեղանանենգ**», «Մատեան», 432-«**հացանենգ**», Գևորգյան, 276, «**վնասապարտ**», «Մատեան», 432-«**հանցապարտ**», Գևորգյան, 276, «**ազդարան**», «Մատեան», 477-«**ներշնչարան**», Խերանյան, 25):

գ) *Ամբողջական արտահայտությամբ* («**զուգագործ**», «Մատեան», 301-«**նույն բանը անող**», Խերանյան, 60, «**զերաշխարան**», «Մատեան», 436-«**հույժ աշխարող**», Խերանյան, 204, «**զուգաձայնություն**», «Մատեան», 436-«**միաբան ձայնակցություն**», Խերանյան, 207, «**նախապարգել**», «Մատեան», 285-«**նախապես իրեն պարզենած**», Խերանյան, 43):

դ) *Պատկեր-արտահայտությամբ, քանի որ բառաբարդումների մի զգալի մասը չկա արդի հայերենում* («**հանապազասխալ**», «Մատեան», 435-«**մշտասխալ ու թյուր**», Գևորգյան, 281, «**անկերպաուր**», «Մատեան», 300-«**տարտամ ու անմիտ**», Գևորգյան, 86, «**յոզնահոսան**», «Մատեան», 436-«**հորդ ու բազմաբուխ**», Գևորգյան, 285):

Մինչդեռ բնագրի նորաբանություններն առավել ընկալելի են դարձել, երբ թարգմանիչները դրանք արտահայտել են.

ա) *Բառի ժամանակակից ընկալմամբ*: Այդպիսին է «Մատեանի» «**սերմանի**» բառաձևը, որը «սերմանիք» (սերմեր) ձևի եզակին է¹ («**Ձի եթէ փոքու սերմանի գոյի / Հատի մանանիոյ չափոյ նուաստի հաւատք / Զլերանց մեծութիւն փոխէ զարեղապէս ի սիրտս ծովու**», «Մատեան», 283): Գ. Ավետիքյանը «**սերմանի**» բառաձևը մեկնել է՝ «**ածանցական՝ ի մասնկամբ ի սեռականէ բառին սերմն՝ որպէս ի բառէն կենդան ածանցի կենդանի, ըստ այսմ՝ ասեմք Ամարանի, Գարնանի, Աներևակի**»²: Խերանյանն այն թարգմանել է՝ «**հատիկ**», իսկ Գևորգյանը՝ «**սերմնահատ**» («**Ձի մանանեխի ամենափոքրիկ հատիկի չափով հավատքը եթէ / Կարող է ծովի խորքը փոխադրել մեծամեծ լեռներ**», Խերանյան, 41 // «**Բսկապէս, եթէ մանանեխի մի/ Փոքրիկ, աննշան սերմնահատի չափ/ Հավատն անվրէպ կարող է ծովի, / Խորքը փոխադրել մեծամեծ լեռներ**», Գևորգյան, 60):

Բառի ժամանակակից բացատրությամբ է թարգմանվել նաև «**զողողակ**» բառը, որ նշանակում է՝ «**ողողեալն ի խորս ջրոց**»³, «**ջրի մեջ ողողված, լողա-**

¹ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 996, ծնթ. 11:

² Տե՛ս Աւետիքեան Գ., նշվ. աշխ., էջ 49, ծնթ. 10:

³ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, էջ 508:

ցող, ջրի տակ սուզվող»¹ («Քանզի յաւետ սիւալեալ անկայ, / Իբրեւ **գողողակ** մթային ոչ ընտելական / Ի խաղբս մահու անզգայապէս», «Մատենան», 464): Գ. Ավետիքյանն այն մեկնել է՝ «լողացող»՝ «թէ՛ մարդ իցէ, և թէ՛ ձուկն»²: Թարգմանիչներն արտահայտել են ավելի ընկալելի՝ «սուզակ», «ջրասույզ» համարժեքներով («Քանզի սիւալվելով սաստիկ, ինչպէս խալարին անընտել **սուզակ**, / Անզգայապէս ես ինքս մահվան ծուղակը ընկա», Խերանյան, 237) // «Քանզի մի անփորձ, մթան անընտել **ջրասույզի** պէս, / Սաստիկ մոլորված, չզգալով՝ ընկա ծուղակը մահվան», Գևորգյան, 329):

բ) Հեղինակի ասելիքին ծանոթ լինելով կամ համատեքստի ընդհանուր իմաստից էլնելով: Գրիգոր Նարեկացին կյանքի միօրինակությանն ու ուրախության անցողիկությանն է անդրադարձել «Մատենանի» ինչպէս տարբեր հատվածներում, այնպէս էլ՝ ԾԷ գլխի նշված տողում («Կեանք՝ առաւրեայք, եւ **զմբաղք**՝ սակաւաւորք», «Մատենան», 465):

«Զմբաղք»-ը, որ նշանակում է՝ «զբաղումն սաստիկ կամ տատամսեցուցիչ, ծանր հոգ տազնապիչ, ցնորումն յերեսաց նեղութեանց, ըստ յն. չարիք և մանուած»³, «ծանր հոգս, նեղութիւն, մտատանջութիւն, չարիք»⁴, «հոգ, մտատանջութիւն, շուարումն»⁵, ունի նաև «զվարճանալ» և «զբոսնել» իմաստները⁶: Այսպիսի բառերի թարգմանության ժամանակ թարգմանիչները նկատի են ունեցել նաև հեղինակի մտադրությունը և ընդգծված բառն իրավացիորեն թարգմանել են «զվարճություն» («Կյանքս է միօրյա, և **զվարճութունները**՝ վաղանց», Խերանյան, 238 // «Կյանքս՝ կարճօրյա, **զվարճություններս**՝ աննշան, չնչին», Գևորգյան, 331):

Այսպիսով, «Մատենան ողբերգութեան» երկի բառաշխարհի ամբողջ բազմիմաստությունն աշխարհաբարով արտահայտելու համար բավարար չէ միայն գրաբարի ու աշխարհաբարի իմացությունը: Ինչպէս բնագրի բառապաշարին հատուկ այլ առանձնահատկությունների՝ նույն բառի տարբեր իմաստային գործածությունների, միջնադարյան մտածելակերպին բնորոշ արտահայտությունների, այնպէս էլ նորաբանությունների թարգմանության համար թարգմանիչները ներթափանցել են հեղինակի ժամանակաշրջանի, կենցաղի, սովորույթների, մտածողության և դրանք պատկերող բառ-պատկերների ու խորհրդանիշների աշխարհ: Գրիգոր Նարեկացու բանարվեստը հնարավորինս ճիշտ և ընկալելի արտահայտելու համար դիմել

¹ Տե՛ս **Մալխասեանց Մտ.**, Հայերէն բացատրական բառարան, չորս հատորում, Կ. Երրորդ, Հ-Ռ, Երևան, 1944, էջ 556:

² Տե՛ս **Աւետիքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 285, ծնթ. 10:

³ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. առաջին, Ա-Կ, ի Վենետիկ, 1836, էջ 739:

⁴ Տե՛ս **Մալխասեանց Մտ.**, նշվ. աշխ., Կ. երկրորդ, Զ-Կ, Երևան, 1944, էջ 27:

⁵ Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայերէն արմատական բառարան, Կ. Բ, Ե-Կ, Երևան, 1973, էջ 99:

⁶ Տե՛ս Բառգիրք հայկազեան լեզուի, որ է երկասիրութիւն Փեշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի, Կ. Ա, Ա-Կ, ի Կոստանդնուպօլիս, 1844, էջ 400:

են նաև Սուրբ Գրքի և բառարանների օգնությամբ, նկատի ունեցել նախորդ թարգմանությունները, իսկ երբեմն կողմնորոշվել մեկնությունների բացատրություններով: Թարգմանիչներին տարբեր հատվածներում առավել կամ պակաս չափով է հաջողվել արտահայտել «Մատեանի» բառապաշարի ամենաէական առանձնահատկությունը: Նկատելի է, որ նորաբանությունների զգալի մասը նույնությամբ կամ հոմանիշով է արտահայտվել թարգմանություններում, իսկ մյուսները՝ Խերանյանը թարգմանել է ամբողջական արտահայտությամբ, Գևորգյանը՝ պատկեր-արտահայտությամբ: Հեղինակի բառաստեղծման հնարքները օրինակների մեծ մասում Խերանյանը պահել է՝ փորձելով մոտ մնալ բնագրին, և միայն առանձին դեպքերում են հանդիպում այլակերպ թարգմանություններ: Գևորգյանը բանաստեղծական չափը պահելու նպատակով նախընտրել է ընդհանուր իմաստը և բառերի մեծ մասը թարգմանել հոմանիշով կամ նոր բառերի հավելումով:

Անուշ Ապրեսյան – Նորաբանությունները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում և աշխարհաբար թարգմանություններում

Հոգվածում մանրամասն քննության են առնվում այն նորաբանությունների թարգմանությունները, որոնք Գրիգոր Նարեկացին գործածել է իր «Մատեան ողբերգութեան» երկում: Մկրտիչ Խերանյանի և Վազգեն Գևորգյանի թարգմանությունների օրինակով փորձ է արվում ուսումնասիրել՝ ինչպես են թարգմանիչներն ընկալել և ժամանակակից հայերենով մեկնաբանել ու վերարտադրել միջնադարյան ստեղծագործության նորաբանությունները, ինչ խնդիրներ են դրանք դրել թարգմանչի առջև, և դրանց լուծման ինչպիսի մեթոդներ ու եղանակներ են ընտրվել: Հաճախ նորաբանությունների իմաստից է կախված ամբողջ հատվածի բովանդակությունը. նշանակում է՝ դրանց ճիշտ թարգմանությունը կարևոր է ոչ միայն բնագիրը գեղագիտորեն արտահայտելու, այլև՝ բովանդակությունը փոխանցելու համար: Հոգվածում ուշադրություն է դարձվում նորաբանությունների թարգմանության համար շատ կարևոր համատեքստին, թարգմանվող երկի ստեղծման ժամանակաշրջանին, հեղինակի մտադրությանը, քանի որ դրանցից կախված տարբեր են լինում բառերի նշանակությունները: Անդրադարձ է կատարվում նաև բնագրի նորաբանությունների, դրանց տարատեսակ մեկնությունների ու թարգմանությունների փոխառնչությունների վերլուծությանը:

Ануш Апресян – Неологизмы в книге «Скорбные песнопения» Григора Нарекаци и в переводах на современный армянский язык

Ключевые слова – Григор Нарекаци, «Книга скорбных песнопений», лексика, неологизм, Мкртич Херанян, Вазген Геворкян, современный армянский язык, оригинал, интерпретация, контекст, проблемы перевода

В данной статье детально анализируются переводы неологизмов, которые Григор Нарекаци использует в своем произведении «Книга скорбных песнопений». На примере переводов Мкртича Хераняна и Вазгена Геворкяна предпринимается попытка изучить,

как переводчики воспринимают, интерпретируют и воспроизводят на современном армянском языке неологизмы средневекового произведения, с какими проблемами сталкиваются при переводе и какие используют методы для их решения. Часто содержание целого отрывка зависит от смысла неологизмов, а это означает, что их правильный перевод важен не только для эстетического восприятия оригинала, но и для понимания его содержания. В статье особое внимание уделяется контексту, времени создания переводимого произведения, замыслу автора, так как в зависимости от этих факторов неологизмы приобретают разные значения. Здесь же рассматривается взаимодействие неологизмов оригинального текста, их различных интерпретаций и переводов.

Anush Apresyan – *The Neologisms in the “Book of Lamentation” of Grigor Narekatsi and in Modern Armenian Translations*

Key words – Grigor Narekatsi, Book of Lamentation, vocabulary, neologism, Mkrtych Kheranyan, Vazgen Gevorgyan, Modern Armenian, original, interpretation, context, problems of the translation

This article analyzes in detail the translations of neologisms of Grigor Narekatsi used in his work Book of Lamentation. On the example of Mkrtych Kheranyan’s and Vazgen Gevorgyan’s translations an attempt is made to study how translators perceive, interpret and reproduce neologisms of the medieval work in Modern Armenian, what problems they encounter while translating the text and what solutions they offer. Often the content of the whole passage depends on the meaning of neologisms, which means that their correct translation is important not only for the aesthetic expression of the original, but also for the transmission of its content. Special attention is paid to the context, the time of creation of Narekatsi’s work, the author’s idea, since the words acquire different meanings depending on these factors. The article also examines the interaction of the neologisms of the original text and its various interpretations and translations.

Ներկայացվել է 25.03.2022

Գրախոսվել է 27.04.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022

Անուշ Ապրեսյան – Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու (An-Apresian@mail.ru)

ՀԱՊԱՐԱՇՈՒՄՆԵՐ

**ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ,
ԼՍՍԻՆԵ ՏԱԱԿՅԱՆ,
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԱԲԱՐՅԱՆ**

«ГРАММАТИКА КЫПЧАКСКОГО ЯЗЫКА», ВКЛЮЧЕННАЯ В АРМЯНСКИЙ МАНУСКРИПТ (МАТЕНАДАРАН, РУК. № 3522), СОЗДАННЫЙ ВО ЛЬВОВЕ В XVII ВЕКЕ

***Ключевые слова** – Дешт-и-Кыпчак, Северная Евразия, армянографические кыпчакоязычные манускрипты, армяно-казахские культурные связи, религиозная толерантность, история тюркских языков*

Многовековое сотрудничество, культурное взаимообогащение армян и других народов Северной Евразии корнями врастают в историю Дешт-и-Кыпчака, которой присущи такие уникальные традиции национальной и религиозной толерантности, которые трудно найти в средневековой истории Западной Европы. Всестороннее изучение феномена армянографических кыпчакоязычных памятников, которые также свидетельствуют о многогранном взаимодействии и взаимообогащении евразийских народов, актуальны для освещения широкого спектра задач, которые предстоит решить, используя “синергию сотрудничества” Армении, Казахстана, Российской Федерации и других стран¹.

Видные арменисты и тюркологи на протяжении всего XX века акцентировали важность изучения проблематики армянографических кыпчакоязычных манускриптов как “сложнейшую на стыке арменистики и тюркологии”, учитывая императив приобретения уникального комплекса знаний и навыков – необходимого инструментария данного исследования². Уже в 1950-1960-е гг. академики

¹ См. **Сафарян А., Адилбаев Ж.**, Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном // Вестник Евразийского национального университета имени Л.Н. Гумилева, (Научный журнал), 2016, № 1, с. 113-118, **Сафарян А., Адилбаев Ж.**, О взаимодействии тюркологов Казанского (Приволжского) федерального университета, Евразийского национального университета им. Л.Н. Гумилева и Ереванского государственного университета // «Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи», Казань-Елабуга, 2016, с. 160-167, **Сафарян А., Адилбаев Ж.**, ТМД елдерінің түркітану орталықтары ынтымақтастығының келешегі туралы // Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек, 26-27 мамыр 2017 жыл, Астана 2017, б. 259-262, **Сафарян Ал., Сафарян Ар.**, Еще раз об армяно-казахском научно-культурном сотрудничестве и вопросах лингвистического изучения армяно-кыпчакских рукописей // Материалы II научной конференции средневековой истории Дешт-и-Кыпчака. ТОО «Научно-исследовательский центр «Дешт-и-Кыпчак», Астана, 2018, с. 150-156, **Сафарян А.**, Из истории армяно-казахских культурных связей // “Простор”, 2020, № 2, с. 162-173. За последнее десятилетие сотрудники ЕГУ восстановили и укрепили оборванные после распада СССР плодотворные связи, двухсторонние и многогранные совместные научные изыскания с казахскими и туркменскими коллегами. См., в частности, **Симонян А., Сафарян А.**, Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном // «ՀՀ», 2019, թիվ 1, էջ 226-235, **Симонян А., Сафарян А.**, О научно-образовательном сотрудничестве между Арменией и Казахстаном: Реалии и перспективы // «ՀՀ», 2020, թիվ 3, էջ 3-11:

² См. подробнее **Сафарян А., Саакян Л.**, Армяно-кыпчакские рукописи-источники изучения истории тюркских языков // «Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи»,

АН Армянской ССР Левон Хачикян и Сен Аревшатян стали инициаторами филологического изучения вышеназванных рукописей и публикации в наиболее авторитетном московском лингвистическом журнале краткого научного сообщения о манускрипте Матенадарана № 2267 (писец – Лусик, 1581 г.)¹. Данной публикацией бывшие руководители Матенадарана стремились привлечь к сотрудничеству казахских, татарских и других исследователей.

Согласно наиболее распространенной классификации (местами – оспариваемой) классика советской тюркологии Н.А. Баскакова, в кыпчакскую группу тюркских языков входят кыпчакский (куманский или половецкий) язык (древний язык) и современные языки – караимский, куманский, карачаево-балкарский, крымско-татарский² (составляют кыпчакско-половецкую подгруппу), средневековый западный золотоордынский литературный язык (древний язык) и современные языки – татарский и башкирский (составляют кыпчакско-булгарскую подгруппу), ногайский, каракалпакский, казахский языки, составляющие кыпчакско-ногайскую подгруппу³.

Мы разделяем позицию выдающегося исследователя армянографичных кыпчакоязычных рукописей Ярослава Дашкевича и его аргументированный тезис о том, что среди лингвистических и “экстралингвистических” задач изучения вышеназванных манускриптов на первый план сегодня выдвигается именно задача тщательного анализа как лексики и фонетики, так и грамматики в сравнении с языком Codex Comenius’a, а также ранних письменных памятников языка крымских татар и караимов, и этот путь «сулит настоящие научные открытия, он, несомненно,

Казань-Елабуга, 2016, с. 168-176, см. также: **Koç Nurettin**, Yeni Dilbilgisi. İnkılâp Kitapevi, İstanbul, 1990, s. 30. (В данном- используемом во многих университетах учебнике авторитетного турецкого лингвиста Нуреттина Коча акцентируется, что армянская графика использовалась в золотоордынский период и последующие века армянами, говорящими на «кыпчакско-тюрском» (Kırçak Türkçesi) или турецком, (Türkçe), см. там же). См. и ср. также **László Rásonyi**, Tarihte Türklük (üçüncü baskı), Türk Kültürünü Araştırma Enstitüsü Yayınları: 126, seri: III – sayı: A. 34, Ankara, 1993, s. 136-155, 330-333, Armenian-Qypchaq Psalter. Written by Deacon Lussig from Lvov, 1575–1580 / Edited by Alexander Garkavets, Eduard Khurshudian. – Almaty “Desht-i Qypchaq”, 2001, **Шаймердинова Н.Г., Ярыгин С.А., Молдабай Т., Торебекова С.М., Жиембай Б.С., Толстой А.**, Кыпшақтар: тарих пен тіл (армян-кыпшақ ескерткіштері негізінде), Астана, 2014, - 228 б., **Ներքին Վ.**, Լվովի հայկալիան տպագրության 400-ամյակը, Երևան, 2016, 133 էջ:

¹ См. подробнее **Еганян О.С.**, Об одном армяно-кыпчакском грамматическом пособии XVII в. // “Вопросы языкознания”, 1962, с. 151-154.

² Известный советский лингвист-тюрколог Э. В. Севортян пишет: “Крымско-татарский язык принадлежит к группе кыпчакских языков (кымыкский, крымско-караимский, отдельные диалекты каракалпакского, узбекского языков, средневеково-кыпчакские языки, куманский), в разной степени испытавших на себе воздействие огузских языков, в данном случае преимущество в области фонетики и отчасти лексики”. **Севортян Э. В.**, Крымско-татарский язык // Языки народов СССР, т. II, Тюркские языки, Москва, 1966, с. 234.

³ См. подробнее **Баскаков Н.А.**, Тюркские языки, Москва, 1960, с. 142-170. Примечательно, что Н. А. Баскаков также подчеркивал важность изучения “Половецкие документы польских армян” как более поздних (чем словарь конца XIII века «Codex Cumanicus») памятников кыпчакского или куманского языка. О сложной стратиграфии этнической истории кыпчакского племенного союза, а также этимологическом значении терминов “кыпчаки-половцы-куманы” см. и ср. **Махпиров В. У.**, Имена далеких предков (источники формирования и особенности функционирования древнетюркской ономастики), Алматы, 1997, с. 42-48, 103-104, а также **Добродомов И. Г.**, О половецких этнонимах в древнерусской литературе // Тюркологический сборник 1975, Москва, 1978, с. 102-129.

расширит наши представления об истории кыпчакских языков»¹.

Ученые Института арменоведческих исследований ЕГУ, планируя дальнейшее тесное сотрудничество с лингвистами, медиевистами, источниковедами и другими специалистами из Казахстана, Российской Федерации, Туркменистана, Израиля, Польши, Украины, Ирана, представляют часть манускрипта (писец – Аветик, Матенадаран, рук. № 3522, 1634 г., 353 с.), созданного во Львове, часть эта озаглавлена «Грамматика кыпчакского языка» («Գրականութիւն դիպաղ լեզուի»)². В сотрудничестве со специалистами Института древних рукописей Матенадаран планируется издание полного текста вышеназванной рукописи (с подробными предисловием, послесловием, историко-филологическими примечаниями)³.

Представляемый отрывок из «Грамматики кыпчакского языка», завершающий вышеназванную уникальную рукопись – двуязычный (армяно-кыпчакский), местами – трехязычный (армяно-кыпчакско-польский) армянографичный текст (отметим, что алфавитный порядок слов местами нарушен). В «Грамматике кыпчакского языка» приведены части речи армянского и кыпчакского языков. Имя существительное представлено падежными формами как в единственном, так и во множественном числе; даны способы словообразования (представлена аффиксация, в том числе отрицательная), синонимы и омонимы, приведены также некоторые отглагольные формы армянских и кыпчакских глаголов, в соответствии с грамматическими формами армянского языка параллельно приводятся “парадигмы” спряжения армянских и кыпчакских глаголов в настоящем, прошедшем и будущем времени, а также их неопределенные, причастные и деепричастные формы, модели образования возвратных глаголов, сослагательного и повелительного наклонений, в словарь включены и числительные.


Языковые факты, зафиксированные в рукописи, делают возможным восстановление фонетических, грамматических и морфологических моделей (можно констатировать общепринятое мнение: армянский алфавит точнее передает фонетику тюркской (кыпчакской) речи, чем арабская, еврейская графика, латиница, кириллица). Описываемый грамматический словарь-пособие также дает

¹ Дашкевич Я., Кто они – «Армяно-кыпчаки»? (Об этносе создателей армяно-кыпчакских рукописей XVI–XVII вв.) // «Բնութիւն Մատենադարանի», 1994, էջ 108. О языковой принадлежности Codex Cumanicus-а проф. А. Маметов пишет: “Одни исследователи считают “язык “Кодекса” предтечей новокипчакских языков Крыма и Северного Кавказа – крымскотатарского и караимского, кумыкского и карачаево-балкарского; другие связывали его с наречиями поволжско-татарского языка – мишарским, казанским и “старотатарским”; третьи также не без оснований сближали язык “Кодекса” с арало-каспийской подобностью кыпчакских языков – казахским, каракалпакским и ногайским; наконец, четвертые пытались уловить черты сходства куманского с “чагатайским” и восточно-тюркскими-карлукскими, что оказалось менее аргументированным”. Маметов А., Крымскотатарский язык. История изучения. Лексикология. Фонетика. Морфология, Симферополь, 2013, с. 7. Ср. Гарипов Т. М., Кыпчакские языки Урало-Повольжья. Опыт синхронической и диахронической характеристики, Москва, 1979, с. 13-14.

² См. также предварительное сообщение: Մահակյան Լ., Մելիքյան Գ., Մախարյան Ա., XVII դարի գրիչ Ավետիքի՝ Մատենադարանի № 3522 ձեռագրի պատմաբանասիրական արժեքը // «Դրան-Նախ-արևելագիտական հանդես», հ. 44-45, 2012-2013, էջ 48-51.

³ Сотрудники арменоведческих исследований ЕГУ выражают благодарность директору Института древних рукописей Матенадаран им. Месропа Маштоца, доктору исторических наук В.А. Тер-Гевондян и доктору исторических наук Г. А. Тер-Варданяну за долголетнее плодотворное сотрудничество.

некоторое представление о словарном запасе кыпчакского языка, о заимствованиях из других языков, является источником для сравнительного исследования кыпчакского и других тюркских языков, сопоставительного анализа кыпчакского и индоевропейских языков¹.



¹ См. подробнее: Сафарян А., Саакян Л., указ. соч., с. 168-176. См. и ср. также László Rásonyi, указ. соч., с. 136-155, 330-333.

Singt sy la. Singt la. Nr. 10.
Friedrich Schiller.

[illegible]

Դերանուն + ցայց Լեւոն
 Բեյրութի Պաշտօնէին . Բա.

Եկեալս ներհաւիտ . Բա.
Երկուսուսան իմր . Եկեալս . Ե. Բա.
Երկուսուսան հոգւոց եւ ոյ՛լ . Ե.
Երաւ շտապե՛ւ որսուաւոց . Դ.
Երկեկց . Ե երկեւոցնոց . Բա.
Երկուս ջառփա եւան . Բա.
Երկրե՛ւ երկրաւոց . Ե.

Երկրա ջախա հանք . Կա.
Երկրի և երկրայնոց . ԺԷ.

Չգտել ևս մարմնա կն գոյք . Ը

Ի տկ. ևս ինք սեռ պղանն . Է.
Ի՞նչ չորս Բա ժանի հյ՛ ԳԽ . Կա.

Ըղ ջահան Բայք անցի ԺԷ. ԺԸ.
Ըղ ջահան Բայք և երկայ ԺԷ. ԺԹ.
Ըղ ջահան Բայք ապար ԺԷ. ԺԿ.
Ընդ ժանի Ի Բա առի՛ն չ ունանի Ի Է.

Թաջ ևոց . Է.
Թառախանք՝ համարոց ԲԿ. ԺԸ. ԺԹ.
Ի մասառա Թառախանց ԲԷ. ԺԿ. Ի Է.
Ի Բառա Ժան ջիւղ . Կա.

Եւր ի իղունիք ուղ զարդ ԿԷ. . Է.
Եւր ի իղունիք՝ Ի Բառան . ԷԴ.

Ծառայոց՝ և Ծառայնոց՝ . ԺԷ. ԿԴ.

ԿԷրբարայ . Ը.
 ԿԷրբանի և Կարարեայ . Ը. Բ. Բ. Բ.
 ԿՀարրայ . Կ.
 Հայցանան հարա՛ւանանց. Բ.
 Հանարդուտք պերի արմենի. Բ.
 Հարցանան՝ Ժիւն կէ բայք. Ժ.
 Հիւ և Հայք պարսկերտ. Ժ. Բ.
 Հարա՛ւանանց հայոց, Լեւոն
 ռի Էրան Գրեալ
 Հարաւոր հց. Լ. Ժ. Բ. Էրվիտ.
 Հոգոց հարսկան. Բ. Բ.
 Հոգոց, եր կու տաւանից. Ժ.
 Հրաժարանան՝ Բայ և Ժ.
 Հրաւոյանան՝ Բայ և Ժ.
 Ի ռեշտահայ. Ժ. Ժ.

Surveys in S. India. 11.

Зам-тунг-хуанг-хуанг. , 84

Հարստ արամեկայ.	15.
Հերան Ժ. Գր. պար փեղի.	16. Բագ.
Հըլաբայ.	17. Բագ.

Ողբերգի անուանց. Զ
Ուսումնական հասարակ. ԲԼ.

Ուրաշանի բայք

· Ժ

Պատճառահանք անւանց

· Ը

Երայեցն. Տէ Եդ.

· Դ

Լազնի մարտայ

· Դ Դ

Լեռահան հրովք անւանց

· Բ

Լեռեւեւեւեւեւ. Եդ. Դ

· Ժ

Առնայ Լաշայ

· Ը

Առնայ Լաշայ Դաւիթ

· Ը

Լաւրեթրոյ Եւեւեւ.

· Դ

Լեռահանայի Եւեւեւեւ Լաշ.

· Դ

Լեռահան Խմաւորեւ.

· Դ Ժ

Լաւրեթրոյ հրովք անւանց

· Ժ

Լաւրեթրոյ անւանց հայերեւ

· Ը

Լաւրեթրոյ Խաւարեւ

· Բ

Լեռահան հրովք

· Ժ

Լաւրահան հրովք

· Ժ

[illegible]

1. *...*
 2. *...*
 3. *...*
 4. *...*
 5. *...*
 6. *...*
 7. *...*
 8. *...*
 9. *...*
 10. *...*
 11. *...*
 12. *...*
 13. *...*
 14. *...*
 15. *...*
 16. *...*
 17. *...*
 18. *...*
 19. *...*
 20. *...*
 21. *...*
 22. *...*
 23. *...*
 24. *...*
 25. *...*
 26. *...*
 27. *...*
 28. *...*
 29. *...*
 30. *...*
 31. *...*
 32. *...*
 33. *...*
 34. *...*
 35. *...*
 36. *...*
 37. *...*
 38. *...*
 39. *...*
 40. *...*
 41. *...*
 42. *...*
 43. *...*
 44. *...*
 45. *...*
 46. *...*
 47. *...*
 48. *...*
 49. *...*
 50. *...*
 51. *...*
 52. *...*
 53. *...*
 54. *...*
 55. *...*
 56. *...*
 57. *...*
 58. *...*
 59. *...*
 60. *...*
 61. *...*
 62. *...*
 63. *...*
 64. *...*
 65. *...*
 66. *...*
 67. *...*
 68. *...*
 69. *...*
 70. *...*
 71. *...*
 72. *...*
 73. *...*
 74. *...*
 75. *...*
 76. *...*
 77. *...*
 78. *...*
 79. *...*
 80. *...*
 81. *...*
 82. *...*
 83. *...*
 84. *...*
 85. *...*
 86. *...*
 87. *...*
 88. *...*
 89. *...*
 90. *...*
 91. *...*
 92. *...*
 93. *...*
 94. *...*
 95. *...*
 96. *...*
 97. *...*
 98. *...*
 99. *...*
 100. *...*

[illegible]

[illegible]

**Արամ Սիմոնյան, Լուսինե Սահակյան, Ալեքսանդր Սաֆարյան – XVII դարում
Լվովում ստեղծված հայերեն ձեռագրում ընդգրկված «Ղփչաղերեն լեզվի
քերականությունը» (Մատենադարան, հ^Ժ 3522)**

*Բանալի բառեր – Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստան, Մատենադարան,
արևելագետներ, լեզվաբաններ, աղբյուրագետներ, մշակութաբաններ, ղփչաղերեն ձեռա-
գրեր, միջմշակութային փոխգործակցություն, ավանդույթներ, հայկական այբուբեն*

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատողները, հրապարակելով Մատենադարանի հ^Ժ 3522 ձեռագրի «Քերականութիւն ղփչաղ լեզուի» մի հատվածը, նախաձեռնում են ծավալել միջազգային հետազոտողական լայն համագործակցություն Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության ու հեռավոր արտերկրի արևելագետների, լեզվաբանների, աղբյուրագետների, մշակութաբանների հետ: Հայատառ ղփչաղերեն ձեռագրերը վկայում են Հյուսիսային Եվրասիայում ազգային ու կրոնական հանդուրժողականության, միջմշակութային փոխգործակցության դարավոր ու բացառիկ ավանդույթների մասին, կարևոր աղբյուր են թյուրքական լեզուների պատմության հիմնահարցերի ուսումնասիրության համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայկական այբուբենն առավել լավ է արտահայտում այդ լեզուների հնչյունական համակարգը:

**Арам Симонян, Лусине Саакян, Александр Сафарян – «Грамматика кыпчакского
языка», включенная в армянский манускрипт (Матенадаран, рук. № 3522),
созданный во Львове в XVII веке**

Научные сотрудники Института арменоведческих исследований Ереванского государственного университета, публикуя отрывок из “Грамматики кыпчакского языка”, включенного в манускрипт № 3522, который хранится в Институте древних рукописей Матенадаран имени Месропа Маштоца, инициируют дальнейшее тесное сотрудничество с востоковедами, лингвистами, источниковедами, культурологами из Казахстана, Российской Федерации и дальнего зарубежья. Армянографические кыпчакоязычные рукописи свидетельствуют о многовековых уникальных традициях религиозной толерантности и межкультурного взаимодействия в Северной Евразии, являются важным источником для исследования истории тюркских языков, с учетом также того обстоятельства, что армянский алфавит наиболее точно отображает фонетику этих языков.

**Aram Simonyan, Lusine Sahakyan, Alexsander Safaryan – “The Grammar of the Kipchak
Language” Included in the XVII Century Armenian Manuscript Created in Lvov
(Matenadaran, № 3522)**

*Key Words – Russian Federation, Republic of Kazakhstan, Matenadaran, oriental studies,
linguistics, source studies, cultural studies, manuscripts, kipchak language, intercultural coopera-
tion, source, Armenian alphabet*

Publication of the fragment “The Grammar of the Kipchak Language”, from manuscript №3522 stored in Matenadaran has been initiated by the researchers of YSU Institute of Armenian Studies to launch an extensive international project, involving specialists in Oriental Studies, Linguistics, Source Studies, Cultural Studies from the Republic of Kazakhstan, the Russian Federation and distant foreign countries. Manuscripts in the Kipchak language, written in Armenian letters, evidence the exclusively strong centuries-long traditions of intercultural

cooperation as well as national and religious tolerance in the territory of Northern Eurasia. These manuscripts can serve as a reliable source for the study of the issues of the history of Turkic languages, particularly that the sound system of the latter is best transcribed through the Armenian alphabet.

Ներկայացվել է 07.03.2022

Գրախոսվել է 11.03.2022

Հնդունվել է տպագրության 24.06.2022.2022

Արամ Симонян – Директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Армении, доктор исторических наук, профессор (asimonyan@ysu.am)

Лусине Саакян – Заведующая отделом армяно-оттоманских отношений Института арменоведческих исследований ЕГУ, доцент кафедры тюркологии ЕГУ, кандидат филологических наук (lkhastur@yahoo.com)

Александр Сафарян – Заведующий кафедрой тюркологии ЕГУ, кандидат исторических наук, профессор (alexandr-safaryan@rambler.ru)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յակոբ Չոլաքեան, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Խ. Ա.-Բ, Երեւան, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատարակչութիւն, 2021, 646 + 607 էջ

Սիրիական հակամարտութիւնը, ի թիվս այլ ծանր հետևանքների ու հումանիտար ճգնաժամի, վտանգեց նաև ավանդականորեն այդ տարածքում բնակվող փոքրամասնություններին, որոնք շատ դեպքերում դառնում էին թիրախ իրենց կրոնադավանական ու էթնոդավանական պատկանելիության համար: Այդ պատկանելիության խորհրդանշական ու գործառական կարևոր ցուցիչ էր այդ խմբերի մշակութային ժառանգությունը, այն է՝ կրոնական հաստատությունները, հուշարձանները, որոնք հենց դառնում էին թիրախ՝ դրանով իսկ ոչ միայն դատապարտելով դրանք նյութական ու ֆիզիկական կորստյան, այլև այդ միջոցով խոցում էին նրանց ինքնությունն ու առհասարակ գոյատևման հեռանկարները:

Սիրիահայ համայնքը ևս անմասն չմնաց պատերազմի արհավիրքներից և ուղղակիորեն կրեց հարվածներ՝ վերապրելով գոյատևման սպառնալիքի նոր փորձառություն՝ կապված Հայոց ցեղասպանության հիշողության ու անցյալի անցքերի վերարտադրության հետ՝ Քեսապ, Հալեպ, Դեր Զոր: Պատերազմական Սիրիայում թիրախ դարձավ ոչ միայն հայկական հավաքականությունը, այլև խմբային ինքնության կարևոր առանցքը, այն է՝ հիշողությունը, մշակութային հետքն ու ժառանգությունը, որոնց հիմքում, անշուշտ, ցեղասպանության արհավիրքի հաղթահարումն ու վերապրումն է:

Այս խորապատկերի ու ընթացիկ զարգացումների ներքո է լույս տեսնում ազգագրագետ, բանագետ, պատմական գիտությունների դոկտոր Հակոբ Չոլաքյանի «Սուրիահայ դպրոցի պատմութիւն» երկհատոր աշխատությունը, որը ոչ միայն խիստ այժմեական է, այլև, ըստ էության, յուրօրինակ պատասխան է սիրիական պատերազմի բերած մարտահրավերներին, որոնց 2011 թ. սկսած դիմակայում է հայկական համայնքը:

Արխիվային, տպագիր, անտիպ սկզբնաղբյուրների և գրականության հիման վրա համադրելով իր անձնական երկարամյա դաշտային գիտահետազոտական աշխատանքների արդյունքները՝ Հ. Չոլաքյանը շարադրել է ծավալուն և բազմաշերտ, խիստ հետաքրքիր և ինքնատիպ ուսումնասիրություն:

Մենագրությունը բովանդակությամբ ու շոշափվող խնդիրների բազմազանությամբ ավելին է, քան վերնագիրը: Այն, ըստ էության, սիրիահայ համայնքի պատմությունն է՝ միախլուսված ու վերլուծված համայնական կայացման հետցեղասպանական ընթացքի, ներքին ու արտաքին գործոնների

հետ՝ ֆրանսիական մանդատ, սիրիական պետականության ժամանակաշրջան: Ուսումնասիրության առանցքը սիրիահայության կրթական համակարգն է, որը, սակայն, չի դիտարկվում մեկուսացված՝ սոսկ որպես դպրոցի պատմություն, քանի որ եթե կա կրթական հաստատություն, ապա կան նաև հոգևոր և հասարակական մարմիններ, եթե եկեղեցի՝ ապա համայնք: Համայնքը կրթական համակարգի միջոցով դառնում է «սփյուռքային» ցանցի մաս՝ եկեղեցական ու հասարակական, բարեգործական հաստատությունների գործառնությամբ և դերակատարմամբ: Այս խորապատկերի ու դպրոց-համայնք ուղեգծի վրա է ընթերցողը հնարավորություն ստանում քայլ առ քայլ հետևելու սիրիահայ համայնքի ձևավորման ու կայացման ընթացքին՝ բացահայտելով մշակութային, հասարակական, ժողովրդագրական, տեղական պատմության նոր էջեր: Այն, ըստ էության, սիրիահայության անցյալն ու ներկան ներկայացնող տարաբաշխավածության մանրակրկիտ մի քարտեզ է՝ դպրոց-բնակավայր առանցքով՝ խորքում ունենալով պատմական, ժողովրդագրական, հասարակական, մշակութային գործընթացների համապարփակ վերլուծություն:

Աշխատանքը ունի երկու մաս: Առաջինը կոչվում է «Ընդհանուր տեսություն Սուրիոյ մէջ հայոց տեղաբաշխման, պատմութեան եւ կրթական գործին» և բաղկացած է հինգ գլխից:

Առաջին գլուխը վերաբերում է հետցեղասպանական ժամանակաշրջանի սիրիահայ գաղութի կազմավորմանը: Սա պատմաժողովրդագրական խորքային հետազոտություն է, ուր փուլ առ փուլ ներկայացվում է ու պարբերացվում սիրիահայ գաղութի կազմավորման ընթացքը ոչ միայն բնակչության շարժընթացի, այլև այն պայմանավորող քաղաքական, պատմական գործոնների համակողմանի ու խորքային քննությամբ: Տեղաբնիկ հայությունն ու այդ հավաքականության վերակազմությունը առաջին աշխարհամարտի ու հետցեղասպանական շրջանում, Կիլիկիայի հայության երկրորդ ներհոսքը 1921-1922 թթ., բշերիկցի քրդախոս հայերի գաղթը 1927-1931 թթ., ուշագրավ, թերևս գիտական ուսումնասիրություններից երկար ժամանակ ստվերում մնացած երևույթներ են, որոնք իրենց համակարգված լուսաբանումն են ստանում այս աշխատանքում, ինչպես նաև 1939 թ. Ալեքսանդրետի սանջակի հայոց գաղթը, երբ այդ տարածքը ֆրանսիական մանդատային իշխանությունները հանձնում են Թուրքիային, ու տեղի հայությունը մեկ անգամ ևս հարկադրված բռնում է գաղթի ճամփան:

Սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս բաժինը սոսկ ժողովրդագրական ուսումնասիրություն չէ, այլ այն քննարկվում է և ներկայացվում քաղաքական գործոնների ու համատեքստի վերլուծության ներքո, որոնք ուշագրավ, խիստ այժմեական խնդիրներ են բացահայտում, օրինակ՝ թուրք-սիրիական սահմանային հարցերի ու հայերի տեղաբաշխվածության հետ կապված: Ցեղասպանության ու բռնագաղթի գոհերը, ըստ Թուրքիայի, շարունակում են «վտանգավոր» լինել այս անգամ արդեն թուրք-սիրիական սահմանային տա-

րաձքներում, ուր հայության այդ բեկորները, հաղթահարելով մահվան երթերն ու ճամբարները, բնակավորման առաջին քայլերն էին անում: Նույն տարաձքների հետ կապված սահմանային «վտանգավոր բնակչության» վերաբերյալ մոտեցումը, ըստ էության, անփոփոխ մնաց մինչև այժմ, երբ, այս անգամ արդեն քրդերի հետ կապված, Թուրքիան գրավեց Միրիայի հյուսիսային գոտին: Թուրքական գործոնի դերը չի սահմանափակվում միայն «սահմանային» խնդիրներով, և հեղինակը քննարկում է նոր համայնքների կազմավորման շրջանում այդ գործոնի ներգրավածությամբ ու ազդեցությամբ հայերի նկատմամբ իրականացված բռնություններն ու ջարդերը. «Պատերազմի ընթացքին Սուրիոյ մէջ հայ տարագիրներու մահուան նախճիրները պիտի չվերջանային նաեւ Զինադադարէն ետք, այս անգամ զոհեր փնտրելով նաեւ վերապրողներու շրջանակին մէջ», և հալածանքների ու կոտորածների թիրախ են դառնում Դեր Զորի, Հալեպի, Դամասկոսի ու այլ վայրերում ապաստանած հայերը:

Աշխատության երկրորդ՝ «Հայ մշակութային ու կրթական կեանքը՝ 1918-1946» խորագրով գլխում հեղինակը քննարկում է ազգային-մշակութային ու կրթական կյանքի կազմակերպման խնդիրները՝ այն դիտարկելով համայնքային կառուցվածքի ձևավորման ու գործառնության շրջանակում, այսինքն՝ ոչ թե մեկուսի մի խնդիր, այլ՝ գաղութային կյանքի կազմավորման տրամաբանության ներքո վերլուծելով եկեղեցական (Առաքելական, Կաթողիկե, Ավետարանաչական), հասարակական, պետական կազմակերպությունների դերն ու գործունեությունը: Վերլուծվում են նաև ամառային, գիշերային, արհեստագործական ու կույրերի կրթական հաստատությունները, քննարկվում այդ շրջանի կրթական բովանդակությունն ու հայերենի/արևմտահայերենի «պաշտոնականացումը»՝ կրթության միջոցով լեզվաբարբառային խայտաբղետ միջավայրում, ուր խոսակցական թուրքերենը բավական տարածված էր, ինչ-որ տեղ նաև գերակա:

Կարևոր է նաև, որ կրթական խնդիրը քննարկվում է և վերլուծվում քաղաքական փոփոխությունների համատեքստում, ինչպես օրինակ, հայրենադարձությունը, սիրիական պետության կայացման շրջանը, ներսիրիական քաղաքական փոփոխություններն ու վայրիվերումները (գլուխ Գ, Դ): Այդ առումով դպրոցն ու կրթությունը դառնում են հիմնական ցուցիչ՝ հայկական փոքրամասնության նկատմամբ քաղաքականության ու սիրիական պետության մեջ նրա կարգավիճակի, համայնական իրավունքների ու ազատությունների հետ կապված: Հենց դպրոցի, կրթության, եկեղեցու միջոցով է դրսևորվում այդ քաղաքականությունը ու դրա խորքային քննարկումը հնարավորություն է տալիս ներկայացնելու համայնքի պատմության այդ դիտանկյունը ևս: Քաղաքական փոփոխություններն ու կրթական խնդիրները ներկայացվում ու վերլուծվում են նաև ընթացիկ սիրիական պատերազմի ու դրա հետևանքների հետ կապված: Այդ առումով այն դառնում է ոչ միայն ժամանակակից պատմության մաս, այլև՝ վավերագրություն, քանի որ թե՛

հեղինակը և թե՛ ներկայացված նյութը տվյալ պատերազմական իրադրության ժամանակակիցն ու վերապրողն են:

Ուսումնասիրության երկրորդ՝ «Բնակավայրեր եւ դպրոցներ» մասում առանձին-առանձին ներկայացվում են շուրջ հարյուր բնակավայրեր (քաղաքներ, արվարձաններ, ավաններ, գյուղեր) 18 աշխարհագրական շրջանակում, ուր եղել է կամ կա հայկական բնակչություն: Հեղինակն այս հարցին անդրադառնում է ժողովրդագրական, պատմական, ազգագրական համառոտ նկարագրությամբ ու կրթական հաստատությունների կրթամշակութային գործունեության վերլուծության միջոցով: Այդ բաժինն ընդգրկում է շուրջ 240 ամենօրյա դպրոցի պատմություն:

Հ. Չոլաքյանի աշխատությունը հարստացնում է նաև հրատարակված փաստաթղթերի և լուսանկարների բաժինը: Այն ունի նաև օգտագործված տեղանունների, անձնանունների, ինչպես նաև գրականության ցանկեր:

Սույն աշխատությունը, անշուշտ, կարևոր է ոչ միայն սփյուռքահայ դպրոցի պատմության, այլև ավելի լայն՝ սփյուռքագիտության և մերձավորարևելյան հայկական համայնքների պատմության, մշակույթի, ինքնության և ժամանակակից հիմնախնդիրների հետ կապված:

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Ներկայացվել է 26.05.2022

Ընդունվել է տպագրության 24.06.2022.2022

Արսեն Հակոբյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (hakobian@gmail.com)

ԼՐԱՏՈՒ

ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ (1955-2022)



Հայագիտությունը և պատմագիտությունը ծանր կորուստ կրեցին. 2022 թ. հունիսի 8-ին 67 տարեկան հասակում կյանքից վաղաժամ հեռացավ ազգային մտածողության կրող, գիտության և կրթադաստիարակչական գործի նվիրյալ, պատվարժան քաղաքացի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Միմոնյանը:

Լինելով հայ մեծանուն գիտնական և հասարակական-քաղաքական գործիչ, հայրենանվեր անհատ, ակադեմի-

կոս Հրաչիկ Միմոնյանի (1928-2016) որդին՝ Ա. Միմոնյանը ձևավորվել է որպես պատվարժան քաղաքացի: Ունենալով հայ մարդուն բնորոշ բոլոր առաքինությունները՝ նա միաժամանակ իր ամբողջ կյանքի ընթացքում շրջապատի նկատմամբ դրսևորել է նրբանկատ և հոգատար վերաբերմունք: Նրա բնավորությանն առանցքային էին հասարակությանը պիտանի լինելու, իր անձով կենսագործունեության ներդաշնակություն ձևավորելու յուրահատկությունները: Միաժամանակ առանձնանում էր յուրաքանչյուր անհատի նկատմամբ նրա ներողամիտ և սրտացավ վերաբերմունքը:

Արամ Միմոնյանը ծնվել է 1955 թ. ապրիլի 12-ին Գորիս քաղաքում: 1961-1972 թթ. սովորել է Երևանի թիվ 19 դպրոցում: 1972-1977 թթ. ուսանել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, իսկ 1977-1981 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ ԽՍՀՄ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1983 թ. նա պաշտպանել է թեկնածուական, իսկ 2000 թ. դոկտորական ատենախոսություններ, 2005 թ. ստացել պրոֆեսորի կոչում:

1981-1985 թթ. Ա. Միմոնյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև՝ գիտաշխատող, 1986-2000 թթ. ԵՊՀ ԽՍՀՄ պատմության ամբիոնի ասիստենտ, այնուհետև՝ Հայոց պատմության ամբիոնում դոցենտ: Ունենալով վարչական աշխատանքի յուրահատուկ հմտություններ՝ 1993-1995 թթ. նա ստանձնել է ԵՊՀ

գիտքարտուղարի, իսկ 1995-2000 թթ.՝ ԵՊՀ ուսումնական վարչության պետի պաշտոնները: 2000 թ. նա նշանակվել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2006 թ. մայիսին ընտրվել, իսկ 2011 թ. մայիսին վեր-
ընտրվել ԵՊՀ ռեկտորի պաշտոնում, այն պաշտոնավարել մինչև 2019 թ. մայիսի 23-ը: 2006 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2008 թ. հուլիսի 10-ին նշանակվել ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն:

Դեռևս ԽՍՀՄ տարիներին Ա. Միմոնյանը ծավալել է գիտական բեղուն գործունեություն, հեղինակել 100-ից ավելի գիտական աշխատանքներ, որոնց թվում չորս մենագրություն՝ «Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX-начале XX вв. (Историко-статистический анализ)» (Ереван, 1995), «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» (Երևան, 2000), «Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ.» (Երևան, 2017), «Զանգեզուրի գոյամարտը 1917-1921 թթ.» (Երևան, 2017): Հայ ժողովրդի XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի պատմության հիմնահարցերին նվիրված նրա գիտական մենագրություններն ամբողջությամբ լի են հայրենասիրության ոգով, առնչվում են մասնավորապես պատմական վիճակագրությանը, արդյունաբերական կապիտալին, ինչպես նաև Արցախի և Զանգեզուրի 1917-1921 թթ. պատմության հիմնախնդիրներին:

Հայագիտության և պատմագիտության մեջ, չնայած հոր հսկայական ժառանգությանը, Ա. Միմոնյանը իր ուղին և հետքը թողեց մասնավորապես հայրենի երկրամասի՝ Սյունյաց աշխարհի ազգային ազատագրական պայքարի ուսումնասիրության ասպարեզում: Ձերբազատվելով խորհրդային տարիներին գիտության ոլորտում գոյություն ունեցած կարծրատիպային մտածելակերպից՝ նա գիտական առաջին քայլերը կատարելուց հետո հետաքրքրությունների առանցքում ուներ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Արցախ-Զանգեզուրի գոյամարտերի և հայոց պետականության խնդիրներին առնչվող շրջանակը:

Արցախը, արցախյան հիմնահարցը և արցախահայությունը միշտ նրա ուշադրության առանցքում էին: Ուսանող-երիտասարդության հայրենիքը սիրելու, հոգատարության, միմյանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման խնդիրները եղել են նրա՝ որպես ուսուցչի ուշադրության ներքո: Այդ մասին են փաստել նրա բազմաթիվ այցելություններն Արցախ, տեղի համալսարանի հետ սերտ համագործակցությունը տարբեր ձևաչափերով, «Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» 2006 թ. հունիսի 21-ից 24-ը Ստեփանակերտում միջազգային գիտաժողովի նախաձեռնումն ու անցկացումը, Արցախի տարբեր հատվածներում ավանդական դարձած ծառատունկերի իրականացումը, որը հայրենաճանաչության յուրօրինակ դրսևորում էր:

Արցախի և արցախահայության կողքին գտնվելու Ա. Միմոնյանի կեցվածքը դրսևորվեց նաև Արցախյան քառօրյա և 44-օրյա պատերազմների

ընթացքում: Մինչ այդմ նա իր գործընկերներն Ա. Ղարիբյանի և Է. Բաբայանի հետ հրատարակության պատրաստեց նաև «Арцах-Карабах. Библиография на русском языке 1988-2012 гг.» (Ереван, 2011) ժողովածուն:

Ա. Միմոնյանի նախաձեռնությամբ ԵՊՀ հրատարակչությունը ծավալել է բազմաբեղուն տպագրական գործունեություն: 2014 թ. նա հիմնադրեց նաև «Հայագիտության հարցեր» հանդեսը, որի գլխավոր խմբագիրն էր:

Ա. Միմոնյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 12 թեկնածուական ատենախոսություններ: Նրա շնորհիվ ԵՊՀ-ն ակտիվորեն համագործակցել է արտերկրի բազմաթիվ կրթական, գիտական հաստատությունների հետ: Նա մասնակցել է միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովների, բազմիցս հրավիրվել Իտալիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և աշխարհի մի շարք այլ երկրների գիտակրթական կենտրոններ, որտեղ զբաղվել է գիտակրթական գործունեությամբ: Նրա գիտելիքների և հմտությունների բարձր ձիթը արարողակարգային օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների ընդունելությունների ժամանակ թողնում էր լավագույն տպավորություն՝ մեծ համբավ բերելով մեր երկրին և ԵՊՀ-ին: Նրա հյուրերի թվում էին նաև Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, Հունաստանի նախագահ Կարոլոս Պապուլիասը, Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուխամեդովը, Ուրուգվայի Արևելյան Հանրապետության ներկայացուցիչների պալատի նախագահը, ռուս տիեզերագնաց Ալեքսանդր Բալանդինը:

Մեծ էին ԵՊՀ-ն ժամանակակից հետազոտական համալսարան դարձնելու Ա. Միմոնյանի կատարած աշխատանքները: Նրա ղեկավարման տարիներին ԵՊՀ-ում գիտակրթական զարգացմանը զուգահեռ բացվեցին մի շարք նոր ստորաբաժանումներ՝ Չինագիտության կենտրոնը, Հայ-հնդկական կենտրոն-ամբիոնը, ԵՊՀ ռուսական կենտրոնը: Կրթության բարձր որակի ապահովման հետ մեկտեղ, նրա ուշադրության առանցքում էր նաև ուսանողների և աշխատակազմի կենսագործունեության համար բարվոք պայմանների ապահովումը: ԵՊՀ-ի բազմաթիվ մասնաշենքեր վերանորոգելուն զուգահեռ ստեղծվել է նաև ժամանակակից սպորտհամալիրը, հյուրատունը, հանրակացարանը:

Ա. Միմոնյանի ջանքերով Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ ԵՊՀ գրադարանի մուտքի մոտ՝ Չարենցի փողոցի կողմից հիմնվեց երախտիքի ծառուղին, որի աջ և ձախ կողմերում տեղադրվեցին XX դարասկզբի մեծագույն ողբերգությունը՝ Հայոց ցեղասպանությունը, հասարակական լայն շրջանակներում քննադատած, բողոք ու կարեկցանք հայտնած, ինչպես նաև հայության մի սովոր հատվածին մահվան ճիրաններից փրկած և օգնություն ցուցաբերած օտարազգի հայտնի գործիչների կիսանդրիները:

Ա. Միմոնյանն իր բազմաբեղուն գործունեության ընթացքում արժանացել է պետական մի շարք պարգևների և կոչումների՝ ՀՀ գիտության վաստակավոր գործչի տիտղոսի (2014), Սանկտ-Պետերբուրգի պետական համալ-

սարանի պատվավոր դոկտորի կոչման (2012), Ղազախստանի «Ղազախստանի անկախության 20-ամյակ» (2011) և Թուրքմենստանի «Մահթումկուլի Ֆրագի» (2014) պետական պարգևների, «Մովսես Խորենացի» (2009) և «Վաչագան Բարեպաշտ» (2016) մեդալների:

Ա. Սիմոնյանի այրին, երկու դուստրերը, հարազատները, գործընկերները և ընկերները վկայում են ոչ միայն նրա ակտիվ գիտական և հասարակական գործունեության, այլև մարդկային սիրո, ջերմության, բարության և առաքինության բարձր հատկանիշների մասին:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ալիկ Ղարիբյան, Ռուզաննա Գասպարյան

Ադրբեջանական կեղծարարությունները Երևանի շուրջ3

Արգիշտի Վարդանյան

Մամիկոնյանների ծագման խնդիրը պատմագիտության մեջ և նրանց նախահայրենիքի տեղորոշման հարցը 13

Վարդան Ալեքսանյան

Հայոց եկեղեցին Աբբասյան հարստության օրոք (VIII դարի երկրորդ կես)31

Արման Եղիազարյան

Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը55

Արփինե Բաբլումյան

Դիարբեքիի նահանգի հայ բնակչության կոտորածները 1915 թ. ...76

Նարինե Մարգարյան

Հայապահպանության խնդիրներն ու առանձնահատկությունները Մերձավոր Արևելքի որբանոցներում Հայոց ցեղասպանության տարիներին.....94

Վազգեն Հախոյան

Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Ղարաքիլիսայի գավառում (1920-1921 թթ.) 113

Լիանա Դավթյան

Մերձամուսնությունների խնդիրը հայոց եկեղեցական և սովորության իրավունքի տեսանկյունից 128

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայկանուշ Շարություն

Միսաք Մեծարենցը թարգմանիչ 138

Աշխեն Զրբաշյան

Հեկզամետրային չափերը Եղիշե Զարենցի պոեզիայում 155

Արծրուն Ավագյան

Երբ եղեգները կանգուն են.....168

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Ավետյան

Մրցակից լեզվական միտումների լույսի ներքո հայերենի որոշ ձևաշարահյուսական երևույթների բացատրման փորձ 191

Անուշ Ապրեսյան

Նորաբանությունները Գրիգոր Նարեկացու «Մատենանոդերգութեան» երկում և աշխարհաբար թարգմանություններում.....204

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Արամ Միմոնյան, Լուսինե Մահակյան, Ալեքսանդր Սաֆարյան

XVII դարում Լվովում ստեղծված հայերեն ձեռագրում ընդգրկված «Ղիչաղերեն լեզվի քերականությունը» (Մատենադարան, հ^մ 3522) (ռուսերեն).....213

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արսեն Հակոբյան

Յակոբ Զոլաքեան, Սուրիահայ դպրոցի պատմություն236

ԼՐԱՏՈՒ

Արամ Միմոնյան (1955-2022)240

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Алик Гарибян, Рузанна Гаспарян	
Азербайджанские фальсификации истории Еревана.....	3
Аргишти Варданян	
Проблема происхождения рода Мамиконянов в историографии и вопрос о локализации их прародины	13
Вардан Алексанян	
Армянская церковь в период Аббасидской династии (вторая половина VIII века)	31
Арман Егиазарян	
Самооборона Еревана в 1724 году	55
Арпине Баблумян	
Массовое истребление армянского населения провинции Диарбекир в 1915 году.....	76
Нарине Маргарян	
Проблемы и особенности сохранения армянской идентичности в детских домах Ближнего Востока во время Геноцида армян	94
Вазген Ахоян	
Массовые погромы, осуществленные кемалистами в Каракилисском уезде (1920-1921 гг.)	113
Лиана Даллакян	
Проблема инцестов с точки зрения армянского церковного и обычного права.....	128

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Айкануш Шарурян	
Мисак Мецаренц – переводчик.....	138
Ашхен Джрбашян	
Гекзаметрические размеры в поэзии Егише Чаренца.....	155
Арцрун Авагян	
Несгибаемые тростники	168

ЯЗЫКОЗНАНИЕ

Саргис Аветян	
Попытка объяснения некоторых морфосинтаксических явлений армянского языка в свете конкурирующих языковых тенденций.....	191
Ануш Апресян	
Неологизмы в книге «Скорбные песнопения» Григора Нарекаци в переводах на современный армянский язык	204

ПУБЛИКАЦИИ

Арам Симонян, Лусине Саакян, Александр Сафарян	
«Грамматика кыпчакского языка», включенная в армянский манускрипт (Матенадаран, рук. № 3522), созданный во Львове в XVII веке	213

РЕЦЕНЗИИ

Арсен Акопян	
Акоп Чолакян, История сирийско-армянской школы	236

ХРОНИКА

Арам Симонян (1955-2022).....	240
--------------------------------------	------------

COTENTS

HISTORY

Alik Gharibyan, Ruzanna Gasparyan	
Azerbaijani Falsifications Regarding Yerevan	3
Argishti Vardanyan	
The Issue of Mamikonyans' Origin in Historiography and the Question of their Homeland's Location.....	13
Vardan Aleksanyan	
Armenian Church in the Period of the Abbasid Dynasty (Second Half of the VIII Century)	31
Arman Yeghiazaryan	
Self-Defense of Yerevan in 1724.....	55
Arpine Bablumyan	
The Massacres of Armenian Population of Diarbekir Province in 1915	76
Narine Margaryan	
The Features and Problems of the Preservation of the Armenian Identity in the Orphanages of the Middle East during the Armenian Genocide.....	94
Vazgen Hakhoyan	
Massacres Executed by the Kemalists in Karakilisa Province (1920-1921)	113
Liana Dallakyan	
The Problem of Congeneric Marriages from the Viewpoint of Church and Tradition	128

HISTORY OF LITERATURE

Haykanush Sharuryan	
Misak Metsarents as a Translator.....	138
Ashkhen Jrbashyan	
Hexametric Sizes in the Poetry of Yeghishe Charents.....	155
Artsrun Avagyan	
When the Reeds are Upright	168

LINGUISTICS

Sargis Avetyan	
An Attempt at Explaining Some Morphosyntactic Phenomena of the Armenian Language in the Light of Competing Linguistic Tendencies	191
Anush Apresyan	
The Neologisms in the "Book of Lamentation" of Grigor Narekatsi and in Modern Armenian Translations	204

PUBLICATIONS

Aram Simonyan, Lusine Sahakyan, Alexsander Safaryan	
"The Grammar of the Kipchak Language" Included in the XVII Century Armenian Manuscript Created in Lvov (Matenadaran, № 3522)	213

REVIEW

Arsen Hakobyan	
Hagop Cholakian, History of the Syrian-Armenian School.....	236

NEWS

Aram Simonyan (1955-2012).....	240
---------------------------------------	------------

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ
2 (26)

Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զլխատառերով), վերնագիրը (զլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (handes@armin.am), հեռ. +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (handes@armin.am), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовок, том, место и год издательства (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (handes@armin.am), тел.: +374 60 710092